ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ 2018թ. N_____-Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2019 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2019 թվականի ծրագիրն ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով՝ ընդհանուր 1000 տպաքանակներով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները:

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները, որոնք փաստաթղթում ներկայացված են ըստ առանձին ոլորտների:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի բնութագիր», «Հիմնախնդիրներ» և «2019 թվականի նախատեսվող աշխատանքներ»:

2019 թվականի ծրագրերն ու միջոցառումները կազմվել են՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի գերակայությունները, ինչպես նաև առկա հիմնախնդիրները և ֆինանսական հնարավորությունները: Ծրագիրն ուղղված է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտների՝ ժամանակի պահանջներին համահունչ զարգացմանը:

Ծրագրի նպատակն է ապահովել համակարգային բարեփոխումների իրականացման մեկնարկը՝ որպես գերակա սկզբունք ունենալով քաղաքացու շահերի և իրավունքների պաշտպանությունը:

Ինչպես Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրում, այնպես էլ մեկնարկային 2019 թվականի Երևանի զարգացման ծրագրում Երևանի քաղաքապետարանի գործունեության, ծրագրերի մշակման և իրականացման ուղենիշ լինելու է թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու ապահովումը, մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակության ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը, քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը, քաղաքի կառավարման ներառականության ապահովումը, իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակումն ու ձևավորումը:

Ծրագիրը նպատակ ունի նախանշել և լուծել մայրաքաղաքի աղբահանության և ընդհանրապես, կենցաղային կոշտ թափոնների կառավարման հիմնախնդիրը:

Ծրագրում կարևորվում է բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտում էական փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը, արդյունավետության բարձրացումը:

Նախատեսվում է տալ հասարակական տրանսպորտի համակարգային և ամբողջական արդիականացման մեկնարկը:

Գերակա ուղղություններից է ապօրինի կառուցապատման բացառումը: Հանրային կանաչ տարածքների ավելացումը, նոր հանգստի գոտիների և այգիների ստեղծումը ոլորտի առաջնահերթություններն են:

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի կարևորագույն ոլորտներից են սոցիալական ապահովությունը և առողջապահությունը: Կիրականացվեն հոգածության տարաբնույթ ծրագրեր:

Կրթական որակի բարելավումը, երեխաների կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելը, հասանելիության բարձրացումը, կրթական հաստատությունների պայմանների և հարմարավետության բարձրացումը, ինչպես նաև ներառական կրթության համակարգի զարգացումը կարևորվում են Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրով:

Ծրագրով նախատեսվում է նաև մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացմանն ուղղված նպատակային քայլերի իրականացում:

«Խելացի Երևան» ծրագրի շրջանակում նախատեսվում է կառավարման օպտիմալացում ու ծառայությունների որակի բարելավում, տեղեկատվական ժամանակակից տեղնոլոգիաների ներդրում:

Քաղաքային տնտեսության զարգացման գործում կարևորվում է համայնք-մասնավոր հատված համագործակցության խրախուսումը և համատեղ իրագործվող ծրագրերի շրջանակի ընդլայնումը:

Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2018 թվականի նոյեմբերի 14-ի նիստի դրական եզրակացությամբ «Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացվել է հանրային քննարկումների: Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ.45-Ն և Երևանի քաղաքապետի 2018 թվականի նոյեմբերի 14-ի հ.3409-Ա որոշումների համաձայն՝ 2018 թվականի նոյեմբերի 14-29-ը ներառյալ կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ հանրային բաց լսումների եղանակով: Հանրային քննարկումների արդյունքներն ամփոփվել են 2018 թվականի դեկտեմբերի 3-ին հրավիրված Խորհրդի նիստում: Խորհրդի անդամների միաձայն կողմ քվեարկությամբ տրվել է դրական եզրակացություն՝ Նախագիծը սահմանված կարգով Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար:

ՀՀ արդարադատության նախարարության 07.12.2018թ. հ. 05/14/630022-18 գրությամբ տրամադրված պետական փորձագիտական եզրակացության համաձայն՝ «Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի դրույթները նորմատիվ բնույթի չեն, նախագիծը վարքագծի պարտադիր կանոններ չի պարունակում, ուստի այն անհրաժեշտ է ընդունել այլ բնույթի ակտով, որը ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացնելու անհրաժեշտություն չկա՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի:

Նշված պետական փորձագիտական եզրակացության հիման վրա նախագիծը վերախմբագրվել է:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 83-րդ հոդվածը՝ համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնվում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2019 թվականի ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի ---ի ---Ա որոշման

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագիր

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 1
ՆԱԽԱԲԱՆ 2
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 6
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 12
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 15
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ 15
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 22
ՏՐԱՆՍՊՈՐՏ 27
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 31
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 36
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 40
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ 42
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ 47
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 49
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ 50
ՄՇԱԿՈՒՅԹ 51
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 59
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 62
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ 65
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 67
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 69
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 71
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 74
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 76
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 79
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 81
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 84
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 87
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 90
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 93
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 96

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Երևանի վարչական սահմանները սահմանված են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն):

Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ և կայուն զարգացումը:

Երևանի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1077.6 հազ. մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:

Երևանում են կենտրոնացված Հայաստանի Հանրապետության կարևորագույն պետական կառավարման մարմինները, միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Երևանում են գործում հայաստանյան բուհերի գերակշիռ մասը:

Քաղաքը հարուստ է բազմաթիվ և բազմաժանր հուշարձաններով, եկեղեցիներով, հնավայրերով: Երևանում է գտնվում Մատենադարանը, բազմաթիվ գիտական հաստատություններ, տասնյակ թատրոններ, թանգարաններ և համերգասրահներ:

2018թ. միջազգային «Ֆիտչ Ռեյթինգս» հեղինակավոր գործակալությունը վերահաստատել է Երևան քաղաքի վարկանիշը B+ (դրական կանխատեսմամբ) անվանակարգում:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը: Երևանն առաջատար դիրքերում է նաև շինարարության և առևտրի ու ծառայությունների ոլորտներում: Արագ զարգացում է ապրում տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ոլորտը:

Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 40.8%-ը, շինարարության՝ 61.0%-ը, մանրածախ առևտրի՝ 74.0%-ը, ծառայությունների՝ 82.2%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի՝ 85.4%-ը:

Երևան քաղաքում գործում է երկաթուղային կայարան և երկու օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ: Երևանում է գործում նաև Հայաստանի Հանրապետության միակ մետրոպոլիտենը:

Երևանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների:

Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը՝ հաշվի առնելով բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը:

Ծրագիրը բովանդակում է քաղաքային տնտեսության ոլորտների ներկա վիճակը, հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղղությունները: Ծրագրում օգտագործված վիճակագրական տվյալները վերցված են Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած նյութերից:

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Երևան քաղաքում կայուն զարգացման ապահովում՝ կառավարման արդյունավետության բարձրացման, քաղաքապետարանի գործունեության թափանցիկության և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելու միջոցով:*
2. *Մարդու իրավունքների, հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակության ժառանգության պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացում:*
3. *Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով:*
4. *Քաղաքի կառավարման ներառականության ապահովում:*
5. *Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի հանրահռչակում և ձևավորում:*
6. *Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծում:*
7. *Կոշտ թափոնների կառավարման ժամանակակից համակարգի ստեղծման, այդ թվում՝ աղբահանության կազմակերպման և կարգավորման, նոր աղբավայրի և աղբի վերամշակման գործարանի ստեղծման մեկնարկի ապահովում:*
8. *Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովում:*
9. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդում:*
10. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացում և գործունեության թափանցիկության ապահովում:*
11. *Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանում:*
12. *Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանում, Երևանի զբոսաշրջային ինքնության ստեղծում:*
13. *Շրջակա միջավայրի պահպանում և վերականգնում:*
14. *Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնախնդրի լուծում:*
15. *Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական հիմնարկների սպասարկման որակի բարելավման մեխանիզմների ներդրում:*
16. *Նախադպրոցական հաստատությունների և դպրոցների մատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովում:*
17. *Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում:*
18. *Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում:*
19. *«Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացում և ծառայությունների որակի բարելավում:*
20. *Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատում ու պահպանում: Երևանի՝ տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովում:*

21. *Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովում:*
22. *Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում:*
23. *Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:*
24. *Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում:*
25. *Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում:*
26. *Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման մեկնարկի ապահովում:*
27. *Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում:*
28. *Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում:*
29. *Երեխաների իրավունքների պաշտպանություն և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավում:*
30. *Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովում և այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրագործում:*

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացման և միջավայրի բարելավմանն ու կենսական հարմարավետության որակական բարձրացմանն ուղղված ծրագրերն իրականացվում են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթների համաձայն՝ նպատակ ունենալով արմատավորել Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքը:

Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակում կառուցվող՝ մասնավորապես Դավթաշեն-Աշտարակի խճուղի անընդհատ երթևեկությամբ նոր ճանապարհի միջոցով Դավթաշեն վարչական շրջանը կմիանա Աջափնյակ վարչական շրջանի Երևանի արևմտյան մուտքին՝ Աշտարակի խճուղուն, իսկ Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածով Աջափնյակ վարչական շրջանը կկապվի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հետ:

Երևան քաղաքի տրանսպորտային հաղորդակցուղիների, հանգույցների թողունակության բարձրացման, երթևեկության կազմակերպման բարելավման, շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման, տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման նկատառումներով ծավալվել են մասնագիտական քննարկումներ տրանսպորտային հանգույցների նախագծային լուծումների շուրջ, մասնավորապես՝

- Արշակունյաց պողոտայի և Գարեգին Նժդեհի փողոցի տրանսպորտային հանգույցի նախագծի 4 տարբերակների վերաբերյալ ներկայացված նախագծի բոլոր տարբերակների հիմքում անխափան երթևեկությունն ու հոսքերի բեռնաթափումն է՝ միաժամանակ ապահովելով հետիոտնի անխոչընդոտ անցուդարձը,
- Արշակունյաց պողոտայի, Ագաթանգեղոսի և Գր.Լուսավորիչի փողոցների հատման մասում խաչմերուկի կարգավորման հնարավոր տարբերակի ընտրություն,
- Արգավանդի խաչմերուկի ճանապարհատրանսպորտային հանգուցի կարգավորման տարբերակների քննարկում:

Էսքիզային նախնական նախագծեր են քննարկվել Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում՝ ՀՀ կառավարության 2017-2018 թվականների որոշումների հիմքով նախատեսված քաղաքաշինական ներդրումային առաջարկությունների հիման վրա՝

- Մոնթե Մելքոնյան փողոցին հարակից 6.5 հա մակերեսով հողամասում՝ «Վերածնունդ» երիտասարդական ավանի կառուցում, բնակարանային ապահովության սոցիալական-ներդրումային ծրագիր, որը իրականացվելու է Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում հասարակական կազմակերպության կողմից,
- Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ Էմինեսկուի փողոցին կից (Մյասնիկյան պողոտայի և Ռուբինյանց փողոցի միջանկյալ տարածքում) բնակելի-բազմաֆունկցիոնալ համալիրի էսքիզային առաջարկ,
- Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում՝ Նիկողայոս Տիգրանյան փողոցին կից բնակելի բազմահարկ կառուցապատմամբ թաղամասի էսքիզային առաջարկ:

«Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եղնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում իրականացված շինարարական աշխատանքները շարունակվելու են 2019 թվականին, իսկ մյուս կառուցապատողի կողմից ՀՀ կառավարության որոշմամբ գույքերի օտարման գործընթացի համար մինչև 2018թ. հունիսը սահմանված ժամկետում աշխատանքներն ամբողջությամբ չեն իրականացվել: Ներկայումս

շրջանառվում է տարածքը չօտարված գույքերի մասով նոր գերակա հանրային շահ ճանաչելու կամ նախկին որոշման ժամկետը երկարաձգելու որոշման նախագծերը: Համապատասխան որոշման ընդունման պարագայում գույքերի օտարման աշխատանքները կշարունակվեն 2019 թվականի ընթացքում:

Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշման կատարումն ապահովող միջոցառումների շրջանակներում թողարկվել են հողամասերի գլխավոր հատակագծեր ծրագիրն իրականացնող կառուցապատողի և նրանից առանձնացման եղանակով ստեղծված ընկերությունների անունով: Սեփականության օբյեկտների նկարագրության արձանագրությունների կազմման գործառույթներ են իրականացվել և առաքվել են գույքի սեփականատերերին: Համաձայնեցվել է թաղամասի կառուցապատման սխեման:

Ընթացքում է ՀՀ կառավարության կողմից ընդունված ներդրումային ծրագիրը բազմաբնակարան շենքի և Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի կառուցման վերաբերյալ: Ներկայումս ծրագրի առաջին փուլով Ամիրյան փողոցի մոտ կառուցվում է բազմաբնակարան շենքը, որի ավարտը նախատեսված է 2019 թվականին: Երկրորդ փուլով Անրի Վերնոյի փողոցի մոտ նախատեսված Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի նոր մասնաշենքի կառուցման համար տրամադրվել է նախագծման թույլտվություն:

Հիմնախնդիրներ

1. *Հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում հանրային շահի ոտնահարում:*
2. *Քաղաքային զարգացման քաղաքաշինական նոր ռազմավարության անհրաժեշտություն:*
3. *Քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ հանրային լայն քննարկումների և հասարակական հարցումների իրականացման անհրաժեշտություն*
4. *Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով անհրաժեշտ խիստ վերահսկողության բացակայություն:*
5. *Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության բացակայություն:*
6. *Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդրի առկայություն:*
7. *Երևանի գլխավոր հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացման, այդ թվում՝ ընթացքի ուսումնասիրության, հաշվառման, անհրաժեշտ փոփոխությունների իրականացման, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակման անհրաժեշտություն:*
8. *Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար օրենքով նախատեսվող անհրաժեշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն:*
9. *Կայուն զարգացման «ՌԻՕ+20» գագաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ», «Կանաչ ճարտարապետություն», «Խելացի քաղաքներ», «Կանաչ քաղաքաշինություն» և «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» սկզբունքներից և գաղափարախոսությունից բխող միջոցառումների և աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:*

10. *Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:*
11. *Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովման, ճանապարհափոդոցային ցանցի ընդլայնման, ժամանակակից չափանիշներին համապատասխանող ճանապարհների և դրանց երկայնքով արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքների և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցման անհրաժեշտություն: Մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափող ու շրջանցող ճանապարհների կառուցման, անընդհատ երթևեկություն ապահովելու նպատակով տարբեր մակարդակների վրա տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների կառուցման, ավտոկայանատեղերի կառուցման և գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման խիստ անհրաժեշտություն:*
12. *Կանաչ տարածքների և զբոսայգիների բարեկարգում և վերականգնում, նոր այգիների և հանգստի գոտիների հիմնման անհրաժեշտություն:*
13. *Բնակելի թաղամասերի վերակառուցման, զբոսաշրջային ռեսուրսների զարգացման, հանգստի և ժամանցի նոր գոտիների ստեղծման նպատակով քաղաքային տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքաշինական ներդրումային ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:*
14. *Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացման անհրաժեշտություն:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:
2. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության խստացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ:
3. Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն (City Developmetn Strategy), որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջմունքների բավարարմանը, քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը, տրանսպորտի և քաղաքային այլ ենթակառուցվածքների կարգավորմանը, կնպաստի քաղաքացի-քաղաքապետարան կապի ամրապնդմանն ու քաղաքացիների անմիջական մասնակցությանը քաղաքային կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների կայացմանը և լուծմանը:
4. Նախատեսվում է արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների լուսավորման ցանցը: Ծրագրի նպատակն է խթանել Երևան քաղաքում էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացմանը՝ օգտագործելով էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:
5. Երթևեկության բեռնաթափման նպատակով նախատեսվում է կառուցել վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիներ: Վերջին տարիներին մայրաքաղաքում ավտոտրանսպորտային միջոցների քանակի աճը առաջացնում է ժամանակակից բազմաֆունկցիոնալ ավտոկայանատեղերի կառուցման անհրաժեշտություն: Ծրագրի

նպատակն է լուծել Երևան քաղաքում ավտոմեքենաների կայանման խնդիրը, բեռնաթափել ծանրաբեռնված երթևեկությունը և նպաստել խցանումների նվազմանը:

6. Նախատեսվում է բարեկարգել առկա ստորգետնյա անցումները և ապահովել դրանց անվտանգությունը: Ծրագրի նպատակն է Երևան քաղաքում ապահովել բարեկարգ և միջազգային ստանդարտներին համապատասխան ստորգետնյա անցումների կառուցումը և անվտանգ շահագործումը: Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:
7. Նախատեսվում է 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացնել վերաբնակեցման ծրագիր՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունները:
8. Նախատեսվում է Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով. 1-ին փուլ՝ Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում, Գլխավոր հատակագծի հայեցակարգի մշակում:
9. Նախատեսվում է Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030թ. զարգացման համալիր սխեմայի մշակում. 1-ին փուլ, Երևանի Գլխավոր հատակագծի իրագործման և ճանապարհատրանսպորտային ցանցի զարգացման ընթացքի ուսումնասիրություն և վերլուծություն:
10. Նախատեսվում է իրականացնել Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն և հաշվառում:
11. Նախատեսվում է Երևանի Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների իրականացում:
12. Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):
13. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ուղղությամբ կառուցապատման աշխատանքներ կընթանան Երևան քաղաքի գլխավոր պողոտայի՝ Աբովյան, Փավստոս Բուզանդի, Եզնիկ Կողբացու և Արամի փողոցներով պարփակված տարածքներում՝ արդիականացնելով, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ: Կառուցապատողների կողմից կշարունակվեն սկսված շինարարական, ինչպես նաև ՀՀ կառավարության որոշման վերանայման դեպքում ամբողջությամբ չիրականացված գույքերի օտարման աշխատանքները:
14. Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու համար ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշմամբ տարածքում առկա գույքերի օտարման գործընթացով (որի համար սահմանված ժամկետ է 2023թ. հունվարի 1-ը) 2019 թվականին նախատեսվում է իրականացնել նշված աշխատանքները ներդրողների կողմից:
15. Նախատեսվում է շարունակել համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ ծրագրերի իրականացումը, մասնավորապես՝
    - Մոնթե Մելքոնյան փողոցի հարակից տարածքում Մանկական, երիտասարդական, ընտանեկան հանգստի և ժամանցի կենտրոնի ստեղծման ներդրումային ծրագրի ուղղությամբ աշխատանքներ:
    - ՀՀ կառավարության կողմից ընդունված ներդրումային ծրագրի առաջին փուլով նախատեսված Ամիրյան փողոցի մոտ բազմաբնակարան շենքի շինարարական աշխատանքների ավարտ և երկրորդ փուլով՝ Անրի Վերնոյի փողոցի մոտ Սոս

Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հիման վրա շինարարության սկիզբ:

- Մոնթե Մելքոնյան փողոցի հարակից տարածքում 6.5 հա մակերեսով հողամասում՝ «Վերածնունդ» երիտասարդական ավանի նախագծային փաստաթղթերի փուլային համաձայնեցումներ և շինարական աշխատանքների մեկնարկ:
- «Ինժեներական քաղաք»-ի ստեղծման ծրագրի ուղղությամբ աշխատանքներ:
- Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղիների կառուցման նպատակով ներդրողների հետ բանակցությունների վարում (Շահումյանի, Սախարովի, Ռուսաստանի հրապարակներում):
- «Էրեբունի», «Կարմիր Բլուր» և «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանների վերակառուցման (զբոսաշրջիկների սպասարկման կենտրոնների կառուցմամբ) ծրագրերի ուղղությամբ աշխատանքներ:
- Նախատեսվում են «Զվարթնոց» օդանավակայան տանող նոր տրանսպորտային հաղորդակցուղու, Կոմիտասի պողոտային զուգահեռ այլընտրանքային ճանապարհի կառուցման, ինչպես նաև նոր ճոպանուղային ցանցի ստեղծման նպատակով հետազոտական աշխատանքներ:
- Ծովակալ Իսակովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Կենտրոնը շրջանցող ճանապարհի (այն հանդիսանում է կառուցված՝ Իսակովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող մայրուղու անմիջական շարունակությունը, ինչն իր մեջ ներառելու է Արշակունյաց պողոտայի վրա նախատեսված հանգույցի և Հրազդան գետի վրայով անցնող նոր կամրջի կառուցում) շինարարության հնարավորության ստեղծում (նախագծային փաթեթը մշակված է):

16. Նախատեսվում է աշխատանքների իրականացում Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնման, առկա այգիների և զբոսայգիների վերականգնման ուղղությամբ:
17. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով, անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց ստեղծելու նպատակով Երևանում շարունակվելու են նախորդ տարիներից մեկնարկած ծրագրով միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների շինարարության հետ կապված աշխատանքները: Ծրագրում ընդգրկված են Արգավանդ-Շիրակի փողոց և Բաբաջանյան-Աշտարակի խաչուղի ճանապարհահատվածները:
18. Նախատեսվում են իրականացնել տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման աշխատանքներ, մասնավորապես՝
    - Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկում տրանսպորտային հանգույցի նախագծային տարբերակի հստակեցում:
    - Արշակունյաց պող. Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ) խաչմերուկում տրանսպորտային հանգույցի նախագծային տարբերակի հստակեցում:
19. Նախատեսվում է Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացման ծրագրի մշակում, որը պետք է նախատեսի՝
    - Բնակելի շենքերի հաշվառում, անձնագրավորում և շենքերի ու շինությունների անձնագրային տվյալների միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում,
    - Տիպարային և անհատական նախագծերով կառուցված բնակելի շենքեր ճակատների երեսպատում և տաքացում,
    - Տիպարային և անհատական նախագծերով կառուցված բնակելի շենքեր ուղղաձիգ կանաչապատում,

- Տիպարային և անհատական նախագծերով կառուցված հարթ տանիքներով բնակելի շենքեր տանիքների բարեկարգում, կանաչապատում և օգտագործում որպես հանգստի գոտիներ,
- Արևային էներգիայի օգտագործում,
- Բնակելի խմբերի և թաղամասերի բակերի վերակառուցում և բարեկարգում,
- Բնակելի ֆոնդի նորացում՝ 3-րդ և 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան բնակելի և հանրակացարանային շենքերի հիմնախնդիրների շարունակական լուծում, առաջին զանգվածային տիպարային բնակելի շենքերի և թաղամասերի վերակառուցման հիմնախնդիրների լուծում:

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդային գործունեությունը մայրաքաղաքում իրականացվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, Երևան քաղաքի ավագանու 2009թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» 37-Ն որոշման և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է մեծ և փոքր գովազդային վահանակների և շենք-շինություններին տեղադրված գովազդային մակերեսների գույքագրում, էլեկտրոնային բազայի միջոցով կառավարում, գովազդի մասով վարչական շրջանների աշխատանքների համակարգում, մշակված հայեցակարգի տեղայնացում, գովազդային վահանակների արդիականացում, շենք-շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների անձնագրերի մշակում և գովազդային դաշտի օպտիմալացմանն ու արդիականացմանն ուղղված այլ ծրագրեր: Իրականացվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքներ, հսկողություն է իրականացվում մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքն օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Մայրաքաղաքի ձևավորման ոլորտում իրականացվում են աշխատանքներ՝ ուղղված մայրաքաղաքի բնակիչների, հյուրերի և զբոսաշրջիկների համար Երևանն առավել գունագեղ, էսթետիկ, համահունչ կահավորված ու հարմարավետ դարձնելուն:

Հիմնախնդիրներ

1. *Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտություն՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովում*
2. *Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:*
3. *Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման անհրաժեշտություն*
4. *Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն*
5. *Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացման անհրաժեշտություն*
6. *Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն*
7. *Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորման ահրաժեշտություն*
8. *Ճակատային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն*
9. *Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն*
10. *Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել գովազդային տարածքների հաշվառման, չափագրման, իրավական դաշտին համապատասխանեցմանն ուղղված աշխատանքներ՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովման նպատակով:
2. Նախատեսվում է մշակել արտաքին ձևավորման միասնական չափանիշներ՝ մասնագիտական խմբերի և բնակիչների մասնակցության ապահովմամբ:
3. Նախատեսվում է իրականացնել գովազդային վահանակների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով:
4. Նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատաքներ՝ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:
5. Նախատեսվում է կազմել 100 շենքի գովազդային անձնագրեր, որով կհաստակեցվի արտաքին գովազդի տեղադրման վայրը, գունային լուծումները, ինչպես նաև գովազդային վահանակների արտաքին տեսքը և մակերեսները:
6. Մասնագիտացված գովազդային կազմակերպությունների հետ՝ գովազդային վահանակների արդիականացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:
7. Սոցիալական գովազդների տեղադրումը կիրականացվի համայնքային և/կամ պետական հանձնաժողովի կողմից այդպիսին ճանաչվելուց հետո:
8. Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:
9. Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝ Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:
10. Նախատեսվում է կյանքի կոչել պանելային շենքերի ճակատների գունազարդման աշխատանքները:
11. Ելնելով մայրաքաղաքի համաչափ զարգացման սկզբունքից՝ շարունակվելու է վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը, որի շրջանակներում վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարազարդման աշխատանքներ բակային տարածքներում:
12. Լանդշաֆտների ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:
13. Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, նոր նստարանների, աղբամանների գնում և տեղադրում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը: Կտեղադրվի շուրջ 130 զրուցարան:
14. Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով ներկման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և

հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:

15. Նախատեսվում է լոգոտիպերի մշակում, տարբեր միջոցառումների ժամանակ քաղաքի տոնական ձևավորման նպատակով՝ նախորոք մշակված հայեցակարգի և գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների կիրառմամբ:
16. Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Փողոցների բարեկարգում

Երևան քաղաքում առկա են 1200-ից ավելի փողոցներ՝ ընդհանուր 942 կմ երկարությամբ, իսկ փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15200 հազ.քմ:

Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են մինչև 60տ ծանրություն ունեցող տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտբետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ:

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում: Բացի այդ իրականացվում են մայրաքաղաք մտնող մայրուղիների, հրապարակների և վերանորոգման կարիք ունեցող այլ տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. *Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում*
2. *Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում*
3. *հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում*
4. *հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում*
5. *բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերականգնում*
6. *մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Հաշվի առնելով վարչական շրջանների համաչափ զարգացման քաղաքականությունը՝ 2019թ. մայրաքաղաքում ասֆալտապատման աշխատանքներ կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, բակերում, մայթերում, ինչպես նաև առկա գրունտային ճանապարհներին:

Նախատեսվում է իրականացնել շուրջ 650 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 20%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, 80%-ը գլխավոր և երկրորդական փողոցներում և մայթերում ինչպես նաև շուրջ 5,000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

Փողոցների պատշաճ մակարդակը պահպանելու նպատակով կշարունակվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման և շուրջ 400 հազ.գծմ ճաքալցման աշխատանքները:

Հենապատերի նորոգում-վերականգնում

Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է հենապատերի վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեցող, ինչպես նաև նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն ունեցող շուրջ 80 հասցե:

Հիմնախնդիրներ

1. *Քանդված և վնասված հենապատերի բացառում,*

2. քայքայված, վթարային հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում
3. նոր հենապատերի կառուցում

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Հենապատերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը շարունակական է: 2019թ. ևս կիրականացվեն հենապատերի ընթացիկ և տեղային նորոգման աշխատանքներ: Մեծածավալ նորոգման կարիք ունեցող հենապատերի դեպքում ըստ անհրաժեշտության կպատվիրվեն նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում և նորոգում

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվում են հետիոտնային անցումներ, վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում:

Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով քաղաքացիների առաջարկները:

Երևան քաղաքում առկա է թվով 66 անցում՝ 27 վերգետնյա և 39 ստորգետնյա, որից մեծ մասը բավարար վիճակում են, մի շարք գետնանցումներում անհրաժեշտ է իրականացնել վերանորոգման աշխատանքներ՝ հիմնականում երեսապատման, աստիճանների նորոգման, հարդարման, ջրամեկուսացման, ջրահեռացման և լուսավորության ուղղություններով:

Երևանի քաղաքապետարան-մասնավոր համագործակցության շրջանակներում մշակվում է համապատասխան ծրագրի նախագիծ՝ մայրաքաղաքի ստորգետնյա անցումներում գործող վարձակալող սուբյեկտների հետ միասին իրականացնելու ստորգետնյա անցումների աստիճանների վերանորոգման աշխատանքները:

Հիմնախնդիրներ

1.Հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է կառուցել վերգետնյա անցումներ: 2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում՝ Թբիլիսյան խճուղի շամպայն գինիների գործարանի մոտ, Աջափնյակ վարչական շրջանի Հասրաթյան փողոց գերեզմաններ տանող ճանապարհի մոտ:

Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝վարձակալների հետ համագործակցությամբ: Գույքագրման աշխատանքների ավարտից հետո կհստակեցվի վերանորոգման առավել կարիք ունեցող գետնացումների ցանկը:

Թեքահարթակների կառուցում

Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում հենաշարժողական խնդիրներ և սահմանափակ կարողություններ ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ

մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ:

Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում:

Թեքահարթակների կառուցման տեղերը որոշելու նպատակով քննարկումներ են անցկացվում հաշմանդամների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ:

2013-2018թթ. ընթացքում մայրաքաղաքում կառուցվել է շուրջ 2521 թեքահարթակ, որից 2131-ը կառուցվել է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով, իսկ 390-ը՝ մասնավոր ընկերությունների կողմից:

Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են վատ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ դեղին գույնի անհարթություններով, նախազգուշացնող բետոնե սալիկներ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Թեքահարթակների կառուցման ծրագիրը շարունակական է: 2019թ. նախատեսված է կառուցել շուրջ 180 թեքահարթակ, կտեղադրվեն նաև վատ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ սալիկներ:

Մայթերի վերանորոգում և բարեկարգում

Հարմարավետություն և անվտանգություն ապահովող շինարարական աշատանքների իրականացումից բացի բարեկարգման ծրագրերը ենթադրում են նաև մայրաքաղաքին հարիր արտաքին տեսքի ապահովում:

Կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես. վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքները կշարունակվեն նաև 2019 թվականին:

Կամրջային կառուցվածքների սպասարկում, շահագործում, վերականգնում և ամրացում:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը:

Կամուրջների հիմնանորոգման նախագծեր կազմելիս հաշվի են առնվում ստացված առաջարկությունները և, կատարվող ուսումնասիրությունների արդյունքում, հնարավորության սահմաններում, իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Կամրջային կառույցների հիմնանորոգում

2. Ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում

2018 թվականին նախատեսվող աշխատանքներ

Կշահագործվեն և սպասարկման ծառայություններ կմատուցվեն մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների համար:

Երևան քաղաքում շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգում և քարերի մաքրում, վթարային պատշգամբների նորոգում

Մայրաքաղաքի պատշաճ տեսքը ապահովվում է նաև շենքերի ճակատային հատվածների մաքրման, լվացման, նորոգման և ներկման, բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ:

2019 թվականի դրությամբ մաքրվել և նորոգվել են 510 շենքերի ճակատային հատվածներ: Վերանորոգվել են շուրջ 528 շենքերի 1093 պատշգամբներ:

Հիմնախնդիրներ

1.Շենքերի ճակատային մասերի մաքրում, լվացում, ներկում

2.Մայրաքաղաքի պատշաճ արտաքին տեսքի ապահովում

3.Վթարային պատշգամբների նորոգում

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

2019թ. ծրագրերով ըստ անհրաժեշտության կլինի իրականացնել մոտ 60 շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ, ինչպես նաև կվերանորոգվեն շուրջ 150 վթարային շքապատշգամբներ:

Հանգստի գոտիների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում

Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով իրականացվում են նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1.Նոր հանգստի գոտիների ստեղծում

2.բակերի և այգիների բարեկարգում

3.գործող զբոսայգիների բարեկարգում և տարածքի ընդարձակում

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

2019թ. ծրագրում ընգրկելու համար առաջարկվել է քննարկել առկա նախագծերով օբյեկտներ, մասնավորապես Օղակաձև այգու 1-6 հատվածների վերակառուցման և բարեկարգման աշխատանքները:

Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատությունների հիմնանորոգում

Ծրագրի շրջանակում կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում իրականացվում են հիմնանորոգման, ջեռուցման ապահովման, տանիքների վերանորոգման աշխատանքներ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

2019թ. ծրագրով վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում Երևանի ենթակայության շուրջ 30 մանկապարտեզներում:

Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում

Երևանի քաղաքապետարանի ծրագրերով կատարվում են Երևան համայնքի ենթակայության պոլիկլինիկաների ջեռուցման համակարգերի կառուցման և լուսամուտների փոխարինման աշխատանքները:

2018թ. թվով 10 պոլիկլինիկաներում կատարվել են տանիքների վերանորոգման աշխատանքներ:

2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում՝ «Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ, «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ, «Նոր Արաբկիր պոլիկլինիկա» ԱԿ ՓԲԸ, «Թիվ 16 պոլիկլինկա» ՓԲԸ «Թիվ 20 պոլիկլինիկա»ՓԲԸ:

Երևան քաղաքի ջրային կառույցների սպասարկման ու շահագործման ծառայությունների իրականացում

Մայրաքաղաքին յուրահատուկ տեսք ու թարմություն են տալիս շատրվանները, ջրավազանները և բազմաթիվ ցայտաղբյուրները, որոնք հատուկ են մեր մայրաքաղաքին:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 36 ջրային կառույցների շահագործումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են դրանց ընթացիկ նորոգման և պահպանման ծառայություններ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Ջրային կառույցների վերականգնման ծրագիրը կրում է շարունակական բնույթ:

2019թ. շարունակվելու են մայրաքաղաքի 36 ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները:

Նախատեսվում է նաև համայնք-մասնավոր հատված շարունակական համագործակցության միջոցով իրականացնել բարեկարգման կարիք ունեցող շատրվանների վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

Հուշարձանների պահպանում (պատվանդանների վերանորոգում, կառուցում)

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է ՀՀ կառավարության 20.04.2002թ. հ.438 որոշման համաձայն Երևանի սեփականություն հանդիսացող 401 հուշարձանների պահպանումը, սպասարկումն ու պատվանդանների նորոգման աշխատանքները:

2018թ. կատարվել են Արամ Մանուկյանի արձանի պատվանդանի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքները:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են հուշարձանների լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներ:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքում գործում են առևտրի 8652 օբյեկտներ, սպառողական ապրանքների 7, գյուղատնտեսական արտադրանքի 10, գյուղմթերքի փոքրածավալ 19 շուկաներ, տոնավաճառներ՝ 5, առևտրի կենտրոններ՝ 26, հանրային սննդի 1630 և կենցաղային ծառայություններ մատուցող 2830 օբյեկտներ:

Առևտրի օբյեկտների 62,3%-ը, հանրային սննդի կազմակերպման օբյեկտների 76%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 68%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջաններում:

Մայրաքաղաքի բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի միջոցով: Եթե առևտրի այդ տեսակների շրջանառությունը մանրածախ առևտրի ողջ ծավալում 2018թ. 1-ին կիսամյակի ընթացքում կազմել է 91,8%, ապա գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, տաղավարների ու կրպակների միջոցով կատարվող առևտրի շրջանառությունը ունի չնչին տեսակարար կշիռ և նշված ժամանակաշրջանում այն կազմում է ընդամենը 2.4%:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 90%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության մոտ 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունը առանձին–առանձին վերցրած կազմում է ընդամենի 0.03%-ից մինչև 6.2%:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի,սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները:

Հիմնախնդիրներ

1. *Երևան քաղաքում առևտրի և սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտների տեղաբաշխման և բնակչության առաջարկի և պահանջարկի տվյալների ուսումնասիրությունների բացակայություն*
2. *Երևան քաղաքի ծայրամասերում առևտրի և սպասարկման նոր օբյեկտների բացակայություն*
3. *Գյուղատնտեսական արտադրանքի ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ նոր շուկաների կազմակերպման անհրաժեշտություն*
4. *Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքը բացառելու նպատակով ուժեղացված հսկողության սահմանում*
5. *Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ մշտական հսկողության սահմանում*
6. *Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների), ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաների ու տոնավաճառների և շինանյութերի վաճառքի կետերի մի մասի ապամոնտաժման կամ արդիականացման անհրաժեշտություն*
7. *Հսկողության խստացման անհրաժեշտություն՝ առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների առևտրի օբյեկտից*

դուրս ցուցադրումն արգելելու և օրենսդրական պահանջներն ապահովելու ուղղությամբ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքները

1. Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով նախատեսվում է առաջարկությունների ձևավորում և ներկայացում:
2. Նախատեսվում է ոլորտում օրենքով տրված լիազորությունների շրջանակներում իրականացնել համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում:
3. Նախատեսվում է բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:
4. Մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, բնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:
5. Նախատեսվում է առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի մշակում:
6. Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով նախատեսվում է դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում:
7. Կիրականացվի Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և Երևանի բյուջեի համապատասխան մուտքերի ապահովում:
8. Նախատեսվում է առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում:
9. Նախատեսվում է ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:
10. Հետիոտնի երթևեկի խոչընդոտը բացառելու նպատակով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգման ուղղությամբ:
11. Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթություն կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:
12. Հետևողական աշխատանքներ կիրականացվեն սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման բացառման ուղղությամբ:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա 4878 բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է համատիրությունների, լիազորագրային կառավարիչների, հավատարմագրային կառավարիչների և վարչական շրջանների ղեկավարների կողմից:

ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» հ.1161-Ն որոշման հիման վրա Երևանի քաղաքապետարանում մշակվել և կիրառվել են պարտադիր նորմերի վերահսկման մեխանիզմներ:

Միաժամանակ «Համատիրությունների մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված վերահսկողության առկա մեխանիզմների ոչ հստակությունը որոշակի դժվարություններ է ստեղծում ընդհանուր ժողովի հրավիրման, բյուջեների կազմման և հաստատման, ֆինանսական միջոցների գանձման և ծախսման, կանոնադրական այլ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման անհրաժեշտություն*
2. *Ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն*
3. *Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն*
4. *3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն*
5. *Վերելակային տնտեսության ավելի քան 90 տոկոսի արդիականացման, կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման անհրաժեշտություն*
6. *Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 700 շքամուտք:
2. Կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 60000քմ հարթ և 30000քմ թեք տանիքների վերանորոգում:
3. Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործումից հետո նախատեսվում է ներդնել բազմաբնակարան շենքի կառավարման նոր մոդել, որը կապահովի գործառույթների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ:
4. Նախատեսվում է Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի և ՀՀ Երևան համայնքի միջև 2014թ. փետրվարի 20-ին և դեկտեմբերի 22-ին կնքված

փոխըմբռնման հուշագրերի շրջանակներում բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթում հաղթող ճանաչված «Սանիթեք» և «Սանիթեք Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունների կողմից: Երևան քաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1300-1400տ. կենցաղային աղբ, որից 750-800տ. տեղադրվում է Նուբարաշենի քաղաքային աղբավայրում, իսկ մնացածը՝ Աջափնյակ վարչական շրջանի, ինչպես նաև Մասիսի աղբավայրերում:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա զբաղեցնելով շուրջ 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-295 հազ. տոննա կենցաղային աղբ:

2015թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, Եվրոպական միության և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրվել է կոշտ կենցաղային թափոնների ոլորտում համագործակցելու պատրաստակամության մասին փոխըմբռնման Հուշագիր:

Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի խցանված աղբամուղերի մաքրման, ախտահանման, աղբընդունիչի վերանորոգման, շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև գետերի հունների մաքրման աշխատանքների իրականացման համար կնքվել է ծառայությունների գնման պայմանագիր 10 տարի ժամկետով:

Հիմնախնդիրներ

1. *Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար մակարդակ*
2. *Երևանի հանրային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման նոր մեխանիզմների անհրաժեշտություն*
3. *Բնակչության շրջանում աղբի տեսակավորման և տարբերակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն*
4. *Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցման անհրաժեշտություն՝ ժամանակակից միջազգային չափանիշների խստագույն պահպանմամբ*
5. *Գործող աղբավայրերի մեկուսացման անհրաժեշտություն՝միջազգային չափորոշիչներին համապատասխան*
6. *Մայրաքաղաքում աղբավերամշակման գործարանի կառուցման անհրաժեշտություն*
7. *Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Վերանայել Երևանի փողոցների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացը: Նախատեսվում է մայրաքաղաքում լիարժեք և արդյունավետ լուծում տալ աղբահանության, սանիտարական մաքրման և ձնամաքրման ոլորտի հիմնախնդիրներին և ապահովել եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ ծառայություններ:
2. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:
3. Աշխատանքներ կիրականացվեն ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, Եվրոպական միության և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրած կոշտ կենցաղային թափոնների ոլորտում համագործակցելու պատրաստակամության մասին փոխըմբռման հուշագրով նախատեսված ծրագրի իրագործման ուղղությամբ, որի արդյունքում նախատեսվում է ստեղծել թափոնների կառավարման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգ, ինչպես նաև կառուցել նոր սանիտարական աղբավայր գործող աղբավայրի հարևանությամբ:
4. Կշարունակվեն ձեռնարկվել բոլոր անհրաժեշտ միջոցները չնախատեսված վայրերում աղբ տեղադրելու դեպքերը բացառելու ուղղությամբ:
5. Նախատեսվում է վերջնականապես լուծել անվավոր կոնտեյներների հարթակների կառուցման խնդիրը:
6. Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից:

Արտաքին լուսավորություն

Շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2018 թվականին կազմել է 1643 կմ, 2532 օբյեկտ:

Հիմնախնդիրներ

1. *Բյուջեի խնայողությունների ապահովման անհրաժեշտություն*
2. *Երևան քաղաքում արտաքին լուսավորության ցանցի արդիականացման, կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն*
3. *Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորման անհրաժեշտություն*
4. *Դիսպետչերական ծառայության ավտոմատացման անհրաժեշտություն, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի բացակայություն*
5. *Նոր տրանսպորտա-տեխնիկական սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների բացակայություն*
6. *Ժամանակակից և էներգախնայողական LED լուսատուների տեղադրման անհրաժեշտություն*
7. *Լուսատեխնիկական լաբորատորիայի բնականոն աշխատանքի ապահովման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման, ընթացիկ նորոգման աշխատանքներ: Նորոգման աշխատանքների իրականացման շնորհիվ կվերականգնվի ևս 30 կմ ցանց և 2019թ. տարեվերջին Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1673կմ:
2. Նախատեսվում է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Մասնավորապես՝ Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի շրջանակներում խնայված միջոցների հաշվին առկա լուսատուների ԼԵԴ լուսատուներով փոխարինում:
3. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի հետ կնքված վարկային պայմանագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Պայմանագրով նախատեսվում է[a]
   - վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները[a] հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների տեխնիկական տվյալները,
   - փոխարինել 4400 հատ նատրիումական լուսատուները 2200 հատ ժամանակակից, որակյալ լուսադիոդային լուսատուներով,
   - իրականացնել գոյություն ունեցող մալուխային ցանցի անցկացումը ստորգետնյա խրամուղիներում:
4. Շահագործման աշխատանքների կազմակերպման ներկայիս եղանակից անցնել շուրջօրյա շահագործման՝ ավելացնելով սպասարկող անձնակազմի թիվը, կազմավորել հերթափոխներ, որոնք շուրջօրյա կիրականացնեն մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործումը և պահպանումը: Նախատեսվում է սպասարկման համար ձեռք բերել 4 հատ նոր տեխնիկա (ավտովերնակ, ավտոլաբորատորիա), գոյություն ունեցող հնացած տեխնիկան փոխարինելու, ինչպես նաև շուրջօրյա աշխատանքներ կատարելու համար:
5. «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք» ծրագրի շրջանակում նախատեսվում է 45 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի արտադրությունը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է վերոնշյալ շենքերի շքամուտքերում (առաջինից մինչև վերջին հարկ) և բակային տարածքներում տեղադրել ժամանակակից էներգախնայող LED լուսատուներ: Կներդրվի նաև տվյալների առցանց հավաքագրման և վերլուծության մոնիթորինգային համակարգ:
   Ծրագրի նպատակն է՝ խթանել «կանաչ տնտեսական աճ»-ը, էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով կրճատել բնակիչների էներգետիկ ծախսերը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և բարձրացնել հարմարավետության մակարդակը՝ արդյունքում նպաստելով բնակիչների կյանքի որակի բարելավմանը:

Տ Ր Ա Ն Ս Պ Ո Ր Տ

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգը ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 54 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների 662 ավտոբուսով: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և 18 մասնավոր կազմակերպությունների կողմից:

Երևան քաղաքում գործող երթուղային ցանցով նախատեսված է 45 ավտոբուսային երթուղի (606 միավոր շարժակազմ), որից փաստացի գործում են 40 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 420-430 միավոր շարժակազմ: Որոշակիորեն աճել է ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը: Արդյունքում ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում աճել է մոտ 0.6%-ով՝ կազմելով մոտ 42.4%:

Երևան քաղաքում դեռևս անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը, երթուղային ցանցում ներառված որոշ երթուղիներ չեն սպասարկվում, մի մասը համալրված է մասնակիորեն:

Գործող երթուղային ցանցով նախատեսված է 67 միկրոավտոբուսային երթուղի (1383 միավոր շարժակազմ): Փաստացի գործում է 71 միկրոավտոբուսային երթուղի (երթուղային ցանցով նախատեսված թվով 4 ավտոբուսային երթուղիներ դեռևս սպասարկվում են միկրոավտոբուսներով), որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 1300 միկրոավտոբուսներով, օրական երթուղիներ է դուրս բերվում միջին հաշվով 950-1000 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 39 մասնավոր կազմակերպություններ:

Վերջին տարիներին միկրոավտոբուսների թվաքանակի կրճատման հետևանքով (մոտ 1300-ով) զգալիորեն նվազել է միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը: Չնայած դրան, այսօր մայրաքաղաքում ուղևորափոխադրումների հիմնական մասը դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ծավալի մոտ 45.9%-ը:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում երթուղային նոր ցանցով նախատեսվում է առավելագույնի հասցնել ավտոբուսային երթուղիները՝ բացառելով միկրոավտոբուսային երթուղիների առկայությունը:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 79 տրոլեյբուս (1-ը՝ տեխօգնության): Գործող երթուղային ցանցով նախատեսված է 10 տրոլեյբուսային երթուղի (108 միավոր շարժակազմ), որից փաստացի սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 42-45 միավոր շարժակազմ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերլուծությունը ցույց է տվել, որ 2018թ. որոշակիորեն նվազել է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը (մոտ 5.0%-ով) և տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմել է մոտ 2.6%:

Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Վերջին տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայունացման և աճի միտում: 2018թ. ևս արձանագրվել է ուղևորափոխադրումների ծավալի որոշակի աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ մոտ 14.0%-ով: Մետրոպոլիտենով ուղևորափոխադրում-ների տեսակարար կշիռը ևս ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում աճել է և կազմում է մոտ 9.1%:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի հիման վրա մշակում է մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների փաթեթ, որն ենթադրում է հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա նոր արդյունավետ երթուղային ցանցի նախագծում, հստակ պատկերացում տրանսպորտային պարկի քանակի և տեսականու, սպասարկման չափորոշիչների, ինչպես նաև ուղևորահոսքի մասին, միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորության վերլուծություն, զեղչային համակարգի կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն ու շահագործում և այլն:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպելու նպատակով սահմանված է թվով 841 կանգառ, որոնցից 348-ում տեղադրված են կանգառասրահներ և կանգառանշաններ, 493-ում՝ միայն կանգառանշաններ:

Մայրաքաղաքի նոր երթուղային ցանցի ներդրումը ենթադրում է նաև շարունակել ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների որոշ նախկին կանգառների վերականգնման, ինչպես նաև, ըստ նոր երթուղիների ուղեգծերում ընդգրկված ճանապարհահատվածների՝ նոր կանգառների սահմանման ուղղությամբ նախկինում մեկնարկած աշխատանքները:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի ոլորտի կանոնակարգման նպատակով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի համաձայն ընթանում են գործնական միջոցառումներ՝ մայրաքաղաքի համայնքային սեփականությունը հանդիսացող փողոցներում (ճանապարհահատվածներում) և հրապարակներում կայանատեղերի կազմակերպման ու կահավորման աշխատանքներն իրականացնելու ուղղությամբ:

Որպես էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոց Երևան քաղաքում էլեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու 14.02.2017թ. հ.675-Ն որոշմամբ որպես վառելիք բացառապես էլեկտրաէներգիա օգտագործող և բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցի (էլեկտրամոբիլ) սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող անձանց համար սահմանվել է ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

Երևանի քաղաքապետի թվով 20 որոշումներով սահմանվել է թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների 139 հատ կայանատեղ:

Հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով 2018 թվականի ընթացքում մայրաքաղաքի թվով 10 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև մայրաքաղաքի հյուրերի համար քաղաքային հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովման նպատակով «Հիզեր» մակնիշի թվով 110 քաղաքային ավտոբուսների ուղևորասրահներում տեղադրվել են կանգառների անվանումների բարձրաձայն հայտարարման սարքեր և ներկայումս իրականացվում է կանգառների հայտարարումը հայերեն և անգլերեն լեզուներով:

Կարևորելով սակավաշարժ խմբերի քաղաքացիների համար մատչելիության ապահովման անհրաժեշտությունը, կայանատեղերի կահավորման աշխատանքների շրջանակներում մեկնարկել է և հետևողականորեն լուծում է ստանալու նաև հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց տեղափոխող տրանսպորտային միջոցների համար առանձնացված տեղերի նախատեսման խնդիրը: Այդ համատեքստում թվով 101 վճարովի կայանատեղերում, համապատասխան կահավորանքի միջոցով, առանձնացվել են տեղեր հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների համար:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի հ.190-Ն որոշման համաձայն կատարվում է տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց կամ նրանց փոխադրող տրանսպորտային միջոց վարող անձանց տրանսպորտային միջոցների համար ավտոկայանատեղի վճարների արտոնությունների տրամադրումը:

Հիմնախնդիրներ

1. *Հասարակական տրանսպորտի գործող երթուղային ցանցի ոչ արդյունավետ աշխատանք, որը չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին*
2. *Չհամալրված ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմեր*
3. *Վերգետնյա տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բարվոք վիճակ*
4. *Միասնական տոմսային համակարգի բացակայություն*
5. *Ուղևորների փոխադրման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն*
6. *Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ*
7. *Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակ*
8. *Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակ*
9. *Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունները սահմանափակ են, առկա է շարժակազմի, տնտեսության և ենթակառուցվածքների վիճակի բարելավման անհրաժեշտություն*
10. *Կանգառների արդյունավետ տեղաբաշխման, դրանց բարեկարգման և կահավորման անհրաժեշտություն*
11. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային սպասարկման ոչ բավարար մակարդակ*
12. *Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ*

2019թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է մեկնարկել տրանսպորտային ցանցի արդիականացման գործընթացը՝ ներդրումների ներգրավմամբ, ամբողջությամբ փոխել շարժակազմը, ինչպես նաև վերանայել երթուղիներն ու կանգառները, ապահովել քաղաքային տրանսպորտի հասանելիությունը առնվազն մինչև 23:00:

Նախատեսվում է ներդնել էլեկտրոնային և միասնական տոմսային նորագույն համակարգ՝ սոցիալական խմբերի համար հստակ զեղչային համակարգի կիրառմամբ: Նախատեսվում է մշակել և կիրառել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի նոր և արդյունավետ երթուղային ցանց, ապահովել հասարակական տրանսպորտի՝ միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների մատուցում՝ կազմավորելով նոր օպերատոր:

2. Միկրոավտոբուսների հնարավորինս բացառման գերակա սկզբունքով նախատեսվում է ձեռք բերել նոր երթուղային ցանցին համապատասխան, սպասարկման ժամանակակից պահանջները բավարարող մեծ և միջին տեղատարողության նոր ավտոբուսներ:
3. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել տրանսպորտի մատչելիություն և տարածական կողմնորոշման հնարավորություն, տեղաշարժի հարմարավետություն, հասարակական տրանսպորտում շարունակել կանգառների ձայնային ազդարարման համակարգերի, ինչպես նաև տեղաշարժը դյուրինացնող համապատասխան սարքավորումների տեղադրման գործընթացը, խաչմերուկներում կահավորել ձայնաազդանշանային լուսացույցներ:
4. Տրանսպորտային ցանցի ընդլայնման նպատակով նախատեսվում է մեկնարկել մետրոյի առնվազն մեկ նոր կայարանի կառուցման աշխատանքները: Կիրականացվի Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային համակարգի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատշաճ տեսքի ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում: Կնախաձեռնվի մետրոպոլիտենի 12՝ 8 գլխամասային և 4 միջանկյալ վագոնների արդիականացման աշխատանքներ: Նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում կապահովվի մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության բարձրացումը:
5. Նախատեսվում է իրականացնել հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Կիրականացվի ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:
6. Նախատեսվում է նաև վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
7. Կիրականացվեն ծառայողական, թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլների ավտոկայանատեղերի կազմակերպման աշխատանքներ:
8. Նախատեսվում է այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում:
9. Նախատեսվում է ճանապարհային երթևեկության կազմակերպչական լուծումների կիրառում:
10. Նախատեսվում է ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթություն

Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների ընդհանուր թիվը 155 է, աշակերտների թիվը 2018-2019 ուստարում **98672** է: Առաջին դասարանցիների թիվը 11675 է, հիմնական դպրոցի շրջանավարտների թիվը՝ 9086, իսկ միջնակարգ դպրոցների շրջանավարտների թիվը՝ 394:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ներառական կրթություն է իրականացվում մայրաքաղաքի 54 դպրոցներում, որտեղ աշխատում են 384 հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան և լոգոպեդ: Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում սովորում են թվով 881 այլազգի երեխաներ, որոնք դպրոցներում, ըստ ծնողի ցանկության, սովորում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններում, ինչպես նաև ընդգրկված են համապատասխան լեզվի խմբակներում:

2018թ. դրությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում սովորում են **881**այլազգի երեխաներ.

- Ռուս -318 առկա է ռուսերենով ուսուցմամբ թվով 13 դպրոց
- Եզդի-393 թվով 3 դպրոցներում ազգությամբ եզդի ծնողների պահանջով գործում է եզդիերենի խմբակ (հհ 66,107,136)
- Հույն-15 Երևանի հ.74 դպրոցում գործում է հունարենի խմբակ
- Ուկրաինացի-26
- Վրացի -22
- Ասորի- 11
- Հրեա- 4
- Բելոռուս-3
- Այլ 79

Շարունակվում է սիրիահայ երեխաների կրթության և ինտեգրման գործընթացը ՀՀ կրթական ծրագրով՝ իրենց ընտրած դպրոցներում:

Հետևողականություն է դրսևորվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հանրակրթության մեջ ընդգրկելու հարցում:

Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով, տեսացրիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ՝ կրթական համապատասխան միջավայր ապահովելու նպատակով:

Հիմնախնդիրներ

1. *Դպրոցների շենքային և բակային պայմանների բարելավում, հիմնանորոգում և ժամանակակից պահանջներին համապատասխանեցում:*
2. *Դպրոցների մարզադահլիճների և սպորտհրապարակների ժամանակակից պահանջներին համապատասխանեցում, սպորտային գույքի համալրում:*
3. *Դպրոցական կրթության համար մեկնարկային հավասար պայմանների ստեղծում:*
4. *Նորագույն տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում՝ դասապրոցեսը արդիականացնելու նպատակով:*

5. *Համընդհանուր ներառման մեկնարկի ծրագրի շրջանակում՝ դպրոցական շենքերի պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական կարիքներին: Համընդհանուր ներառման մեկնարկի համար լիարժեք պայմանների ապահովումն:*
6. *Մենթոր դպրոցների (նախկինում՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցներ) և միջազգային կազմակերպությունների համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն:*
7. *Դպրոցների գրադարանային ֆոնդի գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ համալրում: Էլեկտրոնային գրադարանների թվի ավելացում:*
8. *Դպրոցական բուֆետների սննդի կազմակերպման գործընթացում սննդի անվտանգության նորմերի ապահովում:*
9. *Կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում:*

2019թվականին նախատեսվող աշխատանքներ

1. ժամանակակից պահանջներին համապատասխան դպրոցների շենքային և բակային պայմանների բարելավում:
2. Շարունակել համագործակցությունը՝ «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ-ի հետ դպրոցներում ինժեներական խմբակ-լաբորատորիաների ստեղծման ծրագրի /ռոբոտաշինություն/ իրականացման ընդլայնման նպատակով:
3. Դասապրոցեսում նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառումն ապահովելու նպատակով շարունակել սովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված գործընթացները:
4. Շարունակել փորձի փոխանակման, վարպետաց դասերի կազմակերպումը՝ տարվա լավագույն տնօրենների, ուսուցիչների, վաստակավոր մանկավարժների, Խորենացու մեդալակիրների, տարակարգ ունեցող ուսուցիչների ուժերով:
5. Փորձի փոխանակման նպատակով շարունակել ուսուցիչների փոխայցելություններ՝ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ:
6. ՀՀ կառավարության՝ 2016թ. փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրային որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն՝ Երևանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում շարունակել համընդհանուր ներառական կրթության ներդրման աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ կրթության և գիտության, համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ:
7. Համամագործակցություն մենթոր դպրոցների (նախկինում՝ ներառական կրթություն իրականացնող դպրոցներ) և համընդհանուր ներառման ծրագրում ընդգրկված դպրոցների միջև:
8. «Ուսուցչի օգնական» հաստիքի ներդրման դպրոցներում:
9. Համապատասխան ընկերությունների համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջի կազմակերպում՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:
10. Շարունակել բարեկարգ շրջակայքով, կանաչապատված և ծառաշատ դպրոցի ծրագրի իրականացումը:
11. Դպրոցական բուֆետներում աշակերտների ճիշտ սնվելու ապահովման գործընթաց, ինչպես նաև քարտային համակարգի ներդրում՝ աշակերտին գումարի հետ շփումից զերծ պահելու նպատակով:

12. Մանկավարժների խրախուսման նպատակով շարունակել «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն ուսուցիչ», ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության նույնանուն մրցույթների քաղաքային փուլերի անցկացումը, /քաղաքային, հանրապետական փուլեր/, առարկայական օլիմպիադաների, տարբեր մրցույթների կազմակերպումը և անցկացումը:
13. Սովորողների արժեքային համակարգի ձևավորմանն աջակցելու, ազգային արժեքների նկատմամբ հպարտություն ներշնչելու նպատակով շարունակել հայ մեծերի հոբելյաններին նվիրված միջոցառումների համակարգումը (Հովհ. Թումանյան-150, Կոմիտաս-150. Ա.Բակունց-120,Ս.Կապուտիկյան- 100):
14. Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում նախատեսվում է ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկումը, ինչպես նաև վերջիններիս համար ապահովել մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելության ծրագրերի իրականացման շարունակականությունը:

Նախադպրոցական կրթություն

Երևան ենթակայությամբ գործում է 160 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ մանկապատեզ, ուր հաճախում է - **29707** երեխա:

Թվով 11 դպրոցում գործում է 11 նախակրթարան որտեղ հաճախում է նախադպրոցական տարիքի /4-6 տարեկան/ 224 երեխա:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական կրթություն է իրականացվում 8 մանկապարտեզներում, որտեղ ներառված է 146 երեխա: Նրանց կրթադաստիարակչական աշխատանքների իրականացմանը մասնակցում է նաև 10 հոգեբան և 10 լոգոպեդ:

Մանկապարտեզներում հերթագրված երեխաների ընդունելությունը կազմակերպվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 04.03.2016թ. հ.706-Ա, 19.04.2018թ. 1472-Ա որոշումների:

Մանկապարտեզներում նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 31.03.2011թ. հ.1101-Ա որոշման:

Նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար նաև մարզերում հաշվառված զինծառայողի երեխայի համար՝ համաձայն Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. հ.90-Ն որոշման:

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքում նախադպրոցական կրթության համաչափությունն ապահովելու նպատակով նպատակահարմար է նոր մանկապարտեզների կառուցում Արաբկիր, Էրեբունի և Կենտրոն վարչական շրջաններում:

2. Վերանայել շենքերի տակ գտնվող հարմարեցված և երեխաների համար ոչ նպաստավոր, անբարեկարգ պայմաններ ունեցող մանկապարտեզների աշխատանքի արդյունավետությունը:

3. Մանկապարտեզների ազատ տարածքների, ինչպես նաև անբարեկարգ վիճակում գտնվող ազատ խմբասենյակների քարտեզագրում:

4. Նոր խմբերի ձևավորում մանկապարտեզների անբարեկարգ վիճակում գտնվող խմբասենյակների վերանորոգման դեպքում:

5. Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում ԿԱՊԿՈՒ երեխաներին ընդգրկել Երևան քաղաքի բոլոր մանկապարտեզներում: Առաջարկվել է բոլոր մանկապարտեզներին տրամադրել լոգոպեդի հաստիք:

6. Նորագույն տեխնոլոգիաների ներդրում մանկապարտեզներում.

- սենսորային սենյակների ստեղծման ծրագիր,

-նյութատեխնիկական բազայում ներառել տեսացրիչ:

7. Մանկապարտեզներում «Կանաչ պատի» ստեղծում:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. ՄԱԿ-ի էներգաարդյունավետության, էներգախնայողության ծրագրով և Երևանի բյուջեի համաֆինանսավորմամբ վերանորոգել թվով 31 մանկապարտեզ (հհ.22,23,24,33,36,47,48,49,56,71,74,75,78,81,83,93,98,100,101,102,103,108,109,110,112,118,129,138, 156,157, 161):
2. 2019 թվականին թվով 13 մանկապարտեզներում ձևավորել 14 խումբ /Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ Վ/Շ-ում/՝ հիմք ընդունելով մանկապարտեզներում հերթագրված երեխաների թիվը և տարածքների առկայությունը:
3. Նուբարաշեն վարչական շրջանում գործելու է նոր մանկապարտեզ՝ 4 տարբեր տարիքային խմբերով:
4. Մանկապարտեզների շենքերի տարածքներից վարձակալությամբ կամ անհատույց այլ սուբյեկտներին տրամադրված տարածքների ազատում /պայմանագրերի ժամկետները լրանալու, ինչպես նաև ապօրինի զբաղեցնելու պարագայում/:
5. Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման և բակերի բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսվում է աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերում՝ հիմք ընդունելով աշխատակազմի հանրակրթության վարչության ուսումնասիրության արդյունքները:
6. «Մանկապարտեզ» էլեկտրոնային կառավարման երեխաների հերթագրման էջը դարձնել առցանց:
7. Շարունակել
- համագործակցությունը «Հույսի կամուրջ», «Սեյվ դը չիլդրեն», «Վորդ վիժն» կազմակերպությունների կողմից իրականացվող սեմինար-քննարկումներին, կլոր սեղաններին, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներին, մասնավորապես, ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների աշխատակազմերի հետ:
- մանկապարտեզների դաստիարակների, երաժշտության դաստիարակների, ֆիզիրահանգիչների, ինչպես նաև տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման գործընթացը ՀՀ կրթության և գիտության ԿԱԻ-ի կողմից իրականացվող դասընթացներին:
- աշխատակազմի հանրակրթության վարչության կողմից պարբերաբար կազմակերպվող մանկավարժական գիտելիքների և հմտությունների փորձի փոխանակման գործընթացը՝ վարչական շրջանների մանկապարտեզների լավագույն տնօրենների և դաստիարակների ներգրավմամբ:
8. Համապատասխան գերատեսչության կողմից վերապատրաստման դասընթաց իրականացնել մանկապարտեզների երեխայի առողջության պահպանումը ապահովող

աշխատակիցների, մասնավորապես երեխաների սննդի կազմակերպման պատասխանատուների հետ:
9.Մանկապարտեզների գույքի նորացման ծրագիր:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Մայրաքաղաքի մեկ բնակչին բաժին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշը 7,8 ք/մ է, որը 2 անգամ պակաս է նորմատիվայինից:

Երևանը գտնվում է կիսաանապատային գոտում, որտեղ հողերը անջրդի պայմաններում էռոզացված են և ունեն ոչ բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Ըստ հետազոտության արդյունքների մայրաքաղաքի հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը, ինչը պայմանավորված է հողերի ծանր մետաղներով աղտոտվածությամբ: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը:

Հիմնախնդիրներ

1. Մեղմել քաղաքային շրջակա միջավայրի վրա մարդկային կենսագործունեության և գլոբալ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը:

2. Մշակել և ներդնել քաղաքի էկոհամակարգերի, կանաչ ենթակառուցվածքների և կենսաբազմազանության հետազոտության, պահպանության և կայուն զարգացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմներ:

3. Առավելագույնի հասցնել քաղաքային կանաչ տարածքների բնապահպանական նշանակությունն ու դրանցից ստացվող հանրային օգուտը՝ կիրառելով ժամանակակից դենդրոլոգիական, լանդշաֆտային ճարտարապետության, քաղաքաշինական, գեղագիտական և այլ ասպեկտներով արդյունավետ լուծումներ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կմեկնարկվի կանաչ ենթակառուցվածքների գույքագրում, աղտոտվածության մակարդակի և կենսաբազմազանության քանակաորակական ցուցանիշների առկա ելային վիճակի հետազոտություն: Արժեքավոր ծառերը կհամարակալվեն և կկոդավորվեն: Կսահմանվի Երևանի արժեքավոր էկոհամակարգերը: Ողջ տվյալները հասանելի կլինեն առցանց քարտեզի տեսքով:

2. Կմշակվի և կիրապարակվի երևանյան կլիմայի պայմաններում կանաչապատ տարածքների ձևավորման և խնամքի մեթոդական ձեռնարկ հիմնված ժամանակակից լավագույն փորձի վրա, որն անվճար կտրվի քաղքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպություններին, համատիրություններին, ուսումնական հաստատություններին և հասանելի կլինի առցանց:

3. Կանաչ ենթակառուցվածքների խնամքով զբաղվող մասնագիտական անձնակազմի համար կիրականացվի վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք գործնական

գիտելիքներ ձեռք կբերեն ծառերի ու թփերի էտման, ինչպես նաև կանաչ տարածքների խնամքի այլ մեթոդների շուրջ:

4. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կզարգացվի տնկարանն ու ջերմոցը՝ սեփական կարիքների համար անհրաժեշտ ծառաթփատեսակները մեծ քանակով և էժան աճեցնելու, ինչպես նաև 4-5 տարեկան հասուն տնկիների բանկ ունենալու նպատակով, ինչը կօգնի ծառուղիներում ծերացած և հիվանդ ծառերի (հատկապես մասսայաբր հիվանդ թեղիների) օպերատիվ համաժամանակյա փոխարինում կատարել:

5. Հաստիքացուցակում կավելացվի լանդշաֆտային դիզայների և ֆիտո-դիզայների հաստիքները:

6. Սահմանված ժամանակահատվածում ծառերի ու թփերի կմախքի առողջացման և գեղագիտական ձևավորման համար կիրականացվի շուրջ 26.000 ծառերի սաղարթի ձևավորման և սանիտարական էտ: Ծառերի երիտասարդացնող և խորը էտը կկիրառվի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության՝ վթարային իրավիճակների կանխման նպատակով:

7. Կանաչապատման իրականացման ներկայիս սեզոնային մասսայական համաժամանակյա, անկանոն տնկումների մոդելը հիմնականում կփոխարինվի կոնկրետ տեղամասի միասնական լանդշաֆտային նախագծի շրջանկաներում կանաչապտման մոդելով, որը կիրականացվի մրցութային կարգով:

8. Փարոսի անտառ և Սարալանջ փողոցի հարակից տարածքներում համապատասխան ֆինանսավորման պայմաններում կենթարկվի վերակառուցման գործող ոռոգման համակարգերը, կիրականացվի դարավանդավորում, կկառուցվեն այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ և կիրականացվի անտառվերականգման մեծ ծրագիր:

9. Մայրաքաղաքում շուրջ 60.000 ծառ կկրապատվեն: Կրապատումը ոչ միայն գեղագիտական տեսք է հաղորդում ծառերին, այլ նաև կանխարգելում է միջատների տեղաշարժը հողից դեպի ծառի բնի հատված:

10. Քաղաքի բանուկ զբոսաշրջային հատվածներում և զբոսայգիներում կստեղծվեն լանդշաֆտային դիզայնի գրագետ լուծումներով գեղեցիկ, ծաղկման տարբեր սեզոնայնությամբ ծաղիկների ծաղկանոցներ:

11. Կանխարգելիչ և փաստացի բուժման կենթարկվեն շուրջ 35.000 ծառեր և թփեր:

12. Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման և ընթացիկ խնամքի կարիքները բարելավելու նպատակով՝ ձեռք կբերվի շուրջ 6000 խմ բուսահող և լրացուցիչ ֆինանսավորման պայմաններում ձեռք կբերվի կենսահումուս, որը կնպաստի ծառերի և թփերի կենսունակության բարելավմանը:

13. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կիրականացվի ուղղահայաց կանաչապատման համաքաղաքային ծրագիր, որի ընթացքում լիանանման բարձրացող բույսերով պատելու համար կկահավորվեն համայնքային և հանրային նշանակության շենքերի արտաքին պատերը:

14. Կանաչ տարածքների և առհասարակ բնության հանդեպ հանրության հոգատարությունն իբրև կարևորագույն արժեք հանրահռչակելու նպատակով կիրականացվի պատշգամբների ինքնակամ կանաչապատման խրախուսման ծրագիր՝ վարչությունը աջակցություն կցուցաբերի՝ բնակիչներին տրամադրելով անվճար խորհրդատվություն, թաղարային բույսեր,

բուսահող, կանցկացվի տարվա լավագույն կանաչապատ պատշգամբ համաքաղաքային մրցույթ և այլն:

15. Բնապահպանական ձեռնարկներում կրթական բաղադրիչն ավելացնելու նպատակով մանկապարտեզների ու դպրոցների տարածքներում կկազմակերպվի ուսումնական պարտեզներ, որտեղ բույսերը հետազոտելու և խնամելու պարտավորությունը կլինի հաստատության սաների վրա: Այդ նպատակով կհրատարակվի հատուկ ուղեցույց:

16. Կմեկնարկեն Մ.Մելքոնյան փողոցին կից հանգստի գոտու ստեղծման աշխատանքները, որի 70%-ը կազմելու է գեղատեսիլ կանաչ զանգվածն իր բարձրարժեք ծառաթփատեսակներով:

17. Համաքաղաքային շաբաթօրյակների ընթացքում կնախատեսվի Հրազդանի կիրճի և Երևանյան լճի հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

18. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում կազմել ծրագիր և համապատասխան ֆինանսավորման պայմաններում ստեղծել բուֆերային անտառապաշտպան գոտիներ՝ ներգրավելով նոր ռոգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի խնամքի և այլ աշխատանքները:

19. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում ձեռք բերել ժամանակակից գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումներ:

20. Երկրում առկա գիտահետազոտական ներուժը լիարժեք օգտագործելու համար, համագործակցության կայուն և մշտական ծրագրեր ստեղծելով գիտահետազոտական ինստիտուտների և քաղաքապետարանի միջև՝ նրանց կպատվիրակվի քաղաքի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր խնդիրների հետազոտությունն ու լուծումների առաջադրումը, կանաչ տարածքների ցուցանիշենրի փոփոխության մոնիթորինգային մշտադիտարկումը:

21. Կներդրվի չորացած և վթարային ծառերի կտրման որոշումների կայացման և իրագործման չափելի ցուցանիշների, թափանցիկ և հանրային պատշաճ իրազեկում ենթադրող համակարգ:

22. Սածիլներ, տնկիներ, սոխուկներ, սերմեր և կանաչապատման հնարավոր այլ միավորներ գնելիս նախապատվությունը կտրվի հայրենական արտադրանքին, հնարավորինս կրճատելով ներմուծումը: Այս հարցում ակտիվ ակտիվ համագործակցություն կլինի նաև բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և Երևանի բուսաբանական այգու հետ:

23. Կիրականացվեն քաղաքի բնապահպանական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող կանաչ հանրային տարածքների վերականգման նպատակային ծրագրեր Օղակաձև զբոսայգու և Հաղթանակ զբոսայգու համար: Զարգացման նպատակով համագործակցության երկարաժամկետ ծրագրեր կսկսվեն Բուսաբանական այգու հետ:

24. Քաղաքի այն հատվածներում, որտեղ չկա հողային կանաչապատման հնարավորություն՝ կկիրառվի մեծ թաղարային և ճմապատման աշխատանքներ:

25. Կարգելվի ձմռան ամիսներին ճանապարհների ձնածածկի հալեցման համար կիրառած տարբեր ռեագենտներով, աղերով հարստացրած և երթևեկելի հատվածից հեռացված ձյան կույտերի կուտակումը մայթեզրին աճող ծառերի և տակ և նրանց հարակից սիզամարգերում, քանի որ այն դառնում են ծառերի չորացման պատճառ:

26. Նախատեսվում է շների զբոսանքի համար հատուկ տարածքներ հատկացնել բոլոր վարչական շրջաններում: Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևանի ենթակայությամբ գործում են 31 առողջապահական կազմակերպություն, որոնցից 4-ը բժշկական կենտրոն են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտաբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 24-ը մատուցում է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն:

2010-2018թթ. ընթացքում Երևանի ենթակայության առողջապահական ընկերություններում իրականացվել է վերը նշված գերակայության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ, մասնավորապես՝ շենքերի մասնակի վերանորոգում, հիմնանորոգում, թեքահարթակների կառուցում, տեխնիկական հագեցում, դժվարամատչելի ծառայությունների մատուցում ջեռուցման համակարգի անցկացում, ընդ որում՝ 2016 թվականին Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունները ամբողջությամբ ապահովվել են ջեռուցման համակարգերով, իսկ 2018 թվականին բոլոր ավարտվել են բոլոր ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների պատուհանների փոխարինման աշխատանքներ: Ջեռուցման համակարգի անցկացման կարևորությունը ավելի է մեծանում, եթե հաշվի առնենք, որ բուժհաստատությունների մեծ մասում բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ են մատուցվում նաև երեխաներին:

Որակյալ բուժծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումները փոխելու և արդի բուժման նոր մեթոդներին համապատասխանացնելու նպատակով 2013-2018թթ. ձեռք է բերվել և բուժհաստատություններին անհատույց օգտագործման հիմունքերով տրամադրվել է 248 ժամանակակից բուժսարքավորում՝ այդ թվում 4 ռենտգեն ապարատ:

Արդյունքում՝ հնարավոր եղավ Երևանի ենթակայության գործող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններ մատուցող բուժհաստատությունները հնարավորինս հագեցնել նոր ժամանակակից պահանջներին համապատասխանող բուժսարքավորումներով, որը նպաստեց ինչպես մատուցվող բուժծառայությունների որակի բարձրացմանը, այնպես էլ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ հաճախումների ավելացմանը, այսինքն՝ ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքերով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ:

Ծրագիրը իր հերթին նպաստեց նաև վճարովի հիմունքերով մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի ավելացմանը, որը հնարավորություն է տալիս ստանալ լրացուցիչ եկամուտ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է տալիս ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր՝ հետագա զարգացման համար: Մասնավորապես՝ ընկերությունները իրենց միջոցների հաշվին իրականացրել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Մագնիսա-ռեզոնանսային և կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտությունները շատ կարևոր են առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար, իսկ պետության կողմից երաշխավորված թանկարժեք ու դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված լինելը այն հասանելի չի դարձնում հասարակության լայն շերտերի համար, որն էլ կարևոր հիմնախնդիրներից մեկն է Երևան համայնքի բնակիչների համար բուժծառայությունների մատուցման մատչելիության ապահովման տեսանկյունից: Այս խնդրի կարգավորման նպատակով Երևան քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել մագնիսա-ռեզոնանսային և կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, ընդ որում կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայությունից 2014 թվականից առ այսօր օգտվել է 934 քաղաքացի, իսկ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունից 2018 թվականին օգտվել է 43 քաղաքացի: Նշված ծառայության ձեռքբերումը հնարավորություն է տալիս որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը:

Հիմնախնդիրներ

1. Բժշկական ծառայությունների որակի բարձրացում,

2. Բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում,

3. Առողջապահական հաստատությունների հիմնանորոգում, ընթացիկ վերանորոգում,

4. Բժշկական սարքավորումների արդիականացում և տեխնիկապես հագեցում:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Լիարժեք ախտորոշում և արդյունավետ բուժում իրականացնելու նպատակով Երևանի բնակիչների համար նախատեսվում է ձեռք բերել պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտություններ, այդ թվում՝

1. կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 150 հատ,
2. մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 100 հատ:

Որակյալ բժշկական ծառայության մատուցման և մատչելիության բարձրացման նպատակով Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների համար 2019թ-ին նախատեսվում է ձեռք բերել նոր բուժսարքավորումներ և բժշկական պարագաներ, մասնավորապես՝ 3 ռենտգեն ապարատ, 10 ուլտրաձայնային թերապիայի սարքավորում, 20 ցածր հաճախականության ֆիզիոթերապևտիկ սարք, 10 հարվածալիքային թերապիայի սարքավորում, 1 ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք՝ 2 տվիչով, 17 մագնիսա-լազերային թերապիայի սարքավորում, 20 մագնիսային թերապիայի սարքավորում:

Կրծքով կերակրման և մաքուր օդին մայրերի և երեխաների հնարավորինս շատ ժամանակ անցկացնելու նպատակով քաղաքային զբոսայգիներում «Մոր և մանկան» անկյունների ստեղծում, որտեղ կլինեն համապատասխան պայմաններ երեխային կրծքով կերակրելու և նրա հիգիենայի կարիքները պատշաճ հոգալու համար:

Նախատեսվում է շարունակել Երևանի ենթակայության բժշկական հաստատությունների վերանորոգման և շենքային պայմանների բարելավման աշխատանքերի իրականացումը:

Նախատեսվում է իրականացնել առողջ ապրելակերպի քարոզչություն՝ շեշտը դնելով սքրինինգային կամ այլ բժշկական ծրագրերի իրականացման վրա՝ համագործակցելով առաջատար առողջապահական ընկերությունների և մասնագետների հետ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Հասարակության սոցիալական պաշտպանությունը պետության կարևոր ֆունկցիաներից մեկն է: Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների սոցիալական երաշխիքների պաշտպանությանը՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացմամբ, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարմանը, դրանց հնարավոր նվազեցմանը և հանդիսանում է նպատակային սոցիալական քաղաքականության ազդեցիկ գործիք մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման համար: Ամուր և արդյունավետ սոցիալական պաշտպանության սիստեմի համար ամուր և զարգացած տնտեսություն է պետք: Մեզ մոտ գործում է սոցիալական պաշտպանության համակարգ, որը տնտեսության զարգացման համաքայլ կատարելագործման և ուժեղացման կարիք ունի: Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:

Սոցիալական պաշտպանության համակարգը բազմաբնույթ է և ներկայումս գտնվում է բարեփոխումների շրջանում: Հաշվի առնելով սոցիալական պետության առջև դրված խնդիրները, սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքում արձանագրվող գործընթացները անհրաժեշտ է կատարելագործել սոցիալական համագործակցության համակարգերը, որը կնպաստի համակարգի արդյունավետությանը: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2015 թվականից ներդրվել է «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության» կանոնակարգը, որի նպատակը բազմամասնագիտական աշխատանքային խմբի կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց ընտանիքների հայտնաբերումն է, անհատական սոցիալական ծրագրերի կազմումն ու դրա իրականացումը, այդ թվում և խնդրահարույց դեպքերում սոցիալական դեպքի վարման կարգի լայնորեն կիրառումը, որը կարող է անհատական սոցիալական ծրագրով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի /ընտանիքների/ սոցիալական կարիքների գնահատման հիման վրա

հասանելի ռեսուրսների որոնման միջոցով իրականացնել սոցիալական տարաբնույթ ծառայությունների և սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրեր, քանի որ միայն պետական նպաստները և համայնքային ֆինանսական միջոցները բավարար չեն վերը նշված ընտանիքների բազմաբնույթ սոցիալական խնդիրների լուծման համար: Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների սոցիալական բաժինների աշխատողների՝ ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՍԱՏԲ-ների մասնագետների՝ տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական աշխատողի» հաստիքների ստեղծումը՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:

Պետք է հասնել նրան, որ սոցիալական աշխատողը կարողանա օգտագործել շահառուի իրավունքների գերակայությունը, ռեսուրսների սակավության պայմաններում հատկապես, երբ սոցիալական աշխատողը կրում է մասնակի կամ լրիվ պատասխանատվություն ռեսուրսների բաշխման նկատմամբ:

Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի՝ բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Սակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում:

2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:

Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են Քանաքեռ-Զեյթունի «Հուսո տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն:

Նմանօրինակ համագործակցության արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:

2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունեցող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են: Հաշմանդամության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը: Մայրաքաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման նպատակով Երևանի քաղաքապետարանում գործում է «Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի Երևանի քաղաքային հանձնաժողով»: Հաշմանդամություն ունեցող անձանց անարգել տեղաշարժն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանը, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ներկայացված առաջնահերթությամբ, մայրաքաղաքի հանրային նշանակության տարբեր վայրերում կառուցում է թեքահարթակներ, աշխատանքներ են իրականացվում նաև հանրային տրանսպորտը վերջիններիս համար մատչելի դարձնելու ուղղությամբ, կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվում են տարաբնույթ սոցիալական աջակցության ծրագրեր /2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:

Աշխատանքներ են իրականացվում մայրաքաղաքի փողոցներից, կիսակառույցներից կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անօթևանների, մուրացկանությամբ զբաղվող անձանց հայտնաբերման և ժամանակավոր կացարանում տեղավորման ուղղությամբ՝ Հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:: Նրանց տրամադրվում են սոցիալական տարաբնույթ աջակցություններ /սոցիալ-հոգեբանական, սոցիալ-բժշկական, սոցիալ-վերականգնողական-մասնագիտացված հաստատությունների միջոցով, իրավական, սոցիալ-աշխատանքային և այլն/:

Հիմնախնդիրներ

1. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորման, սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման և հասարակությանն աստիճանական ինտեգրմանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտություն*
2. *Տարեցների շրջանում աղքատության խնդրի լուծման անհրաժեշտություն*
3. *Միրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացում*
4. *Անօթևան անձանց հիմնախնդիրների լուծման անհրաժեշտություն*
5. *Բազմազավակ ընտանիքների սոցիալ-կենցաղային և բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտություն*
6. *Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ
Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր.

- Նախատեսվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում, նպաստների հասցեականության մեծացում: Հասցեականության առումով ընտրանքային ուսումնասիրություններ են անցկացվելու

ՍԱՏԲ-ներում, քննարկվելու են առկա խնդիրները, հայտնաբերված բացթողումները, տրվելու են մեթոդական ցուցումներ, ընտրանքային մասնակցություն է իրականացվելու համակարգող խորհուրդների գործունեության նկատմամբ, շարունակվելու են առաջարկություններ ներկայացվել ՀՀ պետական լիազոր մարմնին՝ նպաստների հասցեականության, հետգանձումների առաջացման պատճառների կանխման վերաբերյալ:

- Սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ նախատեսվում է շահագործման հանձնել Շենգավիթ, Կենտրոն և Էրեբունի վարչական շրջանների սոցիալական ծառայությունների համալիր տարածքային կենտրոնները: Ակնկալվում է սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիություն, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում:
- Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ **20000 ընտանիքներ, որոնցից** 17000 ընտանիքներ կստանան պետական նպաստներ: Հաշվի առնելով, որ պետական նպաստները /տվյալ դեպքում ընտանեկան, սոցիալական նպաստները բավարար չեն կարիքի մեջ գտնվող տվյալ ընտանիքների սոցիալական խնդիրները լուծելու համար, ուստի և գործի կդրվեն միջգերատեսչական սոցիալական համագործակցության, սոցիալական դեպքի վարման, ինչպես նաև համայնքային ռեսուրսների կիրառմամբ հնարավոր սոցիալական ծրագրերի իրագործման մեխանիզմներ:

Համայնքային սոցիալական աջակցության ծրագրեր /համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հ.8 հոդվածի/

- Նախատեսվում է կարիքավոր, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, բազմազավակ ընտանիքների, պատերազմի վետերանների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և անօթևանների համար սոցիալական ծառայությունների, տրամադրման վերականգնողական ծրագրերի իրագործում:
- Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:

  Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:
- Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:

- Ժամկետային զինծառայողներ ունեցող երևանաբնակ ավելի քան 2000 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ զորամասեր՝ իրենց զինծառայող որդիներին տեսակցելու նպատակով:
- Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների ավելի քան 1200 երեխաներ /7-13 տարեկան/ իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի մարզառողջարարական ճամբարներում:
- Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների 4000 երեխաների համար կկազմակերպվեն միջոցառումներ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ:
- Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի, վերականգնողական կենտրոնների ստեղծման, նրանց՝ հասարակական կյանքին աստիճանական ինտեգրման, սոցիալական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ տարբեր ծրագրերի իրագործում: Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Կշարունակվի մեքենա վարող հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների անվճար կայանման համար քաղաքապետարանի կողմից առանձնացված, գծանշված և կահավորված տարածքներում անվճար կայանման թույլտվությունների և տարբերանշանների տրամադրման գործընթացը /2014-2018թթ. տվյալներով 498 անձանց է տրամադրվել/:
- Հոգածություն կդրսևորվի ինչպես Արցախյան պատերազմում զոհվածների, այնպես և հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքների նկատմամբ, որոնք կընդգրկվեն համապատասխան սոցիալական աջակցության և սոցիալ-մշակութային ծրագրերում:
- Կիրականացվեն սիրիահայերի հասարակական և տնտեսական ինտեգրման, ինչպես նաև սոցիալական օժանդակության ծրագրեր /այդ թվում՝ երեխաներին արտահերթ հիմունքներով ՆՈՒՀ-երում ընդգրկումը/: Սիրիահայերի տնտեսական ինտեգրման և փոքր բիզնեսի հիմնադրման նպատակով համատեղ աշխատանքներ կիրականացվեն հասարակական կառույցների, մասնավորապես «Առաքելություն Հայաստան», «Հայկական Կարմիր Խաչ» ընկերությունների և ՄԱԿ-ի ՓՄԳ-ի հետ:
- Կշարունակվեն կարիքավոր և բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը:
- Կշարունակվեն անօթևանների սոցիալական պաշտպանության և ժամանակավոր կացարանում տեղավորման ուղղությամբ տարվող աշխատանքները, մուրացկանությամբ զբաղվող անձանց շրջանում կձեռնարկվեն կանխարգելիչ միջոցառումներ:
- Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Երևան քաղաքում գործում է մարզական 4 միություն, մարզական 12 ակումբ, 16 լողավազան, ֆուտբոլի 11 մարզադաշտ, թենիսի 24 կորտ, 4 հրաձգարան, 5 ստադիոն, 37 մարզադահլիճ, նետաձգարան, աթլետիկական մանեժ, հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի 3 ջրամբար, մարզամշակութային 2 կենտրոն, հավաքական թիմերի ուսումնամարզական կենտրոն, ձիարշավարան, բազմագործառութային 137 փոքր դաշտ և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոց: Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրը, Հրազդան և Վազգեն Սարգսյանի անվան մարզադաշտերը, ֆուտբոլի, շախմատի ակադեմիաները, հեծանվահրապարակը, Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի կենտրոնական տունը, «Դինամո» մարզահամալիրը, Իրինա Ռոդնինայի անվան գեղասահքի սահադաշտը Երևան քաղաքի նշանակալի մարզական կառույցներն են: Երևան համայնքի ենթակայությամբ գործում է 41 մարզադպրոց:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են Երևան քաղաքի առաջնություններ մոտ 40 մարզաձևերից, առողջարարական, հանրային միջոցառումներ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 8 մարզաձևերից կազմված բակային փառատոն, ըմբշամարտի միջազգային մրցաշար, «Լավագույն մարզական ընտանիք», «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ», «Լավագույն մարզական բակ» հանրապետական մրցույթներին երևանյան թիմերի և բակերի մասնակցության ապահովում:

Հիմնախնդիրներ

1. *Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:*
2. *Մարզադպրոցների շենքային պայմանների բարելավման և ժամանակակից մարզագույքով ապահովման անհրաժեշտություն՝ մարզաձևերի հավաքական թիմերի մարզիկներով համալրման, մանկապատանեկան սպորտի զարգացման, մանուկների ու պատանիների ֆիզիկական կարողությունների, գիտելիքների տիրապետման ապահովման նպատակով:*
3. *Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու, նրանց շարժողականության բարձրացման, օրգանիզմի գործառնական հնարավորությունների վերականգնման նպատակով համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն:*
4. *Մարզական ակումբներից, մարզաբազաներից օգտվելու մատչելիության ապահովում՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիներ, լողավազաններ և մարզադահլիճներ:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է Երևան քաղաքի առողջարարական, զանգվածային, մարզական միջոցառումների 2019 թվականի օրացուցային պլանի համաձայն Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպում:
2. Կիրականացվեն Երևան-Ստեփանակերտ, Երևան-Մոսկվա և Երևան-Սանկտ-Պետերբուրգ քաղաքների համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքներ:

3. Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ–մարզուհիների մասնակցության ապահովում:
4. Նախատեսվում է հանրապետական ու միջազգային մրցաշարերին, առաջնություններին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով Երևանի թիմերի և երևանցի մարզիկ-մարզուհիների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում:
5. Նախատեսվում է Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում:
6. Նախատեսվում է հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսման նպատակով Երևանի քաղաքապետի մրցանակների սահմանում:
7. Կիրականացվեն Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքներ:
8. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական միջոցառումների, սպարտակիադաների, փառատոների, ստեղծագործական ցուցահանդեսների կազմակերպում:
9. Կիրականացվեն Համահայկական ամառային խաղերի նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ ըստ մարզաձևերի ընտրական մրցաշարերի անցկացում, հավաքական թիմերի ձևավորում, հավաքականների համար ուսումնամարզական հավաքների անցկացում, միասնական մարզահանդերձանքով ապահովում և մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցության կազմակերպում:
10. Նախատեսվում է վերահսկողություն իրականացնել Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների ուսումնամարզական գործընթացի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխանության ապահովման նպատակով:
11. Նախատեսվում է ստեղծել նոր հեծանվային մայրուղիներ և արահետներ, ինչպես նաև կայանատեղեր, որը կնպաստի հեծանվային տրանսպորտի զարգացմանը, քաղաքացիների առողջ ապրելակերպի բարելավմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները ակտիվ մասնակցություն են ունենում մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում:

Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Երևանի քաղաքապետարանում գործում է երիտասարդական կենտրոն՝ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Խորհուրդը նաև ներգրավվում է համաքաղաքային գրեթե բոլոր ծրագրերին, տարաբնույթ տոնական ու մեծ միջոցառումների կազմակերպչական և կամավորական աշխատանքներին:

Հիմնախնդիրներ

1. Մայրաքաղաքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտություն

2. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման անհրաժեշտություն

3. Համապատասխան ընկերությունների համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև կկազմակերպվի հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Կընդլայնվի միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ համագործակցության շրջանակը:
2. Կշարունակվի համագործակցությունը մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:
3. Կշարունակվի համագործակցությունը Երևանի քույր և գործընկեր քաղաքների երիտասարդության հետ, կընդլայնվեն համագործակցության ուղղությունները:
4. Կիրականացվեն միջոցառումներ՝ ուղղված երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը ու սպորտի մասսայականացմանը:
5. Նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երիտասարդության հոգևոր և մշակութային դաստիարակությանը, ստեղծագործ մտքի խթանմանն ու զարգացմանը:
6. Կշարունակվեն աշխատանքներն՝ ուղղված շրջակա միջավայրի պահպանմանն ու դրա քարոզմանը: Նոր համատեղ ծրագրեր կիրականացվեն ոլորտի մասնագետների և այդ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ կմշակվեն և կիրականացվեն միջոցառումներ, որոնք կնպաստեն հաշմանդամություն ունեցող երիտասարդների հետ աշխատելու ու համագործակցելու կարծրատիպերի վերացմանը: Աշխատանքներում կներգրավվեն ինչպես երիտասարդներ, այնպես էլ՝ այդ հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Վերջին տարիների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտը պարբերաբար ենթարկվել է բազմաթիվ բարեփոխումների, մասնավորապես ընդունվել են մեծ թվով նոր իրավական ակտեր, որոշ իրավական ակտերում իրականացվել են փոփոխություններ, որոնք ուղղված են ՀՀ-ում երեխաների շահերի պաշտպանությանը, նպաստում են երեխաների և նրանց ընտանիքների հետ կապված հիմնախնդիրների լուծմանը և այս ոլորտում բազմաթիվ ծրագրերի իրականացմանը: Տարեկան ծրագրերը և դրանցից բխող միջոցառումները կազմվում են՝ հաշվի առնելով կատարված բարեփոխումները: Պարբերաբար իրականացվում են մասնագիտական քննարկումներ շահագրգիռ գերատեսչությունների, միջազգային, հասարակական կազմակերպությունների հետ, որի արդյունքում ներկայացվում են առաջարկներ՝ օրենսդրության բարեփոխման նպատակով:

Ելնելով ՀՀ օրենսդրության և միջազգային պայմանագրերով վավերացված պահանջներից՝ իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց ընտանիքների բացահայտման, նրանց խնդիրների գնահատման և մասնագիտական աջակցությանն ուղղված գործառույթներ՝ նախապատվություն տալով ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի ապահովմանը:

Հիմք ընդունելով պետության կողմից որդեգրած խնամքի հաստատություններում երեխաների թվի նվազման քաղաքականությունը՝ ոլորտում գործող պետական լիազոր մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ հետևողական աշխատանքի արդյունքում իրականացվում է խնամատար և որդեգրման ինստիտուտի բարեփոխման գործընթացները և տարաբնույթ միջոցառումներով նպաստում նմանատիպ ընտանիքների թվի ավելացմանը՝ դիտարկելով այն որպես հաստատություններում երեխաների խնամքի այլընտրանքային լավագույն տարբերակ:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 128.1, 134, 139.1 հոդվածներով ամրագրված պահանջների համաձայն իրականացվում է վերահսկողություն Երևան քաղաքում որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ-ում բնակվող երեխաների որդեգրման, ինչպես նաև նրանց կենսապայմանների ուսումնասիրման հարցերի առնչությամբ բաժինը ծավալուն համագործակցություն է իրականացնում ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության հետ:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 2-ի հ. 515-Ա որոշման համաձայն իրականացվում է վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կատարվող աշխատանքների ամենամսյա գնահատում և ըստ անհրաժեշտության մեթոդական աջակցության և մասնագիտական խորհրդատվության տրամադրում:

ՀՀ ոստիկանության համապատասխան ծառայությունների, սոցիալական աջակցության տարածքային բաժինների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համատեղ քննարկվում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ և հանցագործություն կատարած անչափահասների կողմնորոշման խնդիրները, անհրաժեշտության դեպքում իրականացվում է ուղղորդում համապատասխան հաստատություն և հաշվառում տեղեկատվական համակարգում, իրականացվում է

անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանությանը, ինչպես նաև մուրացիկության և թափառաշրջիկության երևույթի կանխարգելմանն ուղղված աշխատանքներ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

1. *Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովման անհրաժեշտություն*
2. *Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման, նման իրավիճակներում նրանց հայտնվելու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում*
3. *Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների այլընտրանքային խնամքի և պաշտպանության կազմակերպման անհրաժեշտություն*
4. *Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրման գործընթացի ապահովման անհրաժեշտություն*
5. *Որդեգրման և խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցության անհրաժեշտություն*
6. *Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման գործընթացին նպաստելու անհրաժեշտություն*
7. *Մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման անհրաժեշտություն*
8. *Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին մեթոդական աջակցության տրամադրման անհրաժեշտություն*
9. *Կրթությունից չարամտորեն խուսափող, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների կրթական համակարգում ընդգրկման և կրթության շարունակության ապահովման, փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված բազմամասնագիտական ծառայությունների տրամադրման և աջակցության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին մեթոդական աջակցության տրամադրման, ոլորտի օրենսդրական բարեփոխումների քննարկման նպատակով նախատեսվում է իրականացնել 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների /ԽՀՀ/ համար սեմինար և վերապատրաստում: Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման, նման իրավիճակներում նրանց հայտնվելու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման համատեքստում պարբերաբար իրականացվել և իրականացվելու են վարչական շրջաններում հրատապ դեպքերի առնչությամբ հանդիպում-քննարկումներ, կազմակերպվում են ԽՀՀ նիստեր՝ բաժնի պարտադիր մասնակցությամբ: Ելնելով դեպքի առանձնահատկությունից և երեխայի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելու պատճառներից՝ պարտադիր քննության է առնվում երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման առաջնայնությունը, որից հետո միայն դիտարկվում է երեխայի այլընտրանքային խնամքի տարբերակները՝ նախապատվություն տալով խնամակալությանը, խնամատարությանը և որդեգրությանը: Դրանց անհնարինության դեպքում դիտարկվում է երեխայի մանկական խնամակալական հաստատությունում (մանկատուն, շուրջօրյա ժամանակավոր խնամքի հաստատություն) հայտնվելը:

Պարբերաբար իրականացվում է հաստատությունում գտնվող երեխաների անձնական գործերի, տեղավորման հիմքերի ուսումնասիրություն՝ երեխային հետագա որդեգրման կամ խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման նպատակով:

Երեխաների շրջանում մուրացիկության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելման նպատակով բաժինը մասնակցում է մուրացիկ, թափառաշրջիկ երեխաների, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 07.11.2013թ. հ. 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին, ներկայացնում առաջարկություններ, նախաձեռնում հատուկ դեպքերի քննարկումներ:

Կրթությունից չարամտորեն խուսափող, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններից և անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա աջակցում է երեխաների կրթական համակարգում ընդգրկման, կրթության շարունակականության ապահովման, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներին: Այս նպատակով համագործակցում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ ոստիկանության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի հետ:

Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման նպատակով բաժնի կողմից իրականացվելու են Երևան համայնքի տարեկան բյուջեով ներառված տարաբնույթ միջոցառումներ՝

- Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքներ 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար:
- «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների խրախուսման միջոցառում:
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ:
- Այցելություն թանգարաններ, թատրոններ՝ հատուկ կարքներով երեխաների մանակցությամբ:
- Սոցիալական քարոզչության հոլովակների պատրաստում և տարածում
- 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար սեմինար և վերապատրաստում:
- «Էրեբունի-Երևան» տոնին ընդառաջ լուսանկարչական մրցույթ՝ հատուկ կարիքներով շնորհալի երեխաների մասնակցությամբ:
- Ամանորին ընդառաջ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ հատուկ կարիքներով երեխաների տիկնիկային թատրոն այցելության և ամանորյա միջոցառումներին մասնակցության կազմակերպում, նվերների տրամադրում:

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ

Երևան համայնքի մշակույթի ոլորտում ընդգրկված կազմակերպությունները ՀՀ պետական մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ իրականացնում են մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման, մշակութային միջոցառումների իրականացման, ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովման և այլ գործառույթներ: Մշակույթի ոլորտի կարևոր խնդիրներից է նաև համագործակցությունը միջազգային մշակութային կառույցների, քույր ու գործընկեր քաղաքների հետ, ինչպես նաև այդ կառույցների մշակութային կյանքին ինտեգրման ապահովումը:

Երևան համայնքը մշակութային քաղաքականությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 72 կազմակերպությունների միջոցով:

Մշակութային միջոցառումներ

Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածներին պետական, ազգային և այլ միջոցառումներին ընդգրկելու, վարչական շրջաններում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովելու, ինչպես նաև ազգային մշակութին և արվեստին հաղորդակցվելու նպատակով կազմակերպվում են պետական, եկեղեցական, ազգային և այլ տոներին նվիրված միջոցառումներ, տոնակատարություններ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել միջոցառումների շարք՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2019» եռամսյա ծրագրին, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:
2. Մայրաքաղաքում տարվա կտրվածքով նախատեսվում է անցկացնել աջակիցը լինել նաև միջազգային միջոցառումների շարքի և մշակութային ծրագրերի ու նախագծերի՝ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոն:
3. Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ 2019 թվականին կիրականացվեն մշակութային տարաբնույթ ծրագրեր և միջոցառումներ, որոնք, տարածելով և հանրահռչակելով հայկական մշակույթը, կստեղծեն և կամրապնդեն համագործակցության նոր շրջանակներ:

Թանգարաններ

Երևան քաղաքում առկա թանգարաններից Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի, Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանները և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, որոնք կազմակերպում են գիտացուցադրական, գիտահետազոտական, ֆոնդային և գիտալուսավորական-

մասսայական ուղղություններով աշխատանքներ, ցուցահանդեսներ, միջոցառումներ՝ բնակչությանը ծանոթացնելով և հանրահռչակելով մշակութային արժեքները:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարաններում տարեցտարի համալրվում են թանգարանային հավաքածուները, ավելանում է այցելուների թիվը:

Հիմնախնդիրներ

1. *Վերականգման /ռեստավրադիայի/ արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն*
2. *Թանգարանային գիտաշխատողների՝ արտերկրի հեղինակավոր թանգարաններում վերապատրաստման անհրաժեշտություն*
3. *Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտության և ուսումնասիրման, արդյունքների հանրությանը ներկայացման անհրաժեշտություն*
4. *Հայկական ծագում ունեցող մշակութային ժառանգության միավորների հաշվառում և վերահաշվառում, ընդհանուր տեղեկատվական շտեմարանի ձևավորում, դրա մատչելիության ապահովում և հանրայնացում*
5. *Թանգարանային նմուշների վերականգնում, ֆոնդապահոցներում և ցուցադրությունում թանգարանային առարկայի անվտանգ և անհրաժեշտ պայմանների ապահովում*
6. *ՀՀ-ում գործող թանգարանների մշակութային արժեքների միասնական էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի աշխատանքներին և մշակութային արժեքների թվայնացման գործընթացին մասնակցության ապահովման անհրաժեշտություն*
7. *Առավել վտանգված մշակութային ժառանգության միավորների վիճակի ուսումնասիրության անհրաժեշտություն*
8. *Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման ծրագիրի իրականացման անհրաժեշտություն՝ ուղղված հնավայրի վերականգնմանն ու այցելուների սպասարկման բարելավմանը:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեություն, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդի համալրում, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կկազմակերպվեն նոր ցուցադրություններ: Թանգարաններում կկազմակերպվեն պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ և ցուցադրություններ:
2. Կանցկացվեն միջոցառումներ՝ նվիրված Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան:

Թատրոններ

Երևան քաղաքում գործող թատրոններից «Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական», «Երևանի պատանի հանդիսատեսի», «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական» ՀՈԱԿ-ները իրենց գործունեությունը ծավալում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ:

Հիմնախնդիրներ

1. *ժամանակակից արվեստի զարգացման համար նորագույն սարքավորումների, տեխնոլոգիաների ներդրման և նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն*

2. *Թատրոններում նոր ստեղծագործություններով խաղացանկի համալրման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Թատրոնների խաղացանկերը համալրելու նպատակով, նախատեսվում է 2019թ. իրականացնել 10-15 նոր բեմադրություն, համալրել ստեղծագործական կազմը, բարձրացնել ներկայացումների որակը, իրականացնել համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինում, ապահովել մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոներին:
2. Նախատեսվում է ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում:

Գրադարաններ

Մայրաքաղաքի գրադարանները բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկումը հիմնականում իրականացնում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 19 գրադարանների և իրենց 20 մասնաճյուղերի միջոցով: Բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկումն իրականացնելուն զուգահեռ տարիքային տարբեր խմբերի համար իրականացվում է ազատ ժամանցի կազմակերպում՝ գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև՝ հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում է գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» միջոցառումը: Իրականացվում է ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և այլն:

Հիմնախնդիրներ

1. *Գրադարաններում տեղեկատվական–հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման անհրաժեշտություն*
2. *Գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն*
3. *Գրադարաններում, տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինման և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտություն*
4. *Գրականության ֆոնդի համալրման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Գրադարանների գործառույթներին համապատասխան նախատեսվում է իրականացնել գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև՝ կազմակերպել հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ:
2. Կկազմակեպվեն ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և այլն: Կկազմակերպվի գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառումը:

3. Գրադարաններում նախատեսվում է տեղեկատվական–հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի խթանում:
4. «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում կշարունակեն իրենց գործունեությունը «Մշակութային երկխոսություն» ծրագրով՝ «Ամերիկյան անկյունը», «Ֆրանկոֆոնիայի կենտրոնը», «Բրիտանական կենտրոնը» և «Ասիական կենտրոնը» Կիրականացվեն ֆիլմերի անվճար ցուցադրություններ, դասախոսություններ, անգլերենի և ֆրանսերենի անվճար ուսուցման դասընթացներ՝ տարիքային տարբեր խմբերի համար:
5. «Հայաստանի գրադարանների ավտոմատացված ցանց» **ծրագրի** շրջանակում «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը կշարունակի իր աշխատանքները և կիրականացնի գրադարանի գրքային ֆոնդի մուտքագրումը ընդհանուր տեղեկատվական բազա: Կշարունակվի էլեկտրոնային գրադարանի ֆոնդերի թվայնացման, համալրման գործընթացը և նոր ծրագրերի տեղադրումը: Իրենց աշխատանքները կշարունակեն նաև հատուկ խմբի համար /տեսողական խնդիրներ ունեցող/ «ԱՐԵԿ» էլեկտրոնային-թվային համակարգը, իսկ լսողական խնդիրներ ունեցողների համար՝ «ԷԼԳՐԱԴ»-ի թվային բազաների «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը:

Երաժշտական և արվեստի դպրոցներ

Մայրաքաղաքում գեղագիտական դաստիարակությունն իրականացվում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և կերպարվեստի դպրոցների միջոցով: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 15 երաժշտական, 10 արվեստի և 1 կերպարվեստի դպրոցներն արտադպրոցական գեղագիտական դաստիարակությանը զուգահեռ նախապատրաստում են օժտված և տաղանդավոր երեխաներին՝ միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելուն:

Իրականացվում է վերոնշյալ դպրոցները երաժշտական գործիքներով համալրելու գործընթաց:

Հիմնախնդիրներ

1.Հանրապետական և միջազգային մրցույթներին և փառատոներին ներկայանալու համար դպրոցների լավագույն սաների մասնակցության ապահովման և նպաստավոր պայմանների ստեղծման անհրաժեշտություն

2.Անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրման անհրաժեշտություն

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Երաժշտական և արվեստի դպրոցներում կշարունակվի համերգների կազմակերպումը, հանրապետական ու միջազգային մրցույթների, փառատոնների մասնակցությունը: Ուսումնական տարվա վերջում կկազմակերպվեն հաշվետու համերգներ, երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոնը:
2. Ա.Խաչատրյանի տուն-թանգարանում կանցկացվի Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա ստուգատես-փառատոնը:
3. Կշարունակվի «Բաց դաս» խորագրով ծրագրի իրականացումը: Մասնագետներն ու դպրոցի սաները կիրականացնեն բացօթյա հանրային դասընթացներ՝ ներգրավելով հանրության լայն շերտեր՝ հանրահռչակելով մշակութային մասնագիտական կրթությունը:
4. Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը՝ միտված մոռացվող ազգային

նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

5. Երաժշտական և արվեստի դպրոցների համար անհրաժեշտ գույքի և երաժշտական գործիքների ձեռքբերման ծրագրերը կրելու են շարունակական բնույթ:

Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 14 գեղագիտական, ստեղծագործական ու մշակութային կենտրոններ ու տներ:

Կենտրոնները և մշակույթի տները բնակչության ազատ ժամանցի կազմակերպման միջոցով իրականացնում են նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորում:

Մշակույթի տներում, գեղագիտական, ստեղծագործական կենտրոններում իրականացվում է պետական, ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում:

Հիմնախնդիրներ

1. *Արդի չափանիշներին համապատասխան նորագույն տեխնոլոգիայի, գույքի, երաժշտական գործիքների, սարքավորումների ապահովման և համալրման անհրաժեշտություն*
2. *Մշակութային կյանքին և ծրագրերին բնակչության լայն խավերի ընդգրկման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Մշակույթի տներում, գեղագիտական, ստեղծագործական կենտրոններում նախատեսվում է պետական, ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում:

Այլ մշակութային կազմակերպություններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են «Հայաստանի փոքրիկ երգիչներ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ն:

Նշված ֆիլհարմոնիաների միջոցով միավորվում են երաժշտական, արվեստի դպրոցների երաժշտական բացառիկ ընդունակություններով օժտված երեխաները, օժանդակում են գործող երաժշտական և արվեստի դպրոցներում լավագույն ուժերի բացահայտմանը և նրանց ունակությունների դրսևորման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը: «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ–ը իր գործունեությամբ նպաստում է դասական և ժամանակակից երաժշտության տարածմանը և հանրահռչակմանը:

«Հայ-Արտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ն իրականացնում է մշակութային գործունեություն՝ կազմակերպվում են ցուցահանդեսներ, համերգներ և ֆիլմերի դիտում:

Հիմնախնդիրներ

1. *Նորագույն տեխնոլոգիաների, անհրաժեշտ սարքավորումների և երաժշտական գործիքների ձեռքբերման անհրաժեշտություն*
2. *Հանրապետական և միջազգային փառատոներին և մրցույթներին մասնակցության ապահովման անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

Նախատեսվում է ապահովել վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը համերգների, փառատոնների, ցուցահանդեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Կիրականացվեն աշխատանքներ՝ ուղղված հանրության հետ շփման շրջանակների ընդլայնմանը, որը կապահովի կազմակերպությունների որակի բարձրացմանն ու հանրահռչակմանը:

Երևանի կենդանաբանական այգի

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ է գործում Երևանի կենդանաբանական այգին: Այգու՝ որպես կրթադաստիարակչական հաստատության հիմնական առաքելությունը բոլոր տարիքի անձանց և Հայաստանի բնության հարուստ կենսաբազմազանության հետ կապի ստեղծումն է: Այգու հիմական գործունեությունը կայանում է այցելուների, զբոսաշրջիկների ժամանցի ապահովումը, բնական ռեսուրսների, կենսաբազմազանության և կենդանիների համապատասխան բնակավայրերի ստեղծումն ու պահպանումը: Այգում աշխատանքներ են տարվում կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև կազմակերպում է բնակչության ժամանցը, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-ճանաչողական գործառույթ՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք:

Հիմնախնդիրներ

1. *Կենդանաբանական այգում կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրման անհրաժեշտություն*
2. *Կենդանաբանական այգու վերակառուցման և արդիականացման ծրագրի շարունակության ապահովման անհրաժեշտություն*
3. *Նոր ազատավանդակների անհրաժեշտություն*
4. *Այգու սահմանագծով պարսպապատման անհրաժեշտություն*
5. *Նոր կեղանանատեսակնեչով համալրելու անհրաժեշտություն*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել աշխատանքներ՝ ուղղված Երևանի կենդանաբանական այգու վայրի կենդանիների պահպանմանը, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացմանն ու ցուցադրմանը:
2. Նախատեսվում է այգու արդիականացման գործընթացի իրականացում, նոր ազատավանդակների կառուցում և տարածքի ընդլայնում, առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում, կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում և այլն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ներդրումային դաշտի բարելավման և համայնքի զարգացման նպատակով Երևանի քաղաքապետարանն ակտիվ համագործակցում է արտերկրի ավելի քան 50 գործընկեր քաղաքների հետ: Քաղաքապետարանը անդամակցում է մի շարք միջազգային կազմակերպությունների («Քաղաքապետերը հանուն խաղաղության», «ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով», «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ», «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն», «Ֆրանսախոս քաղաքապետերի միջազգային ասոցիացիա», «Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիա», «Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիա», «Եվրոսիթիս» ասոցիացիա), ինչպես նաև միացել է Եվրոպական Միության «Քաղաքապետների դաշնագիր» և «Համայնքների ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնություններին:

Քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կազմակերպվում են գիտաժողովներ, համաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ: Երևան քաղաքը համագործակցության լայնածավալ ծրագրեր է իրականացնում Ստեփանակերտի, Մոսկվայի, Փարիզի, Վիեննայի, Սանկտ-Պետերբուրգի, Մարսելի, Լիոնի և այլ քաղաքների հետ: Վերջին տարիներին Երևան քաղաքը հիմնել է նոր համագործակցություններ Ռիգա, Աշխաբադ, Ամման, Նովոսիբիրսկ, Կրասնոդար, Անտոնի, Վուլբի և մի շարք այլ քաղաքների հետ:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը Երևանի և Ստեփանակերտի, ինչպես նաև Երևանի և ԼՂՀ շրջանների ու ՀՀ մարզերի միջև՝ վերջիններիս ցուցաբերելով տեխնիկական, սոցիալական, մեթոդական աջակցություն:

Հիմնախնդիրներ

1. *Միջազգային կապերի օգտագործմամբ Երևանի հանրաճանաչության բարձրացման անհրաժեշտություն*
2. *Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատման, շարունակման և ակտիվացման անհրաժեշտություն, քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում միջազգային արդյունավետ կառավարման փորձի ուսումնասիրության և կիրառման, ինչպես նաև Երևանում ոլորտային ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով՝ բարձրորակ մասնագետների հետ կապի հաստատման և միջազգային փորձ ունեցող փորձագետների ներգրավման անհրաժեշտություն*
3. *Երևանում իրագործվող միջազգային ծրագրերի ընդհանուր տեղեկատվական-վերլուծական բազայի ստեղծման անհրաժեշտություն*
4. *Օտարերկրյա ներդրումների ներգրավման և զբոսաշրջության աճի անհրաժեշտություն*
5. *Մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ հուշագրերի ու համաձայնագրերի ստորագրում՝ համագործակցության կոնկրետ պայմանավորվածությունների ձեռքբերում և բազմակողմ համագործակցության ընդլայնում*
6. *Երևանի քույր և գործընկեր քաղաքների, ինչպես նաև այլ քաղաքների քաղաքային տնտեսության լավագույն փորձի և մոդելների ներդրման մեխանիզմների մշակում:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել Էրեբունի-Երևան միջոցառումների նախապատրաստական, կազմակերպչական և անցկացման աշխատանքներ:
2. Նախատեսվում է ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցներից տեխնիկական օժանդակության ստացման վերաբերյալ բանակցությունների վարում:
3. Նախատեսվում է աջակցել զբոսաշրջային, ներդրումային, քաղաքային տնտեսության կառավարման առաջավոր փորձին և այլ միջազգային համաժողովներին, ֆորումներին, ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներին վերաբերող շնորհանդեսների կազմակերպմանը:
4. Նախատեսվում է համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, ակտիվացնել Երևանի տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, տրամադրել տեղեկատվություն Երևանի քույր և գործընկեր քաղաքներին Երևան քաղաքում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ, ինչպես նաև ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև՝ զբոսաշրջիկներ ներգրավելու նպատակով:
5. Նախատեսվում է իրականացնել եղբայրությանպուրակներևզբոսայգիներ հիմնելուծրագրեր:
6. Նախատեսվում է ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ և այլն/, թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ,ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Մարոկկոյի Տետուան և քաղաքների հետ, կնքել 2019-2021թթ. համագործակցության ծրագիր Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև:
7. Նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Մոսկվայում: Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում:
8. Նախատեսվում է իրականացնել փորձի փոխանակում քաղաքայինտնտեսությանտարբերոլորտներում Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցության շրջանակներում:
9. Նախատեսվում է Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում շարունակել մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագիրը՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:

10. Նախատեսվում է ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր:
11. Նախատեսվում է ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին:
12. Նախատեսվում է ակտիվացնել համագործակցությունը «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ, իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր,կազմակերպել փոխայցելություններ փորձի փոխանակման նպատակով Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների համար:
13. Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2015-2020 թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ Երևանի օրերը Ստեփանակերտում, մշակութային տարբեր միջոցառումներ, մասնագետների փոխայցելություններ:
14. Նախատեսվում է աջակցել անհրաժեշտ ուղղություններով աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների վերապատրաստումների կազմակերպմանը:
15. Նախատեսվում է կազմակերպել քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայությամբ գերատեսչություններիաշխատակիցների համար օտար լեզուների դասընթացներ՝ ըստ անհրաժեշտության:

Զ Բ Ո Ս Ա Շ Ր Ջ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանը մեծ ներուժ ունի լավագույն մասնագիտացված, զարգացած և ակտիվ զբոսաշրջային կենտրոնի ձևավորման համար ոչ միայն տարածաշրջանում, այլ նաև աշխարհում:

Երևանը, որպես համայն հայության մայրաքաղաք, գիտակրթական, մշակութային և հոգևոր զարկերակ, իր մեջ ներառում է հանրապետության գիտական, կրթական, մշակութային, բազմաթիվ կենտրոններ:

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի. այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է հանդիսանում, այլև՝ պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը, որտեղ զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի աճին: 2018թ. սեպտեմբեր ամսվա դրությամբ Երևանում գործում է 300 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 15,5% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտները ապահովում են 5620 համար և 9580 ննջատեղ[1]: 2018թ. Երևանի հյուրանոցային տնտեսության ոլորտն ավելացել է 1000 համարով: Շուկայում գործում են այնպիսի հյուրանոցային բրենդեր, ինչպիսիք են՝ «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Փլեյս»,«Բեստ Վեստերն Կոնգրես», «Ռադիսոն Բլյու», «Դաբըլ Թրի Բայ Հիլտոն», «Ռադիսոն Բլյու»: Իսկ 2018թ. մայրաքաղաքում բացվեց «Դը Ալեքսանդր» դե լյուքս կարգի հյուրանոցը: Առաջիկայում նախատեսվում է «Հոլիդեյ Ինն» հյուրանոցի բացումը:

ՀՀ Վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների համաձայն՝ 2018 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան է ժամանել 1 275 209 զբոսաշրջիկ: Այդ ամիսներին Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ աճել է 22.1%-ով: Այդ ընթացքում Հայաստանից մեկնել է 610 հազար 950 զբոսաշրջիկ, ինչը 40550-ով կամ 7.1%-ով ավելի է նախորդ տարվա ցուցանիշից: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների զգալի մասը հայկական արմատներ ունեն: Զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը դեպի Հայաստան լինում է Ռուսաստանից, Իրանից և ԱՄՆ-ից: Քիչ չեն զբոսաշրջիկները Գերմանիայից, Ֆրանսիայից և Իտալիայից: Առաջին տասնյակում են նաև Վրաստանը, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան և Կանադան: Ըստ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ մեկ զբոսաշրջիկը Հայաստանում անց է կացնում միջինը 17 օր՝ ծախսելով շուրջ 770 ԱՄՆ դոլար (370 հազար դրամ): Զբոսաշրջության տեսանկյունից Հայաստան այցելելու առավել գրավիչ ասպեկտներն են՝ մշակութային ժառանգությունը, ծառայությունների որակը, հյուրընկալությունը, սնունդը և բնությունը:

Ներկայացնելով Երևան քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամշակութային զբոսաշրջությունը, որի ընթացքում զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալ Երևանի քաղաքային պատմամշակութային ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրօրինակ խոհանոցին և այլն:

[1]Ըստ Տուրիզմի բաժնի 2017թ. գույքագրման աշխատանքների

Քաղաքային զբոսաշրջության համար կարևորվում են նաև տվյալ քաղաքում միջոցառումների անցկացումը: Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանը որդեգրել է մայրաքաղաքում փառատոնային զբոսաշրջությունը զարգացնելու քաղաքականությունը, ինչի արդյունքում զբոսաշրջիկների կայուն աճ է գրանցվում: Ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան», «Երևան Տարազֆեստ» և «Երևանի Գարեջրի» փառատոների անկացումը:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների ներգրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր կլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու, Հրազդանի կիրճի տարածքների վերակառուցման ու արդիականացման և այլ ծրագրեր:

Երևանը՝ որպես առաջատար զբոսաշրջային քաղաք, վերջին տարիներին պարբերաբար հայտնվում է ինչպես ռուսական, այնպես էլ միջազգային պարբերականների և կայքերի հոդվածներում:

Հիմնախնդիրներ

1. *Երևանի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի միջազգային շուկայում ոչ բավարար չափով գովազդում և ներկայացում:*
2. *Մայրաքաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքների և հետաքրքրություն ներկայացնող վայրերի ոչ բավարար հագեցվածություն:*
3. *Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն:*
4. *Երևանի հնավայրերի վերականգնման անհրաժեշտություն:*
5. *Երևանում թեմատիկ երթուղիների բացակայություն:*
6. *Զբոսայգիների վերականգնման անհրաժեշտություն՝ մասնավոր ներդրումների միջոցով:*
7. *Հանրային զուգարանների հիմնախնդրի լուծման անհրաժեշտություն:*
8. *Զբոսաշրջիկներին տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվության ոչ բավարար մակարդակ:*
9. *Երևան ժամանող միջազգային ավիաընկերությունների բարձր գնային քաղաքականություն:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի զբոսաշրջային բրենդի մշակմանն ուղղված աշխատանքներ: Աշխատանքները կիրականացվեն հանրային բաց քննարկումների և մրցույթների միջոցով:
2. Նախատեսվում է աշխատանքներ իրականացնել նախաերևանյան շրջանից մինչև խորհրդային ժամանակաշրջանի մոդեռնիզմի նմուշներ պարունակող Շենգավիթի հնավայրը, Էրեբունի ամրոցը, Կարմիր բլուրը և Երևանի պատմական այլ միջավայրերը դարձնելու գրավիչ՝ թեմատիկ զբոսաշրջային այցերի համար:
3. Նախատեսվում է մշակել և ներդնել զբոսաշրջային թեմատիկ երթուղիներ Երևանի համակողմանի ճանաչման համար:
4. Նախատեսվում են աշխատանքներ՝ ուղղված Հաղթանակ զբոսայգու վերակառուցմանն ու արդիականացմանը՝ մասնավոր ընկերությունների ներգրավմամբ:
5. Բացօթյա սրճարանների հետ համագործակցության միջոցով նախատեսվում է ապահովել զուգարաններից օգտվելու հնարավորություն՝ զբոսաշրջիկների և քաղաքի

բնակիչների համար:

6. Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել մարքեթինգային քաղաքականություն, որի իրականացումն իր մեջ ներառում է Երևանը, որպես զբոսաշրջային արդյունք, գովազդելն ու ներկայացնելը:
7. Միջազգային հարթակներում մայրաքաղաքի հանրահռչակման նպատակով նախատեսվում է Երևանի մասին տարաբնույթ տպագիր նյութերի պատրաստում և տարածում, հոլովակների պատրաստում, մասնակցություն միջազգային էքսպոների:
8. Նախատեսվում է շարունակել համագործակցությունը հյուրանոցային տնտեսության օբյեկտների, զբոսաշրջային կազմակերպությունների, օդանավակայանի, Երևանի մետրոպոլիտենի հետ՝ տրամադրելով տեղեկատվություն մայրաքաղաքում իրականացվող միջոցառումների վերաբերյալ:
9. Երևանը, որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք դիրքավորելու և միջոցառումային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով նախատեսվում է Երևանում կոնկրետ միջոցառումների իրականացում: Այս նպատակով նախատեսվում է զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում արդեն ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան» տոնածիսական փառատոնը, Երևանի գարեջրի փառատոնը, Երևան Տարազ ֆեստը, մշակութային, գործարար բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող սեզոնային փառատոները, համերգները:
10. Նախատեսվում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում /թռուցիկներ, քարտեզներ, էլեկտրոնային կրիչներով Երևանը ներկայացնող նյութեր/, ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար: Մասնավորապես՝
    - Առկա հիմնախնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է շահագործել զբոսաշրջային միասնական տեղեկատվական կենտրոն, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի վերաբերյալ և այլն: Տեղեկատվական կենտրոնը կնպաստի Երևան այցելած զբոսաշրջիկների իրազեկման մակարդակի բարձրացմանն ու ինքնակողմնորոշմանը:
    - Զբոսաշրջիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով վարել բազմալեզու կայք, որտեղ այցելուները կարող են գտնել հավաստի տեղեկատվություն մայրաքաղաքի պատմության, գործող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ:
11. Երևանում էքկուրսիոն ուղղությունը զարգացնելու նպատակով նախատեսվում է՝ «Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու ամենամյա կատարելագործում ու արդիականացում, լեզուների ավելացում, քաղաքապետարանի ենթակա թանգարանների մասնակցությամբ ծրագրերի կազմակերպում, ՀՀ ոստիկանության հետ համագործակցելով՝ Երևան քաղաքում տեղադրված ցուցանակների գույքագրում և անհրաժեշտության դեպքում՝ արդիականացում:
12. Զբոսաշրջության ոլորտում միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացման նպատակով նախատեսվում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումներն ու նորարարական լուծումները լայն հնարավորություններ են ստեղծում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կառավարում ապահովելու և քաղաքային ենթակառուցվածքները զարգացնելու համար:

2017թ. Երևանի քաղաքապետի որոշմամբ ստեղծվել է «Երևան խելացի քաղաք» ծրագրի մշակման և իրականացման հանձնաժողով, որի նպատակն է Երևան քաղաքի խնդիրների և առօրյա կենսագործունեության ապահովման նորարարական լուծումների մշակումը, որոնց հիմնական գաղափարը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ICT) և բանացանցի (Internet of Things, IoT) ինտեգրումն է քաղաքային տնտեսության կառավարման բնագավառում: Ուսումնասիրությունների շրջանակը ներառում է Երևան քաղաքի բոլոր ոլորտները, մասնավորապես՝ տեղեկատվական համակարգը, կրթությունը, առողջապահությունը, զբոսաշրջությունը, տրանսպորտը, կապը, էներգետիկան, ջրամատակարարումը, թափոնների վերամշակումը, իրավապահ մարմինները և այլ ոլորտներ:

Երևանի քաղաքապետարանում ներդրվել է մայրաքաղաքում գովազդների գույքագրման միասնական բազա, որի հիման վրա առաջին քայլերն արվեցին նաև թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային եղանակին անցնելու համար, ինչն էականորեն կրճատել է գովազդի թույլտվություն ստանալու ժամանակն ու խոչընդոտները: Մշակվել և ներդրվել է «Մանկապարտեզ» կառավարման և էլեկտրոնային հերթագրման համակարգը, դիսպետչերական կենտրոն՝ խոսքի և լսողության սահմանափակում ունեցող մարդկանց համար, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման և «Էլփաս 2» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգեր, ինչպես նաև գործում է քաղաքապետարանի կողմից քաղաքաշինական թույլտվությունների՝ էլեկտրոնային տարբերակով տրամադրման համակարգ:

Քաղաքապետարանի պաշտոնական կայքը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին իրենց առաջարկությունները և հարցերը առցանց ուղարկել Երևանի ավագանու աղամներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին՝ ապահովելով քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: transport.yerevan.am կայքում առկա են տեղեկություններ բարեփոխումների ամբողջ գործընթացի, մասնագիտական խմբի աշխատանքի, ինչպես նաև միջազգային խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ: Հարթակում ընթանում են առցանց քննարկումներ ու քվեարկություն՝ հնարավորություն տալով քաղաքացիներին իրենց մասնակցությունն ունենալու որոշումների կայացման գործընթացին էլեկտրոնային կառավարման ժամանակակից գործիքների միջոցով:

Հիմնախնդիրներ

1. *Քաղաքային ենթակառուցվածքներում և մատուցվող ծառայությունների գործընթացում էլեկտրոնային համակարգերի և նորագույն տեխնոլոգիաների կիրառության ցածր մակարդակ:*
2. *Առկա համակարգերի վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության և իրազեկվման ցածր մակարդակ:*
3. *Խելացի քաղաքի տարրերի ինտեգրված համակարգի բացակայություն:*

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է շարունակել Երևանի փոխակերպումը «Խելացի քաղաքի»՝ ներդնելով նորագույն տեխնոլոգիաներ, ստեղծել միասնական տվյալների բազա, երթևեկության հոսքերի կառավարում, իրական ժամանակում արտակարգ պատահարների մշտադիտարկում և համակարգված որոշումների ընդունում:
2. Նախատեսվում է քաղաքի առջև ծառացած մարտահրավերների լուծում՝ հիմնված նորարարական մոտեցումների վրա:
3. Նախատեսվում է քաղաքացիների արդյունավետ մասնակցության ապահովում քաղաքի զարգացման և կառավարման գործընթացներին, տեղեկացվածության և իրազեկման մակարդակի բարձրացում:
4. Նախատեսվում է տեղեկատվական և նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ դիմակայուն և անվտանգ միջավայրի ամրապնդում, քաղաքացիների կենսամակարդակի բարձրացում:
5. Նախատեսվում է տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փորձի փոխանակում:
6. Նախատեսվում է ներդնել «Ակտիվ քաղաքացի» համակարգը, որի միջոցով քաղաքացիները հնարավորություն կունենան մասնակցել Երևան քաղաքի համար առանցքային որոշումների կայացմանը՝ առցանց տարբերակով, մասնակցել Երևանի առաջնահերթությունների սահմանմանը, հաշվետվություններ ստանալ՝ կատարված աշխատանքների և դրանց ընթացքի մասին, առաջարկություններով հանդես գալ և մասնակցել դրանց իրականացմանը:
7. Քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու նպատակով նախատեսվում է ստեղծել իրազեկման և փոխգործակցության մի շարք հարթակներ, որոնք ապահովելու են մասնակցային կառավարումն ու հանրային լայն նշանակություն ունեցող որոշումների ընդունման մեջ քաղաքացիների ներգրավվածությունը:
8. Նախատեսվում է շարունակել ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումը պաշտոնական կայքում:
9. Նախատեսվում է շարունակել iYerevan.am հարթակի գործունեությունը՝ Երևանի բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, քննարկման և իրականացման համար քաղաքացիների առաջարկները, տեսակետներն ու կարծիքները ստանալու նպատակով:
10. Նախատեսվում է շարունակել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների հանրային փոխգործակցության հարթակի գործունեությունը, որի նպատակն է ապահովել բարեփոխումների գործընթացի մասին իրազեկվածությունն ու քաղաքացիական մասնակցությունը:
11. Նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանը զբաղեցնում է 2607 հա տարածք, բնակչությունը կազմում է 109.3 հազ. մարդ: Շրջանը սահմանակից է Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերին, Դավիթաշեն, Արաբկիր, Կենտրոն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,*
2. *Թեքահարթակների անբավարար քանակ,*
3. *Մանկապարտեզների հիմնանորոգման անհրաժեշտություն,*
4. *3-րդ կարգի վթարային շենքերի առկայություն,*
5. *Շենքերի կոյուղագծերի, ջրագծերի նորոգման կամ փոփոխման անհրաժեշտություն,*
6. *Վերգետնյա և ստորգետնյա անցումների անհրաժեշտություն,*
7. *Չլուսավորված բակերի և փողոցների առկայություն,*
8. *Ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգման և նորերի անցկացման անհրաժեշտություն,*
9. *Կանաչ տարածքների ընդլայնման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն,*
10. *Դպրոցներում ճաշարանների գործունեության նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն:*
11. *Ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի կապիտալ վերանորոգման և վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների բարեկարգման անհրաժեշտություն,*
12. *Գյուղատնտեսական նշանակության շուկայի և ստորգետնյա ավտոկայանատեղի անհրաժեշտություն:*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանում ճանապարհային ցանցի երկարությունը 78.3 կմ է: Շրջանում առկա է բազմաբնակարան բնակելի *435* շենք, որտեղ կա 338 վերելակ: Կանաչ տարածքը կազմում է 686.8 հա, ոռոգման ցանցի երկարությունը՝ 39 կմ :

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. կիրականացվի բազմաբնակարան շենքերի թվով *120* մուտքերի *6000*քմ. հարթ և *1200*քմ. թեք տանիքների, *10* վերելակների աշխատանքներ:
- Կստեղծվեն *6* նոր բակային տարածքներ:
- Կիրականացվեն *10000քմ.* ասֆալտ-բետոնե ծածկույթի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ՝ ներառելով նաև նախադպրոցական հաստատությունների բակերը:
- Նախատեսվում է չոր և առավել վտանգավոր ծառերի հատում: Սիզամարգերի մակերեսը կավելացվի՝ հասցնելով 32.0 հա:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Աջափնյակ վարչական շրջանում գործում է 16 մանկապարտեզ, հանրակրթական դպրոցները 20 են, որից՝ 4-ը ավագ, 1-ը միջնակարգ, 15-ը հիմնական, առկա է 3 ԲՈՒՀ, 1

արհեստագործական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 1 արտադպրոցական կազմակերպություն՝ ՄՊՍԿ, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 մշակութային կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ՝ 3 մասնաճյուղով, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 4 գիտահետազոտական ինստիտուտ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. տոների և հիշատակի օրերին նվիրված կկազմակերպվի *18* մշակութային և կրթական, *8* մարզական միջոցառում, որոնց մեջ ներառված են բակային փառատոններ և ավանդական մրցաշարեր:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործում է հանրապետական նշանակության 5 հիվանդանոց, 2 ամբուլատոր պոլիկլինիկա և «Առաքելություն Հայաստան» հասարակական կազմակերպության բարեգործական ճաշարանը:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրներ իրականացնող հասարակական, և բարեգործական կազմակերպությունների հետ նախատեսվում է իրականացնել տեղական նշանակության բարեգործական ծրագրեր:
- Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին կտրվի պետպատվերի շրջանակներում բուժսպասարկում ստանալու հնարավորություն:
- Բարեգործական ճաշարանի կազմակերպման ծրագիրը կկրի շարունակական բնույթ, այն իրականացվում է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:
- Սոցիալական տարբեր խմբերի համար տոն և հիշատակի օրերին կկազմակերպվեն միջոցառումներ:
- Դրամական, պարենային աջակցություն կցուցաբերվի սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքներին: Կհատկացվի նաև վառելափայտ: Ամանորի կապակցությամբ սննդի փաթեթներ կհատկացվեն առավել կարիքավոր ընտանիքներին:
- Աջակցություն կցուցաբերվի նաև վարչական շրջանում վարձակալական հիմունքներով բնակվող սիրիահայ ընտանիքներին:

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանը սահմանակից է Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Արաբկիր վարչական շրջանների և Կոտայքի մարզի հետ: Վարչական շրջանի տարածքը կազմում է 726 հա, բնակչությունը 52.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգման, վերելակների հիմնանորոգման, շենքերի ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման, մուտքերի վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Ասֆալտապատման, բակային տարածքների բարեկարգման և նոր բակային տարածքների ստեղծման անհրաժեշտություն*
3. *Աստիճանների, հենապատերի և եզրաքարերի վերանորոգման անհրաժեշտություն*
4. *Տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար թեքահարթակների ստեղծման անհրաժեշտություն*
5. *Վթարային էլեկտրասյուների փոխարինման, դեռևս չլուսավորված բակերում և փողոցներում արտաքին լուսավորության ապահովման անհրաժեշտություն*
6. *Ոռոգման ցանցի ընդլայնման, ինքնավար ոռոգման համակարգի ներդրման անհրաժեշտություն*
7. *Կանաչ տարածքների և հանգստի գոտիների ստեղծման, շրջակա միջավայրի պահպանման անհրաժեշտություն*
8. *Բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավման, գույքի արդիականացման, վերազինման անհրաժեշտություն*
9. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավման՝ ընթացիկ նորոգման և հիմնանորոգման, գույքի թարմացման անհրաժեշտություն:*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Ավան վարչական շրջանում հաշվառված է 237 բազմաբնակարանային շենք, որից 20 բարձրահարկ և 28՝ մինչև 6 հարկանի: Առկա է 330 վերելակ: Վարչական շրջանն ունի 37 փողոց, որոնց երկարությունը՝ 52.392 կմ է, ոռոգման ցանցի երկարությունը 19 կմ է:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կիրականացվեն 10.000 քմ ընդհանուր մակերեսով մայթերի և փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:
- Հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն՝ ընդհանուր 16000 քմ մակերեսով և թեք տանիք ունեցող բազմաբնակարան բնակելի 2 շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ՝ 1500 քմ մակերեսով:
- 2019թ. ընթացքում նախատեսվում է 5 նոր այգիների, խաղահրապարակների և պուրակների կառուցում, կիրականացվի վնասված գույքի՝ նստարանների, աղբամանների, ցանկապատների, խաղային համալիրների վերանորոգում և ներկում:
- Կիրականացվի 40 մուտքերի և 10 վերելակների վերանորոգման, 500 գծմ եզրաքարերի, 300քմ գեղազարդ սալիկների նորերով փոխարինման աշխատանքներ:
- 2019թ. ընթացքում նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում բարեկարգել բակային այգիները, վարչական շրջանի բոլոր թաղամասերում և փողոցների հարակից տարածքներում ընդարձակել կանաչ տարածքները, տեղադրել մանկական

խաղեր և նստարաններ, իրականացնել ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Ավան վարչական շրջանում գործում են՝ 7 մանկապարտեզ, 5 հիմնական, 1 միջնակարգ, 1 ավագ և 2 հատուկ դպրոցներ, 1 գրադարան, 1 մարզադպրոց, 1 մշակույթի տուն, 1 արվեստի դպրոց, 1 շախմատի մասնագիտացված մարզադպրոց:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Վարչական շրջանի կրթօջախներում, մշակույթի կենտրոններում, այգիներում կանցկացվեն պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված մշակութային զանգվածային միջոցառումներ, ֆլեշմոբեր, հանդիպումներ, այցելություններ և տարաբնույթ այլ մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրեր:
- Մանկապարտեզներում՝ սննդի որակի և ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ կշարունակվի հսկողությունը:
- Առողջ ապրելակերպը խթանմանելու նպատակով կկազմակերպվեն մարզական միջոցառումներ, սպորտլանդիաներ, մրցումներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Ավան վարչական շրջանում գործում է 11 բուժհաստատություն, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ճաշարանը, որից օգտվում են շուրջ 180 շահառուներ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Տարաբնույթ աջակցություններ կցուցաբերվեն Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին, զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքներին, բազմազավակ անապահով ընտանիքներին, ինչպես նաև սոցիալապես անապահով այլ կարիքավոր խմբերին:
- Աջակցություն կցուցաբերվի սիրիահայ ընտանիքներին:
- Սոցիալական տարբեր խմբերի համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված տոն և հիշատակի օրերին:
- Կշարունակվի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը, կիրականացվեն սոցիալական բնույթի տարբեր ծրագրեր:
- Պոլիկլինիկաների հետ համատեղ, սոցիալապես անապահով ընտանիքների համար, կկազմակերպվեն անվճար բուժզննություններ, խորհրդատվություններ և դժվարամատչելի հետազոտություններ, կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոնի կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվեն նվեր-փաթեթներ:
- Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին կտրամադրվեն դպրոցական պայուսակներ՝ համալրված գրենական պիտույքներով, կկազմակերպվի դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը ճամբարներում:

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արաբկիր վարչական շրջանի տարածքը կազմում է 1329 հա, իսկ բնակչության թիվը՝ 114.7 հազ. մարդ: Վարչական շրջանն ընդհանուր սահմաններով հարում է Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Թեքահարթակների անբավարար քանակ*
2. *Շենքերի կոյուղագծերի, ջրագծերի նորոգման կամ փոխարինման անհրաժեշտություն*
3. *Հրազդանի կիրճում, փողոցներում և բակերում հենապատերի հիմնանորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն*
4. *Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման և նորոգման անհրաժշտություն*
5. *Փողոցների հեղեղատարերի նորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն*
6. *Հանգստի նոր գոտիների ստեղծման, կանաչ տարածքների ընդլայնման, բակային տարածքների բարեկարգման, միջբակային տարածքների լուսավորման և ասֆալտապատման անհրաժեշտություն*
7. *Երևանի հ. 23, 24 և 33 մանկապարտեզների հիմնանորոգման և հ. 22 մանկապարտեզի մասնակի վերանորոգման անհրաժեշտություն:*
8. *Նոր մանկապարտեզների անհրաժեշտություն*
9. *«Ալ. Հեքիմյանի և Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ների շենքերի մասնակի և տանիքների վերանորոգման, գույքի թարմացման անհրաժեշտություն*
10. *Գրադարանների արդիականացման և ժամանակակից գրականությամբ ապահովման անհրաժեշտություն*
11. *Մարզադպրոցների արդիականացման, վերանորոգման, սպորտային գույքի համալրման և համազգեստի ձեռքբերման անհրաժեշտություն, «Երևանի Արաբկիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» և «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ներում մարզաբազայի բացակայություն*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանում հաշվառված են 692 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 392-ն ունեն թեք լանջավոր, իսկ 300-ը՝ հարթ տանիքներ: Շենքերն ունեն 1978 մուտքեր և գործում են 459 վերելակներ: Վարչական շրջանի ասֆալտապատ տարածքը կազմում է 1674000քմ, իսկ եզրաքարերը՝ 240300գծմ, հաշվառված են 117 փողոցներ, որոնց երկարությունը կազմում է՝ 85642կմ: Վարչական շրջանում հաշվառված է 77 հա կանաչապատ տարածք, որից մշտապես մշակվում է 53 հա-ը, այդ թվում՝ 2.9 հա՝ պուրակ, 5 հա՝ այգի, 8.4 հա՝ սիզամարգ, 36.7 հա՝ անտառ-պուրակ: Գործող ոռոգման համակարգի երկարությունը 71000գծմ է:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Արաբկիր վարչական շրջանում 2019թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի 8000քմ հարթ և 1670քմ թեք տանիքների վերանորոգում: Սիստեմատիկ կատարվելու են շենքերի դեռատիզացիոն, դեզինֆեկցիոն, աղբախցերի լվացման և մշակման աշխատանքներ:
- Նախատեսվում է վերանորոգել 8 շենքերի ներքին ջրագծերը և կոյուղագծերը:
- Վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն 54 մուտքերում:
- Կվերանորոգվի18 վերելակ:

- Թվով 12 բակեր բարեկարգվելու են և կառուցվելու են նոր խաղահրապարակներ:
- Ընթացիկ վերանորոգման են ենթարկվելու 60 բակ, իրականացվելու է զբոսայգիների և 1 մինի ֆուտբոլի դաշտի կառուցում:
- Փողոցներում և բակերում տեղադրվելու են թվով 59 նստարաններ և 1 զրուցարան, վերանորոգվելու և հիմնանորոգվելու է 6683քմ ասֆալտ-բետոնե ծածկույթ և 160 գծմ եզրաքար:
- Պարբերաբար բարեկարգվելու է Հրազդանի կիրճը:
- Նախատեսվում է տեղադրել հուշարձան:
- Նախատեսվում է անտառ-պուրակները հասցնել 45 հա-ի:
- 2019թ. տնկվելու է 6000 հատ ծառ և 4000 հատ թուփ:
- Գործող ոռոգման ցանցի 1300 գծմ հիմնանորոգվելու է և կառուցվելու է նորը՝ 1800 գծմ երկարությամբ:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Արաբկիր վարչական շրջանում գործում է 13 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց (որից 17-ը՝ հիմնական, 3-ը՝ ավագ դպրոց), 4 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 2 գրադարան և 2 երաժշտական դպրոց:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. կրթության, մշակույթի և սպորտի ոլորտում նախատեսվում է անցկացնել ՀՀ հիշատակի և տոն օրերին նվիրված մշակութային և սպորտային միջոցառումներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Արաբկիր վարչական շրջանում գործում է 1 բարեգործական ճաշարան՝ որի ծառայություններից օգտվում է 152 կարիքավոր բնակիչ: Վարչական շրջանի տարածքում գործում են 567 հասարակական կազմակերպություն, 3 պոլիկլինիկա և 3 հիվանդանոց, ինչպես նաև բազմաթիվ այլ բժշկական ծառայություններ մատուցող կառույցներ, այդ թվում՝ հետազոտական, ակնաբուժական, ատամնաբուժական:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. նախատեսվում է սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը կազմակերպել հանրապետության տարբեր ճամբարներում, երեխաներին ապահովել սնունդով, հագուստով և հիգիենայի պարագաներով:
- Նախատեսվում է ստեղծել բակային ճամբարներ երեխաների ժամանակը բովանդակալից և հետաքրքիր դարձնելու նպատակով:
- Բարեգործական ճաշարանում կկազմակերպվի տոնական միջոցառում՝ Սբ.Հարության տոնի կապակցությամբ:
- Մայրության տոնի առթիվ նվերներ կտրամադրվեն սոցիալապես անապահով 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին:
- Նախատեսվում է մայիսի 9-ի առթիվ դրամական աջակցություն ցուցաբերել ՀՄՊ 37 վետերանի:
- Ամռան ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար կկազմակերպվի էքսկուրսիա, իսկ Գիտելիքի օրվա առթիվ սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվի պայուսակ և գրենական պիտույքներ:

- Ամանորի կապակցությամբ տոնական միջոցառումներ կկազմակերպվեն տարբեր սոցիալական խմբերի համար, առավել կարիքավոր ընտանիքներին կհատկացվեն սննդի փաթեթներ:
- Նախատեսվում է համագործակցել առողջապահական հիմնարկների հետ՝ սոցիալապես անապահովներին անվճար բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ միջնորդագրերով պետական պատվերի շրջանակներում կկազմակերվի բնակիչների բժշկական հետազոտությունը, բուժումը և վիրահատությունը:
- Բժշկական հաստատություններում նախատեսվում է կազմակերպել «Բաց դռների օրեր»՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով և հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին ՀՀ-ում գործող առողջարանների ուղեգրեր տրամադրելու համար:
- Կարիքավոր ընտանիքներին կհատկացվի վառելափայտ:

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանի տարածքը կազմում է 647 հա, բնակչությունը՝ 42.5 հազ. մարդ: Շրջանը արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին և սահմանակից է Աջափնյակ և Արաբկիր վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան բնակելի շենքերի մուտքերի վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Բակային տարածքների բարեկարգման և կահավորման, ինչպես նաև արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն*
3. *Բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների (ջրատար և ջրթափ խողովակներ) վատթար վիճակ*
4. *Բազմաբնակարան շենքերի պայմանների բարելավման, հարթ և թեք տանիքների վերանորոգման անհրաժեշտություն*
5. *Գրունտային ճանապարհների ասֆալտապատման և ջրահեռացման համակարգի ստեղծման անհրաժեշտություն*
6. *Ոռոգման ցանցի արդիականացում*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 193 բազմաբնակարան շենք, 415 վերելակ:

Կանաչապատման կազմակերպության կողմից սպասարկվում է շրջանի 22 հա տարածքը (կանաչապատ տարածք, ծաղկապատ տարածք, այգի, պուրակ, ոռոգման ցանց):

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կիրականացվի 40 մուտքերի նորոգման աշխատանքներ՝ ընդգրկելով շենքերի բոլոր հարկերը, կվերանորոգվեն պատուհանները և դռները, շքամուտքի աստիճանավադակը, բազրիքները:
- Կվերանորոգվեն բնակելի հարթ տանիքները, ձեռք կբերվեն և կտեղադրվեն անհրաժեշտ սարքավորումներ, պահեստամասեր և նյութեր՝ վերելակների անխափան գործունեությունն ապահովելու համար:
- Աջակցություն կցուցաբերվի համատիրություններին՝ շենքերի նկուղներում վնասված ջրատար խողովակների նորոգման, ջրթափ խողովակների վերականգնման ուղղությամբ:
- Նախատեսվում է իրականացնել թվով 3 բակային տարածքների բարեկարգում՝ ապահովելով աղբամաններ, նստարաններ, զրուցարաններ, մանկական խաղեր և մարզագույք: Կիրականացվեն բակային տարածքներում և խաղահրապարակներում առկա գույքի վերանորոգման աշխատանքներ:
- Փողոցների երթևեկելի հատվածի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ նորոգման աշխատանքները, ինչպես նաև փողոցների եզրաքարերի վերանորոգումը կիրականացվեն գույքագրման արդյունքում ստացված տեղեկատվությանը համապատասխան:
- Շարունակական բնույթ է կրում մայթերի հարակից տարածքների, Եղվարդի խճուղու միջնամասի կանաչ շերտի, ինչպես նաև Կենտրոնական այգու, Կաղնուտի այգու, Դավթաշենի հուշարձանի հարակից տարածքի, բակային հանգստի գոտների ծառերի և կանաչ տարածքների խնամքը:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Դավթաշեն վարչական շրջանում գործում է 5 մանկապարտեզ, 6 հանրակրթական դպրոց (1 միջնակարգ, 4 հիմնական և 1 ավագ), Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոց, 1 գրադարան, 1 շախմատի դպրոց, 1 հանդբոլի և խաղային այլ մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է վերանորոգել հ. 58, 59, 61 մանկապարտեզները:
- Բակային տարածքներում և վարչական շրջանի բոլոր կրթական հաստատություններում նախատեսվում է իրականացնել 17 մշակութային և 7 սպորտային միջոցառումներ:
- 2019թ. մշակութային և սպորտային ծրագրերում ապահովվելու է մանկապարտեզների սաների, հանրակրթական և արվեստի դպրոցի երեխաների մասնակցությունը, իսկ սպորտային մրցաշարերում ու միջոցառումներում կընդգրվեն ինչպես շախմատի դպրոցի սաները, այնպես էլ վարչական շրջանի բակային տարածքների երեխաներն ու պատանիները:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Դավթաշեն վարչական շրջանի տարածքում է գործում հ.20 ամբուլատոր բժշկական կենտրոնը:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Դավթաշեն վարչական շրջանի և ՀՀ մարզերի /Արթիկ, Մարալիկ/, ԼՂՀ Մարտակերտի շրջանի միջև համագործակցության ծրագրերի շրջանակում կիրականացվեն բարեգործական միջոցառումներ, ինչպես նաև մշակութային և սոցիալական բաղադրիչով տարատեսակ ծրագրեր:
- Անապահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, անօթևաններին, կյանքի դժվարին իրավիճակում հայտված անձանց կտրամադրվի՝ պարենային օգնություն, ֆինանսական և հոգեբանական աջակցություն, իրավաբանական խորհրդատվություն, կկազմակերպվի երեխաների ամառային հանգիստը ճամբարներում:
- Կիրականացվի 14 միջոցառում՝ նվիրված տոն և հիշատակի օրերին:

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Էրեբունի վարչական շրջանը զբաղեցնում է 4749 հա տարածք և ունի 127,9 հազ. բնակչություն: Սահմանակից է Երևանի Կենտրոն, Նոր-Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Կոյուղագծերի և նստած դիտահորերի, շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վատթար վիճակ*
3. *Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների և վթարային պատշգամբների վերանորոգման անհրաժեշտություն*
4. *Հանգստի նոր գոտիների ստեղծման, կանաչ տարածքների ընդլայնման, բակային տարածքների բարեկարգման, միջբակային տարածքների լուսավորման և ասֆալտապատման անհրաժեշտություն*
5. *Դպրոցական ճաշարանների նկատմամբ վերահսկողության բացակայություն*
6. *Վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների բարեկարգման անհրաժեշտություն*
7. *Թեքահարթակների անբավարար քանակ*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Էրեբունի վարչական շրջանում առկա է 261 բազմաբնակարան շենք, գործում է 218 վերելակ: Փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 101.9 կմ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. կիրականացվի 110.000քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման աշխատանքներ,
- Կիրականցվի բազմաբնակարան շենքերի 9.161 քմ հարթ և 1.850 քմ թեք տանիքների վերանորոգում:
- Նախատեսվում է 13 վերելակների հիմնանորոգում, 81 բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում:
- Կիրականացվի հ. 67 նախադպրոցական հաստատության տանիքի և խմբասենյակի վերանորոգման աշխատանքներ:
- Կհիմնանորոգվի 4 բակային տարածք, Գ. Մահարի հ. 39 շենքի բակում կկառուցվի մինի-ֆուտբոլի դաշտ:
- Կիրականացվի 7 հա կանաչ տարածքների պահպանման և բարեկարգման, 2000մ ոռոգման ցանցի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:
- Շարունակական բնույթ են կրելու վարչական շրջանում առկա հուշարձանների պահպանման աշխատանքները: Վերանորոգվելու և բարեկարգվելու են չորս հուշարձանների հարակից տարածքները:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում է 3 մասնավոր և 21 պետական հանրակրթական դպրոց (2 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), 4 մասնավոր և Երևանի ենթակայության 12 մանկապարտեզ, 4 գրադարան, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, 1 մարզատրամաբանական խաղերի մարզադպրոց:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. նախատեսվում է վերանորոգել հհ. 71, 74 և 75 մանկապարտեզները:
- 2019թ. ընթացքում կկազմակերպվեն 16 մշակութային և 10 սպորտային միջոցառումներ:
- Կիրականացվի համագործակցություն Սևան քաղաքի մանկապարտեզների, դպրոցների, մշակութային հաստատությունների, Վրաստանի «Հայ Արտ» մշակութային կենտրոնի, Երևանի Պետական Դրամատիկական, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական, Մհեր Մկրտչյան, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի, Համազգային թատրոնների հետ:
- Վարչական շրջանի մանկապարտեզների ավարտական խմբերի սաներին կտրամադրվեն պայուսակներ, գրենական պիտույքներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Էրեբունի վարչական շրջանի տարածքում են գործում «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնները, որոնք ընդգրկում են 2 ծննդատուն, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը, ՀՀՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը, 6 ամբուլատոր պոլիկլինիկա, ատամնաբուժարաններ, շտապ օգնության ենթակայան:

2019թ. նախատեսվող աշխատանքներ

- Էրեբունի վարչական շրջանում 2019թ. ընթացքում կիրականացվեն սոցիալական տարբեր ծրագրեր, որոնք ուղղված կլինեն բազմազավակ և անապահով ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, միայնակ տարեցների կենսական ապահովմանը:
- Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչներին նախատեսվում է տրամադրել դրամական, նյութական և դեղորայքային օգնություն:
- Սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվեն պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Սոցիալապես անապահով խավերի համար կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված տոներին և հիշատակի օրերին: Կիրականացվեն սիրիահայ ընտանիքներին բազմաբնույթ աջակցության ցուցաբերման ծրագրեր: «Ամանորի» և «Սուրբ ծննդյան» տոների կապակցությամբ անապահով ընտանիքները կստանան սննդի փաթեթներ:
- Վարչական շրջանի կարիքավոր, սակավ ապահովված, բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան շուրջ 160 դպրոցականների ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստը կկազմակերպվի մանկական առողջարարական ճամբարում:
- Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ կտրամադրվի դրամական օգնություն: Կիրականացվեն միջոցառումներ նաև հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ, կցուցաբերվի օժանդակություն նրանց սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին, կցուցաբերվի աջակցություն հաշմանդամություն ունեցող կարիքավոր բնակիչներին՝ սայլակների ձեռքբերման գործում:
- 2019թ. կշարունակվի սոցիալապես անապահով բնակիչներին՝ պետպատվերի շրջանակներում բուժսպասարկման ծրագիրը: Բնակչության շրջանում առողջապահական խնդիրների լուծման նպատակով համատեղ ծրագրեր կիրականացվեն առողջապահական կազմակերպությունների հետ:

- Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցությամբ վարչական շրջանի բնակիչները կշարունակեն օգտվել բարեգործական ճաշարանից:
- «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի աջակցությամբ աշխատանքներ կտարվեն անօթևան անձանց ժամանակավոր կացարաններում տեղավորելու ուղղությամբ:

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին: Տարածքը կազմում է 1335 հա, բնակչությունը՝ 125,4 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Ասֆալտ-բետոնե ծածկի վերականգման, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Վերելակային տնտեսության արդիականացման, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի, վթարային պատշգամբների, հարթ և թեք տանիքների վերանորոգման անհրաժեշտություն*
3. *Ոռոգման ցանցի և ջրագծերի վերանորոգման անհրաժեշտություն*
4. *Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն*
5. *Արտաքին լուսավորության արդիականացման և վթարային հենասյուների փոխարինման անհրաժեշտություն*
6. *Բակային տարածքների բարեկարգման, ոռոգման ցանցի վերականգնման և միջբակային տարածքների լուսավորության անհրաժեշտություն*
7. *Հանգստի գոտիների ստեղծման, այգիների բարեկարգման և կանաչապատման անհրաժեշտություն*
8. *Անցումների վերանորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն*
9. *Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի թարմացման անհրաժեշտություն*
10. *Սոցիալապես խոցելի խմբերի համար տարաբնույթ ծրագրերի իրականացման անհրաժեշտություն:*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Կենտրոն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 106,0 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 764 շենք, անհատական բնակելի 8300 տուն, 581 վերելակ: Վարչական շրջանում առկա է 425 բակային տարածք, 22 զբոսայգի, պուրակ, հանգստյան գոտի: Կանաչապատ տարածքները 49 հա է, ոռոգման ցանցի երկարությունը՝ 51,6 կմ, մերձակա անտառային գոտին՝ 120 հա:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել 11500քմ ասֆալտապատման, փողոցների, բակերի բարեկարգման աշխատանքներ:
- Հիմնանորոգման աշխատանքներ կիրականացվեն 10 բակային տարածքներում:
- Կտեղադրվեն մանկական խաղեր, սպորտային մարզագույք, կկառուցվի մինի ֆուտբոլի դաշտ:
- Բակերում կիրականացվեն աստիճանների, հենապատերի և եզրաքարերի վերանորոգման, փողոցների և բակերի լուսավորության աշխատանքներ:
- Նախատեսվում է բազմաբնակարան շենքերի 3000քմ հարթ և թվով 6 շենքերի թեք տանիքների հիմնանորոգման, 180 շքամուտքերի և 42 շքապատշգամբների վերանորոգման աշխատանքներ:
- Համատիրությունների հետ համագործակցությամբ կիրականացվեն վերելակների, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի վերանորոգման աշխատանքներ:

- Նախատեսվում է իրականացնել անցումների վերանորոգման աշխատանքներ:
- Նախատեսվում է իրականացնել կանաչ տարածքների ընդլայնման, պահպանման և ծառատնկման աշխատանքներ: Կիրականացվի ջրագծերի և ոռոգման ցանցի վերանորոգում:
- Կիրականացվեն 46 հուշարձանների պահպանմանն և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Կենտրոն վարչական շրջանում գործում է 34 մանկապարտեզ, որից՝ 21-ը վարչական շրջանի ենթակայության, 28 դպրոց, 21 բուհ, արվեստի և երաժշտական 7 դպրոց, միջնակարգ մասնագիտական 2 ուսումնարան, 4 գրադարան, կրթական-մշակութային 9 հաստատություն, 2 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, մինի ֆուտբոլի 25 դաշտ, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 31 թանգարան և ցուցասրահ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել հհ. 3, 17, և 19 մանկապարտեզների վերանորոգում:
- Կիրականացվեն 27 մշակութային, 14 կրթական և 7 սպորտային միջոցառումներ:
- Հիմնանորոգման և ընթացիկ նորոգման, գույքի արդիականացման աշխատանքներ կիրականացվեն կրթօջախներում, մանկապարտեզներում, մարզական և մշակութային օջախներում:
- Նախատեսվում է իրականացնել բակային տարածքների կանաչապատման և ոռոգման ցանցի վերանորոգման աշխատանքներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Կենտրոն վարչական շրջանում գործում է 29 առողջապահական կազմակերպություն:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Շարունակվելու է համագործակցությունը Գերմանական կարմիր խաչի, ինչպես նաև պետական, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:
- Տոնական օրերին կարիքավոր ընտանիքներին կտրամադրվի դրամական, նյութական և պարենային աջակցություն:
- Դրամական աջակցություն կցուցաբերվի ՀՀ և Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքներին, 2 հասարակական կազմակերպությունների, ՀՄՊ և արցախյան ազատամարտի մասնակիցներին:
- Խիստ կարիքավորները և տարեցները կօգտվեն «Գթության խոհանոց» բարեգործական ծրագրից:

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Շրջանի տարածքը կազմում է 2516 հա, բնակչությունը՝ 137.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Ասֆալտ-բետոնե ծածկի, եզրաքարերի և մայթերի նորոգման անհրաժեշտություն*
2. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, վերելակների, շքամուտքերի վերանորոգման անհրաժեշտություն*
3. *Լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն*
4. *Բակերի բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, հանգստի գոտիների ստեղծման և այգիների կանաչապատման անհրաժեշտություն*
5. *Թեքահարթակների կառուցման, աստիճանների, հենապատերի, վերգետնյա և ստորգետնյա անցուղիների վերանորոգման անհրաժեշտություն*
6. *Բազմաբնակարան շենքերի աղբահանության որակի բարելավման և սանիտարահիգենիկ պայմանների ապահովման անհրաժեշտություն*
7. *Ոռոգման ցանցի ընդլայնման, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման անհրաժեշտություն*
8. *Կրթական, մշակութային և մարզական օջախների շենքերի հիմնանորոգման, ընթացիկ նորոգման, գույքի թարմացման և բակերի ոռոգման ցանցերի նորոգման անհրաժեշտություն:*
9. *Աջակցության ծրագրերի շարունակականության ապահովման անհրաժեշտություն*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կա 589 բազմաբնակարան բնակելի շենք, որից 500-ը՝ բարձրահարկ, 994 վերելակ, որից 900-ը՝ մարդատար: Վարչական շրջանի 132 փողոցների և նրբանցքների երկարությունը կազմում է 103,58կմ, փողոցների ընդհանուր մակերեսը 1494,48 հազ. քմ է: Շրջանում առկա է 9 զբոսայգի, կանաչ տարածությունը 90.01 հա է, ոռոգման ցանցի երկարությունը՝ 40,7 կմ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի 1000քմ հարթ տանիքների, 155 շքամուտքերի, 15 շքապատշգամբների վերանորոգման աշխատանքներ:
- Կշարունակվեն ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքները (7400քմ), կվերանորոգվեն փողոցների 260 գծմ եզրաքարեր:
- Կիրականացվեն 122 հասցեներում վերելակների վերանորոգման աշխատանքներ, այդ թվում՝ 35 հասցեներում վերելակների էլեկտրական շարժիչների վերանորոգում, 44 հասցեներում վերելակի հակակշռի զսպանակների տեղադրում, 26 հասցեներում 8.3մմ կտրվածքով մետաղյա ճոպաններ և 3 հասցեներում՝ 10.5մմ կտրվածքով մետաղյա ճոպաններ, 5 հասցեներում վերելակների 77մմ կտրվածքով տանող անիվների և 2 հասցեներում մարդատար վերելակի հիմնական փոխանցման, մեկ հասցեում՝ բեռնատար տուփի փոխարինում: Նախատեսվում է իրականացնել նաև վերելակի հորանների մաքրման, մուտքերի և ներքին ցանցի խողովակների վերանորոգման աշխատանքներ թվով 6 հասցեներում:
- Նախատեսվում է վերանորոգել 10 մուտքերի դռներ:

- Կվերանորոգվեն և կվերականգնվեն բազմաբնակարան բարձրահարկ շենքերի անձրևատար խողովակները և կոյուղու ներքին ցանցը:
- Կիրականացվեն բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբախցիկների վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ:
- Կիրականացվի 3 բակային տարածքների բարեկարգում:
- Նախատեսվում է վերանորոգել և վերակառուցել հետնիոտն անցուղիների 5 աստիճանավանդակներ:
- Կվերանորոգվեն բակերի և այգիների անսարք մանկական խաղային համալիրները, վնասված նստարանները:
- Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի 83 հա կանաչ տարածքների՝ անտառ-պուրակների, այգիների, սիզամարգերի խնամքի, բարեկարգման և ընդլայնման աշխատանքներ:
- Նախատեսվում է իրականացնել 400 հատ չոր և հիվանդ ծառերի մասնակի և խոր էտ:
- Կիրականացվի 700գծմ ոռոգման ցանցի խողովակաշարերի վերանորոգում:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 24 հանրակրթական դպրոց (4 ավագ, 1 միջնակարգ, 14 հիմնական, 1 կրթահամալիր, 4 մասնավոր), 24 մանկապարտեզ, 1 գրադարան, 4 մարզադպրոց, 2 մշակութային կենտրոն, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, մեկ համալսարան, 1 հատուկ դպրոց: Շրջանի տարածքում է գործում Երևանի հեծանվահրապարակը:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Կիրականացվի մանկապարտեզների, դպրոցների, արտադպրոցական կազմակերպությունների շենքերի հիմնանորոգում, մասնակի վերանորոգում, մանկապարտեզների բակերի բարեկարգում, բակային խաղերի տեղադրում:
- Նախատեսվում է իրականացնել մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում և մասնակի վերանորոգում:
- Կիրականացվեն մշակույթային, կրթական և սպորտային մի շարք միջոցառումներ:
- Կկազմակերպվեն բակային ճամբարներ և մանկական զվարճալի միջոցառումներ:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է 4 պոլիկլինիկա, 3 ծննդատուն, «Աստղիկ» բժշկական կենտրոնը, «Արմենիկում» կլինիկական կենտրոնը, «Սեբաստիա» բժշկական կենտրոնը, մեծահասակների «Նելադենտ» ՍՊԸ և հ.4 մանկական ստոմատոլոգիական պոլիկլինիկաները:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- «Հաղթանակի օրվան» առթիվ կկազմակերպվի միջոցառում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների համար և ՀՊՄ մասնակիցներին կտրամադրվի դրամական աջակցություն:
- «Սուրբ Զատիկի» տոնի կապակցությամբ նախատեսվում է 1500 անապահով ընտանիքների տրամադրել բնամթերային օգնություն:
- Բազմազավակ, նպաստառու, հաշմանդամ, զոհվածի ընտանիքների 1-4 դասարանի 400 երեխայի «Գիտելիքի օրվա» կապակցությամբ կտրամադրվի գրենական պիտույքների փաթեթներ:

- «Երեխաների պաշտպանության միջազգային օրվա» հունիսի 1-ին կապակցությամբ երկկողմանի ծնողազուրկ երեխաներին կտրամադրվեն նվերներ:
- «Տարեցների միջազգային օրվա» կապակցությամբ 250 տարեցների (թիվ 1 ինտերնատին և «Վետերան» օթևանին) կտրամադրվեն նվերներ:
- «Հաշմանդամների միջազգային օրվա» կապակցությամբ 100 հաշմանդամի կտրամադրվեն նվերներ:
- «Ամանորի և Սուրբ Ծննդյան» տոների կապակցությամբ 2000 անապահով ընտանիքների և 5300 երեխաների կտրամադրվի սննդային փաթեթներ:
- «Դուք մենակ չեք» ծրագրով 20 սոցիալապես անապահով միայնակ տարեցների ընտանիքների կտրամադրվեն պարենային փաթեթներ:
- Սոցիալական աջակցություն կտրամադրվի 40 սիրիահայ ընտանիքների:
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը հանրապետության տարբեր ճամբարներում:
- Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կշարունակվի համապատասխան ծրագրերի իրականացումը սոցիալապես անապահով ընտանիքներին տեխնիկական միջոցների տրամադրման նպատակով (հաշմանդամների շարժասայլակների, լսողական սարքերի տրամադրում և այլն): Կշարունակվի նաև տարբեր հիմնադրամներից սոցիալապես անապահով ընտանիքներին օժանդակության ցուցաբերման գործընթացը:

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Երևանի Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիս-արևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Նոր Նորք վարչական շրջանի տարածքը կազմում է 1411 հա, բնակչությունը՝ 131.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Կրթական, մշակութային և մարզական օջախների, բժշկական հաստատությունների շենքերի հիմնանորոգման և նորոգման, գույքի արդիականացման անրաժեշտություն*
2. *Խաղահրապարակների կառուցման, բարեկարգման և մարզական գույքի տեղադրման անհրաժեշտություն*
3. *Ասֆալտ-բետոնե ծածկի նորոգման անհրաժեշտություն*
4. *Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն*
5. *Բակային տարածքների բարեկարգման, կանաչապատման և գույքի թարմացման անհրաժեշտություն*
6. *Եզրաքարերի, հենապատերի և առկա քայքայված աստիճանների վերանորոգման անհրաժեշտություն*
7. *Հարթ ու թեք տանիքների, մուտքերի, վերելակային տնտեսության արդիականացման, ներքին կոյուղագծերի, ջրագծերի և ջրթափ խողովակների նորոգման անհրաժեշտություն*
8. *Հետիոտնային ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգման և կառուցման անհրաժեշտություն*
9. *Ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտություն*
10. *Աղբահանության որակի բարելավման և բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի ապահովման անհրաժեշտություն*
11. *Կանաչ տարածքների ընդլայնման և պահպանման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն*
12. *Ոռոգման ցանցի վերականգման և ընդլայնման անհրաժեշտություն*

Բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման ոլորտ

Նոր Նորք վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է: Շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով: Վարչական շրջանում առկա է 6 գետնանցում, 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ, 18 մինի ֆուտբոլի դաշտ և 3 լողավազան, տեղադրված է 307 մանկական խաղ և կարուսել, 150 մարզասարք, 136 զրուցարան, 750 նստարան և 276 աղբաման: Կանաչ տարածությունը կազմում է 399,18 հա, առկա է 17 զբոսայգի և պուրակ, 13 հուշարձան: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է փողոցների երթևեկելի մասի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտ–բետոնե ծածկի ընթացիկ և հիմնական վերանորոգում՝ ընդհանուր 9000քմ մակերեսով:
- Կիրականացվի 1100զծմ բազալտե եզրաքարերի ընթացիկ վերանորոգում:
- Բակային տարածքներում և այգիներում կտեղադրվի 8 հատ ճոճանակ, 8 հատ զրուցարան և 79 հատ նստարան:

- Նախատեսվում է 3 խաղահրապարակի կառուցում և բարեկարգում, 2 հանգստի գոտիների ստեղծում, բարեկարգում և կանաչապատում:
- Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի 4 աստիճանների և 5 վերելակների հիմնանորոգման աշխատանքներ:
- Նախատեսվում է 9000քմ հարթ տանիքների վերանորոգում:
- Ձեռք կբերվի ազբոշիֆեր, ջրթափ խողովակներ, ինչպես նաև տարբեր տեսակի շինարարական նյութեր՝ վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:
- Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի 105 շքամուտքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Կիրականացվեն 37.58 հա կանաչ տարածքների պահպանման, 3500 ծառերի և թփերի տնկման աշխատանքներ:
- Նախատեսվում է իրականացնել կանաչ տարածքների ընդլայնում, բակային այգիների բարեկարգում և կանաչապատում:
- Կիրականացվեն ոռոգման ցանցի վերականգման և շահագործման աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ

Վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց, 3 ոչ պետական լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատություն, 2 միջին մասնագիտական քոլեջ, 1 արհեստագործական ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ԲՈՒՀ, 4 մարզադպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանու ներքո գտնվող հայորդաց տունը և Նանսենի անվան թանգարանը:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Երևանի հանրային շենքերի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում հհ. 98, 100, 101, 102, 103, 108, 109, 110, 112, 118 մանկապարտեզներում կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ:
- Նախատեսվում է մանկապարտեզներում գույքի արդիականացում և խոհանոցային պարագաների համալրում, ինչպես նաև մշտական վերահսկողություն՝ սննդի որակի, ժամկետների պահպանման նկատմամբ:
- Կիրականացվի հսկողություն ուսումնական հաստատությունների հարակից տարածքների սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների նկատմամբ:
- Կիրականացվեն մշակութային և սպորտային մի շարք միջոցառումներ, բակային ճամբարներ և մանկական զվարճալի միջոցառումներ:

Սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտ

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 2 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվի դրամական և նյութական աջակցության:
- Նախատեսվում է տոն և հիշատակի օրերին՝ սոցիալապես անապահով ընտանիքների համար միջոցառումների կազմակերպում, դրամական, նյութական աջակցության և սննդի փաթեթների տրամադրում:
- Սոցիալապես անապահով անձանց կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչները կշարունակեն օգտվել բարեգործական ճաշարանից:
- Աշխատանքներ կիրականացվեն անօթևան անձանց ժամանակավոր կացարաններում տեղավորելու ուղղությամբ:
- Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին կտրամադրվեն դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Կկազմակերպվի համապատասխան սոցիալական խմբերի ընտանիքների 7-ից 13 տարեկան երեխաների ամառային հանգստը՝ մարզաառողջարանային ճամբարում:

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 476 հա տարածք, բնակչության թիվը կազմում է 11.6 հազ.մարդ: Վարչական շրջանը սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր-Նորք վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. Կրթական, մշակութային և մարզական օջախների, բժշկական հաստատությունների շենքերի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման, գույքի արդիականացման անհրաժեշտություն
2. Խաղահրապարակների կառուցման, բարեկարգման, մանկական խաղերի և մարզական գույքի տեղադրման անհրաժեշտություն
3. Ասֆալտբետոնե ծածկի նորոգման անհրաժեշտություն
4. Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն
5. Բակային տարածքների բարեկարգման, կանաչապատման, գույքի թարմացման անհրաժեշտություն
6. Եզրաքարերի, հենապատերի և առկա քայքայված աստիճանների վերանորոգման անհրաժեշտություն
7. Հարթ և թեք տանիքների մուտքերի վերանորոգման, վերելակային տնտեսության արդիականացման, ներքին կոյուղագծերի, ջրագծերի և ջրթափ խողովակների նորոգման անհրաժեշտություն
8. Հետիոտնային ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգման և կառուցման անհրաժեշտություն
9. Ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտություն
10. Սանմաքրման և աղբահանության որակի բարելավման և բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի ապահովման անհրաժեշտություն
11. Կանաչ տարածքների ընդլայնման և պահպանման, հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն
12. Ոռոգման ցանցի վերականգնման և ընդլայնման անհրաժեշտություն
13. Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման անհրաժեշտություն

Բնակարանային-կոմունալ տնտեսության և բարեկարգման ոլորտ

Նոր Նորք վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է: Շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով: Վարչական շրջանում առկա է 6 գետնանցում, 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ, 18 մինի ֆուտբոլի դաշտ և 3 լողավազան, տեղադրված է 307 մանկական խաղեր, 150 մարզասարք, 136 զրուցարան, 750 նստարան և 276 աղբաման: Կանաչ տարածությունը կազմում է 399,18 հա, առկա է 17 զբոսայգի և պուրակ, 15 հուշարձան: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է փողոցների երթևեկելի մասի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտ–բետոնե ծածկի ընթացիկ և հիմնական վերանորոգում՝ ընդհանուր 9000քմ մակերեսով:
- Բակային տարածքներում և այգիներում կտեղադրվի 8 հատ ճոճանակ, 8 հատ զրուցատաղավար և 79 նստարան:
- Նախատեսվում է 5 խաղահրապարակի կառուցում և բարեկարգում, 1 հանգստի գոտու ստեղծում, բարեկարգում և կանաչապատում:
- Կիրականացվի 10 աստիճանների և 1 վերելակի հիմնանորոգման աշխատանքներ:
- Նախատեսվում է 9000քմ հարթ տանիքների վերանորոգում:
- Ձեռք կբերվի ջրթափ խողովակներ, ինչպես նաև տարբեր տեսակի շինարարական նյութեր՝ վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով:
- Կիրականացվեն բազմաբնակարան շենքերի 105 շքամուտքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Կիրականացվեն 37.58 հա կանաչ տարածքների խնամքի և պահպանման, 3500 ծառերի և թփերի տնկման աշխատանքներ:
- Նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, բակային այգիների բարեկարգում և կանաչապատում.
- Կիրականացվեն ոռոգման ցանցի վերականգնման և շահագործման աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ

Վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց, 2 ոչ պետական լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատություն, 2 միջին մասնագիտական քոլեջ, 1 արհեստագործական ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ԲՈՒՀ, 4 մարզադպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայկական բարեգործական ընդհանուր միության հովանու ներքո գտնվող հայորդաց տունը և Նանսենի անվան թանգարանը:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Երևանի հանրային շենքերի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում հհ. 98, 100, 101, 102, 103, 108, 109, 110, 112, 118 մանկապարտեզներում կիրականացվեն վերանորոգման աշխատանքներ:
- Մանկապարտեզներում նախատեսվում է գույքի արդիականացում և խոհանոցային պարագաների համալրում, ինչպես նաև սննդի որակի, ժամկետների պահպանման, ուսումնադաստիարակչական աշխատանքների նկատմամբ մշտական վերահսկողություն:
- Կիրականացվի հսկողություն՝ ուսումնական հաստատությունների հարակից տարածքների սանմաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների նկատմամբ:
- Կիրականացվեն մշակութային և սպորտային մի շարք միջոցառումներ, կկազմակերպվեն բակային ճամբարներ և մանկական զվարճալի միջոցառումներ:

Սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտ

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 2 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Սոցիալապես անապահով ընտանիքներին կտրամադրվի դրամական և նյութական աջակցություն:
- Նախատեսվում է տոների և հիշատակի օրերին՝ սոցիալապես անապահով ընտանիքների համար միջոցառումների կազմակերպում, դրամական, նյութական աջակցության և սննդի փաթեթների տրամադրում.
- Սոցիալապես անապահով անձանց կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչները կշարունակեն օգտվել բարեգործական ճաշարանից:
- Աշխատանքներ կիրականացվեն անօթևան անձանց ժամանակավոր կացարաններում տեղավորելու ուղղությամբ:
- Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին կտրամադրվի դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Կկազմակերպվի սոցիալական խմբերի ընտանիքների 7-ից 13 տարեկան երեխաների ամառային հանգստը՝ մարզաառողջարանային ճամբարում:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը սահմանակից է Կոտայքի և Արարատի մարզերին, Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 9.8 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման անհրաժեշտություն

2.Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների և վերելակների վերանորոգման անհրաժեշտություն

3.Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման անհրաժեշտություն

4.Սակավաշարժ խմբերի հասանելիությունն ապահովելու համար ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտություն

5.Խաղահրապարակների և նոր հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն

6.Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հիմնանորոգման անհրաժեշտություն

7.Բակային տարածքների և չլուսավորվող փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման անհրաժեշտություն

8.Սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավման անհրաժեշտություն

9. «Նուբարաշենի պոլիկլինիկա» ՓԲ ընկերությունում սարքավորումների բարելավման և համալրման անհրաժեշտություն

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 1552 սեփական տնատիրություն, 36 բազմաբնակարան շենք: Գործում է հիմնանորոգված 6 վերելակ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է բազմաբնակարան բնակելի շենքի նախագծային աշխատանքների պատվիրում վարչական շրջանի տարածքում նոր բնակելի շենք կառուցելու նպատակով
- Նախատեսվում է զբոսայգիներում, պուրակներում, ինչպես նաև կենտրոնական փողոցներում տնկել թվով 800 ծառ և տնկի, ձևավորել ծաղկային տարածքները:
- Զբոսայգիներում կտեղադրվեն 3 մանկական խաղեր, 3 սպորտային խաղեր, 5 զրուցարաններ: Կտեղադրվեն 25 նստարաններ, 20 աղբամաններ:
- 2019թ. կվերանորոգվի 11-րդ փողոցում գտնվող մինի ֆուտբոլի դաշտը, կիրականացվեն խաղահրապարակների, զբոսայգիների, բակերի, ընթացիկ նորոգման և այլ աշխատանքներ:
- Վարչական շրջանի տարածքում կկառուցվեն 2 նոր խաղահրապարակներ՝ Նուբարաշեն 11-րդ փողոցի 6-րդ և 13-րդ բազմաբնակարան շենքերի բակերում:
- Թեք տանիքների նորոգում կիրականացվի 11 փողոցի 9-րդ և 11-րդ շենքերում:
- Նախատեսվում է վերանորոգման աշխատանքներ իրականացնել 11 փողոցի զբոսայգում:
- Նախատեսվում է ասֆալտբետոնե ծածկի մասնակի և կապիտալ վերանորոգման աշխատանքներ

- Վարչական շրջանի տարածքում կիրականացվի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման և ներշենքային պայմանների բարելավման աշխատանքներ
- Նախատեսվում է արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման և ցանցում առկա խնդիրների վերացման աշխատանքներ
- Նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնման, հուշարձանների խնամքի և մաքրման աշխատանքներ
- Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքեր

Կրթություն, մշակույթ և սպորտ

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում գործում է 2 մանկապարտեզ, 1 նախակրթարան, 2 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան 1 շախմատի մանկապատանեկան կենտրոն, երեխայի և ընտանիքի աջակցման կենտրոն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների օժանդակ (գիշերօթիկ) դպրոց և մարզառազմական մասնագիտացված դպրոց:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Տարվա ընթացքում բնակչության համար կկազմակերպվեն մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ: Կիրականացվեն ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրեր:
- Աշխատանքներ կիրականացվեն երաժշտական դպրոցի, մշակույթի կենտրոնի և գրադարանի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝ կկազմակերպվեն ցուցահանդեսներ, գրքի շնորհանդեսներ, վարպետաց դասեր, հանդիպումներ գրողների, հայտնի երաժիշտների, պարարվեստի բնագավառի ճանաչված գործիչների, ազգագրական խմբերի հետ: Ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակում կկազմակերպվեն այցեր Երևան քաղաքի տարբեր թանգարաններ:
- 2019 թվականին նախատեսվում է կազմակերպել 13 մշակութային միջոցառումներ:
- «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կկազմակերպվեն բակային մանկական զվարճալի 9 միջոցառումներ և «Ողջույն Նուբարաշենից» խորհագրով մեծ տոնական միջոցառում:
- Կշարունակվի հսկողությունը մանկապարտեզներում սննդի որակի, ժամկետների պահպանման, ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ ընթացքն ապահովելու ուղղությամբ: Կիրականացվեն աշխատանքներ վարչական շրջանի նոր մանկապարտեզի մանկավարժական կազմի վերապատրաստման ուղղությամբ:
- Կշարունակվեն համագործակցության ծրագրերը վարչական շրջանի դպրոցների և ՀՀ մարզերի կամ արտերկրի դպրոցների հետ, կկազմակերպվեն կրթական միջոցառումներ, ասմունքի երեկոներ և այլն:
- Կկատարվեն աշխատանքներ դպրոցների շրջակա տարածքների բարեկարգման և կանաչապատման ուղղությամբ:
- Վարչական շրջանում բնակչության համար կկազմակերպվեն մարզաառողջարարական միջոցառումներ՝ ընդգրկելով տարբեր տարիքային խմբերի անձանց, կանցկացվեն սպորտլանդիաներ՝ հանրակրթական դպրոցների սաների մասնակցությամբ:

- 2019թ. ընթացքում կկազմակերպվի 7 սպորտային միջոցառում, կապահովվի վարչական շրջանի թիմերի մասնակցությունը համաքաղաքային միջոցառումներին:
- Նախատեսվում է Նուբարաշենի հիմնադրման օրվա հետ կապված ամենամյա միջոցառումների կազմակերպում:
- Նախատեսվում է վարչական շրջանում Պողոս Նուբարի անվամբ փողոցի անվանակոչում:
- Վարչական շրջանում նախատեսվում է ավելացնել կազմակերպվող մարզամշակութային միջոցառումները

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նուբարաշեն վարչական շրջանում գործում է Նուբարաշեն ՍԱՏԲ-ն, Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ը, Նուբարաշեն հոգեբուժական կլինիկան, «Նուբարաշենի պոլիկլինիկա» ՓԲԸ-ն:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. ընթացքում դրամական, նյութական և պարենային աջակցություն կտրամադրվի միայնակ տարեցներին, կենսաթոշակառուներին, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներին, բազմազավակ ընտանիքներին, սոցիալապես անապահով ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց:
- Կշարունակվի սոցիալապես անապահով բնակիչներին պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը:
- Տոն և հիշատակի օրերին աջակցություն կտրամադրվի վարչական շրջանի զոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին, Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին, բազմազավակ, բազմանդամ ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, նպաստառու ընտանիքներին:
- 2019թ. կկազմակերպվի ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների, զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների հանգիստը մարզաառողջարանային «Լուսաբաց» ճամբարում:
- Գիտելիքի օրվա կապակցությամբ 1-4-րդ դասարանների երեխաներին կտրամադրվի պայուսակներ և գրենական պիտույքներ:
- 2019թ. ընթացքում կշարունակվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ:

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 140,0 հազ. մարդ: Վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն վարչական շրջաններին:

Հիմնախնդիրներ

1. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Բազմաբնակարան շենքերի վթարային շքապատշգամբների վերանորոգման, ամրացման անհրաժեշտություն*
3. *Վերելակային տնտեսության վատթար վիճակ*
4. *2-րդ և 3-րդ աստիճանի վթարային շենքերի առկայություն*
5. *Մանկական խաղահրապարակների ընթացիկ նորոգման և նորերի կառուցման անհրաժեշտություն*
6. *Բակային և միջբակային տարածքներում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման, փողոցներում արտաքին լուսավորության ցանցի կառուցման անհրաժեշտություն*
7. *Փողոցների, բակային և միջբակային տարածքների բարեկարգման և ասֆալտապատման անհրաժեշտություն, հողային ճանապարհների առկայություն*
8. *Վերանորոգման ենթակա վերգետնյա և ստորգետնյա անցումների առկայություն և նորերի կառուցման անհրաժեշտություն*
9. *Ջրագծերի և կոյուղագծերի վատթար վիճակ*
10. *Անձրևատար (հեղեղատար) համակարգի ընդլայնման անհրաժեշտություն*
11. *Կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնման անհրաժեշտություն*
12. *Գ. Նժդեհի անվան հրապարակի բարեկարգման անհրաժեշտություն*
13. *Արշակունյաց պողոտա - Գ. Նժդեհ ու Արշակունյաց պողոտա - Բագրատունյաց փողոցների խաչմերուկներում վերգետնյա ճանապարհային կամրջի կառուցման անհրաժեշտություն*
14. *Արարատյան փողոցը Ն. Չարբախ 1-ին փողոցին կապող կամրջի հիմնանորոգման անհրաժեշտություն*
15. *Թեքահարթակների ոչ բավարար քանակ*
16. *Դպրոցների ճաշարանների գործունեության նկատմամբ խիստ վերահսկողության սահմանման անհրաժեշտություն*

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Շենգավիթ վարչական շրջանն ունի 637 բազմաբնակարան բնակելի շենք, 279 վերելակ: Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների թիվը՝ 137, երկարությունը՝ 147.7 կմ: Շենգավիթ վարչական շրջանի կանաչ տարածքները կազմում են 30 հա, իսկ ոռոգման ցանցի երկարությունը՝ 31կմ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել շուրջ 6250քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման, 1000գմ եզրաքարերի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ:
- Կիրականացվեն 4500քմ հարթ և 4000քմ թեք տանիքների, 1500գմ անձրևատար խողովակների և ջրհորդանների վերանորոգման աշխատանքներ:

- Իրականացվելու է 5 բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն մանկական և սպորտային խաղեր, զրուցատաղավարներ, նստարաններ, 31 բակային տարածքներում կիրականացվեն շուրջ 350 միավոր ընդհանուր օգտագործման գույքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Շենքերի շքամուտքերում կտեղադրվի 365քմ (95 հատ) դուռ, 425քմ պատուհան և կվերանորոգվի թվով 80 մուտք:
- Կիրականացվի բազմաբնակարան շենքերի թվով 8 վթարային շքապատշգամբների վերանորոգում, 10 վերելակներում կիրկանացվեն հիմնանորոգման աշխատանքներ:
- Գեղարվեստական ձևավորման նպատակով կտեղադրվեն 500 լուսատուներ և կիրականացվեն 450գծմ լուսավորության ցանցի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:
- Վարչական շրջանի մի շարք հասցեներում կշարունակվեն կանաչ տարածքների ընդլայնման աշխատանքները, կստեղծվեն 1000քմ սիզամարգեր, ոռոգման ցանցը կընդլայնվի 100 գծմ-ով:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց, 1 մարզակումբ, 2 երաժշտական դպրոց և 3 կրթամշակութային հիմնարկ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- 2019թ. կրթօջախներում կիրականացվի մարզական գույքի թարմացում և արդիականացում: Կիրականացվեն սանհանգույցների, տանիքի, կոյուղագծերի, ինչպես նաև ջրագծերի նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:
- Տոների և հիշատակի օրերին նվիրված կկազմակերպվեն մշակութային և կրթական, մարզական միջոցառումներ:
- Կիրականացվեն մանկապարտեզների մասնակի վերանորոգման աշխատանքներ:
- Կշարունակվեն աշխատանքները գրադարանների ընթերցասրահները ժամանակակից պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ (ապահովում համակարգչային տեխնիկայով, համացանցով, տեսակապի միջոցներով, նոր գույքով, գրքային ֆոնդով):

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանի տարածքում գործում է 11 առողջապահական կազմակերպություն, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության 2 բժշկական կենտրոն և 5 պոլիկլինիկա: Պոլիկլինիկաներից 2-ն ունեն մասնաճյուղեր Ն.Չարբախում և Նոր Խարբերդում: Վարչական տարածքում գործում են նաև 2 ատամնաբուժական պոլիկլինիկա, ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Երևանի հ.2 մասնաճյուղը: «Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ Շենգավիթ վարչական շրջանում գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 140 շահառուներ: Գործում են նաև «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն ՀԿ, «Էմմանուել» հատուկ կարիքներով երեխաների ՀԿ, «Ալեքս» ՀԿ և մի շարք այլ հասարակական կազմակերպություններ: Իրականացվում է համագործակցություն սոցիալական ուղղվածություն ունեցող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Դրամական աջակցություն կտրամադրվի կարիքավոր ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին և այլ սոցիալապես անապահով անձանց:
- Կշարունակվեն վարչական շրջանում բնակվող սիրիահայ ընտանիքներին, ազատամարտի մասնակից վետերաններին, արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին, ինչպես նաև տարեցներին աջակցության ծրագրերը:
- «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մի շարք սոցիալապես անապահով ընտանիքներ, միայնակ տարեցներ հնարավորություն կստանան օգտվելու բարեգործական ճաշարանից:
- «Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ միություն» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում կշարունակվի հաշմանդամ երիտասարդների զբաղվածության, վերջիններիս մասնագիտական ուսուցման ապահովումը:
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը ճամբարներում, երեխաներին կտրամադրեն դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:
- Վարչական շրջանում գործող պոլիկլինիկաների հետ համագործակցությամբ սոցիալապես անապահով (կարիքավոր) ընտանիքների համար կիրականացվի անվճար բժշկական խորհրդատվություն, բուժզննում և դժվարամատչելի հետազոտություններ, կտրամադրվեն միջնորդագրեր՝ պետպատվերի շրջանակներում բուժօգնություն ստանալու նպատակով:
- Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ կտրամադրվեն նվեր-փաթեթներ սոցիալապես անապահով ընտանիքներին, Հայրենական Մեծ պատերազմի մարտական գործողություններին մասնակից վետերաններին, արցախյան պատերազմի մասնակից ազատամարտիկներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին:

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը սահմանակից է Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 773 հա, իսկ բնակչությունը 73,9 հազ. մարդ:

Հիմնախնդիրներ

1. *Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման անհրաժեշտություն*
2. *Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն*
3. *Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգման անհրաժեշտություն*
4. *Վերելակների հիմնանորոգման և նորով փոխարինման անհրաժեշտություն*
5. *Ջրատար և կոյուղատար խողովակաշարերի փոխարինման և հիմնանորոգման անհրաժեշտություն*
6. *Միջշենքային և շենքերի հարակից տարածքներում բետոնե աստիճանների նորոգման, հենապատերի և ցանկապատերի կառուցման և վերանորոգման, փողոցների, մայթերի եզրաքարերի տեղադրման անհրաժեշտություն*
7. *Ոռոգման համակարգի հիմնանորոգման, ընդլայնման, ցնցուղանման համակարգերի ստեղծման անհրաժեշտություն*

Բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 68,6կմ է: Շրջանում հաշվառված է բնակելի 361 շենք, անհատական բնակելի 3140 տուն, 236 վերելակ: Առկա են 353 բակային տարածքներ՝ 399 խաղեր և մարզասարքեր, 52 տաղավարներ: Տեղադրված են 382 նստարաններ, 146 աղբամաններ:

Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 23 համատիրությունների և 5 լիազորագրային կառավարման միջոցով:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում:
- Նախատեսվում է բարեկարգել 4 բակային տարածք, տեղադրել նստարաններ:
- Բնակարանային ֆոնդի պահպանման նպատակով նախատեսվում է բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, նկուղային հարկերի ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների նորոգում, շքամուտքերի վերանորոգում:
- Նախատեսվում է վերականգնել 2000քմ սիզամարգ և ստեղծել 400քմ ծաղկային տարածք, ստեղծել և լրացնել վարդանոցներ՝ 200քմ:
- Նախատեսվում է վերանորոգել թվով 5 մանկապարտեզ:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում են թվով 15 մանկապարտեզ, որից՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ենթակայության 14-ը, 9 հիմնական դպրոց, 3 ավագ դպրոց, 1 մասնագիտացված կրթահամալիր՝ խոսքի ծանր խանգարումներով երեխաների համար, 1 հատուկ ֆիզմաթ դպրոց, ՌԴ ՊՆ 1 միջնակարգ դպրոց, 1 կերպարվեստի դպրոց, 2

արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ 2 մանսաճյուղով, 1 մարզադպրոց, 1 մշակութային կենտրոն, 1 շախմատի դպրոց, մինի ֆուտբոլի 7 դաշտ և բազմաֆունկցիոնալ 7 դաշտ, 3 թանգարան, 5 ԲՈՒՀ, 2 քոլեջ, միջնակարգ մասնագիտական 1 ուսումնարան:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում են այցելություններ մանկապարտեզներ՝ սննդի որակի և պահպանման ժամկետների, սանիտարահիգենիկ պայմանների, ինչպես նաև երեխաների անձնական գործերի, իրավական ակտերի ուսումնարության նպատակով:
- Կիրականացվեն կրթական, մշակույթային և սպորտային մի շարք միջոցառումներ:
- Մշակութային հաստատությունների աշխատանքների վերահսկում:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում է երեք բարեգործական ճաշարան (մոտ 450 շահառու), ինչպես նաև Սոցիալական տուն (45 անօթևանների համար ժամանակավոր կացարան): Շրջանի տարածքում գործում են 7 հիվանդանոց և 2 պոլիկլինիկա:

2019 թվականին նախատեսվող աշխատանքներ

- Նախատեսվում է իրականացնել սոցիալական աջակցության ծրագրեր:
- Կշարունակվի վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանների կազմակերպման ծրագիրը: Տոնական օրերի կապակցությամբ շահառուների համար կկազմակերպվեն միջոցառումներ:
- Կկազմակերպվի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստը, երեխաներին կհատկացվեն գրենական պիտույքների փաթեթներ:
- Սոցիալապես անապահով անձանց առողջապահական խնդիրների լուծման նպատակով կտրամադրվեն պետպատվերի միջնորդագրեր և առողջարանների ուղեգրեր:

Շրջանում գործող հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով կշարունակվի մարդասիրական օգնության տրամադրումը, մասնագիտական ուսուցման ծրագրերի իրականացումը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության և/կամ առարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	2	3	4	5
1.	**Արթուր Տեր-Գրիգորյան** (առցանց դիմում՝ ստացված www.yerevan.am կայքով 23.11.2018թ. S-767 դիմում)	Տեխնիկական նկատառումներ 5.1 Նախաբան, 2-րդ էջ. «Երևանի համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների:» 5.2 Կոմունալ տնտեսություն, 26-րդ էջ. ստորև ներկայացված նկարում կարելի է տեսնել, որ առկա է համարակալման վրիպակ էջի վերին մասում: Նկարը կցված է:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
2.		5.3 Կոմունալ տնտեսություն, 26-րդ էջ. նշված է, որ «Շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2018 թվականին կազմել է 1643 կմ», բայց նաև նշված է, որ «Նորոգման աշխատանքների իրականացման շնորհիվ կվերականգնվի ևս 30 կմ ցանց և 2019թ. տարեվերջին Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1703կմ»: Եթե գումարենք 30-ը 1643-ին, ապա կստանանք 1673՝ 30-ով պակաս, քան նշված է (1703): Կարծում եմ կամ վրիպակ է, կամ տեքստն է անհասկանալի կազմված և ներկայացված թվերը լիովին ճիշտ են:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
3.		5.4 Տրանսպորտ, 31-րդ էջ. 7. Նախատեսվում է իրականացնել հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական

		կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Կիրականացվի ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ: 11. Նախատեսվում է ապահովել ավտոկայանատեղիների կանոնակարգման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ: Կարծում եմ 7-րդ կետի 2-րդ նախադասությունը և 11-րդ կետը կրում են նույն իմաստը:		փոփոխություններ: Նախագծի «Տրանսպորտ» ոլորտի 31-րդ էջի 11-րդ կետը հանվել է:
4.		5.5 էջ 42-ի ստորին մասում գտնվող «Ֆ Ի Զ Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ո Ի Լ Տ Ո Ի Ր Ա Ե Վ Ս Պ Ո Ր Տ» գրվածքն իջեցնել հաջորդ՝ 43-րդ էջի վերին մաս:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
5.		5.6 Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, 45-րդ էջ. «Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը»:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
6.		5.7 Զբոսաշրջություն, 61-րդ էջ. «11. Երևանում էքսկուրսիոն ուղղությունը զարգացնելու նպատակով...»:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
7.		5.8 Խելացի Երևան, 62-րդ էջ. «transport.yerevan.am-ը կայքում առկա են տեղեկություններ բարեփոխումների ամբողջ գործընթացի, մասնագիտական խմբի աշխատանքի, ինչպես նաև միջազգային խորհրդատու կազմակերպության	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:

		կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ»:		
8.		Առաջարկում ենք վերանայել «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածի տարածքի» բառերը, քանի որ բյուջետային ուղերձում նախատեսվել է միայն Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքների իրականացում:	Առաջարկն ընդունված է:	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.		«Սոցիալական ապահովություն» բաժնում ներառել կամավորության խթանումը և ներհամայնքային կյանքի (community life) զարգացման նպատակով՝ համայնքի բնակիչների իրազեկումն ու ակտիվ ներգրավումը սոցիալական ծրագրերում: Միևնույն ժամանակ խրախուսել վարչական շրջանների սոցապահովության բաժինների համագործակցությունը բարեգործական ՀԿ-ների և հիմնադրամների հետ:	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Սոցիալական ապահովության» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում ավելացվել է հետևյալ կետը. Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման,

				ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
2.		«Առողջապահություն» բաժնում ներառել մայրության և մանկության առողջությանն ուղղված առանձին կետ: Մասնավորապես, կրծքով կերակրման և մաքուր օդին մայրերի և երեխաների հնարավորինս շատ ժամանակ անցկացնելու նպատակով առաջարկում եմ քաղաքային զբոսայգիներում բացել «Մոր և մանկան» անկյուններ, որտեղ պայմաններ ստեղծված կլինեն երեխային կրծքով կերակրելու և նրա հիգիենայի կարիքները պատշաճ հոգալու համար: Նշեմ, որ նախնական պայմանավորվածություն եմ ձեռք բերել առաջին անկյան ստեղծման շուրջ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ՝ որպես իրականացման վայր ընտրելով Կիրովի անվան զբոսայգին: Ծրագրի իրականացման համար Երևանի քաղաքապետարանը կարող է համագործակցել ինչպես ՅՈՒՆԻՍԵՖ-ի այնպես էլ այլ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ կապ հաստատել:	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Առողջապահության» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում ավելացվել է հետևյալ կետը. Կրծքով կերակրման և մաքուր օդին մայրերի և երեխաների հնարավորինս շատ ժամանակ անցկացնելու նպատակով քաղաքային զբոսայգիներում «Մոր և մանկան» անկյունների ստեղծում, որտեղ կլինեն համապատասխան պայմաններ երեխային կրծքով կերակրելու և նրա հիգիենայի կարիքները պատշաճ հոգալու համար:
3.	**Անի Սամսոնյան** Երևանի ավագանու	Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան հ. 10 շենքի 1-ին, 2-րդ մուտքերի վերկանգնման-ամրացման աշխատանքների իրականացում (Ինձ ուղղված ձեր պատասխանը կցված է	Առաջարկն ընդունվել է: Արզումանյան 10 շենքը ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ունի 3-րդ կարգի վթարայնության աստիճան: Աշխատակազմի համապատասխան	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

	«Լույս» խմբակցության անդամ 11.14.2018թ. հ.Լ-3/12 գրություն	Առդիր 1-ով):	ստորաբաժանումների կողմից մշակվում ներդրումային ծրագիր՝ համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ նոր բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով: Սակայն շենքի սեյսմիկ վիճակի վատթարացման պարագայում կքննարկվի շենքի առաջին և երկրորդ մուտքերի վերականգման և ամրացման հարցը:	
4.		Գյուղատնտեսական մթերքների իրացման նոր շուկայի ստեղծում, որը կարող է կարգավորել բացօթյա առևտրի խնդիրը՝ մասնավորապես քաղաքացիների առողջապահական անվտանգությունը, քաղաքի բնապահպանական, սանիտարական խնդիրը, ինչպես նաև՝ գյուղատնտեսական մթերքների առևտրով զբաղվող սուբյեկտների տնտեսական գործունեության և սոցիալական խնդիրը:	Առաջարկն ընդունվել է: Առաջարկությունը ներառված է Երևանի զարգացման 2019թ. ծրագրում: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Առևտուր և սպասարկումներ» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնի 6-րդ կետում նշվում է, որ մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով նախատեսվում է դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում: Իսկ նույն տեղում 4-րդ կետով նշվում է, որ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, բնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի,	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:	
5.		Նոր Նորք վարչական շրջանի 6-րդ զանգվածի Շոպրոն փողոցի հ. 8 շենքի տանիքի վերանորոգում: Դիմումը ստացել եմ շենքի բնակիչներից (Առդիր 6):	Առաջարկն ընդունվել է: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Կոմունալ տնտեսություն ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում նշվում է, որ կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 60000քմ հարթ և 30000քմ թեք տանիքների վերանորոգում: Նշված հասցեն ներառված է ծրագրում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
6.		Մալաթիա-Սեբաստիա համայնքի Ռաֆֆու փողոցի հ. 99 շենքի 1-ին մուտքի բարեկարգում:	Առաջարկն ընդուվել է: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Կոմունալ տնտեսություն ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում նշվում է, որ նախատեսվում է հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 700 շքամուտք: Նշված հասցեն ներառված է ծրագրում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
7.		Դավթաշեն վարչական շրջանի մեջ ներառված սեփական բնակելի հատվածի 7-րդ փողոցի սկզբնամասի (16 թաղամասից դեպի այդ փողոց ընկած հատվածը) ասֆալտապատում և փողոցային լուսավորության ապահովում (այս առաջարկը մերժվել է դեռևս նախորդ տարի 2018 թվականի բյուջեում ներառելու համար):	Առաջարկն ընդուվել է: Դավթաշեն վարչական շրջանի 7-րդ փողոցի սկզբնամասի (16 թաղամասից դեպի այդ փողոց ընկած հատվածը) ասֆալտապատումը և փողոցային լուսավորության ապահովումը կներառվի Դավթաշեն վարչական շրջանի 2019 թվականի զարգացման ծրագրում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

8.	Ա.Կարապետյան, Գ.Վարդանյան, Գ.Մելքոմյան, Կ.Անտաշյան, Ս.Մկրտչյան «Իմ քայլը» խմբակցության անդամներ 14.12.2018թ. գրություն 01/26	*Երևանը 2800 տարեկան է:* Քաղաքի զարգացման ծրագրի մեջ սա նշելու ռացիոնալ իմաստը չեմ տեսնում, բայց նույնիսկ եթե պետք է նշել, ապա առաջարկում եմ հասարակագիտորեն ավելի հիմնավոր երկու տարբերակ: 1. 2018 թ. Երևանը նշում է իր 2800 ամյակը: կամ 2. /որը գիտականորեն ավելի ընդունելի տարբերակ է/ Էրեբունի ամրոցը, որից, համարվում է, սկիզբ է առնում Երևան քաղաքի անունը, հիմնադրվել է 2800 տարի առաջ:	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը հանվել է: Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:
9.		«հանրապետություն» բառը իներցիայով մնացել է Խորհրդային ժամանակներից, երբ Հայաստանը Սոցիալիստական հանրապետություններից մեկն էր, և տեքստերում նշում էին «հանրապետության»: Հիմա պետք է նշել «երկրի» կամ եթե նշում ենք «հանրապետություն», ապա պետք է լինի Հայաստանի Հանրապետություն:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ավելացվել է «Հայաստանի» բառը:
10.		*Երևանը հանդիսանում է տարածաշրջանային տուրիստական կենտրոն:* Այս նախադասությունը առաջարկում եմ հանել: Կամ գոնե մանրամասնել է պետք՝ թե ինչ տարածաշրջանի համար է ու ինչի հիման վրա ենք ասում, որ կենտրոն է:	Առաջարկն ընդունվել է:	Երևանը հանդիսանում է տարածաշրջանային տուրիստական կենտրոն նախադասությունը հանվել է: Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:
11.		*բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:* Գերակայություններում այս ձևակերպումն անորոշ է, և պարզ չէ թե	Առաջարկն ընդունվել է: Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		ինչ նկատի ունենք	գերակայության իմաստը հետևյալն է՝ Շենքերի և բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովմանն ուղղված աշխատանքները հանդիսանում են գերակա ուղղություն:	
12.		«Գլխավոր հատակագիծ» չէ, պետք է մշակվի գոտեւորման հատակագիծ (Zonning plan), ավելի ճիշտ, մեկնարկեն մշակման աշխատանքները	Առաջարկն ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
13.		Ոչ մի գլխավոր հատակագիծ, այլ գոտեւորման: Պետք է անցում կատարել քաղաքաշինական ոլորտում նախագծման, կառավարման եւ որոշումներ կայացնելու ժամանակակից եղանակների: Գոտեւորման (zonning) գործիքների միջոցով ցանկացած հողակտոր կամ կառույց կստանա կարգավիճակ, որի մասին տեղեկությունը կլինի բաց եւ հասանելի, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, ցանկացած ներդրող հստակ կտեղեկանա ինչ հնարավորություններ եւ սահմանափակումներ կան քաղաքի ցանկացած հատվածում:	Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

14.		*Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման անհրաժեշտություն* Անհասկանալի ձեւակերպում է։ Քաղաքը արդեն ունի կերպար։	Առաջարկն ընդունվել է։ Այո քաղաքն ունի կերպար, բայց խոսքը վերաբերվում է մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածներին, որոնք անհրաժեշտ է հնարավորության դեպքում ներդաշնակեցնել քաղաքի կերպարին, կամ գտնել լուծումներ դրանք ամբողջականացնելու համար։	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն։
15.		*շենքերի արտաքին տեսքի կարգաբերման ծրագրերի իրականացման անհրաժեշտություն։* Անհասկանալի եզր է, ի՞նչ է նշանակում, կարգի՞ բերել	Առաջարկն ընդունվել է։	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն։
16.		*Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը։* Առաջարկում ենք լրացնել այսպես. Բացառվելու է կապիտալ շինարարությունը հանրային տարածքներում եւ կանաչ գոտիներում։ Հանրային կանաչ տարածներում նախկինում տրված վարձակալման պայմանագրերը կուսումնասիրվեն։ Կմեկնարկի պուրակների եւ այգիների մաքրման եւ տարատեսակ կառույցներից ազատելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որպես պիլոտային նախագիծ	Առաջարկն ընդունելի է մասամբ։ Առաջին նախադասությամբ արտահայտված առաջարկը ընդունելի է։ Երկրորդ նախադասությամբ՝ բնակիչների համաձայնության հետ կապված թեմայի վերաբերյալ տեղեկացնենք, որ գործում է ՀՀ կառավարության կողմից ընդունված 28.10.1998թ. N660 որոշումը «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել։

		գործընթացը կսկսվի Օղակաձեւ այգուց, Մոսկովյան-Տերյան պուրակից եւ Հրազդանի կրճից։ Բացառվելու է որեւէ ծրագրի իրականացում համայնքային ընդհանուր օգտագործման տարածքներում (բակերում)՝ առանց բնակիչների մեծամասնության գրավոր համաձայնության	ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» , հետևաբար այս հարցը պետք է քննարկել նաև այդ որոշմամբ հաստատված կարգի դիտարկմամբ և այլ նոր, պարզ մշակվելիք մեխանիզմների կիրառմամբ։	
17.		*Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ։* 2019-ից հետո՞ կառուցվող, ժամանակահատվածը պարզ չէ։ Նաև պարզ չէ, թե արդյոք միայն կառուցման ժամանակի՞, թե՞ նաև վայրի կամ այլ չափորոշիչներով է բացառվելու օրինականացումը։ Առաջարկում եմ հստակեցնել	Առաջարկն ընդունվել է։ Սկսած 2019թ. վերանայվելու նախկինում գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության որոշումը։	
18.		Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն *(City Developmetn Strategy),* Առաջարկվում է լրացնել հետևյալ անգլերեն ձևակերպումը նախադասության մեջ։	Առաջարկն ընդունվել է։ Առաջարկվող լրացման՝ «City Developmentn Strategy» կատարումն ընդունելի է։	Ավելացվել է նախադասությունում (City Developmetn Strategy) անգլերեն տերմինը։
19.		*Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ։* Ժամանակակից քաղաքներում վաղուց փորձարկվել եւ լայնորեն կիրառվում են փողոցների վերակառուցման եւ	Առաջարկն ընդունվել է։	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել։

		վերակահավորման արդի մեթոդներ, որոնց արդյունքում մայթերը լայնանում են, ավելանում է կանաչապատ տարածքը, մեքենաների կայանելը դառնում է անվտանգ եւ հարմար, հատկացվում են արահետներ հեծանիվների համար: Քննարկվելու է երկարաժամկետ եւ փուլային ծրագիր իրականացնելու հնարավորությունը: Քննարկել որոշ փողոցները մշտապես կամ պարբերաբար հետիոն դարձնելու հնարավորությունը		
20.		*Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):* Անիմաստ բան է Եթե մշակվի գոտեւորման հատակագիծ, բոլոր հարցերի պատասխանները հստակ կձեւակերպվեն, բոլոր չափանիշները, սահմանները եւ այլն ստատումից հետո):	Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
21.		*ընթացիկ քաղաքաշինական քարտեզի կազմման աշխատանքներ:* Առաջին անգամ եմ տեսնում այս եզրը, սա՞ ինչ բան է	Առաջարկը ընդունվել է: «ընթացիկ քաղաքաշինական քարտեզ»-ի վերաբերյալ պարզաբանում /սակայն տվյալ կետը դուրս է բերվել 2019թ. ծրագրից/ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, որի	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:	
22.		*քաղաքի զբոսաշրջության զարգացման քաղաքաշինական հայեցակարգի մշակում:* Կարծում ենք անհասկանալի է, թե ինչ է այս հայեցակարգը ենթադրում: Առաջարկում եմ պարզաբանել:	Առաջարկն ընդունված է:	Նշված նախադասությունը հանվել է ծրագրից:
23.		*Երևանն առավել գունագեղ, էթետիկ, համահունչ կահավորված ու հարմարավետ* միշտ չէ, որ գունագեղը լավ էվետ դարձնելուն:	Առաջարկն ընդունվել է: Համամիտ ենք, որ միշտ չէ որ գունագեղը լավ է: Գունագեղ բառով նկատի ենք ունեցել սև կամ մուգ երանգների մեջ ձևավորում չկատարելու միտումը:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
24.		*Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն* Ֆասադային բառը փոխարինել Ճակատային բառով:	Առաջարկն ընդունվել է:	Նշված նախադասության մեջ ֆասադային բառը փոխարինվել է ճակատային բառով:

25.		*Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն:* Այն, ինչ արվել է, շատ թերի է, ավելի հեշտ է սկսել նորից՝ համագործակցելով Մշակույթի նախարարության եւ ճարտարապետների հետ	Առաջարկն ընդունվել է: Պատմամշակութային շենքերի ինչպես նաև ճարտարապետական հետաքրքրություն ներկայացնող շենքերի գովազդային անձնագրերը մշակվում են համագործակցելով ՀՀ մշակույթի նախարարության, Երևանի գլխավոր ճարտարապետի և շահագրգիռ կազմակերպությունների մասնագետների հետ:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
26.		*Նախատեսվում է իրականացնել գովազդային վահանակների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով:* Խնդրում եմ պարզաբանել, թե սա ինչ է նշանակում	Առաջարկն ընդունվել է: Նախատեսվում է մեծ չափերի (3X4; 3X6; 3X9) գովազդային վահանակների փոխարինում 1.2X 1.8; 1.5X3.0 և այլ չափերով, որոնց գովազդային մակերեսները չեն գտնվում երթևեկելի մասի վերին հատվածում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
27.		*Նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատաքներ՝ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:* Պարզ չէ թե այս փառատոնն ինչով է քաղաքի համար կարևոր, առաջարկում եմ պարզաբանել	Առաջարկն ընդունվել է: Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնը ծանոթությունների հարթակ է միջազգային հեղինակավոր գովազդային կազմակերպությունների հետ: Կազմակերպվող վարպետության դասերի ընթացքում ուսանողները, գովազդային կազմակերպությունների ներկայացուցիչները ծանոթնում են գովազդային նոր ուղղություններին:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
28.		*Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ*	Առաջարկն ընդունվել է: Աշխատանքներն ընթացիկ են և ուղղված են ինքնակամ կամ ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերմանը և	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: Անհրաժեշտ նաեւ հանել փողոցներում տեղադրված այն վահանակները, որոնք խանգարում են քաղաքի կարեւոր առանցքների եւ համայնապատկերի միասնական ընկալմանը: Քննարկել Ճարտ վարչության եւ գլխ ճարտարապետի հետ	ապամոնտաժմանը: Նախատեսվում է մշակել Երևան քաղաքի գովազդի սխեման, որտեղ կվերանայվեն գովազդի չափորոշիչները: Գովազդի սխեմայի մշակման ընթացքում նախատեսվում է համագործակցել գլխավոր ճարտարապետի, գովազդային, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:	
29.		*Լանդշաֆտների ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:* Ո՞վ պետք է կատարի էսքիզները: Պարտադիր է հայտարարել մրցույթներ	Առաջարկն ընդունվել է: Սահմանված կարգի համաձայն աշխատանքներն իրականացվում են մրցույթային կարգով:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
30.		*Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և*	Առաջարկն ընդունվել է: Հենասյուները ներկվում են հատուկ ներկով, որը հնարավորինս բացառում է ինքնակպչուն կամ սոսնձի օգտագործմամբ հայտարարությունների փակցնելուն:	Ծրագրում երեսպատել բառը փոխարինվել է ներկվել բառով:

		հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև այն արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից: խնդրում եմ հստակեցնել, ինչ երեսապատելու մասին է խոսքը։ Միգուցե, հատուկ ներկի՞		
31.		*15. Նախատեսվում է լոգոտիպերի մշակում, տարբեր միջոցառումների ժամանակ քաղաքի տոնական ձևավորման նպատակով՝ նախորոք մշակված հայեցակարգի և գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների կիրառմամբ:* *16. Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:* Անհրաժեշտ է հստակեցնել, թե հայեցակարգը և գեղարվեստական բովանդակության պահանջներն ով կամ ովքեր են սահմանելու և ինչ մոտեցումներով	Առաջարկն ընդունվել է: Ըստ միջոցառման առանձնահատկությունից, նշանակությունից, հոբելյանական կարևորությունից դիզայներական խմբի կողմից մշակվում է համապատասխան լոգոտիպեր, տոնական ձևավորման հայեցակարգ գունային լուծումներով և ներկայացվում է համաձայնեցման:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
32.		*Ավելացնել նոր կետ* Առաջարկում եմ վերանայել շինհրապարակների պարիսպների վրա փակցվող պաստառների ձևն ու	Առաջարկն ընդունվել է: Շինհրապարակներն առանձնացնող պաստառների ձևավորման մեջ ներառվում է նաև որպես պարտադիր	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		բովանդակությունը, օրինակ վերցնելով արտասահմանյան հաջողված փորձը, այդ պաստառները պետք է տան ապագա կառույցի լիարժեք պատկերը, կարեւոր գծագրերը, պատվիրատուների, նախագծողների, կապալառուների մասին ամբողջական տեղեկություններ	պայման տեղեկատվություն կառուցապատողի, նախագիծը կատարող կազմակերպության, կապալառուի, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպխությունների անվանումները, ինչպես նաև ներկայացվում է ապագա կառույցի լիարժեք պատկերը:	
33.		*Նախատեսվում է իրականացնել շուրջ 600 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, ինչպես նաև շուրջ 5000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:* Առաջարկում եմ սահմանել, որ ինչ-որ տոկոսը երկրորդային փողոցներում է արվելու, թաղամասեր կան, որ խիստ անբարեկարգ ճանապարհներ ունեն և միշտ անտեսվել են	Առաջարկն ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություններ հետևյալ պարբերությունում. Հաշվի առնելով վարչական շրջանների համաչափ զարգացման քաղաքականությունը՝ 2019թ. մայրաքաղաքում ասֆալտապատման աշխատանքներ կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, բակերում, մայթերում, ինչպես նաև առկա գրունտային ճանապարհներին: Նախատեսվում է իրականացնել շուրջ 650 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 20%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, 80%-ը գլխավոր և երկրորդական փողոցներում և մայթերում ինչպես նաև շուրջ 5,000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

34.		*Փողոցների պատշաճ մակարդակը պահպանելու նպատակով կշարունակվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման և շուրջ 400 հազ.գծմ ճաքալցման աշխատանքները:* Առաջարկում եմ հրապարակել ժամանակացույց կամ քարտեզ, որպեսզի երեւանցիները տեղյակ լինեն, երբ եւ որ փողոցներն են ասֆալտապատվելու: Նաեւ կհամոզվեն, որ նույն փողոցը չի ասֆալտապատվում տարին երկու անգամ, ինչպես նախկինում	Առաջարկն ընդունվել է: Գարնանը վարչության և վարչական շրջանի աշխատակիցների կողմից կկատարվի է գույքագրում և ըստ անհրաժեշտության կկազմվի գլխավոր և երկրորդական փողոցներում կատարվելիք ասֆալտապատման վերանորոգման աշխատանքների ժամանակացույց:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
35.		*2019թ. նախատեսվում է իրականացնել հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:* Պետք է հաշվի առնել, որ հենապատերից որոշ քանակը ունի բարձր գեղարվեստական արժեք, օրինակ Չարենցի փողոցի վրա, Սարալանջի, եւ այլն: Նախկինում վերանորոգելու ընթացքում մեծ վնաս են հասցրել: Այս հենապատերը վերանորոգելուց պետք է հատուկ նախագծեր մշակվեն եւ լրացուցիչ ծախսեր նախատեսվեն:	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություններ հետևյալ պարբերությունում. Հենապատերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը շարունակական է: 2019թ. ևս կիրականացվեն հենապատերի ընթացիկ և տեղային նորոգման աշխատանքներ: Մեծածավալ նորոգման կարիք ունեցող հենապատերի դեպքում ըստ անհրաժեշտության կպատվիրվեն նախագծանախահաշվային փաստաթղթեր
36.		*2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում:* Ճիշտ կլինի նշել, թե որոնք են լինելու, եթե որոշված է: Եթե ոչ՝ ինչպես է	Առաջարկը ընդունվել է:	Ծրագրում լրացվել է հետևյալ նախադասությունը. Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է

		որոշվելու		կառուցել վերգետնյա անցումներ: 2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում՝ Թբիլիսյան խճուղի շամպայն գինիների գործարանի մոտ, Աջափնյակ վարչական շրջանի Հասարթյան փողոց գերեզմաններ տանող ճանապարհի մոտ:
37.		*Նախատեսվում է ապահովել մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքների շարունակականությունը, մասնավորապես՝ կվերանորոգվեն կամ կփոխարինվեն նորերով մայթերի ձնավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները (շուրջ 5000քմ), ինչպես նաև կվերանորոգվեն և կտեղադրվեն նոր բետոնե և բազալտե եզրաքարեր (շուրջ 3000գծմ):* Այս աշխատանքների ընթացքում պետք է վերանայել փողոցներում տեղադրված բազմաթիվ փոքր եւ մեծ սյուների, վահանակների եւ այլ առարկաների քանակը, հնարավորինս ազատելով մայթերը	Առաջարկն ընդունվել է: Տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող մայթերի սալիկապատումն ընդհանուր տեսքի բերելու գործընթացը չի կարգավորվում այս ծրագրով: Վարչական շրջանների հետևողական հսկողության արդյունքում հնարավոր է բերել բարվոք միասնական տեսքի:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
38.		*Նախատեսվում են սպասարկման ծառայությունների մատուցման աշխատանքներ մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների համար:* Եթե ընդհանուր թիվը չէ, ճիշտ կլինի նշել նաև ընդհանուրը և թե սրանք	Առաջարկն ընդունվել է: Սպասարկվող և շահագործող թվով 37 կամուրջներ, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, էստակադաների և վերգետնյա անցումների հասցեները կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		որոնք են		
39.		*Օղակաձև զբոսայգու 1-6 հատվածների վերակառուցման և բարեկարգման և Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքները:* Անպայման անցկացնել բաց, թափանցիկ մրցույթներ, քանի որ կան շատ լավ մասնագետներ, նոր գաղափարներ եւ ժամանակակից մոտեցումներ, իսկ այն բոլոր նախագծերը, որոնք արվել են իշխանությունների կամ նվիրաբերող կազմակերպությունների կողմից, չեն դիմանում որեւէ քննադատությանը:	Առաջարկն ընդունվել է: Նախագծման աշխատանքների ժամանակ մասնագետների կարծքները հաշվի կառնվեն: Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում նոր զբոսայգի չի կարող կառուցվել, քանի որ տարածքը օտարված է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
40.		*2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում:* Կրկին՝ որոնք են կամ ինչպես են որոշվելու	Առաջարկն ընդունվել է:	Լրացվել է հետևյալ նախադասությունը. 2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում՝ «Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ, «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ, «Նոր Արաբկիր պոլիկլինիկա» ԱԿ ՓԲԸ, «Թիվ 16 պոլիկլինկա» ՓԲԸ «Թիվ 20 պոլիկլինիկա»ՓԲԸ
41.		*2019թ. շարունակվելու են մայրաքաղաքի 35 ջրային կառույցների վերանորոգման, վերագինման, պահպանման և շահագործման աշխատանքները:* Վերը նշված է, որ ընդամենը 36-ը կա, ո՞ր մեկը չի վերանորոգվելու և պահպանվելու և ինչու: Առաջարկում եմ հստակեցնել	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրի համապատասխան նախադասությունում 35 թիվը փոխարինվել է 36-ով:

42.		*Նախատեսվում է Երևանի սեփականություն հանդիսացող հուշարձանների լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում:* Արդյոք սա կոնկրետ պլանո՞վ է կատարվում, եթե ոչ, առաջարկում եմ առնվազն նշել, թե ինչ չափանիշներով կամ կարգով է այս աշխատանքը կատարվում, շատ ընդհանրական է	Առաջարկն ընդունվել է: Նորոգման ենթակա հուշարձանների ցանկը որոշվում է ըստ անհրաժեշտության տարվա ընթացքում շրջայցերի և գույքագրման արդյունքում որոնցից ընտրվում առավել վերանորոգման կարիգ ունեցողները:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
43.		կենդանիների շուկաների կազմակերպման անհրաժեշտություն Ի՞նչ կենդանիների շուկաների մասին է խոսքը, և առհասարակ պետք է վերագնահատել, թե արդյո՞ք համայնքը պետք է խրախուսի կենդանիների առուվաճառքը և կազմակերպի շուկաներ: Ի՞նչ կարիքներից և մոտեցումներից է դա բխում: Կարևոր է, որ դրա մասին նշվի ծրագրում, այլապես շատ վիճելի ձևակերպում է	Առաջարկն ընդունվել է:	Նշված կետը հանվել է ծրագրից:
44.		*Կիրականացվի թափառող կենդանիների հիմնախնդրի լուծման ձևաչափի կիրառում՝ հանրային կարծիքից ելնելով:* Ի՞նչ ձևաչափի մասին է խոսքը: Մեր նախընտրական ծրագրում ամրագրված էր ստերջացման մեթոդը, որը միջազգայնորեն ընդունված	Առաջարկը ընդունվել է:	Բնապահպանության ոլորտում նախադասությունը վերախմբագրվել է հետևյալ կերպ: <Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:>

		ամենաարդյունավետ և հումանիստական մեթոդն է: Ստերջացումն են խորհուրդ տալիս միջազգային ճանաչված կազմակերպությունները, կիրառում՝ զարգացած երկրները: Առաջարկում եմ նոր լուծումներ չփնտրել, վերջնականապես հստակեցնել, որ խոսքը ստերջացման մասին է (եթե մասնագետները խորհուրդ կտան, որոշ, հստակ սահմանված դեպքերում նաև քնեցման):		
45.		*Դիտարկել բաց և թափանցիկ մրցույթի միջոցով երկրորդ օպերատորի ներգրավման ան հրաժեշտության հարցը:* Որքա՞ն ժամանակ ենք շարունակելու դիտարկել, ակնհայտ է, որ այլ օպերատորի կարիք կա, առաջարկում եմ վերաշարադրել այսպես. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:	Առաջարկն ընդունված է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:
46.		*Հանրակրթություն* Փաստերի էկլեկտիկ շարք է, իրավիճակի մասին պատկերացում չի տալիս՝ ներառյալ պատճառահետևանքային կապերը: Ինչպես ծրագրի մյուս շատ բաժիններ, այս մեկը ևս «իրավիճակի նկարագրություն» չունի, մասնավորապես՝ վերլուծություն, որից	Առաջարկն ընդունված է:	Ծրագրում ավելցվել է **ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ** Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների ընդհանուր թիվը 155 է, աշակերտների թիվը 2018-2019 ուստարում **98 672** է: Առաջին դասարանցիների թիվը **11675** է, հիմնական դպրոցի շրջանավարտների թիվը՝ 9086, իսկ միջնակարգ դպրոցների շրջանավարտների թիվը՝ 394:

		պետք է որ բխեն հիմնախնդիրները, իսկ հիմնախնդիրների և իրավիճակի նկարագրության հիման վրա պետք է լինեն առաջարկվող ծրագրային քայլերը, միջոցառումները, կամ գործողությունները: Ընդհանրապես ծրագրերի հիմքում ընկած այս տրամաբանությունը այստեղ էլ պահված չէ:		Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ներառական կրթություն է իրականացվում մայրաքաղաքի 54 դպրոցներում, որտեղ աշխատում են 384 հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան և լոգոպեդ: Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում սովորում են թվով 881 այլազգի երեխաներ: Շարունակվում է սիրիահայ երեխաների կրթության և ինտեգրման գործընթացը ՀՀ կրթական ծրագրով: Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով, տեսացրիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ՝ կրթական համապատասխան միջավայր ապահովելու նպատակով:
47.		*Հետևողականություն է դրսևորվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հանրակրթության մեջ ընդգրկելու հարցում:* Հետևողականություն դրսևորել - ընդհանրական ձևակերպում է, ինչ գործողություններ է ենթադրում՝ չի հասկացվում:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելցվել է 2018թ. դրությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում սովորում են 881 այլազգի երեխաներ. • Ռուս -318 առկա է ռուսերենով ուսուցմամբ թվով 13 դպրոց • Եզդի-393 թվով 3 դպրոցներում ազգությամբ եզդի ծնողների պահանջով գործում է եզդիերենի խմբակ (հհ.. 66,107,136) • Հույն-15 Երևանի հ.74 դպրոցում

				գործում է հունարենի խմբակ • Ուկրաինացի-26 • Վրացի -22 • Ասորի- 11 • Հրեա- 4 • Բելոռուս-3 • Այլ 79 Դպրոցներում եզդի երեխաների համար ստեղծվել են խմբակներ, սակայն նրանցից շատերը հրաժարվում են իրենց մայրենին ուսումնասիրել:
48.		*Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ՝ ապահովելու կրթական համապատասխան միջավայր: Ասիական զարգացման բանկի համագործակցությամբ հիմնանորոգվում են թվով 12 դպրոցներ:* Անհրաժեշտ է ներկայացնել, թե քանի հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցից է նորոգվում այս տասերկուսը, ինչ պատկեր է հիմնանորոգման հարցում: Առանց այդ ինֆորմացիայի, այս հիմնանորոգման տվյալը ոչինչ չի ասում: Նույնը համակարգիչներով ապահովվածության վերաբերյալ.....:	Առաջարկն ընդունված է: Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 155 դպրոցներից հիմնանորոգման կարիք ունեն թվով 75-ը, որի կատարման մասին ներկայացված է աշխատակազմի հանրակրթության վարչության հնգամյա զարգացման ծրագրում (2019-2023թ.թ.)՝ ըստ փուլեր: ՀՀ պետբյուջեի հաշվին նորոգման աշխատանքներ են ընթանում թվով 4 դպրոցներում (հհ.. 22,91,143,191), Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ տարածքային կառավարման նախարարության հիմնադրամով շենքերի կառուցման աշխատանքներ են ընթանում թվով 2 դպրոցներում (հ.հ.135 և 153): Նախապատրաստական աշխատանքներ են կազմակերպվում թվով 5 դպրոցներում (հհ..6,18,95,116 և «Հ.Կոջոյան»): Առաջնահերթությամբ հիմնանորոգման ծրագրում	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			ընդգրկված են նաև վթարային տարբեր աստիճան ունեցող դպրոցներ (hh..50,51,68,111,122,130,169):	
49.		*Սովորողների արժեքային համակարգի ձևավորման աջակցության նպատակով Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում նախատեսվում է ներդնել «Երևանագիտություն» առարկան:* Բազմիցս նշվել է հանրակրթական ծրագրի գերբեռնվածության մասին և որ կարիք կա դրանք թեթևացնելու: Այդ համատեքստում նոր առարկա ներմուծելը, նույնիսկ եթե դպրոցական բաղադրիչով, հիմնավորված չէ: Ավելին, անհասկանալի է, թե ինչպես է սա բխում վերը թվարկած հիմնախնդիրներից: Ավելին, դպրոցական բովադակությունն այնպիսին է, որ Երևանի մասին տեղեկություններ և Երևանին վերաբերող բովանդակություն դասագրքերում ներառված են՝ սկսած տարրական դասարանից: Ավելին, բացի ուսումնական բովանդակությունից, կա Երևանի տոնակատարության օրվան առնչվող համաերևանյան միջոցառումների ավանդույթը, կան գործնական պարապմունքներ և այցելություններ թանգարաններ:	Առաջարկն ընդունվել է, քանի որ այն հանված է և չի նախատեսված: Ծրագիրը նվիրված էր Երևանի 2800-ամյակին:	

		Առանձին առարկայով երեխաներին ծանրաբեռնելու փոխարեն կարելի է գործող մեխանիզմ ներդնել, որ ավագ դպրոցի աշակերտները այցելեն Երևանի պատմության և Էրեբունի թանգարաններ և այդ այցերի հիման վրա իրականացնեն խմբային վերլուծական աշխատանքներ կամ նախագծեր: Նոր առարկայի կարիք չկա: Ընդհակառակը, Երևանում ապրող աշակերտներին կարիք կա ծանոթացնելու Հայաստանի՝ Երևանից դուրս շրջաններին և անկյուններին, որ նրանք ճանաչեն և գնահատեն հայրենիքը Երևանից դուրս, հստակ գիտակցեն երկրի համաչափ զարգացման անհրաժեշտությունը, և այլն:		
50.		*Երևանի քաղաքապետի՝31.03.2011թ h.1101-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում Երևան քաղաքում հաշվառված ծնողների համար երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝քաղաքապետարանի ֆինանսական ներդրմամբ:* Նույնը՝ ինչ դպրոցական կրթության բաժնի համար...տվյալների շարք է	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել է հետևյալ լրացումները: Երևան ենթակայությամբ գործում է 160 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ մանկապատեզ, ուր հաճախում է - 29707 երեխա: Թվով 11 դպրոցում գործում է 11 նախակրթարան որտեղ հաճախում է նախադպրոցական տարիքի /4-6 տարեկան/ 224 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական կրթություն է իրականացվում 8 մանկապարտեզներում, որտեղ ներառված է 146 երեխա: Նրանց

				կրթադաստիարակչական աշխատանքների իրականացմանը մասնակցում է նաև 10 հոգեբան և 10 լոգոպեդ: Մանկապարտեզներում հերթագրված երեխաների ընդունելությունը կազմակերպվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 04.03.2016թ. հ.706-Ա, 19.04.2018թ. 1472-Ա որոշումների: Մանկապարտեզներում նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 31.03.2011թ. հ.1101-Ա որոշման: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. հ.90-Ն որոշման՝ նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար նաև մարզերում հաշվառված զինծառայողի երեխայի համար:
51.		*Որակյալ կրթության և դաստիարակության ապահովման նպատակով նախատեսվում է ժամանակակից պահանջներին համապատասխան բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները՝ երեխաների համար ստեղծել առավել ապահով, անվտանգ և հարմարավետ միջավայր, խաղահրապարակներ և կանաչապատ տարածքներ:* Կարևոր է նշել գոնե ծրագրի այս	Առաջարկն ընդունվել է: Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման և բակերի բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսվում է աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերում՝ հիմք ընդունելով աշխատակազմի հանրակրթության վարչության ուսումնասիրության արդյունքները:	

		մասում, թե քանի նուհ-ում, անհրաժեշտ կարիքի որ մասին ենք անդրադառնալու:		
52.		*Բնապահպանության ոլորտը խմբագրել հետևյալ կերպ* Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Մայրաքաղաքի մեկ բնակչին բաժին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշը 7,8 ք/մ է, որը 2 անգամ պակաս է նորմատիվայինից: Երևանը գտնվում է կիսաանապատային գոտում, որտեղ հողերը անջրդի պայմաններում էռոզացված են և ունեն ոչ բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Ըստ հետազոտության արդյունքների մայրաքաղաքի հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը, ինչը պայմանավորված է հողերի ծանր մետաղներով աղտոտվածությամբ: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ	Առաջարկն ընդունվել է մասամբ:	Բնապահպանության ոլորտը խմբագրվել է հետևյալ կերպ. Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Մայրաքաղաքի մեկ բնակչին բաժին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշը 7,8 ք/մ է, որը 2 անգամ պակաս է նորմատիվայինից: Երևանը գտնվում է կիսաանապատային գոտում, որտեղ հողերը անջրդի պայմաններում էռոզացված են և ունեն ոչ բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Ըստ հետազոտության արդյունքների մայրաքաղաքի հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը, ինչը պայմանավորված է հողերի ծանր մետաղներով աղտոտվածությամբ: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը: Հիմնախնդիրներ

		ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը: *Հիմնախնդիրներ* *1. Մեղմել քաղաքային շրջակա միջավայրի վրա մարդկային կենսագործունեության և գլոբալ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը:* *2. Մշակել և ներդնել քաղաքի էկոհամակարգերի, կանաչ ենթակառուցվածքների և կենսաբազմազանության հետազոտության, պահպանության և կայուն զարգացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմներ:* *3. Առավելագույնի հասցնել քաղաքային կանաչ տարածքների բնապահպանական նշանակությունն ու դրանցից ստացվող հանրային օգուտը՝ կիրառելով ժամանակակից դենդրոլոգիական, լանդշաֆտային ճարտարապետության, քաղաքաշինական, գեղագիտական և այլ ասպեկտներով արդյունավետ լուծումներ:* **2019 թվականին նախատեսվող աշխատանքներ** 1. Կիրականացվի համայնքապատկան կանաչ		1. Մեղմել քաղաքային շրջակա միջավայրի վրա մարդկային կենսագործունեության և գլոբալ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը: 2. Մշակել և ներդնել քաղաքի էկոհամակարգերի, կանաչ ենթակառուցվածքների և կենսաբազմազանության հետազոտության, պահպանության և կայուն զարգացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմներ: 3. Առավելագույնի հասցնել քաղաքային կանաչ տարածքների բնապահպանական նշանակությունն ու դրանցից ստացվող հանրային օգուտը՝ կիրառելով ժամանակակից դենդրոլոգիական, լանդշաֆտային ճարտարապետության, քաղաքաշինական, գեղագիտական և այլ ասպեկտներով արդյունավետ լուծումներ: 2019 թվականին նախատեսվող աշխատանքներ 1. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կմեկնարկվի կանաչ ենթակառուցվածքների գույքագրում, աղտոտվածության մակարդակի և կենսաբազմազանության քանակաորակական ցուցանիշների առկա ելային վիճակի հետազոտություն: Արժեքավոր ծառերը կհամարակալվեն և կկոդավորվեն: Կսահմանվի Երևանի արժեքավոր էկոհամակարգերը: Ողջ տվյալները հասանելի կլինեն առցանց քարտեզի տեսքով: 2. Կմշակվի և կիրապարակվի երևանյան

		ենթակառուցվածքների գույքագրում, աղտոտվածության մակարդակի և կենսաբազմազանության քանակաորակական ցուցանիշների առկա ելային վիճակի հետազոտություն: Արժեքավոր ծառերը կհամարակալվեն և կկոդավորվեն: Կսահմանվի Երևանի արժեքավոր էկոհամակարգերը: Ողջ տվյալները հասանելի կլինեն առցանց քարտեզի տեսքով: 2. Կմշակվի և կհրատարակվի երևանյան կլիմայի պայմաններում կանաչապատ տարածքների ձևավորման և խնամքի մեթոդական ձեռնարկ հիմնված ժամանակակից լավագույն փորձի վրա, որն անվճար կտրվի քաղքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպություններին, համատիրություններին, ուսումնական հաստատություններին և հասանելի կլինի առցանց: 3. Կանաչ ենթակառուցվածքների խնամքով զբաղվող մասնագիտական անձնակազմի համար կիրականացվի վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք գործնական գիտելիքներ ձեռք կբերեն ծառերի ու թփերի էտման, ինչպես նաև խնամքի այլ մեթոդների շուրջ:		կլիմայի պայմաններում կանաչապատ տարածքների ձևավորման և խնամքի մեթոդական ձեռնարկ հիմնված ժամանակակից լավագույն փորձի վրա, որն անվճար կտրվի քաղքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպություններին, համատիրություններին, ուսումնական հաստատություններին և հասանելի կլինի առցանց: 3. Կանաչ ենթակառուցվածքների խնամքով զբաղվող մասնագիտական անձնակազմի համար կիրականացվի վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք գործնական գիտելիքներ ձեռք կբերեն ծառերի ու թփերի էտման, ինչպես նաև կանաչ տարածքների խնամքի այլ մեթոդների շուրջ: 4. Համապատասխան ֆինանսավորման պայպմաններում կզարգացվի տնկարանն ու ջերմոցը՝ սեփական կարիքների համար անհրաժեշտ ծառաթփատեսակները մեծ քանակով և էժան աճեցնելու, ինչպես նաև 4-5 տարեկան հասուն տնկիների բանկ ունենալու նպատակով, ինչը կօգնի ծառուղիներում ծերացած և հիվանդ ծառերի (հատկապես մասսայաբր հիվանդ թեղիների) օպերատիվ համաժամանակյա փոխարինում կատարել: 5. Հաստիքացուցակում կավելացվի լանդշաֆտային դիզայների և ֆիտո-դիզայների հաստիքները: 6. Սահմանված ժամանակահատվածում

		4. Կզարգացվի համայնքապատկան տնկարանն ու ջերմոցը՝ սեփական կարիքների համար անհրաժեշտ ծառաթփատեսակները մեծ քանակով և էժան աճեցնելու, ինչպես նաև 4-5 տարեկան հասուն տնկիների բանկ ունենալու նպատակով, ինչը կօգնի ծառուղիներում ծերացած և հիվանդ ծառերի (հատկապես մասսայաբր հիվանդ թեղիների) օպերատիվ համաժամանակյա փոխարինում կատարել: 5. Հաստիքացուցակում կավելացվի լանդշաֆտային դիզայների, հաստիքները 6. Սահմանված ժամանակահատվածում ծառերի ու թփերի կմախքի առողջացման և գեղագիտական ձևավորման համար կիրականացվի շուրջ 100,000 ծառերի սաղարթի ձևավորման և սանիտարական էտ: Ծառերի երիտասարդացնող և խորը էտը կկիրառվի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության՝ վթարային իրավիճակների կանխման նպատակով: 7. Կանաչապատման իրականացման ներկայիս սեզոնային մասսայական համաժամանակյա, անկանոն տնկումների մոդելը հիմնականում		ծառերի ու թփերի կմախքի առողջացման և գեղագիտական ձևավորման համար կիրականացվի շուրջ 26.000 ծառերի սաղարթի ձևավորման և սանիտարական էտ: Ծառերի երիտասարդացնող և խորը էտը կկիրառվի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության՝ վթարային իրավիճակների կանխման նպատակով: 7. Կանաչապատման իրականացման ներկայիս սեզոնային մասսայական համաժամանակյա, անկանոն տնկումների մոդելը հիմնականում կփոխարինվի կոնկրետ տեղամասի միասնական լանդշաֆտային նախագծի շրջանկաներում կանաչապտման մոդելով, որը կիրականացվի մրցութային կարգով: 8. Փարոսի անտառ և Սարալանջ փողոցի հարակից տարածքներում համապատասխան ֆինանսավորման պայմաններում կենթարկվի վերակառուցման գործող ռռոգման համակարգերը, կիրականացվի դարավանդավորում, կկառուցվեն այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ և կիրականացվի անտառվերականգման մեծ ծրագիր: 9. Մայրաքաղաքում շուրջ 60.000 ծառ կկրապատվեն: Կրապատումը ոչ միայն գեղագիտական տեսք է հաղորդում ծառերին, այլ նաև կանխարգելում է միջատների տեղաշարժը հողից դեպի ծառի բնի հատված: 10. Քաղաքի բանուկ զբոսաշրջային հատվածներում և զբոսայգիներում կստեղծվեն լանդշաֆտային դիզայնի

		կփոխարինվի կոնկրետ տեղամասի միասնական լանդշաֆտային նախագծի շրջանկաներում կանաչապտման մոդելով, որը կիրականացվի մրցութային կարգով: 8. «Նորքի անտառներ», Փարոսի անտառ և Սարալանջ փողոցի հարակից տարածքներում կանցկացվի ոռոգման համակարգ, կիրականացվի դարավանդավորում, կկառուցվեն այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ և կիրականացվի անտառվերականգման մեծ ծրագիր: 9. Կարգելվի զբոսայգիներում, պուրակներում, անտառպուրակներում, ճամփեզրերին ծառերի բների համատարած կրապատում-սպիտակեցումը և խնամքի այս մեթոդը կկիրառվի միայն մասնագիտական խիստ հիմնավորվածության դեպքում: Առկա սպիտակեցված բները հնարավորության դեպքում կմաքրվեն առանց ծառի կեղևը վնասելու: 10. Լրացումների ու ամբողջական լանդշաֆտային նախագծերի իրացման տեսքով տարբեր տեղամասերում, հաշվի առնելով տարածքին ներկայացվող պահանջները, նաև աղտոտվածության մակարդակն ու բնույթը կտնկվի շուրջ 40.000 ծառ, պատնեշաստեղծ և ծաղկող թուփ,		գրագետ լուծումներով գեղեցիկ, ծաղկման տարբեր սեզոնայնությամբ ծաղիկների ծաղկանոցներ: 11. Կանխարգելիչ և փաստացի բուժման կենթարկվեն շուրջ 35.000 ծառեր և թփեր: 12. Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման և ընթացիկ խնամքի կարիքները բարելավելու նպատակով՝ ձեռք կբերվի շուրջ 6000 խմ բուսահող և լրացուցիչ ֆինանսավորման պայմաններում ձեռք կբերվի կենսահումուս, որը կնպաստի ծառերի և թփերի կենսունակության բարելավմանը: 13. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կիրականացվի ուղղահայաց կանաչապատման համաքաղաքային ծրագիր, որի ընթացքում լիանանման բարձրացող բույսերով պատելու համար կկահավորվեն համայնքային և հանրային նշանակության շենքերի արտաքին պատերը: 14. Կանաչ տարածքների և առհասարակ բնության հանդեպ հանրության հոգատարությունն իբրև կարևորագույն արժեք հանրահռչակելու նպատակով կիրականացվի պատշգամբների ինքնակամ կանաչապատման խրախուսման ծրագիր՝ վարչությունը աջակցություն կցուցաբերի՝ բնակիչներին տրամադրելով անվճար խորհրդատվություն, թաղարային բույսեր, բուսահող, կանցկացվի տարվա լավագույն կանաչապատ պատշգամբ համաքաղաքային մրցույթ և այլն: 15. Բնապահպանական ձեռնարկներում

		բարձրացող լիանանման թփատեսակներ: Նախընտրելի ծառատեսակները՝ սոսի, սոֆորա, թխկի, կաղնի, հուդայածառ, կատալպա, օճառենի, հացենի, ուռենի, գլիդիչիա և այլն: Նախընտրելի թփատեսակները՝ գիհի, ֆորզիցիա, խենոմելես, ծորենի, տոսախ, իլենի, չմենի և այլ: Նախընտրելի բարձրացող լիանանման թփատեսակները՝ խաղող, կուսախաղող, բաղեղ, կամպսիս, գլիցինիա և այլն: 11. Երևանյան բակերի խաղողի թառմաները կհռչակվեն որպես Երևանի ինքնության անբաժանելի մաս և դրանց խնամքի ու տարածման համար հատուկ ծրագիր կիրականացվի: 12. Նախկինում ծաղիկներով պատվող շատ (-----) սիզամարգեր կվերաձևավորվեն բազմամյա մշտադալար, պատնեշաստեղծ և ծաղկող թփերով: Քաղաքի բանուկ զբոսաշրջային հատվածներում և զբոսայգիներում կստեղծվեն նաև լանդշաֆտային դիզայնի գրագետ լուծումներով գեղեցիկ, ծաղկման տարբեր սեզոնայնությամբ ծաղիկների ծաղկանոցներ, խրախուսել դիմացկունությամբ և կենսաբազմազանության իմաստով կարևոր տեղական խոտաբույսերի		կրթական բաղադրիչն ավելացնելու նպատակով մանկապարտեզների ու դպրոցների տարածքներում կկազմակերպվի ուսումնական պարտեզներ, որտեղ բույսերը հետազոտելու և խնամելու պարտավորությունը կլինի հաստատության սաների վրա: Այդ նպատակով կհրատարակվի հատուկ ուղեցույց: 16. Կմեկնարկեն Մ.Մելքոնյան փողոցին կից հանգստի գոտու ստեղծման աշխատանքները, որի 70%-ը կազմելու է գեղատեսիլ կանաչ զանգվածն իր բարձրարժեք ծառաթփատեսակներով: 17. Համաքաղաքային շաբաթօրյակների ընթացքում կնախատեսվի Հրազդանի կիրճի և Երևանյան լճի հարակից տարածքների մաքրման աշխատանքներ: 18. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում կազմել ծրագիր և համապատասխան ֆինանսավորման պայմաններում ստեղծել բուֆերային անտառապաշտպան գոտիներ՝ ներգրավելով նոր ոռգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի խնամքի և այլ աշխատանքները: 19. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում ձեռք բերել ժամանակակից գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումներ: 20. Երկրում առկա գիտահետազոտական ներուժը լիարժեք օգտագործելու համար, համագործակցության կայուն և

		աճեցումը թանկարժեք գազոնների փոխարեն։ 13. Կանխարգելիչ և փաստացի բուժման կենթարկվեն շուրջ 35.000 ծառեր և թփեր։ 14. Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման և ընթացիկ խնամքի կարիքները բարելավելու նպատակով ձեռք կբերվի 10.526 խմ բուսահող։ Բացի այդ, սեփական կարիքների համար կենսահումուս արտադրելու և տերևաթափ ծառերի կենսազանգվածը վերամշակելու նպատակով կկառուցվի կոմպոստացման կայան՝ թափոնների ծանր մետաղներով աղտոտվածության թույլատրելի մակարդակի դեպքում։ 15. Կհիմնանորոգվեն և կստեղծվեն շուրջ 5 կմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ցանցեր։ Ոռոգման հարցի լուծման շրջանակներում կկիրառվեն անձրևաջրերի կառավարման փորձարարական մեթոդներ։ 16. Առաջին անգամ կմեկնարկի ուղղահայաց կանաչապատման համաքաղաքային մեծ ծրագիր, որի ընթացքում լիանանման բարձրացող բույսերով պատելու համար կկահավորվեն 100-ից ավել համայնքային և հանրային նշանակության շինությունների պատեր, կամարներ, այլ մակերեսներ։		մշտական ծրագրեր ստեղծելով գիտահետազոտական ինստիտուտների և քաղաքապետարանի միջև՝ նրանց կպատվիրակվի քաղաքի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր խնդիրների հետազոտությունն ու լուծումների առաջադրումը, կանաչ տարածքների ցուցանիշների փոփոխության մոնիթորինգային մշտադիտարկումը։ 21. Կներդրվի չորացած և վթարային ծառերի կտրման որոշումների կայացման և իրագործման չափելի ցուցանիշների, թափանցիկ և հանրային պատշաճ իրազեկում ենթադրող համակարգ։ 22. Սածիլներ, տնկիներ, սոխուկներ, սերմեր և կանաչապատման հնարավոր այլ միավորներ գնելիս նախապատվությունը կտրվի հայրենական արտադրանքին, հնարավորինս կրճատելով ներմուծումը։ Այս հարցում ակտիվ ակտիվ համագործակցություն կլինի նաև բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և Երևանի բուսաբանական այգու հետ։ 23. Կիրականացվեն քաղաքի բնապահպանական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող կանաչ հանրային տարածքների վերականգման նպատակային ծրագրեր Օղակաձև զբոսայգու և Հաղթանակ զբոսայգու համար։ Զարգացման նպատակով համագործակցության երկարաժամկետ ծրագրեր կսկսվեն Բուսաբանական այգու

		Կխնամվեն առկա մակերեսները։ 17. Կանաչ տարածքների և առհասարակ բնության հանդեպ հանրության հոգատարությունն իբրև կարևորագույն արժեք հանրահռչակելու նպատակով կիրականացվի պատշգամբների ինքնակամ կանաչապատման խրախուսման ծրագիր՝ բնակիչներին տրամադրելով անվճար խորհրդատվություն, թաղարային բույսեր, բուսահող, կանցկացվի տարվա լավագույն կանաչապատ պատշգամբ համաքաղաքային մրցույթ և այլն։ 18. Բնապահպանական ձեռնարկներում կրթական բաղադրիչն ավելացնելու նպատակով մանկապարտեզների ու դպրոցների տարածքներում կկազմակերպվի ուսումնական պարտեզներ, որտեղ բույսերը հետազոտելու և խնամելու պարտավորությունը կլինի հաստատության սաների վրա։ Այդ նպատակով կհրատարակվի հատուկ ուղեցույց։ 19. Կմեկնարկեն Մ.Մելքոնյան փողոցին կից հանգստի գոտու ստեղծման աշխատանքները, որի 70%-ը կազմելու է գեղատեսիլ կանաչ զանգվածն իր բարձրարժեք ծառաթփատեսակներով։		հետ։ 24. Քաղաքի այն հատվածներում, որտեղ չկա հողային կանաչապատման հնարավորություն՝ կկիրառվի մեծ թաղարային և ճմապատման աշխատանքներ։ 25. Կարգելվի ձմռան ամիսներին ճանապարհների ձնածածկի հալեցման համար կիրառած տարբեր ռեագենտներով, աղերով հարստացրած և երթևեկելի հատվածից հեռացված ձյան կույտերի կուտակումը մայթեզրին աճող ծառերի և տակ և նրանց հարակից սիզամարգերում, քանի որ այն դառնում են ծառերի չորացման պատճառ։

		20. Կմաքրվեն բնապահպանական աղետալի վիճակում գտնվող այնպիսի կարևոր տարածքներ ինչպիսիք են՝ Հրազդանի կիրճը, Երևանյան լիճը և դրա շրջակայքը, Գետառի հունը և այլն: 21. Կիրականացվեն Ծիծեռնակաբերդի անտառպուրակի վերականգնման աշխատանքները: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել ոռոգման ցանցի մասնակի նորոգում, հզոր պոմպակայանի ստեղծում, ծառերի առողջացման նպատակով՝ բուժման և ծառատունկի աշխատանքներ: 22. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում կիրականացվեն բնապահպանական և կլիմայական բուֆերային գոտու ձևավավորմանն ուղղված աշխատանքներ: Այդ նպատակով (հատկապես քաղաքի հարավային շրջաններում՝ Էրեբունի, Շենգավիթ, Նուբարաշեն, Եռաբլուրի, Դավիթ Բեկ փողոցների հարակից տարածքներում) նախատեսվում է իրականացնել անտառվերականգնման, նոր ոռգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի խնամքի և այլ աշխատանքներ: 23. Բազմաթիվ զբոսայգիներում, անտառպուրակներում ու		

		ծառուղիներում կարդիականացվի ոռոգման համակարգը՝ հնարավորության դեպքում ներդնելով դրենաժային ջրհորներով, կաթիլային և ստատիկ ցնցուղային վարդակներով ոռոգման համակարգեր։ Կներդրվի մուլչայավորումն իբրև խնամքի և ոռոգման ջրի տնտեսման արդյունավետ մեթոդ։ 24. Կանաչապատ տարածքների սպասարկման ու խնամքի որակի բարձրացման նպատակով նախատեսվում է ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում, մասնավորապես՝ մուլչայավորող սարք, որ էտման արդյունքում առաջացող փայտանյութից, տերևներից սեփական կարիքների համար մուլչա կարտադրի։ 25. Կենդանիների, թռչունների, միջատների ազատ տեղաշարժն ու պոպուլյացիաների ավելացումը խթանելու համար կստեղծվեն կանաչ տարածքները միմյանց կապող կանաչ միջանցքեր, որտեղ պետք է բացառել առևտրի, հանրային սննդի և ատրակցիոնների առկայությունը։ 26. Երկրում առկա գիտահետազոտական ներուժը լիարժեք օգտագործելու համար, համագործակցության կայուն և		

		մշտական ծրագրեր ստեղծելով գիտահետազոտական ինստիտուտների և քաղաքապետարանի միջև՝ նրանց կպատվիրակվի քաղաքի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր խնդիրների հետազոտությունն ու լուծումների առաջադրումը, կանաչ տարածքների ցուցանիշենրի փոոփոխության մոնիթորինգային մշտադիտարկումը։ 27. Կհրապարակվի կանաչապատման ենթակա բայց դեռևս խոպան հանրային տարածքների ցանկը և կխրախուսվեն այնտեղ մասնավոր և համայնքային կանաչապատման ձեռնարկները։ 28. Կներդրվի չորացած և վթարային ծառերի կտրման որոշումների կայացման և իրագործման չափելի ցուցանիշների, թափանցիկ և հանրային պատշաճ իրազեկում ենթադրող համակարգ։ 29. Սածիլներ, տնկիներ, սոխուկներ, սերմեր և կանաչապատման հնարավոր այլ միավորներ գնելիս նախապատվությունը կտրվի հայրենական արտադրանքին, հնարավորինս կրճատելով ներմուծումը։ Այս հարցում ակտիվ ակտիվ համագործակցություն կլինի նաև բնապահպանության նախարարության ենթակայության տակ		

		գտնվող ՊՈԱԿ-ների և Երևանի բուսաբանական այգու հետ: 30. Կիրականացվեն քաղաքի բնապահպանական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող կանաչ հանրային տարածքների վերականգման նպատակային ծրագրեր Օղակաձև զբոսայգու և Հաղթանակ զբոսայգու համար: Զարգացման նպատակով համագործակցության երկարաժամկետ ծրագրեր կսկսվեն Բուսաբանական այգու հետ: 31. Քաղաքի այն հատվածներում, որտեղ չկա հողային կանաչապատման հնարավորություն՝ կիրառել մեծ թաղարային կանաչապատման պրակտիկան: 32. Կարգելվի ձմռան ամիսներին ճանապարհների ձնածածկի հալեցման համար կիրառած տարբեր ռեագենտներով, աղերով հարստացրած և երթևեկելի հատվածից հեռացված ձյան կույտերի կուտակումը մայթեզրին աճող ծառերի և տակ և նրանց հարակից սիզամարգերում, քանի որ այն դառնում են ծառերի չորացման պատճառ:		
53.		*Սոցիալական ապահովության տեքստից տպավորություն է ստեղծվում, որ Երևանում խոցելի խումբ են միայն հաշմանդամություն ունեցող անձինք և անօթևանները:*	Առաջարկն ընդունվել է:	Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում: Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ուշադրության կենտրոնում են պահվելու

				աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:
54.		Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներ են առանձնացված, որո՞նք են ռիսկի խմբերը, ի՞նչ վիճակագրություն կա: Այստեղից հասկանալի չի դառնում, թե ինչ իրավիճակ ունենք հիմա և ինչ է պետք անենք, որպեսզի այն շտկվի:	Առաջարկն ընդունվել է:	Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում: Մասնավորապես՝ Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու

				համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության

				ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:
55.		Ծրագրում ոչ մի խոսք չկա սոցիալական աջակցության համակարգի խնդիրների և դրանց կայացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Ողջ քաղաքն ունի ընդամենը մեկ սոցիալական աշխատող, մինչդեռ գործուն սոցիալական աջակցության համակարգ ստեղծելու համար էական է սոցիալական աշխատողների թվի մեծացումը: Մեկ այլ կարևոր բաղադրիչ է սոցիալական աջակցության տարածքային բաժինների և վարչական	Առաջարկն ընդունվել է:	Ներկայացված են առկա խնդիրները և ձևափոխությունը կատարված է ծրագրի համապատասխան մասերում Ծրագրում ավելացվել է հետևյալը. Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների սոցիալական բաժինների աշխատողների՝ ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման

		շրջանների սոցիալական հարցերով բաժինների սերտ համագործակցությունը սոցիալական աջակցության դեպքի վարման և համագործակցության ցանցերի շրջանակներում: Վարչական շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցներն ունեն սոցիլական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների մասին ուսուցման կարիք: Ողջ համակարգը խարսխված է դրամական աջակցություն տրամադրելու սկզբունքի վրա, մինչդեռ բնակիչների խնդիրները դրանով չեն լուծվում:		վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՍԱՏԲ-ների մասնագետների՝ տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական աշխատողի» հաստիքների ստեղծումը՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:
56.		*Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:* Որոնք են այդ կազմակերպությունները,	Առաջարկն ընդունվել է:	Ներկայացված են կազմակերպությունները և համագործակցության սկզբունքները : Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական

		ի՞նչ հիմքով է համագործակցությունը. ֆինանսական, մասնագիտական, այլ:		շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են Քանաքեռ-Զեյթունի «Հուսո տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ

				Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն: Նմանօրինակ համագործակցության արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:
57.		Հաշմանդամություն ունեցող քանի անձ է հաշվառված Երևանում և ինչ են ներառում տարաբնույթ սոցիալական ծրագրերը:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. 2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունենող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:
58.		Քանի հատ թեքահարթակ է կառուցվել մինչ օրս:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. 2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:
59.		Սոցիալական ապահովության հիիմնախնդիրները չեն կապվում	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ուշադրության կենտրոնում են պահվելու

		վերևում նկարագրված տեքստի հետ. տարեցների, սիրիահայերի, բազմազավակ ընտանիքների մասին որևէ խոսք չկա:		աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:
60.		*Տեղահանված սիրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն* Հանել 3-րդ կետի կրկրնությունն է	Առաջարկն ընդունվել է:	Նշված կետը հանվել է:
61.		*Ինտեգրված սոցիալական*	Առաջարկն ընդունվել է:	Ավելացվել է պարբերություն հետևյալ

		ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն Քանի վարչական շրջանում ներդրման մասին է խոսքը:		խմբագրությամբ: Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-ՍԵբաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի՝ բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Սակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում: 2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի

				բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:
62.		*Նախատեսվում է աջակցություն ՍՍՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի հաշվառման, պետական նպաստների նշանակման գործընթացին:* Ի՞նչ կերպ պետք է իրականացվի աջակցությունը:	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ: Նախատեսվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում, նպաստների հասցեականության մեծացում: Հասցեականության առումով ընտրանքային ուսումնասիրություններ են անցկացվելու ՍՍՏԲ-ներում, քննարկվելու են առկա խնդիրները, հայտնաբերված բացթողումները, տրվելու են մեթոդական ցուցումներ, ընտրանքային մասնակցություն է իրականացվելու համակարգող խորհուրդների գործունեության նկատմամբ, շարունակվելու են առաջարկություններ ներկայացվել ՀՀ պետական լիազոր մարմնին՝ նպաստների հասցեականության, հետգանձումների առաջացման պատճառների կանխման վերաբերյալ:
63.		*Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 17000 ընտանիքներ, որոնք կստանան*	Առաջարկն ընդունվել է:	Նախպադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ: Երևան քաղաքում ընտանիքների

		պետական նպաստներ: Արդյոք միայն պետական նպաստ տալը բավարար է ընտանիքների խնդիրները լուծելու համար: Դրանք պետք է դիտարկվեն համալիր, և ծրագրում անհրաժեշտ են ներդնել խնդիրների համալիր լուծման մեխանիզմներ:		անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 20000 ընտանիքներ, որոնցից 17000 ընտանիքներ կստանան պետական նպաստներ: Հաշվի առնելով, որ պետական նպաստները /տվյալ դեպքում ընտանեկան, սոցիալական նպաստները բավարար չեն կարիքի մեջ գտնվող տվյալ ընտանիքների սոցիալական խնդիրները լուծելու համար, ուստի և գործի կդրվեն միջգերատեսչական սոցիալական համագործակցության, սոցիալական դեպքի վարման, ինչպես նաև համայնքային ռեսուրսների կիրառմամբ հնարավոր սոցիալական ծրագրերի իրագործման մեխանիզմներ:
64.		*սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրերի իրագործում:* Ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, սոցիալական աջակցության տրամադրումն ընդհանրական արտահայտություն է:	Առաջարկն ընդունվել է: Համայնքային սոցիալական աջակցության ծրագրեր /համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հ.8 հոդվածի/	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
65.		*Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի,*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ: Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի

		ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև աջակցություններ: Կրկին՝ ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, և ի՞նչ է նշանակում՝ կտրամադրվեն աջակցություններ		օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:
66.		*Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում հայրենական պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:* Ի՞նչ է նշանակում հոգակցություն կդրսևորվի, անհասկանալի, ընդհանրական ձևակերպում է	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ. Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները:

				Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:
67.		*Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց՝ հասարակական կյանքին աստիճանական ինտեգրման, սոցիալական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ տարբեր ծրագրերի իրագործումը: Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների համար կառանձնացվեն գծանշված տարածքներ:*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի, վերականգնողական կենտրոնների ստեղծման, նրանց՝ հասարակական կյանքին աստիճանական ինտեգրման, սոցիալական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ տարբեր ծրագրերի իրագործում: Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Կշարունակվի մեքենա վարող հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող

		Քանակական ցուցանիշներ չկա՞ն, սա ընդհանրական է		տրանսպորտային միջոցների անվճար կայանման համար քաղաքապետարանի կողմից առանձնացված, գծանշված և կահավորված տարածքներում անվճար կայանման թույլտվությունների և տարբերանշանների տրամադրման գործընթացը /2014-2018թթ. տվյալներով 498 անձանց է տրամադրվել/:498 անձանց է տրամադրվել/:
68.		*Հատուկ հոգածություն կդրսևորվի ինչպես Արցախյան պատերազմում զոհվածների, այնպես և հաշմանդամություն ձեռքբերած անձանց ընտանիքների նկատմամբ:* Կրկին՝ ի՞նչ է նշանակում	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Հոգածություն կդրսևորվի ինչպես Արցախյան պատերազմում զոհվածների, այնպես և հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքների նկատմամբ, որոնք կընդգրկվեն համապատասխան սոցիալական աջակցության և սոցիալ-մշակութային ծրագրերում:
69.		*Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին:* Ի՞նչ է նշանակում, աջակցություն ինչպես և ինչի համար է ցուցաբերվելու: Անհրաժեշտ է պարզաբանել	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է

				մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
70.		Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում թվարկված լրջագույն խնդիրների լուծման համար առաջարկվում է կազմակերպել խրախուսման միջոցառումներ ու այցելություններ՞: Նշված աշխատանքները երրորդական նշանակություն ունեն, իսկ առաջնային միջոցառումները և բարեփոխումները նշված չեն (եթե այդպիսիք կան)	Առաջարկն ընդունվել է	2019 թվականին նախատեսվող աշխատանքներ բաժինը խմբագրվել է հետևյալ կերպ. Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին մեթոդական աջակցության տրամադրման, ոլորտի օրենսդրական բարեփոխումների քննարկման նպատակով նախատեսվում է իրականացնել 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների /ԽՀՀ/ համար սեմինար և վերապատրաստում: Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման, նման իրավիճակներում նրանց հայտնվելու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման համատեքստում պարբերաբար իրականացվել և իրականացվելու են վարչական

				շրջաններում հրատապ դեպքերի առնչությամբ հանդիպում-քննարկումներ, կազմակերպվում են ԽՀՀ նիստեր՝ բաժնի պարտադիր մասնակցությամբ: Ելնելով դեպքի առանձնահատկությունից և երեխայի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելու պատճառներից՝ պարտադիր քննության է առնվում երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման առաջնայնությունը, որից հետո միայն դիտարկվում է երեխայի այլընտրանքային խնամքի տարբերակները՝ նախապատվություն տալով խնամակալությանը, խնամատարությանը և որդեգրությանը: Դրանց անհնարինության դեպքում դիտարկվում է երեխայի մանկական խնամակալական հաստատությունում (մանկատուն, շուրջօրյա ժամանակավոր խնամքի հաստատություն) հայտնվելը: Պարբերաբար իրականացվում է հաստատությունում գտնվող երեխաների անձնական գործերի, տեղավորման հիմքերի ուսումնասիրություն՝ երեխային հետագա որդեգրման կամ խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման նպատակով: Երեխաների շրջանում մուրացիկության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելման նպատակով բաժինը մասնակցում է մուրացիկ, թափառաշրջիկ երեխաների, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության պետի

				07.11.2013թ. հ. 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին, ներկայացնում առաջարկություններ, նախաձեռնում հատուկ դեպքերի քննարկումներ։ Կրթությունից չարամտորեն խուսափող, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններից և անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա աջակցում է երեխաների կրթական համակարգում ընդգրկման, կրթության շարունակականության ապահովման, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներին: Այս նպատակով համագործակցում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ ոստիկանության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի հետ: Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման նպատակով բաժնի կողմից իրականացվելու են Երևան համայնքի տարեկան բյուջեով ներառված տարաբնույթ միջոցառումներ՝ • Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքներ 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար: • ,Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների

				խրախուսման միջոցառում: • Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն Երևանի ծննդատներ, մանկատներ, խնամքի հաստատություններ: • Այցելություն թանգարաններ, թատրոններ՝ հատուկ կարքներով երեխաների մանակցությամբ: • Սոցիալական քարոզչության հոլովակների պատրաստում և տարածում • 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար սեմինար և վերապատրաստում: • ,Էրեբունի-Երևան» տոնին ընդառաջ լուսանկարչական մրցույթ՝ հատուկ կարիքներով շնորհալի երեխաների մասնակցությամբ: • Ամանորին ընդառաջ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ հատուկ կարիքներով երեխաների տիկնիկային թատրոն այցելության և ամանորյա միջոցառումներին մասնակցության կազմակերպում, նվերների տրամադրում:
71.		*կնքել 2018-2020թթ. համագործակցության ծրագիր Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև:* 2019-ի՞ն	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել է համապատասխան տեխնիկական փոփոխություններ:
72.		*Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով նախատեսվում է*	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Երևանի ճանաչելիության բարձրացման

		իրականացնել մարքեթինգային քաղաքականություն՝ շեշտադրելով, որ քաղաքամայր Երևանը 2800 տարեկան է: Բացարձակ չհիմնավորված թեզ եւ անիմաստ մի բան, որը ընդհանրապես չի ազդի տուրիստների հոսքի վրա Ընդհանրապես, փոխել կերպարը, ինձ ծանոթ եւ հանդիպած հյուրերի կարծիքն եմ ասում, Երեւան գալիս են ոչ թե այն պատճառով, որ 2800 կամ 8500 տարեկան է, այլ որուհետեւ մարդամոտ է, անվտանգ, ազատ եւ հետաքրքիր, երիտասարդ, հյուրընկալ եւ ուրախ բնակիչներ ունի		նպատակով նախատեսվում է իրականացնել մարքեթինգային քաղաքականություն, որի իրականացումն իր մեջ ներառում է Երևանը, որպես զբոսաշրջային արդյունք, գովազդելն ու ներկայացնելը:
73.		*Նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:* Կարելի է համագործակցել նաև citybug-ի հետ, որ գործարկվելուց հետո բավական լավ էր գործում http://yerevan.citybugs.am/	Առաջարկն ընդունվել է: Երևանի քաղաքապետարանը բաց է համագործակցության քաղաքային տնտեսության բոլոր որորտներում նորարարական լուծումներ առաջարկող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ինովացիոն գաղափարներով անհատների համար: Մենք մեծ տեղ ենք հատկացնում ազգային գիտական պոտենցիալի օգտագործմանը և մասնակցային կառավարմանը քաղաքային տնտեսության բարելավման և որոշումների ընդունման հարցերում: Նմանատիպ առաջարկները, որոնք համահունչ կլինեն Երևանի	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			քաղաքապետարանի զարգացման ծրագրերին և պահանջներին, կյանքի կոչվելու հնարավորություն կստանան:	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առաջարկության, առարկության կամ հարցադրման բովանդակություն	Պարզաբանում/ Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4	5
1.	**Հայկ Տոնոյան** (ստացված է https://www.mail.yerevan.am կայքով, 14.11.2018թ.)	Առաջարկում եմ Մետրոյի Աջափնյակ կայարանի գործարկման ուղղությամբ քայլեր ձեռնարկել:	Առաջարկը չի ընդունվել: Հնգամյա ծրագրի նախագծի «Տրանսպորտ» ոլորտի 2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ բաժնի 2-րդ կետում նշված է, որ տրանսպորտային ցանցի ընդլայման նպատակով նախատեսվում է կառուցել մետրոյի առնվազն մեկ նոր կայարան: Մայրաքաղաքի որևէ հատվածում, այդ թվում նաև՝ Աջափնյակ վարչական շրջանում մետրոպոլիտենի ցանցի ընդլայնումը խրախուսելի է քաղաքային իշխանությունների կողմից և գտնվում է մեր ուշադրության կենտրոնում, քանի որ քաղաքային տրանսպորտի այդ տեսակի զարգացումը այլընտրանք չունի: Ոլորտի նախատեսվող բարեփոխումների շրջանակում, ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվելու են մետրոպոլիտենի ցանցի զարգացման (նոր կայարանների կառուցման)	

			նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ, որից հետո, ֆինանսական գնահատականների հիմքով նախաձեռնվելու է ներդրումների ներգրավմանն ուղղված համապատասխան քայլերի իրականացումը:	
2.	**Նինա Մխիթարյան** (ստացված է Իրավական ակտերի միասնական հրապարակման https://www.e-draft.am կայքով 20.11.2018թ.)	Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 83-րդ հոդվածի համաձայն քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում զարգացման ծրագրերը: Երևան քաղաքի 2019թ. զարգացման ծրագրի նախագծով որպես գերակայություն սահմանված են բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինումն ու հիմնանորոգումը այն պարագայում, երբ բյուջեով նույն ծրագրի համար նախատեսված գումարները նախորդ տարիների համեմատ նվազեցվել են մի քանի անգամ: Ակնհայտ է, որ կամ վերելակների ծրագիրը չի կարող լինել գերակայություն և պետք է ծրագում կատարել փոփոխություն, կամ բյուջեյի նշված ծրագրի գումարները պետք է անգամներով ավելացնել:	Առաջարկը չի ընդունվել: Ներկայումս ուսումնասիրվում է վերելակային տնտեսության ամբողջական արդիականացման խնդիրը, որի հիմնական սկզբունքը լինելու է առանց բյուջետային ծախսերի, ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով բազմաբնակարան շենքերի վերելակները փոխարինել ժամանակակից նոր վերելակներով: Այս հանգամանքից ելնելով, 2019 թվականին Երևանի բյուջեով նախատեսվում է իրականացնել ներկայիս վերելակային տնտեսության խիստ անհրաժեշտ ընթացիկ վերանորգման աշխատանքները:	
3.		Երևան քաղաքի 2019թ. զարգացման ծրագրի նախագծով նախատեսված է վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, սակայն դրա հետ կապված որևէ ծրագիր կամ գումար Երևան քաղաքի բյուջեի նախագծում սահմանված չէ:	Առաջարկը չի ընդունվել: Ավտոկայանատեղիների կառուցման ծրագիրը դիտարկվում է համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում, ինչը կարող է լինել համայնքի կողմից հողատարածքների տրամադրման կամ այլ փոխշահավետ պայմաններ առաջադրելու տեսքով:	

4.		Երևան քաղաքի 2019թ. զարգացման ծրագրի նախագծով նախատեսված է ստորգետնյա անցումների բարեկարգում, սակայն դրա հետ կապված որևէ ծրագիր կամ գումար Երևան քաղաքի բյուջեյի նախագծում սահմանված չէ: Հաշվի առնելով Մաշտոցի պող.-Գր.Լուսավորիչ փ. հատման մասում գտնվող ստորգետնյա անցման հակասանիտարական վիճակը, ինչպես նաև ուղղորդվելով այն ենթադրությամբ, որ ծրագրի այս կետը ի սկզբանե նախատեսված չէ չկատարելու տրամաբանությամբ, առաջարկում եմ դրա իրկանացման համար անհրաժեշտ գումարները նախատեսել Երևան քաղաքի 2019թ. բյուջեի նախագծով:	Առաջարկը չի ընդունվել: Ստորգետնյա անցումների ծրագիրը դիտարկվում է համայնք- մասնավոր համագործակցության շրջանակներում, որը կարող է իր մեջ պարունակել փոքր բիզնեսի խթանման կամ գովազդային քաղաքականության աջակցման հստակ տարրեր: Մաշտոցի պողոտա-Գր.Լուսավորիչ փողոցի խաչմերուկում գտնվող գետնանցումը բավականին բարդ հանգույց է, որի կրող մետաղական կոնստրուկցիաները երկարատև կոռոզիայից մաշվել են, անմխիթար վիճակում է նաև ջրամեկուսացման համակարգը: Կառույցն ունի լուրջ հիմնանորոգման կարիք: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, Մաշտոցի պողոտա-Գր.Լուսավորիչ խաչմերուկի գետնանցումը ներկայացվել է ընդգրկելու Երևանի քաղաքապետարանի 2019թ. բյուջեով նախատեսված հիմնանորոգվող օբյեկտների նախնական ցանկում: Երևանի ավագանու կողմից հաստատվելու դեպքում՝ կպատվիրվեն նախագծա-նախահաշվային փաստաթղթեր:	
5.		Երևան քաղաքի 2019թ. զարգացման ծրագրի նախագծով նախատեսված է երրորդ կարգի վթարային շենքերի ամրացում, սակայն դրա հետ կապված որևէ ծրագիր կամ գումար Երևան քաղաքի բյուջեի նախագծում սահմանված չէ: Հաշվի առնելով, որ այս ծրագիրը ուղղակի կապված է բնակչության անվտանգության խնդիրների հետ, առաջարկվում է Երևան քաղաքի 2019թ. բյուջեի նախագծում նախատեսել համապատասխան գումարներ	Առաջարկը չի ընդունվել: Երևանի քաղաքապետարանը անընդհատ ուշադրության կենտրոնում է պահում վթարայնության տարբեր աստիճանի շենքերի հիմնախնդիրը: Նախատեսվում է իրականացնել 3-րդ և 4-րդ աստիճանի վթարային շենքերի գույքագրում, հստակեցնել դրանց ցանկերը և նախապատրաստել	

		(պահուստային ֆոնդի հաշվին) ծրագիրն իրականացնելու համար կամ հանել այն ծրագրի նախագծից բնակչության մոտ ավելորդ հույսեր չառաջացնելու համար:	գործնական փոխշահավետ առաջարկների փաթեթ, բնակարանաշինական գործնեությամբ զբաղվող ընկերությունների հետ արդյունավետ համագործակցություն իրականացնելու համար: Հաշվի առնելով, որ Երևան քաղաքում առկա երրորդ կարգի վթարային շենքերի ամրացումն ուղղակի առնչվում է բնակչության անվտանգության պայմանների ապահովման հետ, ապա հարցի կարգավորումը համարվում է անհրաժեշտ:	
6.	**Արթուր Տեր-Գրիգորյան** (առցանց դիմում՝ ստացված www.yerevan.am կայքով 23.11.2018թ. S-767 դիմում)	Միամյա ծրագրի «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» հատված. 1. Աղբահանություն և սանիտարական մաքրում. 1.1 աղբի տեսակավորման մշակույթը սկսել զարգացնել համայնքապատկան կառույցներից՝ քաղաքապետարանում, վարչական շրջանների (վ/շ) աշխատակազմերում, դպրոցներում (և այլն...) տեղադրելով տեսակավորված աղբի համար նախատեսված աղբամաններ և խստորեն հետևել գործընթացին՝ աշխատակիցներին, այցելուներին և աշակերտներին տեղեկացնելու և նախազգուշացնելու միջոցով: Տեսակավորված աղբն իր հերթին պետք է տեղափոխվի համապատասխան տեսակի վերամշակմամբ զբաղվող ընկերություններ: 1.2 աջակցել աղբի տեսակավորման և վերամշակման մշակույթը խթանող և զարգացնող հասարակական կազմակերպություններին (նախաձեռնողներին)՝ բեռնատարներ, պահեստային տարածքներ և/կամ ֆիզիկական ուժ տրամադրելով: Նախաձեռնության օրինակ՝ «Էկոաղբ/Eco aghb», https://facebook.com/ecoaghb : 1.3 ստեղծել վերամշակող ընկերությունների և ընդունման կետերի բազա: Բազայի տվյալների	Առաջարկը Երևանի 2019 թվականի զարգացման ծրագրի ձևաչափին չի համապատասխանում: Աղբի մշակման աշխատանքները Հայաստանի Հանրապետությունում համակարգելու նպատակով ՀՀ վարչապետի 04.10.2018թ. հ 1310-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Երևանի զարգացման 2019-2023թթ. հնգամյա ծրագրի Կմունալ տնտեսության ոլորտում՝ 2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ բաժնում, նախատեսվում է աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցումը, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում՝ դրա իրագործելության արդյունավետության բազմակողմ ուսումնասիրությունից հետո: Առաջարկում ներկայացված մեխանիզմները ընդունվել են ի	

		հիման վրա ստեղծել ինտերակտիվ առցանց քարտեզ, որն օգտակար կլինի քաղաքացիներին և կազմակերպություններին, որոնք իրենց ուժերով կցանկանան տեղափոխել աղբը վերամշակման: 1.4 դիտարկել փոքրաածավալ վերամշակվող աղբի տեղային, ավտոմատ ընդունող սարքավորումների տեղադրման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը: Օրինակներ. http://bit.ly/2rfAmLS, http://bit.ly/2Q3oyLj:	գիտություն: Նշված խնդրի վերաբերյալ առաջիկայում իրականացվելիք քննարկումների ժամանակ կուսումնասիրվեն նաև առաջարկված մեխանիզմները:	
7.		2. Նախկին կաթսայատների վերաբերյալ 2.1 Այս պահին չգործող, լքյալ տարածքները կարող են դառնալ ֆուտբոլի դաշտեր, կայանատեղեր՝ հարակից տարածքի բնակիչների ավտոմեքենաների համար կամ երկուսը մեկում՝ ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների կոմպլեքս, որի տանիքին կլինի ցանկապատված ֆուտբոլի դաշտ կամ խաղահրապարակ:	Առաջարկը չի ընդունվել: Յուրաքանչյուր չգործող կաթսայատան դեպքում անհրաժեշտ է ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում՝ հաշվի առնելով տվյալ կաթսայատան տեխնիկական բնութագրերը: Երևանի քաղաքապետարանը մշակել է չգործող կաթսայատների վերակառուցումների մի շարք ներդրումային առաջարկներ, որոնք տեղադրված են Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի ներդրումային առաջարկներ բաժնում:	
8.		ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 3.1 Առաջին կետի համատեքստում կարելի է դիտարկել դպրոցներում բացի «Երևանագիտություն» առարկայի ներդրումից նաև աղբի տեսակավորման և վերամշակման մշակույթի ուսուցանումը և գործնական կիրառումը:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի դպրոցներում իրականացվում է բարեկարգ շրջակայքով կանաչապատված դպրոցի ծրագիրը, որի շրջանակներում անդրադարձ է կատարվում նաև աղբահանության խնդիրներին և դրանց ժամանակակից լուծումներին:	
9.		ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ 4.1 Մշտական պարբերականությամբ անցկացնել, օր.՝ «Ի՞նչ կփոխեիր դու» երիտասարդական քննարկումների շարք, որոնց նպատակն է լինելու	Առաջարկը չի ընդունվել: Առաջարկը Երևանի 2019 թվականի զարգացման ծրագրի ձևաչափին չի համապատասխանում: Երևանի քաղաքի ավագանու 2013	

		նոր սերնդի կարծիքի բարձրաձայնումը, ինչպես նաև Երևան մայրաքաղաքում առկա խնդիրները «թարմ և նոր հայացքով» դիտարկելը:	թվականի սեպտեմբերի 10-ի. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Երևանի քաղաքապետարանում գործում է երիտասարդական կենտրոն՝ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Նշված խորագրով քննարկումներ պարբերաբար կազմակերպվում են խորհրդի կողմից:	
10.		Տեխնիկական նկատառումներ 5.1 Նախաբան, 2-րդ էջ. «Երևանի համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների:» 5.2 Կոմունալ տնտեսություն, 26-րդ էջ. ստորև ներկայացված նկարում կարելի է տեսնել, որ առկա է համարակալման վրիպակ էջի վերին մասում: Նկարը կցված է:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	
11.		5.3 Կոմունալ տնտեսություն, 26-րդ էջ. նշված է, որ «Շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2018 թվականին կազմել է 1643 կմ», բայց նաև նշված է, որ «Նորոգման աշխատանքների իրականացման շնորհիվ կվերականգնվի ևս 30 կմ ցանց և 2019թ. տարեվերջին Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1703կմ»: Եթե գումարենք 30-ը 1643-ին, ապա կստանանք 1673՝ 30-ով պակաս, քան նշված է (1703): Կարծում եմ կամ վրիպակ է, կամ տեքստն է անհասկանալի կազմված և ներկայացված թվերը լիովին ճիշտ են:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	
12.		5.4 Տրանսպորտ, 31-րդ էջ. 7. Նախատեսվում է իրականացնել հասարակական	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական	

		տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Կիրականացվի ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ: 11. Նախատեսվում է ապահովել ավտոկայանատեղիների կանոնակարգման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ: Կարծում եմ 7-րդ կետի 2-րդ նախադասությունը և 11-րդ կետը կրում են նույն իմաստը:	փոփոխություններ: Նախագծի «Տրանսպորտ» ոլորտի 31-րդ էջի 11-րդ կետը հանվել է:	
13.		5.5 էջ 42-ի ստորին մասում գտնվող «Ֆ Ի Զ Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ո Ի Լ Տ Ո Ի Ր Ա Ե Վ Ս Պ Ո Ր Տ» գրվածքն իջեցնել հաջորդ՝ 43-րդ էջի վերին մաս:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	
14.		5.6 Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ, 45-րդ էջ. «Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը»:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	
15.		5.7 Զբոսաշրջություն, 61-րդ էջ. «11. Երևանում էքսկուրսիոն ուղղությունը զարգացնելու նպատակով...»:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	
16.		5.8 Խելացի Երևան, 62-րդ էջ. «transport.yerevan.am-ը կայքում առկա են տեղեկություններ բարեփոխումների ամբողջ գործընթացի, մասնագիտական խմբի աշխատանքի, ինչպես նաև միջազգային խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ»:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան տեխնիկական փոփոխություններ:	

17.	**Կարեն Միսոյան** (23.11.2018թ. հ.18/86385 դիմում)	Ծրագրի «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» բաժնի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նախատեսվում է քայլեր ձեռնարկել՝ բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և ապօրինի շինարարությունը՝ իրականացնելով խիստ վերահսկողություն: Ինչ գործիքակազմի մասին է խոսքը: Առաջարկում ենք ներկայացնել նշված աշխատանքների արդյունավետությունը ապահովող կիրառելի գործիքակազմը: Օրինակ՝ քաղաքացիների, կառուցապատողների օգնությամբ պետական գրանցում չունեցող շինությունների գույքագրում, համապատասխան բազայի ստեղծում, որը հիմք կդառնա հետագայում օրինականցման ենթակա շինությունների կառուցման ժամանակահատվածը հստակեցնելու համար(այդտեղ չընդգրկված շինությունների օրինականացման բացառում): Ազդարարող և տեղեկատվություն ներկայացնողին պարգևատրման ինստիտուտի ձևավորում:	Խիստ լինելու գործիքակազմը մեկն է՝ թույլ չտալ այն ինչը չի կարելի: Այն ինչ օրենքը թույլ չի տալիս, չի կատարվելու:	
18.		Առաջարկում ենք սկսել Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի լրամշակման գործընթաց: Բացահայտել այն հողատարածքները, որոնք օտարվել կամ տրամադրվել են գործող օրենսդրության խախտումներով:	Գլխավոր հատակագծի հետ կապված լրամշակման աշխատանքներ են իրականացվելու:	
19.		Առաջարկում ենք վերանայել «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածի տարածքի» բառերը, քանի որ բյուջետային ուղերձում նախատեսվել է միայն Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքների իրականացում:	Առաջարկն ընդունված է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
20.		Առաջարկում ենք վերանայել «ընդլայնել» բառը, քանի որ բյուջետային ուղերձում նախատեսվել է միայն առկա էներգատար լուսատուները խնայող LED	Առաջարկն ընդունված չէ: Ծրագիրը կաշկանդված չէ միայն բյուջեյով, այն կարող է իրականացվել	

		տիպի լուսատուներով փոխարինում:	նաև այլ ռեսուրսների միջոցների հաշվին: Քաղաքի լուսավորության ցանցի փոփոխությունը ծրագրում կա, բայց դրա միայն լամպերի փոխարինումն է նախատեսվում բյուջեով, մյուս մասը պլանավորվում է վարկային և դրամաշնորհային ծրագրերով, որն այժմ արդեն քննարկման փուլում է:	
21.		Առաջարկում ենք ներկայացնել, թե ծրագիրը ե՞րբ է մշակվելու և ե՞րբ է տրվելու ծրագրի իրականացման մեկնարկը, եթե խոսքը միայն Սիսակյան 3 հասցեի մասին չէ:	Առաջարկն ընդունված չէ: 4-րդ կարգի վթարային շենքերը չպետք է կառուցվեն Երևան համայնքի բյուջեի հաշվին, որովհետև դրանց մեծ մասը գտնվում են մեծ բիզնես հետաքրքրություն ներկայացնող հատվածներում և ունեն մեծ ներդրումային պոտենցյալ, հնարավորություն և հեռանկար կա վերակառուցելու դրանք ներդումային նախագծերի շրջանակներում, որից մեկը արդեն մեկնարկման փուլում է:	
22.		Առաջարկում ենք քննարկման առարկա դարձնել ՀՀ վարչապետին ուղղված «Քաղաքաշինություն և Տնտեսություն» ՀԿ-ի 08.11.2017թ. թիվ 17/0112 գրությամբ ներկայացված լուծման տարբերակները՝ կենտրոնը բեռնաթափելու նպատակով(կից ներկայացվում է):	Առաջարկն ընդունված չէ: Քաղաքապետարանն ի զորու չէ կենտրոնը բեռնաթափել պետական կառավարման համակարգերի դիսլակացայի հաշվին: Քանի դեռ մենք չենք սպառել մեր հնարավոր լիազորությունների պոտենցիալը, կորեկտ չի լինի, որ քաղաքապետարանը օրենսդրական նախաձեռնությամբ մտնի Ազգային ժողով: Պլանավորում ենք Կենտրոնի բեռնաթափում տրանսպորտային նոր ցանցի ներդրման միջոցով, վճարովի	

			ավտոկայանատեղիների մեթոդաբանության կառուցվածքի փոփոխության միջոցով:	
23.		Առաջարկում ենք անշարժ գույքի, այդ թվում հողատարածքների, աճուրդով օտարման կամ վարձակալությամբ և կառուցապատման իրավունքով տրամադրման սակարկություններին մեծաքանակ մասնակցություն ապահովելու նպատակով՝ համապատասխան հայտարարություններով ներկայացվող տեղեկատվության և հաջորդող գործընթացների արդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված նոր գործիքների կիրառում:	Առաջարկն ընդունված չէ: Առկա է 500-ից ավել օբյեկտ, անշարժ և շարժական գույք՝ բարձրաժեք և ցածրարժեք, որոնք սպասում են հերթական աճուրդներին և որոնք 90 անգամ վերաներկայացել են աճուրդների և դրա պատճառներից մեկը ոչ պատշաճ իրազեկումն է եղել: 2019 թվականի համար, այդ ամբողջ գույքը կվերաներկայացնենք նոր տրամաբանությամբ և նոր մեդիա տարածման ռեուրսով:	
24.	**Միաննա Մնացականյան** (22.11.2018թ. հ.Մ-10570 դիմում)	Առաջարկում եմ վարորդների տեսնելու և լսելու, հագուկապի հետ կապած խնդիրներին ուշադրություն դարձնել:	Առաջարկն ընդունված չէ: Այսօր մեծ քանակությամբ վարորդների կարիք կա և չկա ընտրության հնարավորություն: Երբ կիրականացվեն բարեփոխումներ տրանսպորտային ոլորտում, այս հարցը ևս ուշադրության կենտրոնում կլինի: Համապատասխան ՔԲ-ներին կլինի համապատասխան հանձնարարական մեկ շաբաթյա ժամկետում ուղղարկել վարորդների բժշկական հետազոտության արդյունքները:	
25.		Նորակառույց թաղամասերում կանգառների խնդրի լուծում	Խնդիրը կուսումնասիրվի և կտրվի համապատասխան լուծում:	

26.		Առաջարկում եմ անվճար երթևեկելու նպատակով՝ երթուղայիննորում փակցված ցուցանակի մեջ գրված ՀՀ ազգային հերոսներին վերաբերվող մասը լրամշակել:	Առաջարկն ընդունված չէ: Դա կառավարության կողմից սահմանված արտոնություն է: Լինում են դեպքեր, երբ վկայականներով չեն կամ զինվորական հագուստով այդ պատճառով չեն տարբերում վարորդները, սակայն այդպիսի դեպքերի իրազեկված լինելու պարագայում մեր կողմից տրվում է նկատողություն և զգուշացում:	
27.		Երկաթուղային գնացքներում օդափոխության համակարգի բարեփոխում:	Առաջարկն ընդունված չէ: Երևան քաղաքը չունի որևէ լիազորություն այդ խնդրով զբաղվելու համար: Կարող եք նամակով դիմել տրանսպորտի նախարարություն, որոնք իրենց տրանսպորտի շահագործման պայմանագրի շահառուն են՝ ոպեսզի այդ պայմանը փորձեն խստացնել:	
28.		Պատերազմի մանակիցները ինչ արտոնությունից կարող են օգտվել երթևեկության ժաանակ	Առաջարկն ընդունված չէ: Այդ արտենությունները սահմանված է կառավարույան կողմից համապատասխան որոշումով, ըստ որի տրանսպորտի նախարարությունը տալիս է համապատասխան վկայկաններ:	
29.		Պետական հաստատություններում աղբի տեսակավորման մշակույթի ներդրում:	Առաջարկությունն ընդունվում է ի գիտություն:	
30.		Թափառող կենդանիների հետ կապված ժամանակավոր լուծման անհրաժեշտություն:	Առաջարկն ընդունված չէ: Քանի որ չունենք նոր հայտարարված մրցույթ և չենք կարող նոր մրցույթ հայտարարել այս տարվա համար, մենք հիմա մրցույթի մեկ այլ տեսակով՝ արագացված մրցույթով փորձում են հասցնել ավարտի, քանի որ ունենք շատ	

			բողոքներ և դիմումներ:	
31.		Վերելակային տնտեսության արդիականացումից բացի, դիսպետչերային կենտրոնների ստեղծման հետ զուգահեռ ունենալ դիսպետչերական կայանում տեղեկատվություն բոլոր վերելակների մասին և արագ արձագանքման կենտրոն:	Մեր վերելակների բարեփոխման ծրագիրը պլանավորում է ունենալ էլեկտրոնային կառավարման հաշվարկման կենտրոն բոլոր վերելակների համար:	
32.		Ներդպրոցական ոլորտում քննարկումների կազմակերպում:	Առաջարկը գրավոր ներկայացրեք Հանրակրթության վարչություն:	
33.	**Մովսես Արիստակեսյան** (19.11.2018թ. հ.18/84695 դիմում)	Երևան քաղաքի սանիտարական մաքրման համար պատասխանատու «Սանիտեք» ընկերության կողմից մատուցվող ծառայությունների համար բյուջեում ինչ ծախսեր են նախատեսված: Եթե կան այդպիսիք, ապա ինչպես են վերահսկվում դրանց ծախսումները: Իսկ եթե չկան, ապա պայմանագրով ինչպես են կարգավորվում պարտադիր նորմերի բաղկացուցիչ մաս կազմող բարձրահարկ շենքերի աղբախցերում ջրի ծորակների առկայության, դրանք լվացվող մակերեսով երեսապատման, դրանք պարբերաբար մաքրման ու լվացման, ախտահանման և դեռատիզացիայի հարցերը: Ում իրավասությունն է պարտադիր նորմերի այդ բաղադրիչի կատարումը:	Աղբախցերը վերականգնելը չափազանց բարդ խնդիր է, քանի որ աղբախցերից բացի վնասված են ամբողջ աղբատար խողովակները: Որպես այլընտրանք դիտարկվել է աղբախցերը շահագործումից հանելու և աղբամաններով փոխարինելու հարցը:	
34.		Կան արդյոք Երևանի մետրոպոլիտենի ընդլայնման ծրագրեր և ինչպիսիք են դրանք:	Առկա է Աջափնյակի կայարանի կառուցման նախագիծ և իրատեսական է, եթե լինի 150 մլն. ՀՀ դրամից ավել գումար: Այդ միջոցների հայթայթման համար հստակ աշխատանքներ են տարվում:	
35.		Ինչ է նախատեսվում կատարել բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների նկատմամբ վստահության բարձրացման և գործունեության թափանցիկության ապահովման ուղղությամբ:	Ձեր նշած նախագիծը կառավարության կողմից մշակված նախագիծ է: Համատիրությունների հետ աշխատանքը կրում է շարունակական բնույթ:	

36.		Նախագծերով նախատեսվում են կարիքավոր, կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, աղքատ, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց համար սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրերի իրագործում: Որքանով են դրանք հասցեական և արդյունավետ լինելու:	Այս հարցը լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի, քանի որ ասելիքն այս կապակցությամբ բավականին շատ է: Պետության կողմից պատվիրակված լիազորություններից բացի, Երևան համայնքի բյուջեի միջոցների հաշվին Երևանի քաղաքապետարանը իրականացնում է ծրագրեր, որոնց մեջ ընդգրկված են առաջնահերթ տարեցները, հաշմանդամություն ունեցող անձիք, բազմազավակ և բազմամարդ ընտանիքները, կարիքավոր սիրիահայերը, անօթևանները, Հայրենական պատերազմի վետերանները, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքները, 1-ին և 2-րդ կառքի հաշմանդամություն ձեռք բերած անձիք և այլն: Ծերերը ես առաջնահերթ նշեցի, որովհետև քաղաքապետի և Հ. Սարգսյանի հանձնարարականով առաջին իսկ օրերից հանձնարարական է տրվել այս ուղղությամբ լրացուցիչ ջանքեր ներդնել: Կան ծրագրեր, որոնք դեռևս քննարկման փուլում են: Ներկայումս կան 4500-ից ավելի միայնակ տարեցներ, և տարեցներ, որոնք որոշակի պատճառներով հաշվառված չեն, բայց դարձյալ նրանք աղքատության շեմին են գտնվում: Հասարակական կառույցների հետ փոխգործակցությամբ, երկկողմ ֆինանսավորմամբ և ներդրումներով գործարկում ենք մոտ 19 բարեգործական ճաշարաններ, «Առաքելություն Հայաստանի» հետ	

			փոխգերծակցությամբ տնային սպասարկում է իրականացվում: Սակայն դա բավարար չէ, ռեսուրսները չեն բավականացնում որ շաբաթական գոնե 2 անգամ սոցիալական սպասարկողը կամ խնամակալը այցելի: Հասցեականության առումով, անշուշտ մենք փորձում ենք ըստ սոցիալական խմբերի, և ըստ կարիքի գնահատման տնային այցելությունների և այլնի միջոցով հնարավորինս ապահովել դրանց հասցեականությունը: Մեր կողմից արդեն իսկ մշակվել են Երևան համայնքի կողմից տրվող սոցիալական աջակցությունների տրամադրման չափորոշիչներ:	

ՏԵՂԵԿԱՆՔ-ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՉԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առաջարկության, առարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության և/կամ առարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	**Իզաբելլա Աբգարյան** «Իմ քայլը» խմբակցության անդամ 07.12.2018թ. գրություն	Երևանի զարգացման 2019թ. գերակայությունների 3-րդ կետում նշված «մասնակցային կառավարման մշակույթի ձևավորման» շրջանակներում առաջարկում եմ Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկում իրականացնել մասնակցային բյուջեի համակարգի պիլոտային կիրառում: Այս համակարգը հաջողությամբ կիրառվում է եվրոպական մի շարք երկրների քաղաքներում և հանդիսանում է ժողովրդավարական կառավարման արդի մոդել: Հաշվի առնելով, որ Երևանում 2019-ին այն կիրառելը բարդություններ կառաջացնի, քանի որ նախատեսված չի եղել 2019-ի բյուջեն մշակելիս, առաջարկում եմ այն պիլոտային կարգով իրագործել վարչական	Առաջարկը չի ընդունվել: Մասնակցային կառավարման բյուջեի համակարգի պիլոտային կիրառումը վերաբերում է Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի նախագծին: Համապատասխան տեղեկատ-վությունը տե՛ս «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ստացված առաջարկությունների, առարկու-թյունների, հարցադրումների և դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ տեղեկանք-ամփոփաթերթում:	

		շրջաններից մեկում: Իսկ քաղաքի մասշտաբով ներառել հնգամյա զարգացման ծրագրում: Տեղեկացնում եմ նաև, որ նախագիծն արդեն իսկ մանրամասն ներկայացրել եմ արաբկիր վարչական շրջանի ղեկավարին և ստացել նախնական համաձայնություն: Գաղափարը քննարկման եմ դրել նաև սոցցանցերում՝ ստանալով լայն հանրային հավանություն և ոգևորություն:		
2.		Երևանի 2019թ. զարգացման ծրագրի «Շինարարություն և բարեկարգում» բաժնի «Մայթերի վերանորոգում և բարեկարգում» (էջ 18) կետում հավելել նաև երթևեկելի փողոցների մայթեզրերի ազատումը կառուցված, տեղադրված պատնեշներից: Տնտեսվարողների կողմից մայթեզրերի պատնեշումը խոչընդոտէ հանդիսանում կայանված մեքենայից դեպի մայթ իջնելուն, որի արդյունքում ուղևորները ստիպված են լինում իջնել դեպի երթևեկելի մաս՝ վտանգելով թե իրենց կյանքը, թե նրանց չնկատած ընթացող մեքենաներին և ճանապարհային երթևեկության արհեստական դանդաղեցում ստեղծում տվյալ հատվածում: Առավել ծանր վիճակում են աջակողմյան ղեկով մեքենաների վարորդները, որոնք այդպիսով զրկվում են առհասարակ մեքենայից դուրս նայելու հնարավորությունից և, ստիպված կայանելով մայթի եզրից հեռավորության վրա, բարդություն են	Առաջարկը չի ընդունվել: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Քաղաքաշինություն և ճարտարապետություն» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ բաժնում» 2-րդ կետով նշվում է, որ ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության խստացմանը զուգահեռ անհրաժեշտ է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ: Նորմաներով եզրաքարերի բարձրությունը սահմանված է 15սմ, սակայն անհրաժեշտությունից ելնելով վտանգավոր շրջադարձների և այլ բարդ հանգույցներում	

		ստեղծում նրանց հետևի մասում կայանողներին: Նույն՝ մայթեզրերի հետ կապված ևս մեկ խնդիր է հանդիսանում մայթերի եզրաքարերի նորմայից բարձր լինելը, որի արդյունքում կամ կրկին հնարավոր չի լինում դուրս գալ մեքենայից դեպի մայթ, կամ էլ ուղևորները անզգուշորեն վնասում են մեքենաների դռները՝ հարվածելով եզրաքարերին:	տեղադրվում են բարձր եզրաքարեր:	
3.		«Սոցիալական ապահովություն» բաժնում ներառել կամավորության խթանումը և ներհամայնքային կյանքի (community life) զարգացման նպատակով՝ համայնքի բնակիչների իրազեկումն ու ակտիվ ներգրավումը սոցիալական ծրագրերում: Միևնույն ժամանակ խրախուսել վարչական շրջանների սոցապահովության բաժինների համագործակցությունը բարեգործական ՀԿ-ների և հիմնադրամների հետ:	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Սոցիալական ապահովության» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում ավելացվել է հետևյալ կետը. Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
4.		«Առողջապահություն» բաժնում ներառել մայրության և մանկության	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Առողջապահության» ոլորտի «2019

		առողջությանն ուղղված առանձին կետ: Մասնավորապես, կրծքով կերակրման և մաքուր օդին մայրերի և երեխաների հնարավորինս շատ ժամանակ անցկացնելու նպատակով առաջարկում եմ քաղաքային զբոսայգիներում բացել «Մոր և մանկան» անկյուններ, որտեղ պայմաններ ստեղծված կլինեն երեխային կրծքով կերակրելու և նրա հիգիենայի կարիքները պատշաճ հոգալու համար: Նշեմ, որ նախնական պայմանավորվածություն եմ ձեռք բերել առաջին անկյան ստեղծման շուրջ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ՝ որպես իրականացման վայր ընտրելով Կիրովի անվան զբոսայգին: Ծրագրի իրականացման համար Երևանի քաղաքապետարանը կարող է համագործակցել ինչպես ՅՈՒՆԻՍԵՖ-ի այնպես էլ այլ միջազգային դոնոր կազմակերպությունների հետ կապ հաստատել:		թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում ավելացվել է հետևյալ կետը. Կրծքով կերակրման և մաքուր օդին մայրերի և երեխաների հնարավորինս շատ ժամանակ անցկացնելու նպատակով քաղաքային զբոսայգիներում «Մոր և մանկան» անկյունների ստեղծում, որտեղ կլինեն համապատասխան պայմաններ երեխային կրծքով կերակրելու և նրա հիգիենայի կարիքները պատշաճ հոգալու համար:
5.		«Մշակույթ» կամ զբոսաշրջությանն առնչվող բաժնում առաջարկում եմ ներառել Երևանի ու երևանցիների մասին պատմող, զբոսաշրջիկների համար հետաքրքիր նոր վայրերի կազմակերպումը: Որպես գաղափար առաջարկում եմ զբոսայգիներից, հրապարակներից կամ այլ վայրերից մեկում ստեղծել «Ժողովրդական ավանդույթների» համալիր, որը կներառի մեր ժողովրդին բնորոշ և	Առաջարկը չի ընդունվել: «Ժողովրդական ավանդույթներ» համալիր ստեղծելու առաջարկը քննարկվել է Երևանի քաղաքապետարանի համապա-տասխան ստորաբաժանումների կողմից: Ծրագիր-առաջարկ ներկայացնելու դեպքում կքննարկվեն դրա իրագործելիության հնարավոր-ությունները:	

		զբոսաշրջիկների համար հետաքրքիր ավանդույթների և սովորույթների բրոնզե հուշարձաններ: Երևանի պատմության թանգարանում ցուցադրվում է Թութ թափ տալու արարողության փոքր քանդակը, որը կարող է դառնալ մեծ կրկնօրինակման գաղափար: Այդպիսի հուշարձաններից կարող են լինել նաև Գորգ լվացող ընտանիքը, Բուրդ չփխող կինը, Սկուտեղով սուրճը ձեռքին՝ դռան մոտ կանգնած հարևանուհին: Սա ընդամենը մի քանի գաղափարներ են: Վստահ եմ, որ այս ցանկը կարող է համալրվել և զբոսաշրջիկների լուսանկարվելու համար հետաքրքիր վայր դառնալ: Այնտեղ կարող է տեղափոխվել արդեն իսկ Երևանի զարդարող Նարդի խաղացող տղամարդու արձանը:		
6.	**Անի Սամսոնյան** Երևանի ավագանու «Լույս» խմբակցության անդամ 11.14.2018թ. հ.Լ-3/12 գրություն	Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան հ. 10 շենքի 1-ին, 2-րդ մուտքերի վերկանգնման-ամրացման աշխատանքների իրականացում (Ինձ ուղղված ձեր պատասխանը կցված է Առդիր 1-ով):	Առաջարկն ընդունվել է: Արզումանյան 10 շենքը ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ունի 3-րդ կարգի վթարայնության աստիճան: Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակվում ներդրումային ծրագիր՝ համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ նոր բազմաբնակարան շենք կառուցելու նպատակով: Սակայն շենքի սեյսմիկ վիճակի վատթարացման պարագայում կքննարկվի շենքի առաջին և երկրորդ մուտքերի վերականգման և ամրացման հարցը:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

7.		Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրում, ավարտական ակտի (շահագործման թույլտվության) ձևակերպում, տանիքի և բազրիքների տեղադրում: Երկարաժամկետ պլանում դիտարկել նաև շենքում վերելակ տեղադրելու հարցը (Շենքի լուսանկարները՝ Առդիր 2, 3, 4, 5):	Առաջարկը ընդունվել է: Նազարբեկյան 48 (9 հարկանի) շենքի 9-րդ հարկը և տանիքը կառուցված չէ, տեղադրված չեն վերելակները, մուտքերի բազրիքները և մուտքերը հարդարված չեն: Հաշվի առնելով, որ շենքը կիսակառույց է, առաջարկում ենք 2019թ. ծրագրերի շրջանակներում պատվիրել շենքի տեխնիկական վիճակի հետազոտման աշխատանքներ և համապատասխան եզրակացություն ստալաց հետո ձեռնարկել միջոցներ՝	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
8.		Գյուղատնտեսական մթերքների իրացման նոր շուկայի ստեղծում, որը կարող է կարգավորել բացօթյա առևտրի խնդիրը՝ մասնավորապես քաղաքացիների առողջապահական անվտանգությունը, քաղաքի բնապահպանական, սանիտարական խնդիրը, ինչպես նաև՝ գյուղատնտեսական մթերքների առևտրով զբաղվող սուբյեկտների տնտեսական գործունեության և սոցիալական խնդիրը:	Առաջարկն ընդունվել է: Առաջարկությունը ներառված է Երևանի զարգացման 2019թ. ծրագրում: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Առևտուր և սպասարկումներ» ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնի 6-րդ կետում նշվում է, որ մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով նախատեսվում է դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցում: Իսկ նույն տեղում 4-րդ կետով նշվում է, որ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, բնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:	
9.		Նոր Նորք վարչական շրջանի 6-րդ զանգվածի Շոպրոն փողոցի հ. 8 շենքի տանիքի վերանորոգում: Դիմումը ստացել եմ շենքի բնակիչներից (Առդիր 6):	Առաջարկն ընդունվել է: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Կոմունալ տնտեսություն ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում նշվում է, որ կիրականացվի բազմաբնակարան բնակելի շենքերի շուրջ 60000քմ հարթ և 30000քմ թեք տանիքների վերանորոգում: Նշված հասցեն ներառված է ծրագրում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
10.		Մալաթիա-Սեբաստիա համայնքի Ռաֆֆու փողոցի հ. 99 շենքի 1-ին մուտքի բարեկարգում:	Առաջարկն ընդունվել է: Երևանի զարգացման 2019թ. ծրագրի «Կոմունալ տնտեսություն ոլորտի «2019 թվականին նախատեսվող աշխատանքներ» բաժնում նշվում է, որ նախատեսվում է հիմնանորոգել բազմաբնակարան շենքերի շուրջ 700 շքամուտք: Նշված հասցեն ներառված է ծրագրում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
11.		Դավթաշեն վարչական շրջանի մեջ ներառված սեփական բնակելի հատվածի 7-րդ փողոցի սկզբնամասի (16 թաղամասից դեպի այդ փողոց	Առաջարկն ընդունվել է: Դավթաշեն վարչական շրջանի 7-րդ փողոցի սկզբնամասի (16 թաղամասից դեպի այդ փողոց ընկած	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		ընկած հատվածը) ասֆալտապատում և փողոցային լուսավորության ապահովում (այս առաջարկը մերժվել է դեռևս նախորդ տարի 2018 թվականի բյուջեում ներառելու համար):	հատվածը) ասֆալտապատումը և փողոցային լուսավորության ապահովումը կներառվի Դավթաշեն վարչական շրջանի 2019 թվականի զարգացման ծրագրում:	
12.		Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեում բակի բարեկարգում՝ մասնավորապես նստարանների և խաղահրապարակի տեղադրում:	Առաջարկը չի ընդունվել, քանի որ Ծիծեռնակաբերդի խճուղի 1/3 հասցեն չունի բակային տարածք, քանի որ կառուցված են ավտոտնակներ: Ավտոտնակների տանիքը, որպես բակային տարածք բարեկարգելու համար անհրաժեշտ է սեյսմիկ հետազոտություն: Սակայն անմիջապես հարևանությամբ (Ծիծեռնակաբերդի խճուղի 1/2, որը 1/3 հետ միասին կազմում է մեկ շենք) գոյություն ունի բարեկարգ բակային տարածք:	
13.	Ա.Կարապետյան, Գ.Վարդանյան, Գ.Մելքոմյան, Կ.Անտաշյան, Ս.Մկրտչյան «Իմ քայլը» խմբակցության անդամներ 14.12.2018թ. գրություն 01/26	*Երևանը 2800 տարեկան է:* Քաղաքի զարգացման ծրագրի մեջ սա նշելու ռացիոնալ իմաստը չեմ տեսնում, բայց նույնիսկ եթե պետք է նշել, ապա առաջարկում եմ հասարակագիտորեն ավելի հիմնավոր երկու տարբերակ: 1. 2018 թ. Երևանը նշում է իր 2800 ամյակը: կամ 2. /որը գիտականորեն ավելի ընդունելի տարբերակ է/ Էրեբունի ամրոցը, որից, համարվում է, սկիզբ է առնում Երևան քաղաքի անունը, հիմնադրվել է 2800 տարի առաջ:	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը հանվել է: Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:

14.		«հանրապետություն» բառը իներցիայով մնացել է Խորհրդային ժամանակներից, երբ Հայաստանը Սոցիալիստական հանրապետություններից մեկն էր, և տեքստերում նշում էին «հանրապետության»: Հիմա պետք է նշել «երկրի» կամ եթե նշում ենք «հանրապետություն», ապա պետք է լինի Հայաստանի Հանրապետություն:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն: Ավելացվել է «Հայաստանի» բառը:
15.		*Երևանը հանդիսանում է տարածաշրջանային տուրիստական կենտրոն:* Այս նախադասությունը առաջարկում եմ հանել: Կամ գոնե մանրամասնել է պետք՝ թե ինչ տարածաշրջանի համար է ու ինչի հիման վրա ենք ասում, որ կենտրոն է:	Առաջարկն ընդունվել է:	Երևանը հանդիսանում է տարածաշրջանային տուրիստական կենտրոն նախադասությունը հանվել է: Ծրագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:
16.		*Ծրագիրը բովանդակում է քաղաքային տնտեսության ոլորտների ներկա վիճակը, հիմնախնդիրները և զարգացման հիմնական ուղղությունները:* Այստեղ գրվածի ու ծրագրի մյուս կետերի մեջ անհապատասխանություն կա: Ծրագրում գրված է «իրավիճակ-հիմնախնդիր- կատարվելիք աշխատանքներ» կառուցվածքով: Այստեղ նշվում է «հիմնական ուղղություն»: Առաջարկում եմ համապատասխանեցնել իրար այստեղ գրվածը ու իրական կառուցվածքը: Ընդհանրական նկատածս օրինաչափությունն այն է, որ հաճախ «հիմնախնդիրներն» ու կատարվելիք աշխատանքները միմյանց չեն	Առաջարկը չի ընդունվել: Ծրագրում ներառված են Երևանի զարգացման 2019 թվականի գերակայությունները, որոնք հաշվի առնելով էլ ներկայացված են 2019 թվականին նախատեսվող աշխատանքները: Ծրագրում ներառված են առկա հիմնախնդիրները, իսկ 2019 թվականին կատարվելիք աշխատանքները նախատեսվել են՝ հաշվի առնելով առկա ռեսուրսներն ու հնարավորությունները, որոնք, ակնհայտ է, որ չեն կարող բավարար լինել մեկ տարվա ընթացքում բոլոր հիմնախնդիրների լուծման համար:	

		համապատասխանում, այսինքն մեկը մեկից չի բխում:		
17.		Բազմաբնակարան շենքերի *հին և անսարք* վերելակների հիմնախնդրի լուծում: Առաջարկվում է ավելացնել <*հին և անսարք*> բառերը:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի զարգացման 2019 թվականի գերակայություններ բաժնում «Հին և անսարք» բառերի ներառումը նպատակահարմար չէ: Համապատասխան ծրագրի մշակման փուլում տեխնիկական բնութագրում և նկարագրում կտրվեն բոլոր մասնագիտական ձևակերպումները:	
18.		*բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում:* Գերակայություններում այս ձևակերպումն անորոշ է, և պարզ չէ թե ինչ նկատի ունենք	Առաջարկն ընդունվել է: Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում գերակայության իմաստը հետևյալն է՝ Շենքերի և բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովմանն ուղղված աշխատանքները հանդիսանում են գերակա ուղղություն:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
19.		«Գլխավոր հատակագիծ» չէ, պետք է մշակվի գոտեւորման հատակագիծ (Zonning plan), ավելի ճիշտ, մեկնարկեն մշակման աշխատանքները	Առաջարկն ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

20.		Կտրականապես դեմ եմ «գերակա հանրային շահ» գործիքի կիրառմանը, բացառությամբ ռազմավարական նշանակության բացառիկ նախագծերի	Առաջարկը չի ընդունվել: «Գերակա հանրային շահ» գործիքի կիրառումը Երևան քաղաքում կոնկրետ «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ծրագրի թեմայով, կիրառվել է նախկինում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներով և ներկայումս շրջանառության մեջ դրված է նաև դրա ընթացքի հետ կապված նոր ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	
21.		*Երևան քաղաքի 33-րդ թաղամաս* Շատ վատ ծրագիր է: Ընդհանրապես, նմանատիպ բոլոր խոշոր ծրագրերը պետք է վերանայվեն եւ անպայման հաստատվեն ավագանու կողմից՝ բազմակողմանի էքսպերտային ուսումնասիրության եւ հանրային քննարկումներից հետո:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի 33-րդ թաղամասի ծրագիրը նույնպես հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցվել է թաղամասի կառուցապատման սխեման: Երևան համայնքի կողմից ծրագրի վերանայման և ավագանու կողմից հաստատման Ձեր ներկայացված առաջարկը պետք է քննարկվի իրավական հարթության մեջ, որից հետո անդրադառնալ դրա քաղաքաշինական լուծումների քննարկմանը:	
22.		Ոչ մի գլխավոր հատակագիծ, այլ գոտեւորման: Պետք է անցում կատարել քաղաքաշինական ոլորտում նախագծման, կառավարման եւ որոշումներ կայացնելու ժամանակակից եղանակների: Գոտեւորման (zonning) գործիքների	Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		միջոցով ցանկացած հողակտոր կամ կառույց կստանա կարգավիճակ, որի մասին տեղեկությունը կլինի բաց եւ հասանելի, կնվազեն կոռուպցիոն ռիսկերը, ցանկացած ներդրող հստակ կտեղեկանա ինչ հնարավորություններ եւ սահմանափակումներ կան քաղաքի ցանկացած հատվածում:	փաստաթղթի ստեղծում:	
23.		*Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման անհրաժեշտություն* Անհասկանալի ձեւակերպում է: Քաղաքը արդեն ունի կերպար:	Առաջարկն ընդունվել է: Այո քաղաքն ունի կերպար, բայց խոսքը վերաբերվում է մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածներին, որոնք անհրաժեշտ է հնարավորության դեպքում ներդաշնակեցնել քաղաքի կերպարին, կամ գտնել լուծումներ դրանք ամբողջականացնելու համար:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
24.		*շենքերի արտաքին տեսքի կարգաբերման ծրագրերի իրականացման անհրաժեշտություն:* Անհասկանալի եզր է, ի՞նչ է նշանակում, կարգի՞ բերել	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
25.		*Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:* Առաջարկում ենք լրացնել այսպես. Բացառվելու է կապիտալ շինարարությունը հանրային տարածքներում եւ կանաչ գոտիներում:	Առաջարկն ընդունելի է մասամբ: Առաջին նախադասությամբ արտահայտված առաջարկը ընդունելի է: Երկրորդ նախադասությամբ՝ բնակիչների համաձայնության հետ կապված թեմայի վերաբերյալ տեղկացնենք, որ գործում է ՀՀ կառավարության կողմից ընդունված	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		Հանրային կանաչ տարածներում նախկինում տրված վարձակալման պայմանագրերը կուսումնասիրվեն։ Կմեկնարկի պուրակների եւ այգիների մաքրման եւ տարատեսակ կառույցներից ազատելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որպես պիլոտային նախագիծ գործընթացը կսկսվի Օղակաձեւ այգուց, Մոսկովյան-Տերյան պուրակից եւ Հրազդանի կրճից։ Բացառվելու է որեւէ ծրագրի իրականացում համայնքային ընդհանուր օգտագործման տարածքներում (բակերում)՝ առանց բնակիչների մեծամասնության գրավոր համաձայնության	28.10.1998թ. N660 որոշումը «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» , հետևաբար այս հարցը պետք է քննարկել նաև այդ որոշմամբ հաստատված կարգի դիտարկմամբ և այլ նոր, պարզ մշակվելիք մեխանիզմների կիրառմամբ։	
26.		*Կբացառվի ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը՝ նոր կառուցվող ապօրինի կառույցների նկատմամբ։* 2019-ից հետո՞ կառուցվող, ժամանակահատվածը պարզ չէ։ Նաև պարզ չէ, թե արդյոք միայն կառուցման ժամանակի՞, թե՞ նաև վայրի կամ այլ չափորոշիչներով է բացառվելու օրինականացումը։ Առաջարկում եմ հստակեցնել	Առաջարկն ընդունվել է։ Սկսած 2019թ. վերանայվելու նախկինում գործընթացի հիմք հանդիսացող ՀՀ կառավարության որոշումը։	
27.		Նախատեսվում է մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն *(City Developmetn Strategy),* Առաջարկվում է լրացնել հետևյալ անգլերեն ձևակերպումը	Առաջարկն ընդունվել է։ Առաջարկվող լրացման՝ «City Developmentn Strategy» կատարումն ընդունելի է։	Ավելացվել է նախադասությունում (City Developmetn Strategy) անգլերեն տերմինը։

		նախադասության մեջ:		
28.		*Անցումները հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար, կլինեն լուսավորված և անվտանգ:* Ժամանակակից քաղաքներում վաղուց փորձարկվել եւ լայնորեն կիրառվում են փողոցների վերակառուցման եւ վերակահավորման արդի մեթոդներ, որոնց արդյունքում մայթերը լայնանում են, ավելանում է կանաչապատ տարածքը, մեքենաների կայանելը դառնում է անվտանգ եւ հարմար, հատկացվում են արահետներ հեծանիվների համար: Քննարկվելու է երկարաժամկետ եւ փուլային ծրագիր իրականացնելու հնարավորությունը: Քննարկել որոշ փողոցները մշտապես կամ պարբերաբար հետիոն դարձնելու հնարավորությունը	Առաջարկն ընդունվել է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
29.		*Նախատեսվում է իրականացնել Երևանի «Փոքր կենտրոնի» սահմանների նախագծի մշակում («Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո):* Անիմաստ բան է Եթե մշակվի գոտեւորման հատակագիծ, բոլոր հարցերի պատասխանները հստակ կձեւակերպվեն, բոլոր չափանիշները, սահմանները եւ այլն ստատումից	Առաջարկը ընդունվել է: Սակայն, այն ենթադրում է օրենդրական փոփոխությունների և դրանից բխող մի շարք իրավական ակտերի վերանայման երկարատև պրոցես պահանջող գործընթացներ, որից հետո դրանց հիման վրա նոր առաջարկվող ծրագրային փաստաթղթի ստեղծում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		հետո):		
30.		*«Հին Երևան»* Լրջորեն պետք է վերանայել նախագիծը, որը, ի դեպ, դեռ հաստատված չէ	Առաջարկը չի ընդունվել: «Գերակա հանրային շահ» գործիքի կիրառումը Երևան քաղաքում կոնկրետ «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծման ծրագրի թեմայով, կիրառվել է նախկինում ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումներով և ներկայումս շրջանառության մեջ դրված է նաև դրա ընթացքի հետ կապված նոր ՀՀ կառավարության որոշման նախագիծ:	
31.		*Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցման ծրագիրը կյանքի կոչելու համար ՀՀ կառավարության 22.03.2018թ. N332-Ն «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» որոշմամբ տարածքում առկա գույքերի օտարման գործընթացով (որի համար սահմանված ժամկետ է 2023թ. հունվարի 1-ը) 2019 թվականին նախատեսվում է իրականացնել նշված աշխատանքները ներդրողների կողմից:* Շատ վատ նախագիծ է:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի 33-րդ թաղամասի ծրագիրը նույնպես հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից համաձայնեցվել է թաղամասի կառուցապատման սխեման: Երևան համայնքի կողմից ծրագրի վերանայման և ավագանու կողմից հաստատման Ձեր ներկայացված առաջարկը պետք է քննարկվի իրավական հարթության մեջ, որից հետո անդրադառնալ դրա քաղաքաշինական լուծումների քննարկմանը:	
32.		*ՀՀ կառավարության կողմից ընդունված ներդրումային ծրագրի առաջին փուլով նախատեսված Ամիրյան փողոցի մոտ բազմաբնակարան շենքի*	Առաջարկը չի ընդունվել: Երևան քաղաքի Ամիրյան փողոցի մոտ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ներդրումային ծրագրով	

		Շինարարական աշխատանքների ավարտ և երկրորդ փուլով՝ Անրի Վերնոյի փողոցի մոտ Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնի շենքի կառուցման նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հիման վրա շինարարության սկիզբ: Նորից բազմահարկ: Պետք է անպայման վերանայել նախագիծը	նոր բազմահարկ բնակելի շենքի նախագիծն արդեն համաձանեցվել է, տրամադրվել է շինարարության թույլտվություն և շինարարական աշխատանքների հիմնական մասն իրականացված է:	
33.		*նոր անցումների կառուցում:* առաջարկվող լրացում:	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ նշված կետը ամբողջությամբ հանվել է հանրային լսումների ընթացքում:	
34.		*ընթացիկ քաղաքաշինական քարտեզի կազմման աշխատանքներ:* Առաջին անգամ եմ տեսնում այս եզրը, սա՞ ինչ բան է	Առաջարկը ընդունվել է: «ընթացիկ քաղաքաշինական քարտեզ»-ի վերաբերյալ պարզաբանում /սակայն տվյալ կետը դուրս է բերվել 2019թ. ծրագրից/ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարը կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը, որի սահմանված կարգով հաստատված պատճենը կցվում է համայնքի ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերին, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը: «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 46-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքի սեփականություն համարվող գույքը համայնքի ղեկավարը ենթարկում է	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

			ամենամյա պարտադիր գույքագրման, որը ներկայացվում է ավագանու հաստատմանը:	
35.		*քաղաքի գբոսաշրջության զարգացման քաղաքաշինական հայեցակարգի մշակում:* Կարծում ենք անհասկանալի է, թե ինչ է այս հայեցակարգը ենթադրում: Առաջարկում եմ պարզաբանել:	Առաջարկն ընդունված է:	Նշված նախադասությունը հանվել է ծրագրից:
36.		*առաջին զանգվածային տիպարային բնակելի շենքերի և թաղամասերի վերակառուցման հիմնախնդիրների լուծում:* Այս մասն անհասկանալի է՝ խոսքը հի՞ն շենքերի ու թաղամասերի վերակառուցման (վերանորոգման) մասին է, թե՞ նորերի կառուցման: Միաժամանակ իրատեսական չէ, որ մեկ տարում հիմնախնդիրը կլուծվի: Առաջարկում ենք ձևակերպումը հստակեցնել:	Առաջարկը չի ընդունվել: Հարցը վերավերվում է ծրագրային մշակումներին, այլ ոչ թե իրականացմանը:	
37.		Ավելացնել նոր կետ *գերեզմանոցների խնդիրը, մշակվելու են նոր կարգավորումներ, խիստ վերահսկողություն, նոր տարածքները պարտադիր, իսկ գոյություն ունեցողները հնարավորության սահմաններում անջատվելու են ծառապատ գոտիներով:*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
38.		Ավելացնել նոր կետ *Մշակույթի նախարարության հետ*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան	

		միասին պետության կողմից պաշտպանվող կվերանայենք Երեւանի տարածքում գտնվող հուշարձանների ցանկը: Կարեւոր է նաեւ որ պահպանվել ժառանգությունը ոչ թե որպես առանձին շենքեր այլ որպես պատմական միջավայր, նույնիսկ եթե այն խաթարված է	քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
39.		Ավելացնել նոր կետ *Քաղաքաշինության փաստաթղթավորման համակարգի բարեփոխում՝ որը կներառի քաղաքային իշխանության գործառույթների հստակեցում, ինչպես՝ նոր լիազոր քաղաքաշինական խորհուրդի ստեղծում, որոշում ընդունելու մեխանիզմների հստակեցում, մեծածավալ քաղաքաշինական որոշումների ընդունման քաղաքական պատասխանատվության անհրաժեշտություն /ավագանու որոշման միջոցով/, վերահսկողության նոր մեխանիզմի ներմուծում, և այլն:*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
40.		Ավելացնել նոր կետ *այսուհետ կբացառվի քաղաքացիների գույքի կամ հողի օտարումը որեւէ ծրագիր իրականացնելու համար «պետության գերակա շահ» հիմնավորումով, բացառությամբ ազգային անվտանգության կամ ռազմավարական նշանակության բացառիկ դեպքերից: Կարիք կա նաեւ*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և	

		վերանայել նախինում հանրային գերակա շահ հայտարարված տարածքների խնդիրը։	հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
41.		Ավելացնել նոր կետ *հատուկ ուշադրություն ենք դարձնելու Երեւանի պահպանված պատմական հատվածներին, այդ թվում Կոնդին*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
42.		Ավելացնել նոր կետ *Կենտրոնում այսուհետ չեն կառուցվի բազմահարկ բնակելի շենքեր, գոյություն ունեցող, բայց դեռ չիրականացված նախագծերը կվերանայվեն օրինականության տեսակետից իրականացնել Երեւանի շենքերի մաքրման, վերականգման, կցակառույցներից ազատելու, միասնական տեսքի բերելու երկարաժամկետ փուլային ծրագիր, որը հիմնված կլինի գիտական մասնագիտական նախագծերի վրա եւ կֆինանսավորվի հատուկ ստեղծվող հիմնադրամի կողմից։*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
43.		Ավելացնել նոր կետ *Վերանայել Երեւաննախագիծ ինստիտուտի գործառույթները, կառուցվածքը*	պատրաստակամ ենք կազմակերպել մասնագիտական քննարկում Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետի մոտ՝ ներգրավելով կառուցվածքային	

			ստորաբաժանումների ղեկավարներին և Երևան քաղաքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի ներկայացուցիչներին:	
44.		*Երևանն առավել գունագեղ, էթետիկ, համահունչ կահավորված ու հարմարավետ* միշտ չէ, որ գունագեղը լավ էվետ դարձնելուն:	Առաջարկն ընդունվել է: Համամիտ ենք, որ միշտ չէ որ գունագեղը լավ է: Գունագեղ բառով նկատի ենք ունեցել սև կամ մուգ երանգների մեջ ձևավորում չկատարելու միտումը:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
45.		*Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:* Չեմ կարծում , որ լավ միտք է այս հարցը թողնել բնակիչների հույսին: Այն, ինչ հիմա տեսնում ենք, հենց բնակիչների մասնակցությամբ է արվել: Սա խիստ մասնագիտական որոշումների հարց է	Առաջարկը չի ընդունվել: Հիմնախնդիրն առնչվում է միջպետական, հանրապետական միջոցառումների ժամանակ արդեն իսկ հաստատված ձևավորման չափորոշիչների (էսքիզների) համապատասխան բնակչության ներգրավածությանը սահմանված կարգի համաձայն օժանդակելու, աջակցելու միջոցառումների ձևավորմանը՝ էլ ավելի տոնական տեսք ապահովելու, բազմաբնակարան շենքերի պատշգամբների, խանութների և այլ օբյեկտների ձևավորմանը մասնակցության համար:	
46.		*Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն* Ֆասադային բառը փոխարինել Ճակատային բառով:	Առաջարկն ընդունվել է:	Նշված նախադասության մեջ ֆասադային բառը փոխարինվել է ճակատային բառով:

47.		*Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն* Պետք չէ, որ պետությունը զբաղվի նկարազարդումով, շատ վատ արդյունքներ ունենք, գրեթե 99% սարսափելի են, այն պարագայում, որ փողոցային արվեստը /street art/ արդեն ձեւավորված լուրջ տեսակ է զարգացած քաղաքներում, մեր մոտ հիշեցնում է վատ եւ սիրողական մի բան	Առաջարկը չի ընդունվել: Հարցն առնչվում է ոչ թե «փողոցային արվեստին», այլ շենքերի ճակատային հատվածները անհրաժեշտության դեպքում ավելի հետաքրքիր դարձնելուն և միապաղաղությունից դուրս գալուն, ավելի գողտրիկ անկյունները նկարազարդելուն: Կամարանցումների նկարազարդումն իր մեջ ներառում է առջին հերթին վերանորոգման աշխատանքներ և հետո միայն հետաքրքիր միջավայրի ստեղծագործություն՝ նկարազարդման միջոցով: Աշխատանքներն իրականցվում են մրցույթային կարգով:	
48.		*Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն:* Այն, ինչ արվել է, շատ թերի է, ավելի հեշտ է սկսել նորից՝ համագործակցելով Մշակույթի նախարարության եւ ճարտարապետների հետ	Առաջարկն ընդունվել է: Պատմամշակութային շենքերի ինչպես նաև ճարտարապետական հետաքրքրություն ներկայացնող շենքերի գովազդային անձնագրերը մշակվում են համագործակցելով ՀՀ մշակույթի նախարարության, Երևանի գլխավոր ճարտարապետի և շահագրգիռ կազմակերպությունների մասնագետների հետ:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
49.		*Նախատեսվում է իրականացնել գովազդային վահանակների փոխարինում քաղաքային չափերի գովազդային վահանակներով:* Խնդրում եմ պարզաբանել, թե սա ինչ է նշանակում	Առաջարկն ընդունվել է: Նախատեսվում է մեծ չափերի (3X4; 3X6; 3X9) գովազդային վահանակների փոխարինում 1.2X 1.8; 1.5X3.0 և այլ չափերով, որոնց գովազդային մակերեսները չեն գտնվում երթևեկելի մասի վերին հատվածում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

50.		*Նախատեսվում է իրականացնել համապատասխան աշխատաքներ՝ ուղղված արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպմանը:* Պարզ չէ թե այս փառատոնն ինչով է քաղաքի համար կարևոր, առաջարկում եմ պարզաբանել	Առաջարկն ընդունվել է: Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնը ծանոթությունների հարթակ է միջազգային հեղինակավոր գովազդային կազմակերպությունների հետ: Կազմակերպվող վարպետության դասերի ընթացքում ուսանողները, գովազդային կազմակերպությունների ներկայացուցիչները ծանոթնում են գովազդային նոր ուղղություններին:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
51.		*Կշարունակվեն օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքները, կշարունակվի խիստ հսկողությունը մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:* Անհրաժեշտ նաեւ հանել փողոցներում տեղադրված այն վահանակները, որոնք խանգարում են քաղաքի կարեւոր առանցքների եւ համայնապատկերի միասնական ընկալմանը: Քննարկել Ճարտ վարչության եւ գլխ ճարտարապետի հետ	Առաջարկն ընդունվել է: Աշխատանքներն ընթացիկ են և ուղղված են ինքնակամ կամ ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերմանը և ապամոնտաժմանը: Նախատեսվում է մշակել Երևան քաղաքի գովազդի սխեման, որտեղ կվերանայվեն գովազդի չափորոշիչները: Գովազդի սխեմայի մշակման ընթացքում նախատեսվում է համագործակցել գլխավոր ճարտարապետի, գովազդային, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

52.		*Կիրականացվի կամարանցումների վերանորոգում և գունազարդում՝ Երևանի կամարանցումների պատշաճ և գեղեցիկ տեսքն ապահովելու նպատակով: Կիրականացվի կամարանցումների գույքագրման աշխատանքներ, կսահմանվի դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա կիրականացվեն վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:* Ինչպես գրել եմ վերեւում, դեմ եմ, այս գունազարդումը չունի որեւէ գեղարվեստական արժեք եւ հակասում է շենքերի ճարտարապետական տեսքին Կա՛մ մրցութային կարգով պետք է որոշվի	Առաջարկը չի ընդունվել: Կամարանցումների նկարա-զարդումն իր մեջ ներառում է առջին հերթին վերանորոգման աշխատանքներ և հետո միայն հետաքրքիր միջավայրի ստեղծագործություն՝ նկարազարդման միջոցով: Աշխատանքներն իրականցվում են մրցույթային կարգով:	
53.		*վարչական շրջանների կողմից իրականացվելու են նկարազարդման աշխատանքներ բակային տարածքներում:* Բակերի բարեկարգումը պահանջում է ձեռնարկել շատ ավելի կարեւոր քայլեր, նկարազարդումը ուղղակի միջոցների մսխում է Կա՛մ մրցութային կարգով պետք է որոշվի, կա՛մ հատուկ հանձնաժողովի որոշմամբ, որպեսզի որակյալ և ներդաշնակ գործեր լինեն: Լրացուցիչ հստակեցման կարիք կա:	Առաջարկը չի ընդունվել: Մայրաքաղաքի համաչափ զագացման սկզբունքից ելնելով վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորումը և բակային տարածքներում նկարազարդման աշխատանքներն իրականացվում են մրցույթային կարգով:	

54.		*Լանդշաֆտների ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:* Լանդշաֆտ բառը տեղին չէ, խոսքը, ըստ երեույթի, փոքր ճարտարապետական ձեւերի եւ փողոցների կահավորման մասին է	Առաջարկը չի ընդունվել: Խոսքը հենց առնչվում է փոքր ճարտարապետական ձևերով և փողոցների կահավորման համար անհրաժեշտ պարագաներով լանդշաֆտային կամ կանաչապատ առանձնացված միջավայրի ձևավորմանը:	
55.		*Լանդշաֆտների ձևավորման աշխատանքների շրջանակներում նախատեսվում է նոր լանդշաֆտային էսքիզների ձևավորում, այդ թվում նախատեսվում է տեղադրել նոր տիպի ծաղկամաններ, բազրիքներ, խոտածածկերի և ծառերի համար նախատեսված մետաղյա ցանկապատեր և այլն:* Ո՞վ պետք է կատարի էսքիզները: Պարտադիր է հայտարարել մրցույթներ	Առաջարկն ընդունվել է: Սահմանված կարգի համաձայն աշխատանքներն իրականացվում են մրցույթային կարգով:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
56.		*Երևան քաղաքի փողոցների, հրապարակների, այգիների կահավորման նպատակով նախատեսվում է համայնք-մասնավոր հատված համագործակցության արդյունքում քաղաքային կահույքի արդիականացման աշխատանքներ, նոր*	Առաջարկը չի ընդունվել: Քաղաքային կահույքի ձեռքբերումն իրականացվում է մրցույթային կարգով: Երևանյան ոճ ասելով նկատի ունենք քաղաքային կահույքի մեջ հայկական ճարտարապետական դետալների օգտագործման հանգամանքը:	

		նստարանների, աղբամանների գնում և տեղադրում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում՝ հաշվի առնելով երևանյան ոճի տարրերը: Կտեղադրվի շուրջ 130 զրուցարան: Չկա նման բան, երեւանյան ոճ: 1930 կամ 1950 թվականի նստարանը չի կարող դրվել 2019թ, առավելեւս, որ հնարավոր չէ նույն տեխնոլոգիան օգտագործել: Նոր կահույքը պետք է լինի ժամանակակից, արդիական, պարզ, հարմարավետ, ինչը եւ համարում եմ խիստ երեւանյան: Եթե կա մեկը, ով կարող է ուրիշ կերպ, բայց պարզ եւ հստակ ձեւակերպել, ինչ բան է երեւանյան ոճ, հաճույքով կլսեմ		
57.		*Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:* խնդրում եմ հստակեցնել, ինչ երեսապատելու մասին է խոսքը:	Առաջարկն ընդունվել է: Հենասյուները ներկվում են հատուկ ներկով, որը հնարավորինս բացառում է ինքնակպչուն կամ սոսնձի օգտագործմամբ հայտարարությունների փակցնելուն:	Ծրագրում երեսպատել բառը փոխարինվել է ներկվել բառով:

		Միգուցե, հատուկ ներկի՞		
58.		*Մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մետաղյա հենասյուները զերծ պահել գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշաներ և հայտարարություններ կպցնելուց, կպահպանվի նաև սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:* գրաֆիտիի՞ց	Առաջարկը չի ընդունվել: Գրաֆիտը դա ձեռքի օգտագործման համար ճնշման ազդեցությամբ ներկման միջոց է:	
59.		*15. Նախատեսվում է լոգոտիպերի մշակում, տարբեր միջոցառումների ժամանակ քաղաքի տոնական ձևավորման նպատակով՝ նախորոք մշակված հայեցակարգի և գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների կիրառմամբ:* *16. Նախատեսվում է շարունակել տոնական միջոցառումների, թեմատիկ բաներների, հրավիրատոմսերի, շնորհակալագրերի, տաղավարների, ֆլայերների, ինստալյացիաների, ստիկերների ձևավորումն ու կազմումը:* Անհրաժեշտ է հստակեցնել, թե հայեցակարգը և գեղարվեստական	Առաջարկն ընդունվել է: Ըստ միջոցառման առանձնահատկությունից, նշանակությունից, հոբելյանական կարևորությունից դիզայներական խմբի կողմից մշակվում է համապատասխան լոգոտիպեր, տոնական ձևավորման հայեցակարգ գունային լուծումներով և ներկայացվում է համաձայնեցման:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		բովանդակության պահանջներն ով կամ ովքեր են սահմանելու և ինչ մոտեցումներով		
60.		*Ավելացնել նոր կետ* Առաջարկում եմ վերանայել շինհրապարակների պարիսպների վրա փակցվող պաստառների ձևն ու բովանդակությունը, օրինակ վերցնելով արտասահմանյան հաջողված փորձը, այդ պաստառները պետք է տան ապագա կառույցի լիարժեք պատկերը, կարեւոր գծագրերը, պատվիրատուների, նախագծողների, կապալառուների մասին ամբողջկան տեղեկություններ	Առաջարկն ընդունվել է: Շինհրապարակներն առանձնացնող պաստառների ձևավորման մեջ ներառվում է նաև որպես պարտադիր պայման տեղեկատվություն կառուցապատողի, նախագիծը կատարող կազմակերպության, կապալառուի, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպխությունների անվանումները, ինչպես նաև ներկայացվում է ապագա կառույցի լիարժեք պատկերը:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
61.		*Նախատեսվում է իրականացնել շուրջ 600 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, որի 60%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, ինչպես նաև շուրջ 5000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:* Առաջարկում եմ սահմանել, որ ինչ-որ տոկոսը երկրորդային փողոցներում է արվելու, թաղամասեր կան, որ խիստ	Առաջարկն ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություններ հետևյալ պարբերությունում. Հաշվի առնելով վարչական շրջանների համաչափ զարգացման քաղաքականությունը՝ 2019թ. մայրաքաղաքում ասֆալտապատման աշխատանքներ կիրականացվեն բոլոր 12 վարչական շրջանների փողոցներում, բակերում, մայթերում, ինչպես նաև առկա գրունտային ճանապարհներին: Նախատեսվում է իրականացնել շուրջ 650 հազ. քմ ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ վերանորոգման

		անբարեկարգ ճանապարհներ ունեն և միշտ անտեսվել են		աշխատանքներ, որի 20%-ը նախատեսվում է իրականացնել բակային տարածքներում, 80%-ը գլխավոր և երկրորդական փողոցներում և մայթերում ինչպես նաև շուրջ 5,000քմ գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:
62.		*Փողոցների պատշաճ մակարդակը պահպանելու նպատակով կշարունակվեն անհրաժեշտ ծավալի ասֆալտբետոնե ծածկի փոսային նորոգման և շուրջ 400 հազ.գծմ ճաքալցման աշխատանքները:* Առաջարկում եմ հրապարակել ժամանակացույց կամ քարտեզ, որպեսզի երեւանցիները տեղյակ լինեն, երբ եւ որ փողոցներն են ասֆալտապատվելու: Նաեւ կհամոզվեն, որ նույն փողոցը չի ասֆալտապատվում տարին երկու անգամ, ինչպես նախկինում	Առաջարկն ընդունվել է: Գարնանը վարչության և վարչական շրջանի աշխատակիցների կողմից կկատարվի է գույքագրում և ըստ անհրաժեշտության կկազմվի գլխավոր և երկրորդական փողոցներում կատարվելիք ասֆալտապատման վերանորոգման աշխատանքների ժամանակացույց:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
63.		*2019թ. նախատեսվում է իրականացնել հենապատերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:* Պետք է հաշվի առնել, որ հենապատերից որոշ քանակը ունի բարձր գեղարվեստական արժեք, օրինակ Չարենցի փողոցի վրա, Սարալանջի, եւ այլն: Նախկինում վերանորոգելու ընթացքում մեծ վնաս են հասցրել: Այս հենապատերը վերանորոգելուց պետք է հատուկ	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություններ հետևյալ պարբերությունում. Հենապատերի վերանորոգման աշխատանքների ծրագիրը շարունակական է: 2019թ. ևս կիրականացվեն հենապատերի ընթացիկ և տեղային նորոգման աշխատանքներ: Մեծածավալ նորոգման կարիք ունեցող հենապատերի դեպքում ըստ անհրաժեշտության կպատվիրվեն նախագծանախահաշվային

		նախագծեր մշակվեն եւ լրացուցիչ ծախսեր նախատեսվեն:		փաստաթղթեր
64.		*2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում:* Վերանայել նախագծերը: Շատ անհարմար են եւ բացարձակապես որեւէ ճարտարապետական արժեք չունեն:	Առաջարկը չի ընդունվել: Վերոնշյալ 2 հասցեների համար նախագծանախահաշվային փաստաթղթերն առկա են	
65.		*2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում:* Ճիշտ կլինի նշել, թե որոնք են լինելու, եթե որոշված է: Եթե ոչ՝ ինչպես է որոշվելու	Առաջարկը ընդունվել է:	Ծրագրում լրացվել է հետևյալ նախադասությունը. Ներկայումս հաշվառված է մոտ 40 հասցե, որտեղ նպատակահարմար է կառուցել վերգետնյա անցումներ: 2019թ. նախատեսվում է կառուցել 2 վերգետնյա անցում՝ Թբիլիսյան խճուղի շամպայն գինիների գործարանի մոտ, Աջափնյակ վարչական շրջանի Հասրաթյան փողոց գերեզմաններ տանող ճանապարհի մոտ:
66.		*Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ վարձակալների հետ համագործակցությամբ:* Անհրաժեշտ է հստակեցնել, թե որոնց մասին է խոսքը:	Առաջարկը չի ընդունվել: Վարձակալությամբ տրված ստորգետնյա հետիոտն անցումներում նախատեսվում է իրականացնել ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ՝ վարձակալների հետ համագործակցությամբ: Գույքագրման աշխատանքների ավարտից հետո կհստակեցվի վերանորոգման առավել կարիք ունեցող գետնացումների ցանկը:	

67.		*Նախատեսվում է ապահովել մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքների շարունակականությունը, մասնավորապես՝ կվերանորոգվեն կամ կփոխարինվեն նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները (շուրջ 5000քմ), ինչպես նաև կվերանորոգվեն և կտեղադրվեն նոր բետոնե և բազալտե եզրաքարեր (շուրջ 3000գծմ):* Առաջարկում եմ որպես սկզբունք ընդունել և սահմանել, որ այսուհետ բացառվելու է յուրաքանչյուր տնտեսվարողի կողմից իր ճաշակով մայթի մի հատվածը սալիկապատելը և որ ամբողջական մայթերն աստիճանաբար բերվելու են մի տեսքի	Առաջարկը չի ընդունվել: Այս ծրագրով նախատեսվում է իրականացնել մայթերի բետոնե սալիկների և եզրաքարերի տեղային ընթացիկ նորոգման աշխատանքներ:	
68.		*Նախատեսվում է ապահովել մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքների շարունակականությունը, մասնավորապես՝ կվերանորոգվեն կամ կփոխարինվեն նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները (շուրջ 5000քմ), ինչպես նաև կվերանորոգվեն և կտեղադրվեն նոր բետոնե և բազալտե եզրաքարեր (շուրջ 3000գծմ):* Այս աշխատանքների ընթացքում պետք	Առաջարկն ընդունվել է: Տնտեսվարող սուբյեկտների կողմից իրկանացվող մայթերի սալիկապատումն ընդհանուր տեսքի բերելու գործընթացը չի կարգավորվում այս ծրագրով: Վարչական շրջանների հետևողական հսկողության արդյունքում հնարավոր է բերել բարվոք միասնական տեսքի:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		է վերանայել փողոցներում տեղադրված բազմաթիվ փոքր եւ մեծ սյուների, վահանակների եւ այլ առարկաների քանակը, հնարավորինս ազատելով մայթերը		
69.		*Նախատեսվում են սպասարկման ծառայությունների մատուցման աշխատանքներ մայրաքաղաքի 37 կամուրջների, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, վերգետնյա անցումների և էստակադաների համար:* Եթե ընդհանուր թիվը չէ, ճիշտ կլինի նշել նաև ընդհանուրը և թե սրանք որոնք են	Առաջարկն ընդունվել է: Սպասարկվող և շահագործող թվով 37 կամուրջներ, կամրջային կառուցվածքների, ուղեանցերի, էստակադաների և վերգետնյա անցումների հասցեները կտեղադրվեն Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
70.		*Անձրևատար խողովակների փոխարինման անհրաժեշտություն* Հիմնախնդրին համապատասխանող աշխատանք նախատեսված չէ, դա նշանակում է, որ անձրևատար խողովակները չե՞ն փոխարինվելու: Եթե փոխարինվելու են, առաջարկում եմ նախատեսվող աշխատանքներում լրացնել	Առաջարկը չի ընդունվել: Երևան քաղաքի 2019թ. բյուջեի նախագծով չի նախատեսվել:	
71.		*Օղակաձև զբոսայգու 1-6 հատվածների վերակառուցման և բարեկարգման և Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքները:* Անպայման անցկացնել բաց, թափանցիկ մրցույթներ, քանի որ կան	Առաջարկն ընդունվել է: Նախագծման աշխատանքների ժամանակ մասնագետների կարծքները հաշվի կառնվեն: Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում նոր զբոսայգի չի կարող կառուցվել, քանի որ տարածքը օտարված է:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		շատ լավ մասնագետներ, նոր գաղափարներ եւ ժամանակակից մոտեցումներ, իսկ այն բոլոր նախագծերը, որոնք արվել են իշխանությունների կամ նվիրաբերող կազմակերպությունների կողմից, չեն դիմանում որեւէ քննադատությանը:		
72.		*Օղակաձև զբոսայգու 1-6 հատվածների վերակառուցման և բարեկարգման և Ծարավ Աղբյուրի 55/27 հասցեում զբոսայգու կառուցման աշխատանքները:* Չշահագործվող սրճարանները քանդվելու՞ են կամ առնվազն աշխատանք տարվելու՞ է այդ ուղղությամբ: Սա հստակ պետք է սահմանել	Առաջարկը չի ընդունվել: Խնդիրը պետք է դիտարկել բացառապես իրավական դաշտում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո միայն:	
73.		*Նախատեսվում է կառուցել 6 մինի ֆուտբոլի դաշտ:* Բնապահպանական և առողջապահական նպատակներով ավելի լավ է այդ տարածքներում կանաչապատ պուրակների կառուցումը	Առաջարկը չի ընդունվել: Մինի ֆուտբոլի դաշտերի կառուցման աշխատանքներ 2019թ. ծրագրով չեն նախատեսվել:	
74.		*2019թ. ծրագրով վերանորոգման աշխատանքներ են նախատեսվում Երևանի ենթակայության շուրջ 30 մանկապարտեզներում:* *Հիմնանորոգման աշխատանքներ կկատարվեն Շենգավիթ վարչական շրջանի մանկապատանեկան համալիր մարզադպրոցում:*	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ հիմնանորոգվող թվով 30 մանկապարտեզներից ընդհամենը դեռ 20 մանկապարտեզներն են որոշված, որոնց համար պատվիրվել են նախագծանախահաշվային փաստաթղթեր, 10-ի հարցը գտնվում է քննարկման փուլում: Շենգավիթ վարչական շրջանի	

		Եթե որոշված է, ապա ճիշտ կլինի նշել, թե որոնք են, իսկ եթե ոչ՝ ապա, թե ինչ չափանիշներով են որոշելու	մանկապատանեկան համալիր մարզադպրոցը ծրագրից հանվել է:	
75.		*2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում:* Կրկին՝ որոնք են կամ ինչպես են որոշվելու	Առաջարկն ընդունվել է:	Լրացվել է հետևյալ նախադասությունը. 2019թ. նախատեսվում է կատարել վերանորոգման աշխատանքներ 5 պոլիկլինիկաներում՝ «Նոր Արեշ պոլիկլինիկա» ՓԲԸ, «Կարմիր Բլուր պոլիկլինիկա» ՓԲԸ, «Նոր Արաբկիր պոլիկլինիկա» ԱԿ ՓԲԸ, «Թիվ 16 պոլիկլինկա» ՓԲԸ «Թիվ 20 պոլիկլինիկա»ՓԲԸ
76.		*2019թ. շարունակվելու են մայրաքաղաքի 35 ջրային կառույցների վերանորոգման, վերազինման, պահպանման և շահագործման աշխատանքները:* Վերը նշված է, որ ընդամենը 36-ը կա, ո՞ր մեկը չի վերանորոգվելու և պահպանվելու և ինչու: Առաջարկում եմ հստակեցնել	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրի համապատասխան նախադասությունում 35 թիվը փոխարինվել է 36-ով:
77.		*2019թ. նախատեսված է իրականացնել շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքները:* Ի՞նչ շենքերի մասին է խոսքը, շատ ընդհանրական է, առաջարկում եմ հստակեցնել ծավալային կամ գոնե շենքերի տեսակների, վայրերի տեսակետից	Առաջարկը չի ընդունվել: 2019թ. բյուջեով շենքերի վերականգնման–ամրացման աշխատանքներ չեն նախատեսվել:	
78.		*Նախատեսվում է Երևանի սեփականություն հանդիսացող հուշարձանների լվացման,*	Առաջարկն ընդունվել է: Նորոգման ենթակա հուշարձանների ցանկը որոշվում է ըստ	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:

		պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում: Արդյոք սա կոնկրետ պլանո՞վ է կատարվում, եթե ոչ, առաջարկում եմ առնվազն նշել, թե ինչ չափանիշներով կամ կարգով է այս աշխատանքը կատարվում, շատ ընդհանրական է	անհրաժեշտության տարվա ընթացքում շրջայցերի և զույքագրման արդյունքում որոնցից ընտրվում առավել վերանորոգման կարիգ ունեցողները:	
79.		*կենդանիների շուկաների կազմակերպման անհրաժեշտություն* Ի՞նչ կենդանիների շուկաների մասին է խոսքը, և առհասարակ պետք է վերագնահատել, թե արդյո՞ք համայնքը պետք է խրախուսի կենդանիների առուվաճառքը և կազմակերպի շուկաներ: Ի՞նչ կարիքներից և մոտեցումներից է դա բխում: Կարևոր է, որ դրա մասին նշվի ծրագրում, այլապես շատ վիճելի ձևակերպում է	Առաջարկն ընդունվել է:	Նշված կետը հանվել է ծրագրից:
80.		*Կիրականացվի Երևանի վարչական շրջանների ղեկավարների կողմից տրված ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի վաճառքի ու իրացման, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի, բացօթյա առևտրի կազմակերպման, վարչական շրջանների տարածքներում առևտրի, հանրային սննդի, շահումով*	Առաջարկը չի ընդունվել: Երևան քաղաքում մերսման սրահների գործունեության համար Երևանի քաղաքապետարանը և վարչական շրջանների ղեկավարների կողմից թույլտվություններ չեն տրվում, իսկ նշված <կռիվների և տեսարանների> դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՀ ոստիկանությանը:	

		խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունների, տեղական տուրքերի մուտքերի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն և Երևանի բյուջեի համապատասխան մուտքերի ապահովում: Քաղաքում (այդ թվում Կենտրոնում) կան բազմաթիվ «մերսման սրահները», որոնք իրականում մոթելներ են և/կամ այլ տիպի ծառայություններ են մատուցում: Բնակելի թաղամասերում, շենքերի մոտ շատ կան, գիշերները պարբերաբար կռիվներ ու տեսարաններ են լինում, սա ինչ-որ կերպ պետք է կանոնակարգվի: Առաջարկում եմ դրանց գործունեության կանոնակարգման աշխատանքներ նախատեսել (հետագայում կորոշվի՝ ըստ ժամերի կամ այլ չափանիշներով)		
81.		*Կիրականացվի թափառող կենդանիների հիմնախնդրի լուծման ձևաչափի կիրառում՝ հանրային կարծիքից ելնելով:* Ի՞նչ ձևաչափի մասին է խոսքը: Մեր նախընտրական ծրագրում ամրագրված էր ստերջացման մեթոդը, որը միջազգայնորեն ընդունված	Առաջարկը ընդունվել է:	Բնապահպանության ոլորտում նախադասությունը վերախմբագրվել է հետևյալ կերպ: <Թափառող շների գլխաքանակի կառավարման համար կկիրառվի բացառապես ստերջացման մեթոդը:>

		ամենաարդյունավետ և հումանիստական մեթոդն է: Ստերջացումն են խորհուրդ տալիս միջազգային ճանաչված կազմակերպությունները, կիրառում՝ զարգացած երկրները: Առաջարկում եմ նոր լուծումներ չփնտրել, վերջնականապես հստակեցնել, որ խոսքը ստերջացման մասին է (եթե մասնագետները խորհուրդ կտան, որոշ, հստակ սահմանված դեպքերում նաև քնեցման):		
82.		Ավելացնել նոր կետ *Նախատեսվում է վարչական շրջաններում ունենալ համատիրությունների հարցերով զբաղվող առնվազն մեկ մասնագետ, որը բնակիչներին կտա խորհրդատվություն և կցուցաբերի օգնություն, կկազմակերպի հանդիպումներ ՝համատիրությունների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, կհավաքագրի առկա խնդիրները ՝հետագա օրենսդրական փոփոխությունների համար*	Առաջարկը չի ընդունվել: Բոլոր վարչական շրջաններում կան առանձնացված մասնագետներ, որոնք զբաղվում են ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման ընդհանուր վերահսկողությամբ, ինչպես նաև ցուցաբերում են մեթոդական օգնություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին	
83.		*Դիտարկել բաց և թափանցիկ մրցույթի միջոցով երկրորդ օպերատորի ներգրավման ան հրաժեշտության հարցը:* Որքա՞ն ժամանակ ենք շարունակելու դիտարկել, ակնհայտ է, որ այլ	Առաջարկն ընդունված է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:

		օպերատորի կարիք կա, առաջարկում եմ վերաշարադրել այսպես. Բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել նոր և/կամ երկրորդ օպերատոր:		
84.		Ավելացնել նոր կետ *Նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից:*	Առաջարկն ընդունված չէ: Բազմաբնակարան շենքերի աղբամուղերը համարվում են բաժնային սեփականություն և աղբամուղը կարող է փակվել իրենց համաձայնությամբ սեփականատերերի ժողովի որոշմամբ:	
85.		*Նախատեսվում է այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում:* Պարզ չէ, թե ինչպես է նախատեսվում կիրառումը, հնարավո՞ր է եղած էլեկտրաավտոբուսները փոխարինել նորերով: Առաջարկում եմ պարզաբանել	Առաջարկը չի ընդունվել: Էլեկտրաավտոբուսների կիրառման հնարավորության հարցը նախատեսվում է դիտարկել Երևան քաղաքի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքների ընդհանուր համատեքստում: Երևանի ներհամայնքային կանոնավոր փոխադրումներում էլեկտրաավտոբուսներ չեն շահագործվել և չեն շահագործվում:	
86.		*Հանրակրթություն* Փաստերի էկլեկտիկ շարք է, իրավիճակի մասին պատկերացում չի տալիս՝ ներառյալ պատճառահետևանքային կապերը: Ինչպես ծրագրի մյուս շատ բաժիններ, այս մեկը ևս «իրավիճակի նկարագրություն» չունի,	Առաջարկն ընդունված է:	Ծրագրում ավելցվել է **ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ** Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների ընդհանուր թիվը 155 է, աշակերտների թիվը 2018-2019 ուստարում **98 672** է: Առաջին դասարանցիների թիվը **11675** է, հիմնական դպրոցի շրջանավարտների թիվը՝ 9086, իսկ միջնակարգ դպրոցների

		մասնավորապես՝ վերլուծություն, որից պետք է որ բխեն հիմնախնդիրները, իսկ հիմնախնդիրների և իրավիճակի նկարագրության հիման վրա պետք է լինեն առաջարկվող ծրագրային քայլերը, միջոցառումները, կամ գործողությունները: Ընդհանրապես ծրագրերի հիմքում ընկած այս տրամաբանությունը այստեղ էլ պահված չէ:		շրջանավարտների թիվը՝ 394: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ներառական կրթություն է իրականացվում մայրաքաղաքի 54 դպրոցներում, որտեղ աշխատում են 384 հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան և լոգոպեդ: Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում սովորում են թվով 881 այլազգի երեխաներ: Շարունակվում է սիրիահայ երեխաների կրթության և ինտեգրման գործընթացը ՀՀ կրթական ծրագրով: Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով, տեսացրիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ՝ կրթական համապատասխան միջավայր ապահովելու նպատակով:
87.		*Հանրակրթություն* Առաջարկում եմ հանրակրթության բլոկը վերաշարադրել այնպես, որ պահանվի այդ տրամաբանությունը՝ «իրավիճակի վերլուծություն, բխեցվող հիմնախնդիր, լուծում առաջարկող քայլեր/գործողություններ» և որ ամեն մի բաղադրիչը մեկը մյուսի հետ տրամաբանական և բովանդակային կապ ունենան: Ավելին, ըստ իս, սա	Առաջարկը չի ընդունվել: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության քառամյա ծրագրի (2018-2022թ.թ.) մեկ տարվա համար սահմանված հիմնախնդիրները:	

		դպրոցական կրթության մեջ համայնքային տիրույթում գտնվող ամբողջական հիմնախնդիրները չեն, կամ նրանք, որոնք հրատապ կարիք ունեն լուծելու: Առաջարկում եմ՝ աշխատել այդ ուղղությամբ, որ ծրագրում առաջարկենք կամ ամբողջականները կամ էլ նշենք, թե ինչու ենք ամբողջական պրոբլեմներից հենց սրանք նշել անդրադառնալու համար : .... Բայց քանի որ կա որոշակի շարադրանք, փորձեմ կետ առ կետ անդրադառնալ, այնուամենայնիվ:		
88.		*Հետևողականություն է դրսևորվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին հանրակրթության մեջ ընդգրկելու հարցում:* Հետևողականություն դրսևորել - ընդհանրական ձևակերպում է, ինչ գործողություններ է ենթադրում՝ չի հասկացվում:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելցվել է 2018թ. դրությամբ Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում սովորում են 881 այլազգի երեխաներ. • Ռուս -318 առկա է ռուսերենով ուսուցմամբ թվով 13 դպրոց • Եզդի-393 թվով 3 դպրոցներում ազգությամբ եզդի ծնողների պահանջով գործում է եզդիերենի խմբակ (հհ.. 66,107,136) • Հույն-15 Երևանի հ.74 դպրոցում գործում է հունարենի խմբակ • Ուկրաինացի-26 • Վրացի -22 • Ասորի- 11 • Հրեա- 4 • Բելոռուս-3 • Այլ 79 Դպրոցներում եզդի երեխաների համար

				ստեղծվել են խմբակներ, սակայն նրանցից շատերը հրաժարվում են իրենց մայրենին ուսումնասիրել:
89.		*Դպրոցները հիմնականում ապահովված են համակարգիչներով և պարբերաբար համալրվում են: Դպրոցներում առկա են էլեկտրոնային գրատախտակներ, էլեկտրոնային ձեռնարկներով գրադարաններ՝ ապահովելու կրթական համապատասխան միջավայր: Ասիական զարգացման բանկի համագործակցությամբ հիմնանորոգվում են թվով 12 դպրոցներ:* Անհրաժեշտ է ներկայացնել, թե քանի հիմնանորոգման կարիք ունեցող դպրոցից է նորոգվում այս տասերկուսը, ինչ պատկեր է հիմնանորոգման հարցում: Առանց այդ ինֆորմացիայի, այս հիմնանորոգման տվյալը ոչինչ չի ասում: Նույնը համակարգիչներով ապահովվածության վերաբերյալ.....:	Առաջարկն ընդունվել է: Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 155 դպրոցներից հիմնանորոգման կարիք ունեն թվով 75-ը, որի կատարման մասին ներկայացված է աշխատակազմի հանրակրթության վարչության հնգամյա զարգացման ծրագրում (2019-2023թ.թ.)՝ ըստ փուլեր: ՀՀ պետբյուջեի հաշվին նորոգման աշխատանքներ են ընթանում թվով 4 դպրոցներում (հհ.. 22,91,143,191), Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ տարածքային կառավարման նախարարության հիմնադրամով շենքերի կառուցման աշխատանքներ են ընթանում թվով 2 դպրոցներում (հ.հ.135 և 153): Նախապատրաստական աշխատանքներ են կազմակերպվում թվով 5 դպրոցներում (հհ..6,18,95,116 և «Հ.Կոջոյան»): Առաջնահերթությամբ հիմնանորոգման ծրագրում ընդգրկված են նաև վթարային տարբեր աստիճան ունեցող դպրոցներ (հհ..50,51,68,111,122,130,169):	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
90.		*Դպրոցների շենքային և բակային պայմանների բարելավման, հիմնանորոգման և ժամանակակից պահանջներին*	Առաջարկը չի ընդունվել: «ժամանակակից պահանջներին համապատասխանեցնել» հասկացությունը օգտագործվել է՝	

		համապատասխանեցնելու անհրաժեշտություն: Ժամանակակից պահանջին համապատասխանելը չափելի հասկացություն չէ, լավ է՝ ընդհանուր տեքստեր հնչեցնելիս: Որպես հիմնախնդիր, կարծում եմ, ավելի տեղին է, եթե ասենք, որ պիտի փորձենք դրանք մեր պետության իսկ կողմից սահմանած չափորոշիչներին համապատասխանեցնենք գոնե: Իսկ եթե ուզում ենք շեշտել, որ նորագույն լուծումներն ենք օգտագործելու, կամ ժամանակի հետ համաքայլ ենք շարժվելու, ապա ճիշտ է ավելի չափելի խնդիր ձևակերպել, ասենք՝ համապատասխանեցնենք միջազգային այս կամ այն չափանիշին: Նայած թե ինչքն ենք ուզում ուղենիշ վերցնել:	հաշվի առնելով, որ բոլոր դպրոցներն ունենան արտակարգ իրավիճակների նախարարության պահանջներին համապատասխան պայմաններ՝ անվտանգ միջավայր, ազդանշանային համակարգ, ԿԱՊԿՈՒ երեխաների անհրաժեշտ պայմաններ՝ նկատի ունենալով, որ 2019թ. Երևանի դպրոցներն ընդգրկվում են համընդհանուր ներառական կրթության ծրագրում:	
91.		*Նորագույն տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման անհրաժեշտություն:* Նորագույն տեխնոլոգիաները ինքնանպատակ չեն: Ուսուցման նորարական մեթոդների կիրառմանը օգնող տեխնոլոգիաների տեսնակյունից պետք է նշվի այս անհրաժեշտության մասին	Առաջարկը չի ընդունվել: 2019 թվականին դպրոցները նախատեսել են ձեռք բերել համակարգիչներ՝ թվով 558 հատ, պրոյեկտոր՝ թվով98 հատ, էլեկտրոնային գրատախտակ՝ թվով 122 հատ: Դպրոցներում բոլոր առարկաներից անցկացվում են տեսադասեր: Դպրոցներում ֆիզիկայի և քիմիայի հագեցած, ինչպես նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների և սենսորային (զգայական) սենյակների, էլեկտրոոնային գրադարանների	

			ստեղծում:	
92.		*Նախատեսվում է երևանյան դպրոցներում շարունակել փորձի փոխանակման, վարպետաց դասերի կազմակերպման կազմակերպումը՝ տարվա լավագույն տնօրենների, ուսուցիչների, վաստակավոր մանկավարժների, Խորենացու մեդալակիրների, տարակարգ ունեցող ուսուցիչների ուժերով՝ համաձայն ժամանակացույցի:* Պարզ չի, թե նախորդ կետում նշված հիմնախնդիրներից որին է սա պատասխանում: Որպես միջոցառում ընկալելի է, բայց որն է այդ փորձի փոխանակման նպատակը: Ինչ նպատակով են դրանք արվում և ինչ խնդիրներ են լուծելու: Ինչն են բարելավելու և ինչպես:	Առաջարկը չի ընդունվել: «Հիմնախնդիրներ» բաժնի 9-րդ կետով«Կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման անհրաժեշտություն» է նախատեսված: • Լավագույն ուսուցիչների փորձի տարածման նպատակով փորձի փոխանակման, վարպետաց դասերի կազմակերպում՝ երևանյան դպրոցներում. • մանկավարժների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հասատություններ	
93.		*Համապատասխան ընկերությունների համագործակցությամբ՝ Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև կկազմակերպվի հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի զարգացման նպատակով:* Որպես միջոցառում, նշել կարելի է, բայց կապը չկա հիմնախնդիրների հետ, թե ինչ հիմնախնդիրը լուծելու համար է այս միջոցառումը ներառված ծրագիր:	Առաջարկը չի ընդունվել: Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև կազմակերպված հեռուստակամուրջները, հայրենագիտական դասերը միտված են փոխադարձաբար աշակերտի կրթական, մշակութային, հայրենասիրական արժեհամակարգի բարձրացմանն ու զարգացմանը:	

94.		*Նախատեսվում է դպրոցական ճաշարաններում աշակերտների համար սննդի վաճառքը կազմակերպել՝ հաշվի առնելով առողջ ապրելակերպի սկզբունքները՝ խստիվ պահպանելով սննդի անվտանգության նորմերը:* Սա պարտավորություն է և լիազորություն, առանձին գործողություն նշելու կարիքը չեմ տեսնում:	Առաջարկը չի ընդունվել: Դպրոցական բուֆետների վերաբերյալ նախատեսված է առողջ ապրելակերպի, երեխաների ճիշտ սնվելու ապահովման գործընթաց,ինչպես նաև քարտային համակարգի ներդրում՝ երեխային գումարի հետ անմիջական շփումից զերծ պահելու նպատակով:	
95.		*Սովորողների արժեքային համակարգի ձևավորման աջակցության նպատակով Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում նախատեսվում է ներդնել «Երևանագիտություն» առարկան:* Բազմիցս նշվել է հանրակրթական ծրագրի գերբեռնվածության մասին և որ կարիք կա դրանք թեթևացնելու: Այդ համատեքստում նոր առարկա ներմուծելը, նույնիսկ եթե դպրոցական բաղադրիչով, հիմնավորված չէ: Ավելին, անհասկանալի է, թե ինչպես է սա բխում վերը թվարկած հիմնախնդիրներից: Ավելին, դպրոցական բովադակությունն այնպիսին է, որ Երևանի մասին տեղեկություններ և Երևանին վերաբերող բովանդակություն դասագրքերում ներառված են՝ սկսած տարրական դասարանից: Ավելին, բացի	Առաջարկն ընդունվել է, քանի որ այն հանված է և չի նախատեսված: Ծրագիրը նվիրված էր Երևանի 2800-ամյակին:	

		ուսումնական բովանդակությունից, կա Երևանի տոնակատարության օրվան առնչվող համաերևանյան միջոցառումների ավանդույթը, կան գործնական պարապմունքներ և այցելություններ թանգարաններ: Առանձին առարկայով երեխաներին ծանրաբեռնելու փոխարեն կարելի է գործող մեխանիզմ ներդնել, որ ավագ դպրոցի աշակերտները այցելեն Երևանի պատմության և Էրեբունի թանգարաններ և այդ այցերի հիման վրա իրականացնեն խմբային վերլուծական աշխատանքներ կամ նախագծեր: Նոր առարկայի կարիք չկա: Ընդհակառակը, Երևանում ապրող աշակերտներին կարիք կա ծանոթացնելու Հայաստանի՝ Երևանից դուրս շրջաններին և անկյուններին, որ նրանք ճանաչեն և գնահատեն հայրենիքը Երևանից դուրս, հստակ գիտակցեն երկրի համաչափ զարգացման անհրաժեշտությունը, և այլն:		
96.		*Երևանի քաղաքապետի՝31.03.2011թ հ.1101-Ա որոշմամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում Երևան քաղաքում հաշվառված ծնողների համար երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է*	Առաջարկն ընդունվել է:	Կատարվել է հետևյալ լրացումները: Երևան ենթակայությամբ գործում է 160 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ մանկապատեզ, ուր հաճախում է - 29707 երեխա: Թվով 11 դպրոցում գործում է 11 նախակրթարան որտեղ հաճախում է նախադպրոցական տարիքի /4-6

		անվճար՝ քաղաքապետարանի ֆինանսական ներդրմամբ։ Նույնը՝ ինչ դպրոցական կրթության բաժնի համար...տվյալների շարք է		տարեկան/ 224 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ներառական կրթություն է իրականացվում 8 մանկապարտեզներում, որտեղ ներառված է 146 երեխա: Նրանց կրթադաստիարակչական աշխատանքների իրականացմանը մասնակցում է նաև 10 հոգեբան և 10 լոգոպեդ: Մանկապարտեզներում հերթագրված երեխաների ընդունելությունը կազմակերպվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 04.03.2016թ. հ.706-Ա, 19.04.2018թ. 1472-Ա որոշումների: Մանկապարտեզներում նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝ համաձայն Երևանի քաղաքապետի 31.03.2011թ. հ.1101-Ա որոշման: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 26.12.2017թ. հ.90-Ն որոշման՝ նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար նաև մարզերում հաշվառված զինծառայողի երեխայի համար:
97.		*Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շինությունների և տարածքների քարտեզագրման անհրաժեշտություն* Հիմնախնդիրը նուհ-երի անհամաչափ բաշխվածությունն է և	Առաջարկը չի ընդունվել: 2019 թվականին թվով 13 մանկապարտեզներում նախատեսվում է ձևավորել 14 խումբ /Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ Վ/Շ-ում/՝ հիմք ընդունելով	

		տարողունակության անհամաչափությունը շրջապատի բնակչության թվի համապատասխան: կան ամբողջական թաղամասեր, որ շրջակա նուի չկա, և անհրաժեշտություն է դրանց համաչափությանը հասնել՝ որպես առաջին քայլ թերևս դիտարկել՝ քարտեզագրումը:	մանկապարտեզներում հերթագրված երեխաների թիվը և տարածքների առկայությունը: Նուբարաշեն վ/շ-ում գործելու է նոր մանկապարտեզ՝ 4 խմբով: Մանկապարտեզների շենքերի տարածքներից վարձակալությամբ կամ անհատույց այլ սուբյեկտներին տրամադրված տարածքների ազատում /պայմանագրերի ժամկետները լրանալու, ինչպես նաև ապօրինի զբաղեցնելու պարագայում/: Նախատեսվում է մանկապարտեզների ազատ տարածքների, ինչպես նաև անբարեկարգ վիճակում գտնվող ազատ խմբասենյակների քարտեզագրում, ինչի հիման վրա կատարվելու է նոր խմբերի ձևավորում:	
98.		*Ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների մանկավարժական համակազմի՝ համապատասխան մասնագետներով համալրման անհրաժեշտություն* Քանի ներառական մանկարապտեզ կա: Արդյոք միայն դրանց մանկավարժական համակազմի համալրման կարիք կա: Կառաջարկեմ որպես հիմնախնդիր նշել նաև նուի-երի մանկավարժական մասնագետների մասնագիտական ուսուցումների և գիտելիքների թարմացման համալիր	Առաջարկը չի ընդունվել: Համագործակցության շրջանակում մասնագետները մասնակցում են «Հույսի կամուրջ», «Սեյվ դը չիլդրեն», ,Վորդ վիժն» կազմակերպությունների կողմից իրականացվող սեմինար-քննարկումներին, կլոր սեղաններին, ինչպես նաև վերապատրաստման դասընթացներին: Բացի այդ՝ մանկապարտեզների դաստիարակները, երաժշտության դաստիարակները, ֆիզիրահանգիչները, ինչպես նաև տնօրենները և փոխտնօրենները վերապատրաստվում են ՀՀ կրթության և գիտության ԿԱԻ-ի	

		միջոցառումներ իրականացնել՝ նախապես գնահատելով կարիքի կոնկրետ դրսևորումները: Մասնավորապես, կարևոր է «երեխայի լավագույն շահի» վերաբերյալ, և մանկավարժական նորարական մեթոդների ուսուցումները: Բացը այդ ոլորտում ահռելի է:	կողմից իրականացվող դասընթացների միջոցով: Աշխատակազմի հանրակրթության վարչությունը պարբերաբար կազմակերպում է մանկավարժական գիտելիքների և հմտությունների փորձի փոխանակման գործընթաց՝ վարչական շրջանների մանկապարտեզների լավագույն տնօրենների և դաստիարակների ներգրավմամբ: Գործընթացը շարունակական է: Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում նախատեսվում է ԿԱՊԿՈՒ երեխաներին ընդգրկել Երևան քաղաքի բոլոր մանկապարտեզներում: Նախատեսվում է համապատասխան գերատեսչության կողմից վերապատրաստման դասընթաց իրականացնել մանկապարտեզների երեխայի առողջության պահպանումը ապահովող աշխատակիցների, մասնավորապես սննդի կազմակերպման պատասխանատուների հետ: Առաջարկվել է բոլոր մանկապարտեզներին տրամադրել լոգոպեդի հաստիք:	
99.		*Մանկապարտեզներում նորագույն տեխնոլոգիաների ներդրման շարունակականության ապահովման անհրաժեշտություն* Պետք է հստակեցնել, թե նորագույն տեխնոլոգիաները որ բնագավառում է	Առաջարկը չի ընդունվել: Մանկապարտեզների գործունեությանն ընդգրկված աշխատակիցների փաստաթղթաշրջանառության գործառույթի իրականացման միասնական համակարգ ստեղծելու	

		անհրաժեշտ ներառել: Եթե անձնակազմի աշխատանները ավելի արագացնելու և թղթաբանությունը քչացնելու, միասնական բազաներով համալրելու մասին է խոսքը, ապա այո: Բայց եթե նորագույն տեխնոլոգիաները՝ որպես ուսուցման գործիք, ապա միանշանակ չէ, որ դա բխում է երեխայի դաստիարակության ընդունված չափորոշիչներից: Ընդհակառակը հուզակամային որակները, և մոտորիկան զարգացնող մեթոդներն ու գործքիներն ավելի կարևոր են:	անհրաժեշտություն չկա, քանի որ դրանց իրագործումը անհատական և ստեղծագործական բնույթի է: Ինչ վերաբերում է երեխայի դաստիարակությանն առնչվող նորագույն տեխնոլոգիաներով իրականացվող մեթոդներին՝ այն պետք է բխի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների պահանջներից, որոնց զարգացման տարբեր ոլորտները պայմանավորված են տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշակութային առանձնահատկություններով: Հետևաբար, գործող կրթական չափորոշիչները և երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները համապատասխանում են երեխայի դաստիարակությանը զարգացման և կրթության ապահովման պահանջներին: Ինչ վերաբերում է մանկապարտեզում հեռուստացույցին և էլեկտրոնային գրատախտակներին՝ դրանք կիրառվում են ըստ անհրաժեշտության:	
100.		*Որակյալ կրթության և դաստիարակության ապահովման նպատակով նախատեսվում է ժամանակակից պահանջներին համապատասխան բարելավել նախադպրոցական*	Առաջարկն ընդունվել է: Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավման և բակերի բարեկարգման աշխատանքների իրականացումը նախատեսվում է աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության ծրագրերում՝ հիմք ընդունելով	

		հաստատությունների շենքային և բակային պայմանները՝ երեխաների համար ստեղծել առավել ապահով, անվտանգ և հարմարավետ միջավայր, խաղահրապարակներ և կանաչապատ տարածքներ: Կարևոր է նշել գոնե ծրագրի այս մասում, թե քանի նուհ-ում, անհրաժեշտ կարիքի որ մասին ենք անդրադառնալու:	աշխատակազմի հանրակրթության վարչության ուսումնասիրության արդյունքները:	
101.		*Նախատեսվում է ապահովել անվճար նախադպրոցական ծրագրի շարունակականությունը:* Սա «նախատեսվող աշխատա՞նք» է, ինչ կարիք կա նշելու այն, ինչ պետք է շարունակվի...այդպես ուրեմն շատ բան նշենք:	Առաջարկը չի ընդունվել: Նշվել է, քանի որ այն կապված է բյուջեի քննարկումից:	
102.		*Նախատեսվում է մանկապարտեզներում նորագույն տեխնոլոգիաների ներդրում (պրոեկտոր, էլեկտրոնային գրատախտակ),* ինչո՞վ է հիմնավորվում այս գործողությունը: Կարծում եմ ավելի կարևոր է նորացնել ճաշարանում սպասքը կամ սպիտակեղենը, կամ դիդակտիկ նյութերի և երեխաների զարգացնող խաղալիքների և այլ միջոցների ձեռքբերումը: Դրանք բավականին հին են և չեն կարողանում ապահովել մեր պետության կողմից	Առաջարկը չի ընդունվել: Որպես նորագույն տեխնոլոգիա՝ նպատակահարմար է մանկապարտեզներում ներդնել սենսորային սենյակների ստեղծման ծրագիր՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև՝ էլեկտրոնային գրատախտակ և տեսացրիչ: Կարևորելով խոհանոցային սպասքը, երեխաների համար նախատեսված փափուկ գույքը, զարգացնող խաղերը՝ առաջարկվել է ներառել մանկապարտեզների բյուջեում:	

		սահմանած նորմերը: Իսկ մանկապարտեզներում էլեկտրոնային գրատախտակները, պլանշետներ և այլ միջոցներ կիրառելը նպատակահարմար չէ: Այդ տարիքի երեխաների համար ավելի կարևոր է խթանել նրանց հուզակամային միջավայրը և մոտորիկան զարգացնող միջոցներ ներդնել: Հարկավոր է մասնագիտական քննարկում անել նույնիսկ այն հարցի վերաբերյալ, թե ինչու և ինչ սահմանափակ դեպքերում են անհրաժեշտ հեռուստացույցերի առկայությունը նուհ-ում: Կառաջարկեմ գոնե մանսագիտական քննարկում հրավիրել այս հարցի վերաբերյալ:		
103.		*Փորձի փոխանակման նպատակով նախատեսվում է շարունակել մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ:* օզգ-ն ավելի բարձր կլինի, եթե մասնագիտական լայնածավալ ուսուցումներ կազմակերպել՝ բնապահպանական կրթության, աղետների ռիսկերի նվազեցման, երեխայի լավագույն շահի, երեխայի իրավունքների և ուսուցման նորարար մեթոդների վերաբերյալ՝ մասնագիտացած	Առաջարկը չի ընդունվել: Մանկապարտեզների դաստիարակները, երաժշտության դաստիարակները, ֆիզիրահանգիչները, ինչպես նաև տնօրենները և փոխտնօրենները վերապատրաստվում են ՀՀ կրթության և գիտության ԿԱԻ-ի կողմից իրականացվող դասընթացների միջոցով: Աշխատակազմի հանրակրթության վարչությունը պարբերաբար կազմակերպում է մանկավարժական գիտելիքների և հմտությունների փորձի փոխանակման գործընթաց՝ վարչական շրջանների մանկապարտեզների լավագույն	

		կազմակերպություններից հրավիրելով ուսուցանող մասնագետներ:	տնօրենների և դաստիարակների ներգրավմամբ: Գործընթացը շարունակական է: Դասընթացներ է անցկացվում նաև ԱԻՆ-ի կողմից՝ մանկապարտեզների աշխատակազմերի և ծնողների համար: Նախատեսվում է համապատասխան գերատեսչության կողմից վերապատրաստման դասընթաց իրականացնել մանկապարտեզների երեխայի առողջության պահպանումը ապահովող աշխատակիցների, մասնավորապես սննդի կազմակերպման պատասխանատուների հետ:	
104.		*Բնապահպանության ոլորտը խմբագրել հետևյալ կերպ* Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Մայրաքաղաքի մեկ բնակչին բաժին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշը 7,8 ք/մ է, որը 2 անգամ պակաս է նորմատիվայինից: Երևանը գտնվում է կիսաանապատային գոտում, որտեղ հողերը անջրդի պայմաններում էռոզացված են և ունեն ոչ բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Ըստ հետազոտության արդյունքների մայրաքաղաքի հողերը հատում են	Առաջարկն ընդունվել է մասամբ:	Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Մայրաքաղաքի մեկ բնակչին բաժին ընկնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցուցանիշը 7,8 ք/մ է, որը 2 անգամ պակաս է նորմատիվայինից: Երևանը գտնվում է կիսաանապատային գոտում, որտեղ հողերը անջրդի պայմաններում էռոզացված են և ունեն ոչ բավարար ջրաֆիզիկական հատկություններ: Ըստ հետազոտության արդյունքների մայրաքաղաքի հողերը հատում են աղտոտման բարձր մակարդակի շեմը, ինչը պայմանավորված է հողերի ծանր մետաղներով աղտոտվածությամբ: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է

		աղտոտման բարձր մակարդակի շեմը, ինչը պայմանավորված է հողերի ծանր մետաղներով աղտոտվածությամբ: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը: *Հիմնախնդիրներ* *1. Մեղմել քաղաքային շրջակա միջավայրի վրա մարդկային կենսագործունեության և գլոբալ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը:* *2. Մշակել և ներդնել քաղաքի էկոհամակարգերի, կանաչ ենթակառուցվածքների և կենսաբազմազանության հետազոտության, պահպանության և կայուն զարգացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմներ:* *3. Առավելագույնի հասցնել քաղաքային կանաչ տարածքների բնապահպանական նշանակությունն ու*		կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը ենթադրում է մի շարք փուլերի հաջորդական իրականացում՝ ուղղված տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը և ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը: Հիմնախնդիրներ 1. Մեղմել քաղաքային շրջակա միջավայրի վրա մարդկային կենսագործունեության և գլոբալ կլիմայական փոփոխությունների բացասական ազդեցությունը: 2. Մշակել և ներդնել քաղաքի էկոհամակարգերի, կանաչ ենթակառուցվածքների և կենսաբազմազանության հետազոտության, պահպանության և կայուն զարգացման առավել արդյունավետ և գործուն մեխանիզմներ: 3. Առավելագույնի հասցնել քաղաքային կանաչ տարածքների բնապահպանական նշանակությունն ու առավելագույն հասցնելով քաղաքային կանաչ տարածքների գեղագիտական և այլ ասպեկտներով արդյունավետ լուծումներ: 2019 թվականին նախատեսվող աշխատանքներ 1. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կմեկնարկվի կանաչ ենթակառուցվածքների գույքագրում,

		դրանցից ստացվող հանրային օգուտը՝ կիրառելով ժամանակակից դենդրոլոգիական, լանդշաֆտային ճարտարապետության, քաղաքաշինական, գեոգիտական և այլ ասպեկտներով արդյունավետ լուծումներ։ **2019 թվականին նախատեսվող աշխատանքներ** 1. Կիրականացվի համայնքապատկան կանաչ ենթակառուցվածքների գույքագրում, աղտոտվածության մակարդակի և կենսաբազմազանության քանակաորակական ցուցանիշների առկա ելային վիճակի հետազոտություն։ Արժեքավոր ծառերը կհամարակալվեն և կկոդավորվեն։ Կսահմանվի Երևանի արժեքավոր էկոհամակարգերը։ Ողջ տվյալները հասանելի կլինեն առցանց քարտեզի տեսքով։ 2. Կմշակվի և կիրատարակվի երևանյան կլիմայի պայմաններում կանաչապատ տարածքների ձևավորման և խնամքի մեթոդական ձեռնարկ հիմնված ժամանակակից լավագույն փորձի վրա, որն անվճար կտրվի քաղքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպություններին,		աղտոտվածության մակարդակի և կենսաբազմազանության քանակաորակական ցուցանիշների առկա ելային վիճակի հետազոտություն։ Արժեքավոր ծառերը կհամարակալվեն և կկոդավորվեն։ Կսահմանվի Երևանի արժեքավոր էկոհամակարգերը։ Ողջ տվյալները հասանելի կլինեն առցանց քարտեզի տեսքով։ 2. Կմշակվի և կիրապարակվի երևանյան կլիմայի պայմաններում կանաչապատ տարածքների ձևավորման և խնամքի մեթոդական ձեռնարկ հիմնված ժամանակակից լավագույն փորձի վրա, որն անվճար կտրվի քաղքապատարանի ենթակայության տակ գտնվող բոլոր կազմակերպություններին, համատիրություններին, ուսումնական հաստատություններին և հասանելի կլինի առցանց։ 3. Կանաչ ենթակառուցվածքների խնամքով զբաղվող մասնագիտական անձնակազմի համար կիրականացվի վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք գործնական գիտելիքներ ձեռք կբերեն ծառերի ու թփերի էտման, ինչպես նաև կանաչ տարածքների խնամքի այլ մեթոդների շուրջ։ 4. Համապատասխան ֆինանսավորման պայպմաններում կզարգացվի տնկարանն ու ջերմոցը՝ սեփական կարիքների համար անհրաժեշտ ծառաթփատեսակները մեծ քանակով և էժան աճեցնելու, ինչպես նաև 4-5 տարեկան հասուն տնկիների բանկ

		համատիրություններին, ուսումնական հաստատություններին և հասանելի կլինի առցանց։ 3. Կանաչ ենթակառուցվածքների խնամքով զբաղվող մասնագիտական անձնակազմի համար կիրականացվի վերապատրաստման դասընթաց, որի ընթացքում նրանք գործնական գիտելիքներ ձեռք կբերեն ծառերի ու թփերի էտման, ինչպես նաև խնամքի այլ մեթոդների շուրջ։ 4. Կզարգացվի համայնքապատկան տնկարանն ու ջերմոցը՝ սեփական կարիքների համար անհրաժեշտ ծառաթփատեսակները մեծ քանակով և էժան աճեցնելու, ինչպես նաև 4-5 տարեկան հասուն տնկիների բանկ ունենալու նպատակով, ինչը կօգնի ծառուղիներում ծերացած և հիվանդ ծառերի (հատկապես մասսայաբր հիվանդ թեղիների) օպերատիվ համաժամանակյա փոխարինում կատարել։ 5. Հաստիքացուցակում կավելացվի լանդշաֆտային դիզայների, հաստիքները 6. Սահմանված ժամանակահատվածում ծառերի ու թփերի կմախքի առողջացման և գեղագիտական ձևավորման համար կիրականացվի շուրջ 100,000 ծառերի		ունենալու նպատակով, ինչը կօգնի ծառուղիներում ծերացած և հիվանդ ծառերի (հատկապես մասսայաբր հիվանդ թեղիների) օպերատիվ համաժամանակյա փոխարինում կատարել։ 5. Հաստիքացուցակում կավելացվի լանդշաֆտային դիզայների և ֆիտո-դիզայների հաստիքները։ 6. Սահմանված ժամանակահատվածում ծառերի ու թփերի կմախքի առողջացման և գեղագիտական ձևավորման համար կիրականացվի շուրջ 26.000 ծառերի սաղարթի ձևավորման և սանիտարական էտ։ Ծառերի երիտասարդացնող և խորը էտը կկիրառվի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության՝ վթարային իրավիճակների կանխման նպատակով։ 7. Կանաչապատման իրականացման ներկայիս սեզոնային մասսայական համաժամանակյա, անկանոն տնկումների մոդելը հիմնականում կփոխարինվի կոնկրետ տեղամասի միասնական լանդշաֆտային նախագծի շրջանկաներում կանաչապտման մոդելով, որը կիրականացվի մրցութային կարգով։ 8. Փարոսի անտառ և Սարալանջ փողոցի հարակից տարածքներում համապատասխան ֆինանսավորման պայմաններում կենթարկվի վերակառուցման գործող ոռոգման համակարգերը, կիրականացվի դարավանդավորում, կկառուցվեն այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ և կիրականացվի անտառվերականգման

		սաղարթի ձևավորման և սանիտարական էտ: Ծառերի երիտասարդացնող և խորը էտը կկիրառվի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության՝ վթարային իրավիճակների կանխման նպատակով: 7. Կանաչապատման իրականացման ներկայիս սեզոնային մասսայական համաժամանակյա, անկանոն տնկումների մոդելը հիմնականում կփոխարինվի կոնկրետ տեղամասի միասնական լանդշաֆտային նախագծի շրջանկաներում կանաչապտման մոդելով, որը կիրականացվի մրցութային կարգով: 8. «Նորքի անտառներ», Փարոսի անտառ և Սարալանջ փողոցի հարակից տարածքներում կանցկացվի ոռոգման համակարգ, կիրականացվի դարավանդավորում, կկառուցվեն այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ և կիրականացվի անտառվերականգման մեծ ծրագիր: 9. Կարգելվի զբոսայգիներում, պուրակներում, անտառպուրակներում, ճամփեզրերին ծառերի բների համատարած կրապատում-սպիտակեցումը և խնամքի այս մեթոդը կկիրառվի միայն մասնագիտական խիստ հիմնավորվածության դեպքում:		մեծ ծրագիր: 9. Մայրաքաղաքում շուրջ 60.000 ծառ կկրապատվեն: Կրապատումը ոչ միայն գեղագիտական տեսք է հաղորդում ծառերին, այլ նաև կանխարգելում է միջատների տեղաշարժը հողից դեպի ծառի բնի հատված: 10. Քաղաքի բանուկ զբոսաշրջային հատվածներում և զբոսայգիներում կստեղծվեն լանդշաֆտային դիզայնի գրագետ լուծումներով գեղեցիկ, ծաղկման տարբեր սեզոնայնությամբ ծաղիկների ծաղկանոցներ: 11. Կանխարգելիչ և փաստացի բուժման կենթարկվեն շուրջ 35.000 ծառեր և թփեր: 12. Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման և ընթացիկ խնամքի կարիքները բարելավելու նպատակով՝ ձեռք կբերվի շուրջ 6000 խմ բուսահող և լրացուցիչ ֆինանսավորման պայմաններում ձեռք կբերվի կենսահումուս, որը կնպաստի ծառերի և թփերի կենսունակության բարելավմանը: 13. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում կիրականացվի ուղղահայաց կանաչապատման համաքաղաքային ծրագիր, որի ընթացքում լիանանման բարձրացող բույսերով պատելու համար կկահավորվեն համայնքային և հանրային նշանակության շենքերի արտաքին պատերը: 14. Կանաչ տարածքների և առհասարակ բնության հանդեպ հանրության հոգատարությունն իբրև կարևորագույն արժեք հանրահռչակելու նպատակով

		Առկա սպիտակեցված բները հնարավորության դեպքում կմաքրվեն առանց ծառի կեղևը վնասելու։ 10. Լրացումների ու ամբողջական լանդշաֆտային նախագծերի իրացման տեսքով տարբեր տեղամասերում, հաշվի առնելով տարածքին ներկայացվող պահանջները, նաև աղտոտվածության մակարդակն ու բնույթը կտնկվի շուրջ 40.000 ծառ, պատնեշաստեղծ և ծաղկող թուփ, բարձրացող լիանանման թփատեսակներ։ Նախընտրելի ծառատեսակները՝ սոսի, սոֆորա, թխկի, կաղնի, հուդայածառ, կատալպա, օճառենի, հացենի, ուռենի, գլիդիչիա և այլն։ Նախընտրելի թփատեսակները՝ գիհի, ֆորզիցիա, խենոմելես, ծորենի, տոսախ, իլենի, չմենի և այլ։ Նախընտրելի բարձրացող լիանանման թփատեսակները՝ խաղող, կուսախաղող, բաղեղ, կամպսիս, գլիցինիա և այլն։ 11. Երևանյան բակերի խաղողի թառմաները կհռչակվեն որպես Երևանի ինքնության անբաժանելի մաս և դրանց խնամքի ու տարածման համար հատուկ ծրագիր կիրականացվի։ 12. Նախկինում ծաղիկներով պատվող շատ (-----) սիզամարգեր կվերաձևավորվեն բազմամյա		կիրականացվի պատշգամբների ինքնակամ կանաչապատման խրախուսման ծրագիր՝ վարչությունը աջակցություն կցուցաբերի՝ բնակիչներին տրամադրելով անվճար խորհրդատվություն, թաղարային բույսեր, բուսահող, կանցկացվի տարվա լավագույն կանաչապատ պատշգամբ համաքաղաքային մրցույթ և այլն։ 15. Բնապահպանական ձեռնարկներում կրթական բաղադրիչն ավելացնելու նպատակով մանկապարտեզների ու դպրոցների տարածքներում կկազմակերպվի ուսումնական պարտեզներ, որտեղ բույսերը հետազոտելու և խնամելու պարտավորությունը կլինի հաստատության սաների վրա։ Այդ նպատակով կհրատարակվի հատուկ ուղեցույց։ 16. Կմեկնարկեն Մ.Մելքոնյան փողոցին կից հանգստի գոտու ստեղծման աշխատանքները, որի 70%-ը կազմելու է գեղատեսիլ կանաչ զանգվածն իր բարձրարժեք ծառաթփատեսակներով։ 17. Համաքաղաքային շաբաթօրյակների ընթացքում կնախատեսվի Հրազդանի կիրճի և Երևանյան լճի հարակից տարածքների մաքրման աշխատանքներ։ 18. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում կազմել ծրագիր և համապատասխան ֆինանսավորման պայմաններում ստեղծել բուֆերային անտառապաշտպան գոտիներ՝ ներգրավելով նոր ոռգման ցանցերի և

		մշտադալար, պատնեշաստեղծ և ծաղկող թփերով: Քաղաքի բանուկ զբոսաշրջային հատվածներում և զբոսայգիներում կստեղծվեն նաև լանդշաֆտային դիզայնի գրագետ լուծումներով գեղեցիկ, ծաղկման տարբեր սեզոնայնությամբ ծաղիկների ծաղկանոցներ, խրախուսել դիմացկունությամբ և կենսաբազմազանության իմաստով կարևոր տեղական խոտաբույսերի աճեցումը թանկարժեք գազոնների փոխարեն: 13. Կանխարգելիչ և փաստացի բուժման կենթարկվեն շուրջ 35.000 ծառեր և թփեր: 14. Կանաչ ենթակառուցվածքների ստեղծման և ընթացիկ խնամքի կարիքները բարելավելու նպատակով ձեռք կբերվի 10.526 խմ բուսահող: Բացի այդ, սեփական կարիքների համար կենսահումուս արտադրելու և տերևաթափ ծառերի կենսազանգվածը վերամշակելու նպատակով կկառուցվի կոմպոստացման կայան՝ թափոնների ծանր մետաղներով աղտոտվածության թույլատրելի մակարդակի դեպքում: 15. Կհիմնանորոգվեն և կստեղծվեն շուրջ 5 կմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ցանցեր: Ոռոգման հարցի լուծման շրջանակներում կկիրառվեն		պոմպակայանների ստեղծման, ծառերի խնամքի և այլ աշխատանքները: 19. Համապատասխան ֆինանսավորման պայմաններում ձեռք բերել ժամանակակից գյուղատնտեսական նշանակության մեքենա-սարքավորումներ: 20. Երկրում առկա գիտահետազոտական ներուժը լիարժեք օգտագործելու համար, համագործակցության կայուն և մշտական ծրագրեր ստեղծելով գիտահետազոտական ինստիտուտների և քաղաքապետարանի միջև՝ նրանց կպատվիրակվի քաղաքի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր խնդիրների հետազոտությունն ու լուծումների առաջադրումը, կանաչ տարածքների ցուցանիշենրի փոփոխության մոնիթորինգային մշտադիտարկումը: 21. Կներդրվի չորացած և վթարային ծառերի կտրման որոշումների կայացման և իրագործման չափելի ցուցանիշների, թափանցիկ և հանրային պատշաճ իրազեկում ենթադրող համակարգ: 22. Սածիլներ, տնկիներ, սոխուկներ, սերմեր և կանաչապատման հնարավոր այլ միավորներ գնելիս նախապատվությունը կտրվի հայրենական արտադրանքին, հնարավորինս կրճատելով ներմուծումը: Այս հարցում ակտիվ ակտիվ համագործակցություն կլինի նաև բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և Երևանի բուսաբանական այգու

		անձրևաջրերի կառավարման փորձարարական մեթոդներ։ 16. Առաջին անգամ կմեկնարկի ուղղահայաց կանաչապատման համաքաղաքային մեծ ծրագիր, որի ընթացքում լիանանման բարձրացող բույսերով պատելու համար կկահավորվեն 100-ից ավել համայնքային և հանրային նշանակության շինությունների պատեր, կամարներ, այլ մակերեսներ։ Կխնամվեն առկա մակերեսները։ 17. Կանաչ տարածքների և առհասարակ բնության հանդեպ հանրության հոգատարությունն իբրև կարևորագույն արժեք հանրահռչակելու նպատակով կիրականացվի պատշգամբների ինքնակամ կանաչապատման խրախուսման ծրագիր՝ բնակիչներին տրամադրելով անվճար խորհրդատվություն, թաղարային բույսեր, բուսահող, կանցկացվի տարվա լավագույն կանաչապատ պատշգամբ համաքաղաքային մրցույթ և այլն։ 18. Բնապահպանական ձեռնարկներում կրթական բաղադրիչն ավելացնելու նպատակով մանկապարտեզների ու դպրոցների տարածքներում կկազմակերպվի ուսումնական պարտեզներ, որտեղ		հետ։ 23. Կիրականացվեն քաղաքի բնապահպանական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող կանաչ հանրային տարածքների վերականգման նպատակային ծրագրեր Օղակաձև զբոսայգու և Հաղթանակ զբոսայգու համար։ Զարգացման նպատակով համագործակցության երկարաժամկետ ծրագրեր կսկսվեն Բուսաբանական այգու հետ։ 24. Քաղաքի այն հատվածներում, որտեղ չկա հողային կանաչապատման հնարավորություն՝ կկիրառվի մեծ թաղարային և ճմապատման աշխատանքներ։ 25. Կարգելվի ձմռան ամիսներին ճանապարհների ձնածածկի հալեցման համար կիրառած տարբեր ռեագենտներով, աղերով հարստացրած և երթևեկելի հատվածից հեռացված ձյան կույտերի կուտակումը մայթեզրին աճող ծառերի և տակ և նրանց հարակից սիզամարգերում, քանի որ այն դառնում են ծառերի չորացման պատճառ։

		բույսերը հետազոտելու և խնամելու պարտավորությունը կլինի հաստատության սաների վրա: Այդ նպատակով կհրատարակվի հատուկ ուղեցույց: 19. Կմեկնարկեն Մ.Մելքոնյան փողոցին կից հանգստի գոտու ստեղծման աշխատանքները, որի 70%-ը կազմելու է գեղատեսիլ կանաչ զանգվածն իր բարձրարժեք ծառաթփատեսակներով: 20. Կմաքրվեն բնապահպանական աղետալի վիճակում գտնվող այնպիսի կարևոր տարածքներ ինչպիսիք են՝ Հրազդանի կիրճը, Երևանյան լիճը և դրա շրջակայքը, Գետառի հունը և այլն: 21. Կիրականացվեն Ծիծեռնակաբերդի անտառպուրակի վերականգնման աշխատանքները: Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել ոռոգման ցանցի մասնակի նորոգում, հզոր պոմպակայանի ստեղծում, ծառերի առողջացման նպատակով՝ բուժման և ծառատունկի աշխատանքներ: 22. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված հատվածներում կիրականացվեն բնապահպանական և կլիմայական բուֆերային գոտու ձևավավորմանն ուղղված աշխատանքներ: Այդ		

		նպատակով (հատկապես քաղաքի հարավային շրջաններում՝ Էրեբունի, Շենգավիթ, Նուբարաշեն, Եռաբլուրի, Դավիթ Բեկ փողոցների հարակից տարածքներում) նախատեսվում է իրականացնել անտառվերականգնման, նոր ոռգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի խնամքի և այլ աշխատանքներ։ 23. Բազմաթիվ զբոսայգիներում, անտառպուրակներում ու ծառուղիներում կարդիականացվի ոռոգման համակարգը՝ հնարավորության դեպքում ներդնելով դրենաժային ջրհորներով, կաթիլային և ստատիկ ցնցուղային վարդակներով ոռոգման համակարգեր։ Կներդրվի մուլչայավորումն իբրև խնամքի և ոռոգման ջրի տնտեսման արդյունավետ մեթոդ։ 24. Կանաչապատ տարածքների սպասարկման ու խնամքի որակի բարձրացման նպատակով նախատեսվում է ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում, մասնավորապես՝ մուլչայավորող սարք, որ էտման արդյունքում առաջացող փայտանյութից, տերևներից սեփական կարիքների համար մուլչա կարտադրի։ 25. Կենդանիների, թռչունների,		

		միջատների ազատ տեղաշարժն ու պոպուլյացիաների ավելացումը խթանելու համար կստեղծվեն կանաչ տարածքները միմյանց կապող կանաչ միջանցքեր, որտեղ պետք է բացառել առևտրի, հանրային սննդի և ատրակցիոնների առկայությունը։ 26. Երկրում առկա գիտահետազոտական ներուժը լիարժեք օգտագործելու համար, համագործակցության կայուն և մշտական ծրագրեր ստեղծելով գիտահետազոտական ինստիտուտների և քաղաքապետարանի միջև՝ նրանց կպատվիրակվի քաղաքի կանաչ ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր խնդիրների հետազոտությունն ու լուծումների առաջադրումը, կանաչ տարածքների ցուցանիշենրի փոոփոխության մոնիթորինգային մշտադիտարկումը։ 27. Կհրապարակվի կանաչապատման ենթակա բայց դեռևս խոպան հանրային տարածքների ցանկը և կխրախուսվեն այնտեղ մասնավոր և համայնքային կանաչապատման ձեռնարկները։ 28. Կներդրվի չորացած և վթարային ծառերի կտրման որոշումների կայացման և իրագործման չափելի ցուցանիշների, թափանցիկ և հանրային պատշաճ իրազեկում ենթադրող		

		համակարգ։ 29. Սածիլներ, տնկիներ, սոխուկներ, սերմեր և կանաչապատման հնարավոր այլ միավորներ գնելիս նախապատվությունը կտրվի հայրենական արտադրանքին, հնարավորինս կրճատելով ներմուծումը։ Այս հարցում ակտիվ ակտիվ համագործակցություն կլինի նաև բնապահպանության նախարարության ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և Երևանի բուսաբանական այգու հետ։ 30. Կիրականացվեն քաղաքի բնապահպանական վիճակի վրա էական ազդեցություն ունեցող կանաչ հանրային տարածքների վերականգման նպատակային ծրագրեր Օղակաձև զբոսայգու և Հաղթանակ զբոսայգու համար։ Զարգացման նպատակով համագործակցության երկարաժամկետ ծրագրեր կսկսվեն Բուսաբանական այգու հետ։ 31. Քաղաքի այն հատվածներում, որտեղ չկա հողային կանաչապատման հնարավորություն՝ կիրառել մեծ թաղարային կանաչապատման պրակտիկան։ 32. Կարգելվի ձմռան ամիսներին ճանապարհների ձնածածկի հալեցման համար կիրառած տարբեր		

		ռեագենտներով, աղերով հարստացրած և երթևեկելի հատվածից հեռացված ձյան կույտերի կուտակումը մայթեզրին աճող ծառերի և տակ և նրանց հարակից սիզամարգերում, քանի որ այն դառնում են ծառերի չորացման պատճառ:		
105.		*Երևանի ենթակայության բուժհաստատություններում վերանորոգման աշխատանքների արդյունքում կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման մատչելիությունը:* Բոլորու՞մ, ճիշտ կլինի հստակեցնել քանակը կամ որոշման չափանիշները	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ աշխատանքը չի ներառվել Երևանի 2019 բյուջեի նախագծում:	
106.		*Նախատեսվում է Երևան քաղաքի բնակչության շրջանում սքրինինգային հետազոտության իրականացում:* Կարծես պարզ չէ, թե ինչ սքրինինգային հետազոտության մասին է խոսքը, ընդհանու՞ր: Կարելի է հստակեցնել	Առաջարկը չի ընդունվել: Քանի որ աշխատանքն արդեն կատարվել է 2018 թվականի ընթացքում:	
107.		*Սոցիալական ապահովության տեքստից տպավորություն է ստեղծվում, որ Երևանում խոցելի խումբ են միայն հաշմանդամություն ունեցող անձինք և անօթևանները:*	Առաջարկն ընդունվել է:	Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում: Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների,

				հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:
108.		Ինչպիսի՞ սոցիալական խնդիրներ են առանձնացված, որո՞նք են ռիսկի խմբերը, ի՞նչ վիճակագրություն կա: Այստեղից հասկանալի չի դառնում, թե ինչ իրավիճակ ունենք հիմա և ինչ է պետք անենք, որպեսզի այն շտկվի:	Առաջարկն ընդունվել է:	Փոփոխությունները կատարվել են ծրագրի համապատասխան մասերում: Մասնավորապես՝ Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը և այն, որ հասարակության կարիքավոր խավը որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերը նպատակաուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի

				աղքատության, հաշմանդամության, հիվանդության, տարիքի հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, առանց ծնողական խնամքի մնալու, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման վնասակար սովորույթների, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու, ազատազրկման վայրերում գտնվելու կամ այդ վայրերից վերադառնալու և այլ պատճառների հետևանքներով կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու նպատակով: Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և

				անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից:
109.		Ծրագրում ոչ մի խոսք չկա սոցիալական աջակցության համակարգի խնդիրների և դրանց կայացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Ողջ քաղաքն ունի ընդամենը մեկ սոցիալական աշխատող, մինչդեռ գործուն սոցիալական աջակցության համակարգ ստեղծելու համար էական է սոցիալական աշխատողների թվի մեծացումը: Մեկ այլ կարևոր բաղադրիչ է սոցիալական աջակցության տարածքային բաժինների և վարչական շրջանների սոցիալական հարցերով բաժինների սերտ համագործակցությունը սոցիալական աջակցության դեպքի վարման և համագործակցության ցանցերի շրջանակներում: Վարչական	Առաջարկն ընդունվել է:	Ներկայացված են առկա խնդիրները և ձոփոխությունը կատարված է ծրագրի համապատասխան մասերում Ծրագրում ավելացվել է հետևյալը. Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների /վարչական շրջանների սոցիալական բաժինների աշխատողների՝ ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՍԱՏԲ-ների մասնագետների՝ տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը, յուրաքանչյուր վարչական շրջանում առնվազն մեկական «Սոցիալական

		շրջանների համապատասխան բաժինների աշխատակիցներն ունեն սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների մասին ուսուցման կարիք: Ողջ համակարգը խարսխված է դրամական աջակցություն տրամադրելու սկզբունքի վրա, մինչդեռ բնակիչների խնդիրները դրանով չեն լուծվում:		աշխատողի» հաստիքների ստեղծումը՝ սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրումը, քանի որ հասարակության գերակշիռ մեծամասնությունը սոցիալական աշխատանքն ընկալում է որպես դրամական վճարների նշանակում/ լուծումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:
110.		*Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը համագործակցում է սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:* Որոնք են այդ կազմակերպությունները, ի՞նչ հիմքով է համագործակցությունը. ֆինանսական, մասնագիտական, այլ:	Առաջարկն ընդունվել է:	Ներկայացված են կազմակերպությունները և համագործակցության սկզբունքները : Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ոլորտում առկա խնդիրների համատեղ լուծման, աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով Երևանի քաղաքապետարանը, վարչական շրջանների համապատասխան բաժինները համագործակցում են սոցիալական ոլորտում գործունեություն իրականացնող ակտիվ հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ սոցիալական ծրագրերի իրականացման

				նկատառումով: Մասնավորապես՝ Գերմանական Կարմիր Խաչի հայաստանյան մասնաճյուղի հետ, Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ գործում են Քանաքեռ-Զեյթունի «Հուսո տունը» /բարեգործական ճաշարան և ցերեկային կենտրոն/, Էրեբունի, Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում «արտագնա խոհանոց»: «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հետ 6 վարչական շրջաններում Երևան համայնքի կողմից անվարձահատույց տրամադրված տարածքներում կազմակերպվել են բարեգործական ճաշարաններ, բացառությամբ Աջափնյակ վարչական շրջանի, որտեղ տեղի վարձավճարը տրամադրվում է Երևան համայնքի կողմից: «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» ԲՀ հետ Արաբկիրի բարեգործական ճաշարանը, որին տրամադրվում է համաֆինանսավորում կոմունալ ծախսերի փոխհատուցման համար: Մալաթիա-Սեբաստիայի, Արաբկիրի և Նոր Նորքի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գտնվող բարեգործական ճաշարաններին համաֆինանսավորում չի տրամադրվում, սակայն կա փոխգործակցություն: Նմանօրինակ համագործակցության

				արդյունքում կարիքավոր շուրջ 2300 շահառուներ տաք ճաշ են ստանում:
111.		Հաշմանդամություն ունեցող քանի անձ է հաշվառված Երևանում և ինչ են ներառում տարաբնույթ սոցիալական ծրագրերը:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. 2018 թվականի տվյալներով մայրաքաղաքում հաշվառված են ավելի քան 57000 հաշմանդամություն ունենող անձիք, որոնցից ավելի քան 2300 երեխաներ են, ընդհանուր թվից ավելի քան 27000-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:
112.		Քանի հատ թեքահարթակ է կառուցվել մինչ օրս:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. 2013-2018թթ. կառուցվել են շուրջ 5000 թեքահարթակներ, որից շուրջ 300-ը մասնավորի կողմից, քաղաքապետարանի առաջարկությամբ ՃՈ կողմից 61 խաչմերուկներում տեղադրվել են փողոցային ձայնային ազդանշաններով լուսացույցներ, 128 հատվածներում տեղադրվել են գոգավոր սալիկներ և այլն/:
113.		Սոցիալական ապահովության հիմնախնդիրները չեն կապվում վերևում նկարագրված տեքստի հետ. տարեցների, սիրիահայերի, բազմազավակ ընտանիքների մասին որևէ խոսք չկա:	Առաջարկն ընդունվել է:	Ծրագրում ավելացվել է հետևյալը. Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, ՀՀ և ԼՂՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների,

				փախստականների և միգրանտների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների, բնակարանազուրկ և անօթևան ընտանիքների և անձանց, քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները, որոնք հայտնվել են կյանքի այնպիսի իրավիճակում, որ առանց ուրիշի օգնության զրկված են ինքնուրույնաբար սեփական գոյության համար ամենաանհրաժեշտը ստեղծելու հնարավորությունից: Հենց այստեղ է ծագում պետության /տվյալ դեպքում համայնքի/ կարգավորիչ դերը:
114.		*Տեղահանված սիրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն* Հանել 3-րդ կետի կրկրնությունն է	Առաջարկն ընդունվել է:	Նշված կետը հանվել է:
115.		*Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման անհրաժեշտություն* Քանի վարչական շրջանում ներդրման մասին է խոսքը:	Առաջարկն ընդունվել է:	Ավելացվել է պարբերություն հետևյալ խմբագրությամբ: Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի»

				դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը Երևանի 12 վարչական շրջաններում: Ներկայումս Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Մալաթիա-ՍԵբաստիա վարչական շրջաններում գործում են սոցիալական ծառայություններ մատուցող համալիր կենտրոններ, որոնք հարմարավետ են և մատչելի՝ բնակչության համար ծառայությունների մատուցման տեսանկյունից: Սակայն դեռևս խնդիր է այդ ծառայությունների ոչ միայն ֆիզիկական, նաև տեխնիկական և տեղեկատվական հոսքերի փոխանակման տեսանկյունից, որպեսզի համակարգի ներդրման շրջանակներում վերաիմաստավորվի սոցիալական աշխատանքի բովանդակությունը, ինչպես նաև սոցիալական աշխատողի տեղն ու դերը հասարակական հարաբերություններում: 2019 թվականին նախատեսվում է Շենգավիթի համալիր կենտրոնի բացումը, մյուս վարչական շրջաններում նույնպես խնդիրը օրակարգային է:
116.		*Նախատեսվում է աջակցություն ՍՍՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ:

		բնակչության տարբեր խմբերի հաշվառման, պետական նպաստների նշանակման գործընթացին: Ի՞նչ կերպ պետք է իրականացվի աջակցությունը:		Նախատեսվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում, նպաստների հասցեականության մեծացում: Հասցեականության առումով ընտրանքային ուսումնասիրություններ են անցկացվելու ՍԱՏԲ-ներում, քննարկվելու են առկա խնդիրները, հայտնաբերված բացթողումները, տրվելու են մեթոդական ցուցումներ, ընտրանքային մասնակցություն է իրականացվելու համակարգող խորհուրդների գործունեության նկատմամբ, շարունակվելու են առաջարկություններ ներկայացվել ՀՀ պետական լիազոր մարմնին՝ նպաստների հասցեականության, հետգանձումների առաջացման պատճառների կանխման վերաբերյալ:
117.		*Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 17000 ընտանիքներ, որոնք կստանան պետական նպաստներ:* Արդյոք միայն պետական նպաստ տալը բավարար է ընտանիքների խնդիրները լուծելու համար: Դրանք պետք է դիտարկվեն համալիր, և ծրագրում	Առաջարկն ընդունվել է:	Նախպաղասությունը խմբագրվել է հետևյալ կերպ: Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվեն շուրջ 20000 ընտանիքներ, որոնցից 17000 ընտանիքներ կստանան պետական նպաստներ:

		անհրաժեշտ են ներդնել խնդիրների համալիր լուծման մեխանիզմներ:		Հաշվի առնելով, որ պետական նպաստները /տվյալ դեպքում ընտանեկան, սոցիալական նպաստները բավարար չեն կարիքի մեջ գտնվող տվյալ ընտանիքների սոցիալական խնդիրները լուծելու համար, ուստի և գործի կդրվեն միջգերատեսչական սոցիալական համագործակցության, սոցիալական դեպքի վարման, ինչպես նաև համայնքային ռեսուրսների կիրառմամբ հնարավոր սոցիալական ծրագրերի իրագործման մեխանիզմներ:
118.		*սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրերի իրագործում:* Ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, սոցիալական աջակցության տրամադրումն ընդհանրական արտահայտություն է:	Առաջարկն ընդունվել է: Համայնքային սոցիալական աջակցության ծրագրեր /համաձայն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի հ.8 հոդվածի/	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել:
119.		*Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունը խմբագրվել է հետևյալ կերպ: Տոնական և հիշատակի օրերի /կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի, մայրության և գեղեցկության օրվա՝ ապրիլի 7-ի, ապրիլի 24-ի հիշատակի օրվա, մայիսի 8-ի, 9-ի՝ Շուշիի ազատագրության, ինչպես նաև Մեծ հայրենականում տարած հաղթանակի, ընտանիքի օրվա՝ մայիսի 15-ի, տարեցների միջազգային օրվա՝ հոկտեմբերի 1-ի, հաշմանդամություն

		նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև աջակցություններ: Կրկին՝ ի՞նչ ծրագրերի մասին է խոսքը, և ի՞նչ է նշանակում՝ կտրամադրվեն աջակցություններ		ունեցող անձանց միջազգային օրվա՝ դեկտեմբերի 3-ի/ կապակցությամբ նախատեսվում են իրականացնել սոցիալական նշանակության տարաբնույթ ծրագրեր՝ տարբեր սոցիալական խմբեր ներկայացնող անձանց, ընտանիքների համար, որոնց կտրամադրվեն նաև տարաբնույթ /դրամական, պարենային, սոցիալ-մշակութային/ աջակցություններ:
120.		*Ժամկետային զինծառայողներ ունեցող երևանաբնակ ավելի քան 2000 ծնողների համար կկազմակերպվեն այցելություններ՝ ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ զորամասեր՝ իրենց զինծառայող որդիներին տեսակցելու նպատակով:* Խոսքը անապահով ընտանիքների՞ մասին է, և նրանք ինչպե՞ս են որոշվում: Իսկ եթե անապահովների մասին չէ, ապա անհասկանալի է, թե համայնքն ինչու է նման միջոցառման վրա միջոցներ ծախսում: Անհրաժեշտ է պարզաբանել	Առաջարկը չի ընդունվել: Խոսքը վերաբերում է սահմանամերձ զորամասերում ծառայող զինծառայողների երևանաբնակ այն ընտանիքներին, որոնք ցանկություն են հայտնում մասնակցել ծրագրին: Հաշվի առնելով ծրագրի ոչ միայն սոցիալական նաև բարոյական կշիռը՝ տարանջատում չի դրվում ծնողների սոցիալական կարգավիճակի առումով:	
121.		*Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում հայրենական պատերազմի*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ. Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում

		վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները: Ի՞նչ է նշանակում հոգակցություն կդրսևորվի, անհասկանալի, ընդհանրական ձևակերպում է		հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների, այդ թվում Հայրենական Մեծ պատերազմի վետերանների նկատմամբ: Բացի այդ՝ իրենց գործունեությունը կշարունակեն տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները, բարեգործական ճաշարանները: Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործումը՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով:
122.		*Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ստեղծման, նրանց՝ հասարակական կյանքին աստիճանական ինտեգրման, սոցիալական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ տարբեր ծրագրերի իրագործումը: Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության*	Առաջարկն ընդունվել է:	Պարբերությունները խմբագրել են հետևյալ կերպ. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի, վերականգնողական կենտրոնների ստեղծման, նրանց՝ հասարակական կյանքին աստիճանական ինտեգրման, սոցիալական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ տարբեր ծրագրերի իրագործում: Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական

		ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների համար կառանձնացվեն գծանշված տարածքներ: Քանակական ցուցանիշներ չկա՞ն, սա ընդհանրական է		ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ: Կշարունակվի մեքենա վարող հաշմանդամություն ունեցող քաղաքացիների, ինչպես նաև նրանց փոխադրումն իրականացնող տրանսպորտային միջոցների անվճար կայանման համար քաղաքապետարանի կողմից առանձնացված, գծանշված և կահավորված տարածքներում անվճար կայանման թույլտվությունների և տարբերանշանների տրամադրման գործընթացը /2014-2018թթ. տվյալներով 498 անձանց է տրամադրվել/:
123.		*Հատուկ հոգածություն կդրսևորվի ինչպես Արցախյան պատերազմում զոհվածների, այնպես և հաշմանդամություն ձեռքբերած անձանց ընտանիքների նկատմամբ:* Կրկին՝ ի՞նչ է նշանակում	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Հոգածություն կդրսևորվի ինչպես Արցախյան պատերազմում զոհվածների, այնպես և հաշմանդամություն ձեռք բերած անձանց ընտանիքների նկատմամբ, որոնք կընդգրկվեն համապատասխան սոցիալական աջակցության և սոցիալ-մշակութային ծրագրերում:
124.		*Կշարունակվեն բազմազավակ ընտանիքների բնակարանային և*	Առաջարկը չի ընդունվել:	

		սոցիալ-կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրերը: Քանի՞ ընտանիքի սա կարող է վերաբերել:	Թվերը կանխատեսելն այս պահին իրատեսական չէ:	
125.		*Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել հասարակական կազմակերպություններին:* Ի՞նչ է նշանակում, աջակցություն ինչպես և ինչի համար է ցուցաբերվելու: Անհրաժեշտ է պարզաբանել	Առաջարկն ընդունվել է:	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա համատեղ սոցիալական նշանակության ծրագրերի իրականացման համար նախատեսվում է մասնագիտական, գույքային և հնարավոր այլ միջոցներով աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորականներին /ընդլայնելով նրանց շրջանակը/ համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
126.		Սպորտ և ֆիզիկական կուլտուրա ոլորտում առաջարկվում է ավելացնել հետևյալ կետը *Կդիտարկվի հեծանվային առանձնացված արահետի կառուցում՝ Մատենադարան- Մաշտոցի պող.-*	Առաջարկը չի ընդունվել: Մայրաքաղաքում հեծանվային մայրուղիների, արահետների ու կայանատեղերի ստեղծումը ամենևին մարզական խնդիր չէ, այն պետք է դիտարկել տրանսպորտային և հետիոտն երթևեկության, այդ թվում՝	

		Սայաթ-Նովա – Օպերա – Հյուսիսային պող.-Աբովյան փ.-Հանրապետության հրապարակ- Վ. Սարգսյան փ.(կամ այգու միջով)- Բեյրութի փ. (կամ այգու միջով) – Երևանի քաղաքապետարան երթուղով: Այս մայրուղային գծից կարող են դուրս գալ ճյուղավորումներ դեպի քաղաքի մի քանի թաղամասեր, մասնավորապես դեպի Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա: Առանձնացված արահետների հնարավորության բացակայության պարագայում կդիտարկվի կոմբինացվածի տարբերակը: Կդիտարկվի նաև *Օղակաձև զբոսայգու մի քանի հատվածներում առանձին արահետների կառուցումը, մասնավորապես Վ. Մամիկոնյանի արձանից մինչև Անդրանիկի արձան հատվածը, որը կունենա ոչ միայն տրանսպորտային, այլ նաև հանգստի և զբոսանքի նշանակություն:* *Նախատեսվում է հեծանվային կայանատեղերի տեղադրում կամ վերակազմակերպում քաղաքի հիմնական պետական, համայնքային, վարչական և բիզնես կենտրոններում:* *Նախատեսվում է ակտիվ քարոզչական աշխատանք՝ խթանելու համար հեծանվային մշակույթը*	կայանատեղերի կանոնակարգման ամբողջության մեջ: Խնդիրն անհրաժեշտ է ուսումնասիրել բազմակողմանի՝ քանի որ այն անմիջապես առընչվում է մայրաքաղաքի երթևեկության և «Փարկինգ սիթի սերվիս» ՓԲԸ գործունեության, ինչպես նաև զբոսայգիներում ազգաբնակչության հանգստի ու ժամանցի կազմակերպման հարցերի հետ:	
127.		*Հայրենասիրական դաստիարակության*	Առաջարկը չի ընդունվել	

		ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացման անհրաժեշտություն Անորոշ և վիճելի ձևակերպում է, համայնքը հայերնասիրական դաստիարակություն տալու գործառու՞յթ ունի, ո՞րն է այդ դաստիարակությունը, ինչպե՞ս է իրականացվելու:		
128.		Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում թվարկված լրջագույն խնդիրների լուծման համար առաջարկվում է կազմակերպել խրախուսման միջոցառումներ ու այցելություններ՞: Նշված աշխատանքները երրորդական նշանակություն ունեն, իսկ առաջնային միջոցառումները և բարեփոխումները նշված չեն (եթե այդպիսիք կան)	Առաջարկն ընդունվել է	2019 թվականին նախատեսվող աշխատանքներ բաժինը խմբագրվել է հետևյալ կերպ. Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներին մեթոդական աջակցության տրամադրման, ոլորտի օրենսդրական բարեփոխումների քննարկման նպատակով նախատեսվում է իրականացնել 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների /ԽՀՀ/ համար սեմինար և վերապատրաստում: Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովման, նման իրավիճակներում նրանց հայտնվելու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման համատեքստում պարբերաբար իրականացվել և իրականացվելու են վարչական շրջաններում հրատապ դեպքերի առնչությամբ հանդիպում-քննարկումներ, կազմակերպվում են ԽՀՀ նիստեր՝ բաժնի պարտադիր մասնակցությամբ: Ելնելով

				դեպքի առանձնահատկությունից և երեխայի կյանքի դժվարին իրավիճակներում հայտնվելու պատճառներից՝ պարտադիր քննության է առնվում երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման առաջնայնությունը, որից հետո միայն դիտարկվում է երեխայի այլընտրանքային խնամքի տարբերակները՝ նախապատվություն տալով խնամակալությանը, խնամատարությանը և որդեգրությանը: Դրանց անհնարինության դեպքում դիտարկվում է երեխայի մանկական խնամակալական հաստատությունում (մանկատուն, շուրջօրյա ժամանակավոր խնամքի հաստատություն) հայտնվելը: Պարբերաբար իրականացվում է հաստատությունում գտնվող երեխաների անձնական գործերի, տեղավորման հիմքերի ուսումնասիրություն՝ երեխային հետագա որդեգրման կամ խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծման նպատակով: Երեխաների շրջանում մուրացիկության և թափառաշրջիկության երևույթների կանխարգելման նպատակով բաժինը մասնակցում է մուրացիկ, թափառաշրջիկ երեխաների, նրանց հետ կապված խնդիրների լուծման, միասնական աշխատանքների կազմակերպման նպատակով ՀՀ ոստիկանության պետի 07.11.2013թ. հ. 3837-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին, ներկայացնում առաջարկություններ,

				նախաձեռնում հատուկ դեպքերի քննարկումներ։ Կրթությունից չարամտորեն խուսափող, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորած երեխաների վերաբերյալ շահագրգիռ կազմակերպություններից և անձանցից ստացված տեղեկատվության հիման վրա աջակցում է երեխաների կրթական համակարգում ընդգրկման, կրթության շարունակականության ապահովման, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործընթացներին: Այս նպատակով համագործակցում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության, ՀՀ ոստիկանության, Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիրի հետ: Սոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման նպատակով բաժնի կողմից իրականացվելու են Երևան համայնքի տարեկան բյուջեով ներառված տարաբնույթ միջոցառումներ՝ • Ծնողավարման հմտությունների սեմինար պարապմունքներ 12 վարչական շրջանների խնամակալական ընտանիքների համար: • ,Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված խնամատար ընտանիքիների խրախուսման միջոցառում: • Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված այցելություն Երևանի ծննդատներ,

				մանկատներ, խնամքի հաստատություններ: • Այցելություն թանգարաններ, թատրոններ՝ հատուկ կարքներով երեխաների մանակցությամբ: • Սոցիալական քարոզչության հոլովակների պատրաստում և տարածում • 12 վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար սեմինար և վերապատրաստում: • ,Էրեբունի-Երևան» տոնին ընդառաջ լուսանկարչական մրցույթ՝ հատուկ կարիքներով շնորհալի երեխաների մասնակցությամբ: • Ամանորին ընդառաջ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ հատուկ կարիքներով երեխաների տիկնիկային թատրոն այցելության և ամանորյա միջոցառումներին մասնակցության կազմակերպում, նվերների տրամադրում:
129.		*Նախատեսվում է իրականացնել միջոցառումների շարք՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Գարուն-Երևան», «Ողջույն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների*	Առաջարկը չի ընդունվել: Նշված տոնակատարությունների կազմակերպումը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի բյուջեի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 08 բաժնի, 02 խմբի, 04 դասի «1.Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով հաստատված միջոցներով:	

		պաշտպանության միջազգային օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ 2019» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, Երևանի օրերը Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին: Իմ քայլի նախընտրական ծրագրում ամրագրվել էր, որ քաղաքային բյուջեից ֆինանսավորվելու են միայն Էրեբունի-Երևանի և Ամանտորի տոնակատարությունները, այստեղ նշված տոներն ինչպե՞ս են ֆինանսավորվելու: Անհրաժեշտ է հստակեցնել		
130.		Երեւանցիների բազմաթիվ խնդրանքներին ընդառաջ խնդրում եմ Երեւանի պատմության թանգարանի աշխատանքային օրերը վերանայել՝	Առաջարկը չի ընդունվել: Հաշվի առնելով որ «Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ-ի որոշ ցուցասրահներ գտնվում են	

		կիրակին դարձնելով աշխատանքային	Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի տարածքում, թանգարանի համար կիրակին աշխատանքային օր դարձնելու առաջարկը գտնում ենք ոչ նպատակահարմար՝ ելնելով վարչական շենքի ներսի տարածքի անվտանգության պահպանման նկատառումներից: Միաժամանակ՝ նշված ՀՈԱԿ-ի համար աշխատանքային օր է երկուշաբթին, ինչն առավել է նպաստում այցելուների հոսքի խթանմանը, քանի որ այդ օրը մյուս թանգարանների համար համարվում է ոչ աշխատանքային:	
131.		*Հայկական ծագում ունեցող մշակութային ժառանգության միավորների հաշվառում և վերահաշվառում, ընդհանուր տեղեկատվական շտեմարանի ձևավորում, դրա մատչելիության ապահովում և հանրայնացում* Իսկ ոչ հայկական՞ օրինակ, պարսկական միջնադարյան դամբարանը արժեք չէ	Առաջարկը չի ընդունվել: ՀՀ տարածքում նշված մշակութային արժեքների հաշվառումը հանդիսանում է լիազոր մարմնի /ՀՀ մշակույթի նախարարություն/ գործառույթ:	
132.		Քննարկել Հայ-Արտի շենքի /նախկին Ժամանակակից արվեստի թանգարանը/ ամբողջական վերականգնումն ու վերանորոգումը եւ վերադարձնելը Երեւանին որպես արվեստի միասնական կենտրոն	Առաջարկը չի ընդունվել: «Հայ Արտ» մշակութային կենտրոնի հիմնանորոգման հարցը նախատեսվում է քննարկել Երևան քաղաքի 2019թ. բյուջեի համապատասխան ծրագրերում ընդգրկելու համատեքստում:	
133.		*Այգու սահմանագծով*	Առաջարկը չի ընդունվել:	

		պարսպապատման անհրաժեշտություն Սա արվելու՞ է, պարզ չէ, աշխատանքներում նշված է։ Այգում անհրաժեշտ է տեղադրել նաև անվտանգության տեսախցիկներ։	Պարսպապատման անհրաժեշտությունը թեև ընդգրկված է հիմնախնդիրների ցանկում, սակայն 2019թ. նշված հիմնախնդրի լուծման, ինչպես նաև անվտանգության տեսախցիկների տեղադրման հնարավորությունը կհստակեցվի 2019թ. բյուջեի կազմման, քննարկումներ և աշխատանքների շրջանակում։	
134.		*կնքել 2018-2020թթ. համագործակցության ծրագիր Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև։* 2019-ի՞ն	Առաջարկն ընդունվել է։	Կատարվել է համապատասխան տեխնիկական փոփոխություններ։
135.		*6. Զբոսայգիների վերականգնման անհրաժեշտություն՝ մասնավոր ներդրումների միջոցով։* *7. Հանրային զուգարանների հիմնախնդրի լուծման անհրաժեշտություն։* Այս երկու կետը պետք է տեղափոխել քաղաքաշինության բաժին, քանի որ սա պետք է առաջին հերթին երեւանցիներին, հետո տուրիստներին	Առաջարկը չի ընդունվել։ Քանի որ նշված երկու հիմնախնդիրների լուծումը կխթանի նաև զբոսաշրջության ոլորտին, այդ պատճառով ներառվել է նաև զբոսաշրջության հիմնախնդիրներ բաժնում։	
136.		*Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել մարքեթինգային քաղաքականություն՝ շեշտադրելով, որ քաղաքամայր Երևանը 2800 տարեկան է։* Բացարձակ չհիմնավորված թեզ եւ	Առաջարկն ընդունվել է։	Նախադասությունը խմբագրվել է հետևյալ կերպ. Երևանի ճանաչելիության բարձրացման նպատակով նախատեսվում է իրականացնել մարքեթինգային քաղաքականություն, որի իրականացումն իր մեջ ներառում է Երևանը, որպես զբոսաշրջային արդյունք, գովազդելն ու

		անիմաստ մի բան, որը ընդհանրապես չի ազդի տուրիստների հոսքի վրա Ընդհանրապես, փոխել կերպարը, ինձ ծանոթ եւ հանդիպած հյուրերի կարծիքն եմ ասում, Երեւան գալիս են ոչ թե այն պատճառով, որ 2800 կամ 8500 տարեկան է, այլ որուհետեւ մարդամոտ է, անվտանգ, ազատ եւ հետաքրքիր, երիտասարդ, հյուրընկալ եւ ուրախ բնակիչներ ունի		ներկայացնելը:
137.		*Նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:* Կարելի է համագործակցել նաև citybug-ի հետ, որ գործարկվելուց հետո բավական լավ էր գործում http://yerevan.citybugs.am/	Առաջարկն ընդունվել է: Երևանի քաղաքապետարանը բաց է համագործակցության քաղաքային տնտեսության բոլոր որորտներում նորարարական լուծումներ առաջարկող ընկերությունների, հասարակական կազմակերպությունների և ինովացիոն գաղափարներով անհատների համար: Մենք մեծ տեղ ենք հատկացնում ազգային գիտական պոտենցիալի օգտագործմանը և մասնակցային կառավարմանը քաղաքային տնտեսության բարելավման և որոշումների ընդունման հարցերում: Նմանատիպ առաջարկները, որոնք համահունչ կլինեն Երևանի քաղաքապետարանի զարգացման ծրագրերին և պահանջներին, կյանքի կոչվելու հնարավորություն կստանան:	Երևանի զարգացման 2019թ. ծրագրում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջացել: